ԴՐՕՇԱԿ
Մատենաշար թիվ 1

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԻԱՑՅԱԼ ԵՎ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Հայոց պատմության հոլովույթում

ԵՐԵՎԱՆ
2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԻԱՑՅԱԼ ԵՎ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Հայոց պատմության հոլովույթում

Ա 106848

ԵՐԵՎԱՆ
ԼՈՒՍԱԿՆ
2020

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Հ 177

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ
Խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Խաչատուր Ռ. Ստեփանյան

Հակոբյան Ա. Մ.
Հ 177 Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը Հայոց պատմության հոլովույթում/ Ա. Մ. Հակոբյան; Խմբ.՝ Խ. Ստեփանյան.- Եր.: Լուսակն, 2020.- 212 էջ:

Մենագրության հեղինակը փորձել է բացահայտել Միացյալ Հայաստանի գաղափարի պատմական ակունքները, ցույց տալ դրա հետագա ընթացքը, նոր ժամանակներում Հայաստանի երկու հատվածների միավորման ուղղությամբ հայ հասարակական-քաղաքական և պետական շրջանակների ձեռնարկած քայլերը, միջազգային ատյաններում ծավալված քննարկումներն ու պայմանագրային ձևակերպումները: «Միացյալ և Անկախ Հայաստան»-ի հոչակագրի 100-ամյակի առիթով ներկայացվող գիրքը հասցեագրվում է հայ ժողովրդի պատմական ճակատագրով, նրա խնդիրներով ու իդեալներով հետաքրքրվող յուրաքանչյուր հայ ընթերցողի:

Գրքի տպագրութեան հովանաւոր
տիկին **Ալիս Պօղոսեան**

ISBN 978-9939-882-76-5

© Հակոբյան Ա. Մ., 2020
© Լուսակն, 2020

ԱՌԱՋԱԲԱՆ

Լրացավ հայ ժողովրդի պատմության մի նշանակալի իրադարձության՝ 1919 թ. մայիսի 28-ին, ՀՀ անկախության առաջին տարեդարձի օրը, Հայաստանի կառավարության հրապարակած «Միացյալ և Անկախ Հայաստանի» հայտարարագրի (հռչակագրի) 100-ամյակը: Այդ հիշարժան իրադարձության կապակցությամբ պատմաբան Ա. Հակոբյանը ընթերցողի սեղանին է դրել ուշագրավ մի աշխատություն, որն ունի ոչ միայն սովորաբար հոբելյանների առիթով լույս տեսնող գրականությանը բնորոշ հանրամատչելի շարադրանք, այլև գիտական պատշաճ մակարդակ ու հագեցած բովանդակություն:

Հեղինակն իր առաջ խնդիր է դրել վեր հանել և ըստ պատմական շրջափուլերի ներկայացնել առհասարակ Մեծ ու Միացյալ Հայաստանի մասին պատմաաշխարհագրական ու իրավաքաղաքական հիմնաեզրույթը՝ սկսած «Աշխարհացոյց»-ի ժամանակներից, Հայոց հին և միջնադարյան Մեծ Հայքի հինգ՝ Արարատ-Ուրարտու, Հայկազուն-Երվանդական, Արտաշիսյան, Արշակունի, Բագրատունի թագավորություններով, որոնք, ավել կամ պակաս չափով, անշուշտ, բովանդակել են հենց Միացյալ ու ամբողջական Հայաստանը:

Սակայն արդեն ուշ միջնադարում արտաքին ու ներքին ոչ նպաստավոր հանգամանքների ու գործոնների հետևանքով Հայաստանը կորցրեց իր անկախ պետականությունը, այդ թվում նաև իր տարածքային ամբողջականությունը: Բայց դրա հետ մեկտեղ՝ հետագայում հայ հասարակական-քաղաքական ու հոգևոր շրջանակներում չմարեց անկախ պետականության ու միասնացած հայրենիքի վերականգնման տեսլականը:

Պետք է արձանագրել, որ հեղինակին հաջողվել է, դարերի միջով պատմական նման էքսկուրս կատարելով անկախ և միասնական Հայաստանի գաղափարի շուրջ, դրա արծարծումները հասցնել մինչև նոր ժամանակներ՝ մինչև 19-րդ դարի երկրորդ կես, երբ ավելի են ուժգնանում հայ ազգային-ազատագրական գաղափարաբանությունն ու պայքարը: Դրան նպաստեցին համանման համաշխարհային գործընթացները և Հայկական հարցի միջազգային ասպարեզ նետվելը: Դարավերջին հայ ազգային ավանդական քաղաքական կուսակցությունների ասպարեզ իջնելը ավելի առարկայական ու գործնական պայքարի հողի վրա դրեց օտարների կողմից բռնի մասնատված Հայրենիքի ազատագրման և միացյալ անկախ պետականության վերակերտման պահանջը:

Պրոֆ. Ա. Հակոբյանի դիտարկմամբ այդ հիմնանպատակի համար պայքարը նոր փուլ թևակոխեց արդեն Առաջին աշխարհամարտի տարիներին: Նախ, գերմարդկային ճիգուջանքերով հաջողվեց արևելահայ մի փոքր հատվածի վրա հռչակել Հայաստանի անկախությունը, իսկ Աշխարհամարտի հաղթական ավարտի արդյունքում արդեն Հայաստանի նորահռչակ հանրապետության կառավարությունը, հայ ազգային քաղաքական մյուս ուժերի մասնակցությամբ՝ պատմաքաղաքական, իրավական ու հումանիտար փաստարկ-հիմնավորումներով ներկայացվեց հենց այդ պատերազմում մեծագույն արհավիրքներ ու աղետներ տեսած, հայրենազրկված արևմտահայ ժողովրդի օրինական պահանջը՝ պատմական արդարությունը վերականգնելու և հայ ժողովրդի՝ իր ամբողջացված հայրենիքի տերը դառնալու վերաբերյալ: Եվ այդ հիմքի վրա էլ 1919 թ. մայիսի 28-ին ՀՀ վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյա-

նը, ի կատարումն համայն հայության հավաքական կամքի ու պահանջի, պաշտոնապես հրապարակեց «Միացյալ և Անկախ Հայաստանի» հռչակագիրը:

Հեղինակը հանգամանալի կանգ է առել ազգային-քաղաքական այդ գերնպատակի նյութականացման ուղղությամբ միջազգային ատյաններում դրա պայմանագրային մարմնացումը հանդիսացող 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրին ու դրա օրգանական շարունակությունը կազմող ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի նոյեմբերի 22-ին կայացրած հայ-թուրքական սահմանի վերաբերյալ Իրավավար վճռի քննությանն ու գնահատականին: Այդ համատեքստում, մենագրության հեղինակի տեսադաշտից դուրս չեն մնացել նաև Միացյալ և Անկախ Հայաստանի համազգային նպատակի իրագործման հարցերի շուրջ հայ հասարակական-քաղաքական շրջանակներում, հանձին Պ. Նուբար փաշայի, ի հայտ եկած հատվածականության դրսևորումները:

Այնուհետև հեղինակը, հետևելով պատմաքաղաքական հետագա գործընթացներին, անդրադարձել է Հայաստանի Հանրապետության անկումից ու թուրքերի կողմից դրա մի մեծ հատվածի բռնազավթումից, իսկ մյուսի՝ խորհրդայնացումից հետո Միացյալ Հայաստանի ու առհասարակ Հայկական հարցում տեղի ունեցած գործընթացների հետագա ետընթացին՝ ցույց տալով, թե ինչպես «Միացյալ և Անկախ Հայաստան» պայմանագրային ձևակերպում ստացած և ավելի քան 160 հազար քառ. կմ ապահովող Իրավավար փաստաթուղթը հայտնվեց միջազգային դիվանագիտության ու տերությունների շահերի բախման թնջուկում, և Լոզանի 1923 թ. հուլիսի 24-ի պայմանագրում արդեն նշույլ անգամ չպահպանվեց Միացյալ Հայաս-

տանի պայմանագրային բանաձևումից:

Այդուհանդերձ, Հայաստանի խորհրդայնացումից հետո էլ հեղինակը շարունակել է իր դիտարկումները հայ ժողովրդի համար նվիրական համարվող Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի շուրջ, որը հիմնականում շարունակեց պահպանվել ու արծարծվել Սփյուռքում: Մասնավորապես, այդ գաղափար-պահանջ հիմնադրույթն իր վերջնական հստակ ծրագրային ձևակերպումը ստացավ ՀՅԴ 1924/25 թթ. 10-րդ Ընդհ. ժողովում, և այդ տեսլականը գործունեության դաշտ դարձավ ազգային նկարագիր ունեցող հայության շրջաններում ու տասնամյակներ շարունակ, ի սփյուռս աշխարհի, հայրենաշունչ ոգով սերունդներ դաստիարակեց:

Հանրագումարի բերելով վերը շարադրյալը՝ կարելի է արձանագրել, որ «Միացյալ և Անկախ Հայաստանի» մասին ՀՀ կառավարության պատմական ակտից անցել է 100 տարի, բայց և այնպես այդ գաղափարը շարունակում է կենսունակ մնալ ազգային նկարագիր ունեցող հայի գիտակցության ու գործունեության մեջ: Եվ այդ իմաստով ճիշտ է նկատում Ա. Հակոբյանը, որ մեր ժամանակներում արցախյան ազատամարտն ու դրա արդյունքում Արցախի Հանրապետության արդեն շուրջ երեքտասնամյա գոյության փաստը ինքնին մի փոքր դրվագ է Միացյալ Հայաստանի գաղափարի նյութականացման ճանապարհին:

Իր ամփոփիչ խոսքում մենագրության հեղինակը գտնում է, որ պետք է շարունակել կենսունակ պահել ազգային արժեք համարվող այդ գաղափարը, նաև որպես Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման, հայ ժողովրդի հայրենազրկման, պահանջատիրության ու փոխհա-

տուցման համար պայքարի հեռագնա գործնական ազդակ ու կովան, իբրև համայն հայության իր մեծ հայրենիքում հավաքված տեսնելու, արարելու, զարգանալու ու բարգավաճելու նպատակ: Եվ մեր կարծիքով՝ հենց նման դաստիարակիչ ու ուղղորդիչ առաքելության ու պատգամի է միտված Ա. Հակոբյանի հաջողված սույն աշխատությունը:

Պատմ. գիտ. դոկտոր՝ **Խաչատուր Ստեփանյան**
16. 03. 2020 թ.

...Երևի այդօր – քանի՛ դար հետո-
Երկինք ու երկիր հաշտվեցին նորից...
... Երևի այդօր - քանի՛ դար հետո-
«Հայաստան» բառից պոկվեցին-ընկան
«Ռուսա»-ն ու «Տաճկա»-ն...
Պարույր Սևակ

ՄՈՒՏՔ

1918 թ. Մայիս 28-ին հայ ժողովուրդը Արևելյան Հայաստանի մի փոքր հատվածի վրա անկախ պետականության հիմքերը դրեց: Առաջին Հանրապետությունն այն հիմնաքարն էր, որը հնարավորություն էր ստեղծում պետական մակարդակով արծարծելու Միացյալ Հայաստանի պահանջը: Այդ քայլն իրավական բնույթ ստացավ Հայաստանի Հանրապետության անկախության առաջին տարեդարձի օրը՝ 1919 թ. Մայիս 28-ին, երբ կառավարությունը պաշտոնապես հանդես եկավ **Միացյալ Հայաստանի** անկախության վերաբերյալ հռչակագրով: Այնուհետև այդ պետական ակտը միջազգային-իրավական ձևակերպում ստացավ 1920 թ. օգոստոսի 10-ին՝ **Սևրի պայմանագրի** և նոյեմբերի 22-ին՝ **Վուդրո Վիլսոնի Իրավարար** վճռի մեջ:

Ցավոք, ռազմաքաղաքական իրավիճակի կտրուկ շրջադարձի՝ առաջին հերթին բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի մերձեցման ու գործակցության հետևանքով ոչ միայն չկատարվեցին Միացյալ Հայաստանի վերաբերյալ այդ պայմանագրային պահանջները, այլև բռնազավթվեց ՀՀ տարածքների զգալի մասը. Հայաստանն, ըստ էության, բաժանվեց Ռուսաստանի և Թուրքիայի միջև, կորցրեց իր անկախությունը, իսկ Ռուսաստանին բաժին հասած հատվածը խորհրդայնացվեց:

Բայց և այնպես, անկախությունը կորցնելուց հետո էլ՝ անցած հարյուր տարիների ընթացքում, հայ ժողովրդի մեջ չմարեցին ազատության, անկախության և Միացյալ Հայաստանի գաղափարները: Հայաստանի մերօրյա անկախ հանրապետության գոյությունը Միացյալ Հայաստանի նվիրական երազանքի իրագործման հույս է ներշնչում: Այդ գաղափարի նյութականացման մեկ դրվագ կարելի է համարել ներկայիս Արցախի Հանրապետությունը:

Խնդրո առարկա հարցն արդիական է նաև այն առումով, որ հայկական հողերի պահանջատիրության խնդիրը կապվում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման ու հատուցման անժամանցելի պահանջի հետ: Սեփական հայրենիքում հայ ժողովրդի ցեղասպանվելը և նրա բնօրրանի մեծագույն մասի բռնազավթումը, միջազգային իրավունքի և մարդկային ու բարոյական արժեչափերի համաձայն, հիմք են տալիս, ի փոխհատուցումն այդ մեծագույն ոճրի, պահանջատեր լինել պատմական հայրենիքի վերադարձի հարցում:

Միացյալ Հայաստանի անկախության մասին հռչակագրի 100-ամյակի առիթով հարկ ենք համարել հատուկ անդրադառնալ այդ գաղափարի պատմական ակունքներին, դրա հետագա զարգացման ընթացքին, Միացյալ և Անկախ Հայաստանի մասին հայ հասարակական-քաղաքական ու պատմագիտական շրջանակների ընկալումներին, այդ հիմնանպատակին հասնելու համար ձեռնարկված քայլերին ու հեռանկարներին:

1.ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Հայտնի է, որ հայ ժողովրդի բնօրրան Մեծ Հայքը, ըստ «Աշխարհացոյց»-ի, ունեցել է 15 նահանգ (աշխարհ)՝ ավելի քան 300 հազար քառ. կմ տարածքով, որն իբրեւ հայ ազգի հավերժական Հայրենիք՝ ֆիզիկաաշխարհագրական առումով հիմնականում նույնանում է Հայկական լեռնաշխարհի հետ: Հանրահայտ է նաև, որ համաշխարհային պատմության ու քաղաքակրթության մաս կազմող հայ ժողովուրդն այդ նույն հայրենի պատմական տարածքում հին և միջին դարերում հաջորդաբար կերտել է թագավորությունների (պետականությունների) շարք՝ Արարատ-Ուրարտու, Հայկազուն-Երվանդական, Արտաշիսյան, Արշակունի, Բագրատունի և այլն, որոնք ինքնին բովանդակել են հենց Մեծ Հայքը, այսինքն՝ ամբողջական ու Միացյալ Հայաստանը: ՀՅԴ գործիչ Ռ. Տեր- Մինասյանի դիտարկմամբ՝ ամբողջական Հայաստանի անառարկելի պահանջը «կը բղխի» հենց

«Մեր ժողովուրդի եւ Հայաստանի պատմութենէն»[1]:

Հայոց աշխարհում են արարվել հայ բարձրարժեք մշակույթը՝ ձեռագիր մատյանները, ճարտարապետական կոթողները, միջնադարյան համալսարանները, հայոց մայրաքաղաքները, նյութական ու հոգևոր այլ մեծ արժեքներ: Հայաստանն ու հայ ժողովուրդն ապրել են վերելքների, ինչպես նաև անկումների ու կորուստների ժամանակաշրջաններ: Հազարամյակների հայոց պատմությունը ինքնին հավաստում է, որ հայ ժողովուրդն իր հայրենիքի՝ Մեծ Հայքի պահանջատիրության հարցում ունի անվերապահ պատմական, համազգային, քաղաքական ու բարոյական իրավունք, ինչը պահանջատիրության տեսակետից նաև ուժի աղբյուր է: «Հայոց պատմությունը Հայաստանի ռազմավարական անձեռնմխելի պաշարն է: Այն պարունակում է կայուն պետություն և հասարակություն կերտելու ամուր հիմք, որն է հայկական չորսհազարամյա քաղաքակրթությունը և նրա արդյունք հանդիսացող հայոց զորեղ, ընդգծված յուրօրինակ ինքնությունը»[2]:

Սակայն հետագա դարերում, արտաքին ու ներքին ոչ նպաստավոր գործոններով ու հանգամանքներով պայմանավորված, Հայաստանը կորցրեց իր անկախ պետականությունը, ուստիև՝ տարածքային ամբողջականությունը: Հայաստանի անկախության կորստից հետո էլ ազատության ու անկախության գաղափարները մնացին ժողովրդի դիցաբանության, հերոսապատումների, հոգևոր բնույթի երկերի ու ձեռագրերի մեջ: Մի

---

[1] **Ռուբեն**, Միացեալ Հայաստան, տե՛ս «Դրօշակ», Փարիզ, 1926 (հուլիս), թիվ 7, էջ 211:

[2] **Այվազյան Ա.**, Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ (քննական տեսություն), Եր., 1998, էջ 8:

խոսքով՝ դրանք նյութական մշակույթի, պատմական հիշողությունների ձևերով դարերի ընթացքում փոխանցվեցին սերնդեսերունդ և հասան մինչև մեր ժամանակները:

Երբ հայ ժողովուրդը կորցրեց իր պետականությունը, նրա հայրենիքը հայտնվեց հեռու և մոտիկ նվաճողների տիրապետության տակ: Իր կամքից անկախ՝ Հայոց երկիրը ավելի քան չորս անգամ բռնի բաժանման ենթակվեց տարբեր աշխարհակալությունների միջև: Բայց և այնպես հայ ժողովրդի հոգում դարերով անթեղված մնացին ոչ միայն անկախության, այլև ամբողջական հայրենիքին (Հայկական Տավրոսից մինչև Արցախ) վերատիրելու գաղափարները: Հայ հանրույթը, անկախ իր բնակության վայրից, հայրենաբնակ թե Հայաստանից հեռացած, միշտ էլ իրեն համարել է մեկ ամբողջություն, և նման գիտակցության մի արտահայտություն էր ազգը համախմբող Հայաստանյաց Սուրբ եկեղեցին՝ իր Ամենայն Հայոց հոգևոր առաջնորդով՝ Կաթողիկոսով:

Անառարկելի պատմական իրողություն է, որ Հայոց հին և միջնադարյան թագավորությունները ավել կամ պակաս չափերով իրենց մեջ մարմնավորել են Միացյալ Հայաստանի ֆիզիկական և քաղաքական բովանդակությունը: Սակայն, ինչպես արդեն ասվեց, հետագա դարաշրջանում, ներքին ու արտաքին ազդակներով պայմանավորված, հայրենի հողում՝ Բագրատունյաց, իսկ դրանից դուրս՝ Կիլիկյան հայկական պետականությունների կորստից հետո պատմաբան Գ. Խուդինյանի բնորոշմամբ՝ 1441 թ. Սիսից դարձյալ էջմիածին վերադարձած Մայր առոթի գործունեության առանցքը դառնում է հայ առաքելական հավատով հոգևոր Հայաստանի պահպանումը և փոխանցումը հետագա լավ ժամանակների դարաշրջան: Այլ խոսքով՝ Մայր աթոռ ս.

էջմիածինը դառնում է հայ կրոնական ազգ-համայնքի հոգևոր կենտրոնը՝ շեշտը դնելով առայժմ հոգևոր Միացյալի վրա. «իբրև հայրենի հողի վրա գոյատևող պետականազուրկ կրոնական համայնք»[3]: Հասկանալի է, որ Միացյալ Հայաստանի ֆիզիկական ու քաղաքական բաղադրիչները կամա թե ակամա մղվում էին երկրորդական պլան, մինչև որ կգար նոր ժամանակների ազատարար շունչը:

Պետք է նկատի առնել, որ Միացյալ հայրենիքի գաղափարը ենթադրում էր ոչ միայն տարածքային խնդիր, այլև ազգի ինքնության պահպանության ու անվտանգության ապահովման, միասնացած անկախ հայրենիքի պետականության ամրակայման, ազգային մշակույթի, տնտեսության, կրթության բնականոն զարգացման և համանման այլ խնդիրների ամբողջական լուծում:

Թուրքիայի և Պարսկաստանի, իսկ ավելի ուշ՝ նաև Ռուսաստանի միջև բաժանված Հայաստանի երկու մեծ հատվածների ազատագրումն ու միավորումը, հիմնախնդրի լուծման տեսակետից, նոր իրավիճակ ստեղծեցին նոր ժամանակներում: Նկատի ունենալով, որ արևմտահայության դրությունն առավել ծանր էր, հայ հասարակական-քաղաքական շրջանակների առաջնահերթ ու հրատապ խնդիրը դարձավ Արևմտյան Հայաստանի ազատագրումը օսմանյան լծից:

Տակավին 17-րդ դարի երկրորդ կեսին թուրք-պարսկական տիրապետության դեմ Հայաստանի ազատագրության մունետիկներ Մահտեսի Մուրատ Բաղիշեցին, Հակոբ IV Ջուղայեցի

---

[3] **Խուդինյան Գ.**, Միացյալ Հայաստանի տեսլականը (տե՛ս «ՎԷՄ», Եր. 2019, թիվ 3 (67), հուլիս-սեպտեմբեր, Հավելված (գիտաժողովի նյութեր), էջ IV:

կաթողիկոսը, Իսրայել Օրին և մյուսները հայրենիքի ու ժողովրդի ազատագրությունը սկսում են կապել զինված ապստամբության, նաև դրսի օգնության հետ, իսկ մեկ դար անց՝ 18-րդ դարի երկրորդ կեսին, հեռավոր հնդկահայ գաղութում ազատագրական գաղափարաբանության նվիրյալներ Հովսեփ Էմինի, Շահամիր Շահամիրյանի, Մովսես Բաղրամյանի, նաև Ռուսաստանում Հովսեփ արք. Արղության-Երկայնաբազուկի, Մովսես Սարաֆյանի և մյուսների ջանքերով մշակվեցին հայրենիքի ազատագրման և ապագա պետականության վերակերտման գաղափարական ու կազմակերպական սկզբունքները: Դրանք հիմնականում բովանդակել են հետևյալը.

1.ազգային-ազատագրական շարժման կուռ ու ամբողջական տեսություն,

2.ազգային պետականության վերակերտման գաղափարաբանություն,

3.ապագա պետության կառավարման ձևի և կառուցվածքի հիմնական սկզբունքներ[4]:

Հարկ է արձանագրել, որ երբ «Որոգայթ փառաց» գրքի հեղինակը խոսում էր Հայաստանի ազատագրության և ապագա անկախ հանրապետությունում եվրոպական արժեքային համակարգով **սահմանադրական-պառլամենտական** իդեալի իրագործման մասին, նա, անկասկած, նկատի է ունեցել **ամբողջական Հայաստանը**: Ըստ Շահամիրյանի՝ Հայաստանը տարածականորեն ընդգրկելու էր «Կասպիական ծովից մինչեւ

---

[4] **Մանուչարյան Հակոբ, Մանուչարյան Հենզել**, Հայոց պետության կառավարման և կառուցվածքի ձևերի՝ հնդկահայ լուսավորիչների հայեցակարգը (տե՛ս Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 2011, թիվ 134.6, էջ 51:

Կիլիկիայի արեւմտյան սահմանները եւ Տայք նահանգից մինչեւ Տավրոսի լեռները»[5]:

Արդեն 19-րդ դարի առաջին երեսնամյակին հիմնականում ռուսական զենքի միջոցով Հայաստանի ազատագրման և անկախության վերականգնման հույսով էին խանդավառված մի խումբ հայ աշխարհիկ ու հոգևոր գործիչներ: Գ. Լազյանն այդ մասին գրում է. «Հայ ազգային գործիչները կը յուսային ոչ միայն ազատագրուիլ պարսկական եւ թրքական լուծէն, այլեւ վերաստեղծել Հայաստանի անցեալ փառքը, դառնալու համար ազատ ու անկախ պետութիւն»[6]: Այդ գործիչներից էին Խ. Լազարյանը, Ա. Խուդաբաշյանը, Կ. Արղության-Երկայնաբազուկը և, իհարկե, այդ ժամանակաշրջանի հայ մեծագույն դեմքը համարվող, հայ եկեղեցու Թիֆլիսի թեմի առաջնորդ, իսկ հետագայում Ամենայն Հայոց կաթողիկոս **Ներսես Ե Աշտարակեցին**:

Դեռ 1826-1828 թթ. ռուս-պարսկական երկրորդ պատերազմը չավարտված՝ ազգային նշանավոր գործիչներից Խաչատուր Լազարյանը ռուսական կառավարությանը ներկայացրեց հայ ազգային շրջանների տրամադրություններն արտահայտող քաղաքական մի նախագիծ, որով առաջ էր քաշվում ռուսական կայսրության կազմում «Հայկական թագավորություն» ստեղծե-

---

[5] **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1986, էջ 539:

[6] **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ Դատը, Եր., 1991. էջ 1:

լու գաղափարը[7]: Այն օժտվելու էր ներքին ինքնավարության իրավունքով, հայկական զինուժով, զինանշանով, դրոշով և այլն, իսկ Ռուսաց կայսրը պաշտոնապես ընդունելու էր նաև Հայոց թագավորի տիտղոսը[8]: Նույն կերպ Ն. Աշտարակեցին հույս ուներ ռուսական զենքի միջոցով վերականգնել, այսպես կոչված, «Հայկական դքսությունը»[9]: Բայց տարածքային առումով այն ընդգրկելու էր միայն արևելահայ մարզերը, ուստի խոսք չէր կարող լինել Միացյալ Հայաստանի մասին:

1828 թ. մարտի 21-ին՝ Թուրքմենչայի պայմանագիրը վավերացնելուց հետո, սակայն կայսր Նիկոլայ 1-ը, մերժելով հայերի ինքնավարության պահանջը և նրանց փոքր-ինչ սիրաշահելու նպատակով, հատուկ հրովարտակով Ռուսաստանի կայսրությանը միացված Երևանի և Նախիջևանի նախկին խանություններից և Օրդուբադի օկրուգից կազմեց վարչական մի միավոր, որը կոչվեց Հայկական մարզ և մտավ կայսեր տիտղոսի մեջ: Իրականում Հայկական մարզ անվանումն ավելի շատ ձև էր, քան բովանդակություն: Ցարական կառավարությունը, առաջնորդվելով մեծապետական-գաղութատիրական շահերով, ավելի ուշ՝ 1840 թ., վերացրեց նաև «Հայկական» անվանումը. Անդրկովկասի գրավյալ շրջանները, Ռուսական կայսրության վարչատարածքային բաժանումների սկզբունքով, վերածվեցին սովորական նահանգների:

19-րդ դարի երկրորդ կեսից, դրսի ու ներսի ազդակներով պայմանավորված, ազատագրության ու անկախության գաղա-

---

[7] Տե՛ս Հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Եր., 2010, էջ 262:

[8] Տե՛ս նույն տեղում, նաև՝ **Պարսամյան Վ. Ա.**, Հայ ժողովրդի պատմություն (1801-1917 թթ.), հ. 3, Եր., 1967, էջ 101:

[9] **Тунян В. Г.**, Католикос всех армян Нерсес V Аштаракеци «Защитник отечества», Эчмиадзин, 2012, с. 169-172.

փարները պետք է ավելի պարարտ հող գտնեին և ավելի կոնկրետ ու առարկայական բնույթ ստանային: Այդ շրջանից մեզանում սկսում են աստիճանաբար արմատավորվել եվրոպական արժեքային համակարգի տարրեր: Հայ առաքելական եկեղեցու կողմից դարերով քարոզվող ու արմատացած հպատակվելու եւ հնազանդվելու մտայնությանը աստիճանաբար փոխարինելու էր գալիս «ազատության տեսլականը»[10]: Ուստի երկատված հայրենիքի, ճնշված ու հարստահարված ազգի ազատագրության գաղափարները պետք է դառնային հայ առաջադեմ քաղաքական մտքի գլխավոր նպատակն ու շարժիչ ուժը:

Դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման գաղափարախոսները դարձան Հայր Ղ. Ալիշանը, Մ. Նալբանդյանը, Մ. Խրիմյանը, Ռաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան), Ծերենցը (Հովսեփ Շիշմանյանը), Ե. Տեմիրճիպաշյանը և ուրիշներ: Ի մասնավորի, ՀՅԴ պատմագիր ու գաղափարախոս Մ. Վարանդյանի բնութագրմամբ, «Վարագավանքի ըմբոստ մարգարե» Մկրտիչ վարդապետ Խրիմյանի խմբագրած «Արծուի Վասպուրականին» գուցե միակ հեղափոխական իրողությունն էր հայկական հորիզոններում, միակ օրգանը հայրենիքում, որ

[10] **Խուդինյան Գ.**, Հ. Յ. Դաշնակցության ծնունդը, Եր., 2000, էջ 7:

նրա անհամար փլատակները ողբալով հանդերձ՝ կռվի, ըմբոստացման հրավեր էր կարդում նոր սերնդին[11]:

Նույն Մ. Վարանդյանը, խոսելով հայկական շարժման պատմության ակունքների մասին, արդեն 19-րդ դարում՝ սուլթանական արհավիրքի շրջանում, դարձյալ Հայր Ալիշանին և «Արծուի Վասպուրականի»-ի հեղինակին էր համարում հայկական «ընդվզումի և ազատութեան հոյատիպ շեփորողները»[12]: Այնուհետև, վերջիններիս ստեղծագործությունների թվին, նա հավելում էր Մ. Խրիմյանի աշակերտներ Գ. Սրվանձտյանի, Ա. Թոխմախյանի, Ս. Տևկանցի գրվածքները, Ն. Ռուսինյանի, Մ. Նալբանդյանի, Մ. Պեշիկթաշլյանի հայրենաշունչ տաղերը և այլն[13]:

Իսկ հայ հասարակական-քաղաքական գործիչ, պատմաբան Դավիթ Անանունի պատկերմամբ 19-րդ դարի հայ հասարակական-քաղաքական մտքի ճանաչված դեմքերը, ինչ հասարակական դավանանքի էլ պատկանելիս լինեին, խորհել են հայության հավաքման, նրա կազմակերպված գոյության անհրաժեշության մասին՝ սկսած Խ. Աբովյանից, Ստ. Նազարյանցից, Մ. Նալբանդյանից մինչև Ռ. Պատկանյան, Գր. Արծրունի և մյուսները[14]:

Հայրենիքի ազատագրման վեհ նպատակին էին միտված 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում հայ հասարակական-քաղաքական շրջանակների թափած ջանքե-

---

[11] Տե՛ս **Վարանդեան Մ.**, Հայկական շարժման նախապատմութիւնը, հ. Ա, Ժընեւ, 1912, էջ 203:

[12] Նույն տեղում, էջ 278:

[13] Տե՛ս **Վարանդեան Մ.**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Պարիզ, 1932, էջ 12:

[14] Տե՛ս **Անանուն Դ.**, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հ. 2, Էջմիածին, 1922, էջ 171:

ը: Ռուսական կողմից պատերազմին համակողմանի մասնակցություն բերած հայերը, հայրենիքն ազատագրված տեսնելու ակնկալիքով, նաև ազատագրության ծրագրեր էին մշակում: Այդպիսիներից մեկը 1878 թ. ամռանը Մկրտիչ Խրիմյանի կողմից Բեռլինի կոնգրեսին ներկայացված, Ն. Վարժապետյանի կազմած, պատրիարքարանի ծրագիրն էր Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու մասին[15]:

Հայ ժողովրդի ներքին մղումով ու նաև՝ Մեծ տերությունների միջամտությամբ ասպարեզ բերված Հայկական հարցը, չնայած վերջինիս իրագործման ուղղությամբ թուրք իշխանությունների հարուցած խոչընդոտներին, այդուհանդերձ, միջազգային ատյաններում և ի լուր աշխարհի արձանագրեց անառարկելի մի փաստ, որ հայ ազգը ցանկանում է իր հայրենիքում, տվյալ դեպքում՝ Արևմտյան Հայաստանում ինքնակազմակերպվել, ապրել մարդավայել կյանքով, ամենից առաջ պաշտպանված տեսնել հայ մարդու անձն ու գույքը, ազգային-մշակութային իրավունքներն ու ազատությունները: Դա, որպես մի հզոր ազդակ, հայ ժողովրդին պետք է մղեր դեպի ազատագրական պայքարի մեծ ու դժվարին ճանապարհ:

2.ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հայրենիքի ազատագրության և պետականության վերականգնման գաղափարաբանությունը նոր որակ է ստանում 19-րդ դարի 80-ական թվականների երկրորդ կեսից, երբ ձևավոր-

---

[15] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Հայկ. ՍՍՀ ԳԱ, հ. 6, Եր., 1981, էջ 116-117:

վում են հայ ազգային կուսակցությունները: Հայրենիքի ազատագրության հրամայականով դարավերջին ասպարեզ իջած հայ ավանդական երեք կուսակցությունների համար էլ առաջնային խնդիրը Թուրքահայաստանի՝ Արևմտյան Հայաստանի, ազատագրությունն էր: Հայ քաղաքական կուսակցությունների ասպարեզ իջնելն ինքնին ենթադրում էր նախորդ՝ **խոսքի՝** մտքերի ու գաղափարների տարածման շրջանից անխուսափելիորեն անցում կատարել դեպի **գործի** շրջան:

Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում, 1885 թ. ձևավորված Արմենական կուսակցության գլխավոր նպատակը, պայքարի յուրահատուկ ինքնապաշտպանական մարտավարությամբ, ավելի նեղ շրջանակով ու համեստ հնարավորություններով, ի վերջո, Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր:

Ի տարբերություն արմենականների՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում հիմնված հայ ազգային երկրորդ՝ Հնչակ քաղաքական կուսակցությունն իր ծրագրում (այն կազմվել է 1887 թ., հրատարակվել՝ 1888 թ. «Հնչակ» թերթում) խնդիր էր դնում «Թրքահայ ժողովրդի ազգային անկախութիւնը ձեռք բերելուց ու հաստատելուց հետոյ՝ այդպիսի զօրութեամբ շարունակել ընդհանուր հայութեան ազատութեան գործը, ազատել օտարների լծից ռուսահայն ու պարսկահայը և կազմել այդ երեքից մի դաշնակցային ռամկապետական հանրապետութիւն, որ համայն հայութեան համար ճամբայ կը բանայ դիմելու դէպի Հեռավոր նպատակը, դէպի սոցիալիստական աշխարհը»[16]: Այսինքն՝ հայ քա-

---

[16] «Հնչակ», Ժնև, 1888, թիվ 1 (հոկտեմբեր-նոյեմբեր), Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1456, ց. 1, գ. 5, թ. 69, նաև՝ «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1962», խմբ. **Արսեն Կիտուր**, հ. Ա, Պէյրութ, 1962, էջ 36-37:

ղաքական կուսակցություններից առաջինը Հնչակյաններն էին, որ իրենց ծրագրում առաջ քաշեցին Միացյալ Հայաստանի նպատակը. Անկախ և Միացյալ Հայաստանի մեջ պետք է մտնեին պատմական Մեծ Հայքը ներառող Թուրքահայաստանը, Ռուսահայաստանը և Պարսկահայաստանը և դրանց ազատագրմամբ ու միավորումով ստեղծվեր **Մեծ Հայաստան**:

Խնդրին իրատեսորեն մոտենալով՝ պետք է նկատել, որ 19-րդ դարավերջին՝ Հայաստանի ու հայ ժողովրդի համար ստեղծված աշխարհաքաղաքական բարդ պայմաններում, գործնականում դժվարին, եթե չասենք գրեթե անհնարին խնդիր էր դառնում դիվանագիտական ճանապարով ոչ միայն Հայաստանի անկախության ձեռքբերումը, այլև, ինչպես ցույց տվեց Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի գործադրման պատմությունը, քիչ թե շատ բարենորոգումներ կատարելը: Մնում էր հիմնականում ապավինել սեփական ուժերին: Կարծում ենք՝ այդ իրողությունները հաշվի առնելով էր, որ 1890 թ. Թիֆլիսում քաղաքական ասպարեզ իջած Հ Յ Դաշնակցություն կուսակցությունը տվյալ պատմափուլում, գիտակցաբար, ոչ միայն Մեծ Հայաստանի, այլ անգամ Թուրքահայաստանի անկախության պահանջ չէր դնում: Հ Յ Դաշնակցության առաջին ծրագրային փաստաթուղթը՝ «Մանիֆեստը», հայ հեղափոխական խմբերին կոչ էր անում «Միացնել բոլոր ուժերը՝ ... նպատակ դնելով հասնել **Թիւրքաց–Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութեան**»[17]:

1892 թ. կուսակցության առաջին Ընդհանուր ժողովում ընդունված և 1894 թ. «Դրօշակ» պաշտոնաթերթում լույս տեսած առաջին ծրագիր-կանոնագրում դարձյալ ամրագրված էր հեղափոխական (ապստամբության) միջոցով **Տաճկահայաստանում**

---

[17] **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ Դատը, Եր., 1991, էջ 67:

(թուրքաց Հայաստանում) քաղաքական և տնտեսական ազատության հասնելու նպատակը[18]: Կուսակցության հիմնադիր անդամները հստակ ձևակերպմամբ անկախության պահանջ չէին դնում, էլ չենք խոսում Միացյալ Հայաստանի մասին: Այս կապակցությամբ Հ Յ Դաշնակցության պատմության առաջին հեղինակներից Մ. Վարանդյանը փաստում է, որ Դաշնակցության ռահվիրաները, իբրև զգաստ իրապաշտներ, հանդես եկան ավելի համեստ, սահմանափակ ծրագրով, քանզի Քրիստափորի ու Զավարյանի նման ընկերները լավ կըմբռնեին, «թէ որքան յանդուգն ու ցնորական պիտի երևէր անկախ Հայաստանի պահանջը նման զարհուրելի (նկատի էր առնվում թուրքքրդական հարևանությամբ միջավայրը՝ Ա. Հ.) պայմաններու մէջ»[19]:

Հայաստանի անկախության մասին ակնարկ չկա նաև կուսակցության Վիեննայի 1907 թ. փետրվար-մայիսին տեղի ունեցած չորրորդ Ընդհանուր ժողովում ընդունված նոր ծրա-գրում: Այստեղ արդեն, 20-րդ դարասեմի նոր իրողություններով պայմանավորված, երկու՝ թուրքահայ և ռուսահայ ճակատով գործող ՀՅԴ-ն դարձյալ սահմանափակվում էր Թուրքահայաստանի և Անդրկովկասի համար ինքնավարության (վարչական ապակենտրոնացում, ֆեդերացիա) պահանջներով՝ համապատասխանաբար օսմանյան և ռուսական դաշնային (ֆեդերա-

---

[18] Տե՛ս «Դրօշակ», 1894, թիվ 11, նաև՝ **Նավասարդեան Վ.**, Հայ անկախութեան գաղափարը մերձաւոր անցեալի մէջ (տե՛ս «Հայրենիք», 1924 (փետրվար), թիվ 4, էջ 80), Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, Պոսթըն, 1934, էջ 100, **Գիւլխանդանեան Ա.**, Հ. Յ. Դաշնակցութեան առաջին ծրագիրը եւ նրա հեղինակները, Աթէնք, 1987, էջ 16, 55-56:

[19] **Վարանդեան Մ.**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հ. 1, Եր., 1992, էջ 105:

տիվ) պետությունների շրջանակներում[20]:

Դա ճանապարհ էր բացելու հաջորդ քայլի՝ **Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծման համար**: Ուստի Հ Յ Դաշնակցությունն արտաքուստ չափավոր, բայց հեռատես ու հետևողական ծրագրային պահանջներով ավելի շատ նպաստ է բերել Հայաստանի անկախության գործին, քան հնչակյանները՝ «Մեծ Հայաստան» ստեղծելու աղմկահարույց, ցուցադրական պահանջով ու գործելակերպով:

Ռուսական առաջին՝ 1905-1907 թթ. հեղափոխության, երիտթուրքական 1908 թ. պետական հեղաշրջման և դրան հաջորդած մի քանի տարիներին ՀՅԴ-ն, ինչպես նաև Հայ Սահմանադրական Ռամկավար (հիմնված 1908 թ. հոկտեմբերին Կ. Պոլսում Արմենական և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների միաձուլումից) և Ս Դ Հնչակյան կուսակցությունները ավելի չափավորեցին իրենց քաղաքական նպատակներն ու պահանջները և աշխատեցին հանդես գալ օսմանյան սահմանադրական պետության շրջանակներում՝ ազգերի ներքին լայն ինքնավարության, օրինականության, ազատականության և ազգերի համերաշխության կարգախոսներով[21]:

Խոսելով արդեն «Սոցիալ-Դեմոկրատ» անվան հավելումը ստացած Հնչակյան կուսակցության դիրքորոշման փոփոխության մասին՝ պետք է նշել, որ, եթե այդ կուսակցության նախկին

---

[20] Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիր, Կ. Պոլիս, 1908, էջ 17-18:

[21] Տե՛ս Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան ծրագիր և կանոնագիր, Կ. Պոլիս, 1910, էջ 3-13, Ծրագիր Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (Տաճկահայաստանի համար), Կ. Պոլիս, 1910, էջ 15, **Համբարյան Ա.**, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին (19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ), Եր., 1990, էջ 375-376:

ծրագրում խոսվում էր երեք Հայաստանների (թուրքական, ռուսական ու պարսկական) ազատագրման և դրանց միավորումով Միացյալ Հայաստանի ստեղծման մասին, ապա դարասկզբի փոփոխված քաղաքական պայմաններում ընդունված նոր ծրագրում՝ իբրև նպատակ, առաջ էր քաշվում ընդամենը Թուրքիայի կազմում Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջը: Ս Դ Հնչակի նոր ծրագրը պահանջում էր «Սահմանադրական Թուրքիոյ հանդեպ ժխտել ամեն տեսակ անջատողականութիւն»[22]: Նման դիրքորոշման որդեգրումը պայմանավորված էր երիտթուրքական հեղաշրջմամբ, Աբդուլ Համիդի վարչակարգի տապալումից հետո իշխանության ղեկին անցած Իթթիհատի հռչակած կեղծ ժողովրդավարության, սահմանադրականության, պառլամենտարիզմի, Ֆրանսիական մեծ հեղափոխությունից ընդօրինակած՝ ժողովուրդների ազատության, հավասարության, եղբայրության մասին կարգախոսների առաջ բերած խաբկանքով, որը շուտով պետք է տեղի տար խորը հիասթափության:

Հայտնի է, որ պատմական այդ շրջափուլում ստեղծված պայմաններում Հ Յ Դաշնակցությունը մի քանի տարի գործակցեց 1908 թ. հուլիսին «**Հյուրիեթ**» (ազատություն) հայտարարած և սահմանադրություն հռչակած երիտթուրքական կառավարող Իթթիհատ կուսակցության (Միություն և առաջադիմություն կոմիտե) հետ, սակայն հիասթափություն ապրելով ու քաղաքական մեծ դաս առնելով՝ 1912թ. գարնանը պաշտոնապես խզեց հարաբերությունները: Այս քաղաքական դավանանքով էլ հայ ժողովուրդը, իր կամքից անկախ, մտավ պատերազմի մեջ՝

---

[22] Ծրագիր Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (Տաճկահայաստանի համար), Կ. Պոլիս, 1910, էջ 15:

որպես Անտանտի «փոքր դաշնակից»:

Այսպիսով՝ մինչև Առաջին աշխարհամարտը հայ ազգային կուսակցությունները Արևմտյան Հայաստանի, առավել ևս՝ Արևելյան Հայաստանի քաղաքական անջատման ու անկախության պահանջ չեն բարձացրել, և այդ իմաստով անհիմն են թուրք, ռուս և այլ հեղինակների ու ժամանակի մամուլի պնդումները հայ քաղաքական կազմակերպությունների անջատական (սեպարատիստական) ձգտումների մասին:

Ասվածից չի հետևում, սակայն, թե Հ Յ Դաշնակցությունը չէր ընդունում անկախության գաղափարը: Այս կապակցությամբ ակադեմիկոս Հր. Սիմոնյանը գրում է. «Իր դավանագրում առաջադրելով ֆեդերացիայի պահանջը՝ Դաշնակցությունը, սակայն, **դեմ չէր արտահայտվում** անկախության գաղափարին, ընդհակառակը, հայության երկու հատվածների նկատմամբ համանման պահանջների առաջադրումը լռելյայն գալիս էր գծելու և հարթելու հատվածների **ամբողջացման** նույն ուղիները (ընդ-գծումները հեղինակինն են՝ Ա. Հ.): Իսկ այդ ամբողջացումը կարող էր լինել և պիտի լիներ ոչ թե ռուսական կամ թուրքական, այլ միայն հայկական իշխանության տակ»[23]:

Հանրագումարի բերելով վերոշարադրյալը, կարելի է հետևեցնել, որ մինչև Ա աշխարհամարտը հայ հասարակական-քաղաքական շրջանակները, այդ թվում՝ ՀՅԴ-ն, պաշտոնապես ու բացահայտ կերպով չեն դրել Հայոց անկախ պետականության վերականգնման, առավել ևս Միացյալ Հայաստանի ծրագրային պահանջ:

---

[23] **Սիմոնյան Հր.**, Ազատագրական պայքարի ուղիներում, չորս գրքով, գիրք II, Եր., 2003, էջ 183:

3. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ և ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ՝ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՇՐՋԱՆՈՒՄ (1914-1917ԹԹ.)

Առաջին աշխարհամարտում հայերը, իրենց կամքից անկախ ներքաշվելով պատերազմի մեջ, կամա թե ակամա, հիմնականում կողմնորոշվեցին դեպի Ռուսաստան: Թեև ՀՅԴ-ն մեծ պատերազմի նախօրյակին Էրզրումում գումարած 8-րդ Ընդհ. ժողովում, ըստ ամենայնի, ճիշտ որոշում էր կայացրել՝ ռուս-թուրքական պատերազմի դեպքում գրավել չեզոք դիրք՝ ո՛չ Թուրքիա, ո՛չ Ռուսաստան, սակայն հենց որ պատերազմն սկսվեց, հայությունը բնազդաբար կողմնորոշվեց դեպի Ռուսաստան, ինչն, անշուշտ, իր մեջ վտանգներ էր պարունակում:

Այդ համատեքստում հավանաբար չպետք է լուրջ ընդունել Ընդհ. ժողովի ավարտական փուլում՝ 1914 թ. օգոստոսին, Էրզրում ժամանած Իթթիհատի լիազոր ներկայացուցիչներ Օմար Նաջի բեյի և Բեհաէդդին Շաքիրի առաջարկը՝ պատերազմի դեպքում հայության (թուրքահայ թե ռուսահայ) թուրքերի կողմն անցնելու, կովկասյան մյուս ժողովուրդների հետ միասին ապստամբություններ բարձրացնելու, ռուսական բանակի դեմ կռվելու առաջարկները: Հաղթանակի դեպքում խոստացվում էր Կովկասում իբրև թե ստեղծել **Հայկական պետություն (ինքնավար Հայաստան)**՝ Թուրքիայի հովանու ներքո, կենտրոն ունենալով Էջմիածինը[24]: Ըստ երիտթուրք պատվիրակների՝ այդ Հայաս-

---

[24] **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, հ. Գ, Պէյրութ, 1963, էջ 10, **Լեո**, Անցեալից (հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, 1925, էջ 285, նաև՝ **Ներսիսեան Ա.**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն (1908-1918 թթ.), Եր., 2013, էջ 142:

տանի մեջ կմտնեին Ռուսահայաստանը, Տաճկահայաստանի Էրզրումի նահանգից որոշ մասեր՝ առանց Էրզրում քաղաքի, և Վան ու Բիթլիս նահանգներից որոշ հողամասեր: Եվ այդ Հայաստանը, Վրաստանի, անդրկովկասյան թաթարների (Ադրբեջանի) ու Դաղստանի պետությունների հետ, պիտի բաղձալի պատվար դառնար Թուրքիայի և Ռուսաստանի միջև[25]:

Ըստ այդ բանակցությունների մասնակից Ռ. Տեր-Մինասյանի՝ ստացվում էր, որ Իթթիհատի և թուրքական կառավարության պաշտոնական լիազորները կարծես Միացյալ Հայաստան ստեղծելու առաջարկ էին անում[26]: Ռուբենի նույն միտքն է հաստատում նաև՝ Ս. Վրացյանը[27]: Եվ սա այն դեպքում, երբ, ինչպես արդեն ացվեց, այդ ժամանակ Դաշնակցության ծրագրերում և գործնական պլաններում նշվում էր միայն Հայաստանի երկու հատվածների ինքնավարության մասին՝ ցարական Ռուսաստանի և օսմանյան Թուրքիայի կազմում: Բայց երբ խնդիրը դիտարկում ենք նախորդ տասնամյակներին ու 1914 թ. հետո թուրքական իշխանությունների՝ հայ ժողովրդի հանդեպ վարած ցեղասպան քաղաքականության տեսանկյունից, ապա միամտություն կլինի հավատալ, թե թուրքական կառավարությունը հայերի համար ինքնավարության թեկուզ նվազագույն պայմաններ կստեղծեր:

Բնականաբար, Դաշնակցության ներկայացուցիչները դիվանագիտական պատշաճ տակտով մերժում են Ռուսաստանի դեմ կռվելու երիտթուրք պատվիրակների առաջարկը՝ նաև

---

[25] **Ռուբէն**, Հայ-թրքական կնճիռը, Գահիրէ, 1924, էջ 142:

[26] **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Է (7), Եր., 1990, էջ 126-127:

[27] **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրութ, 1958, էջ 9:

հորդորելով թուրք ղեկավարությանը՝ պահպանել չեզոքություն, չմտնել պատերազմի մեջ, որը կործանարար կլիներ և՛ հայերի, և՛ թուրքերի համար: Սակայն Մեծ Թուրան ստեղծելու գայթակղությամբ տարված Իթթիհատի պարագլուխները երկիրը ներքաշեցին պատերազմի մեջ: Ինչ վերաբերում է հայ ժողովրդի որդեգրելիք դիրքորոշմանը, ապա ՀՅԴ համաժողովը, ինչպես ասվեց, որոշել էր պատերազմի պարագայում մնալ լոյալ. յուրաքանչյուր հատվածի հայությունը պետք է մնար օրինապահ, ուղղամտորեն կատարեր իր քաղաքացիական պարտականությունը թե՛ Թուրքիայի և թե՛ Ռուսաստանի հանդեպ: Այդ իրադարձությունների կիզակետում գտնվող արևմտահայ գործիչներից Վ. Փափազյանը գրում էր, որ ՀՅԴ Պոլսի և Երկրի բոլոր մարմինները միակամ էին. «Թիւրքիոյ հայութիւնը պարկեշտորեն պետք է կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնները եւ յանձն առնէ պահանջուած զոհողութիւնները»[28]: Բայց հենց երիտթուրքերի հայաջինջ ծրագրի պատճառով հնարավոր չեղավ այդ ուղեգիծը պահել: Մնում էր հույսը կապել նախ՝ սեփական ուժի, ապա եւ՝ Ռուսաստանի հետ:

Հայ քաղաքական ազդեցիկ շրջանակները, աջակցելով ու ապավինելով ռուսական զենքի հաղթանակին, հույս ունեին, թե պատերազմը երկար չի տևի, և դրա արդյունքում գրավելով Արևմտյան Հայաստանը, ինչը մի քանի անգամ տեղի էր ունեցել նախորդ՝ 19-րդ դարի ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, ռուսական հովանու ներքո վերջապես կստեղծվի ինքնավար Հայաստան: Ավելին՝ ըստ Ս. Վրացյանի՝ ոմանք պնդում էին, թե իբր ցարը խոստացել է, միացնելով թուրքահայ և ռուսահայ հողերը, ստեղծել **ինքնավար միացյալ Հայաս-**

---

[28] **Փափազեան Վ.**, Իմ յուշերը, հ. Բ, Պէյրութ, 1952, էջ 280:

տան[29]: Լեոն իր հուշերում գրում է. «Չէինք ուզում, որ ռուսական ցարիզմը մեզ կլանե, ուզում էինք ինքնավար լինել, գուցե և անկախ»[30]:

Պատերազմում սպասվելիք արհավիրքների պայմաններում, ժողովրդի ինքնապաշտպանության գործը զորացնելով հանդերձ, Ռուսաստանի հովանու ներքո ինքնավար միացյալ Հայաստանի մտածումներով էին առաջնորդվում թե՛ դաշնակցականները և թե՛ արեւմտահայ ռամկավարները: Ավելին՝ ռամկավար գործիչ Արտակ Դարբինյանը նշում է, որ ՀՅԴ բարձրագույն մարմինը՝ Արևելյան Բյուրոն, «պիտի չուզէր գոհանալ արեւելեան եւ արեւմտեան Հայաստաններու կցումով, այլ կխորհէր անկախ Հայաստան ստեղծելու մասին»[31]: Այլ խոսքով՝ ՀՅԴ-ն ակնկալում էր, որ Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի նվաճումով սկզբում կստեղծվի Միացյալ Հայաստան՝ ռուսական հովանու ներքո, իսկ հեռանկարում՝ անկախ Հայաստան:

Սակայն այդ գաղափարների նյութականացման բավարար հիմքեր չկային: Դա երևում է հենց աշխարհամարտի սկզբին՝ օգոստոսի 5-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի, Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի միջոցով, Նիկոլայ II ցարին հղած նամակից, և փոխարքայի միջոցով Ռուսաստանի կառավարության նախագահ Ի. Գորեմիկինի՝ սեպտեմբերի 2-ի պատասխանից և ցարի անունով հայերին

---

[29] Տե՛ս **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, հ. Գ, Գահիրէ, 1963, էջ 26:
[30] **Լեո**, Անցեալից, Թիֆլիս, 1925, էջ 251:
[31] Տե՛ս **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, Եր., 2003, էջ 148:

ուղղված սեպտեմբերի 17-ի կոչից[32]: Այդ փաստաթղթերում ոչ մի խոսք, անգամ ակնարկ չկար, գործերի հաջող ընթացքի դեպքում, Հայաստանին **ինքնավարություն**, էլ չենք ասում **անկախություն** տալու մասին: Այդ պատգամներում ընդամենը ոգևորիչ խոսքեր էին ասվում 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի ոգով Ռուսաստանի վերահսկողությամբ հայաբնակ նահանգներում բարեփոխումներ անցկացնելու մասին, և դրա դիմաց հորդոր էր ուղվում հայերին՝ նվիրումով օժանդակել ռուսական զենքի հաղթանակին:

Հետաքրքրական է, որ ռուս քաղաքական առանձին գործիչներ դրականապես ու խրախուսանքով են արտահայտվել սկսվող պատերազմում, ըստ էության, ռուսական կողմնորոշում ցուցաբերած հայ ժողովրդի հանդեպ: Մասնավորապես, ռուսական Սահմանադրական ժողովրդավարների (կադետների) կուսակցության առաջնորդ Պ. Միլյուկովն իր հուշերում խոսում է որոշակի ձևաչափով ու կարգավիճակով արևմտահայ վեց վիլայեթներից «Մեծ Հայաստան» ստեղծելու պահանջ-գաղափարի մասին[33]: Ընդ որում, նա, բերելով 1913 թ. վիճակագրական տվյալներ, տեղեկացնում է, որ հայկական վեց՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սվազի վիլայեթներում հայերը կազմել են նահանգների ազգաբնակչության հարաբերական մեծամասնությունը՝ 1.018 հազար, այն դեպքում, երբ թուրքերը կազմել են 666 հազար, իսկ քրդերը (նստակյաց

---

[32] Տե՛ս **Արզումանյան Մ.**, Հայաստան. 1914-1917, Եր., 1969, էջ 177-178, Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), խմբագիր՝ **Ներսիսյան Մ. Գ.**, Եր., 1991, էջ 330-332 և ուրիշներ:

[33] Տե՛ս **Милюков П. Н.**, Воспоминания, М., 1991, с. 365-366.

և քոչվոր)՝ ընդամենը 424 հազար[34]:

Հայտնի է նաև, որ 1914 թ. նոյեմբերի վերջին Կովկաս ժամանած Նիկոլայ 2-րդ կայսրը Թիֆլիսում հանդիպել և զրուցել էր կաթողիկոս Գևորգ Ե-ի հետ, ով խոսել էր հայ ժողովրդի քաղաքական խնդիրների մասին: Պատմվում է, որ ցարը մեծ ուշադրությամբ լսել է Հայոց հայրապետին և ապա ասել. «Ձե՛րդ սրբություն, ձեր բոլոր բաղձանքները կկատարվեն, անհոգ եղեք»[35]:

Ռուսաստանի կայսր Նիկոլայ 2-րդի հայանպաստ ծրագրերի մասին է վկայաում նաև Ռուսաստանում 1914-1917 թթ. Ֆրանսիայի դեսպան Մորիս Պալիելոգը ցարի հետ 1914 թ. նոյեմբերի 21-ին ունեցած զրույցի մասին հուշերում[36]: Իր հերթին, Ռուսաստանի դաշնակից Ֆրանսիան էլ էր ոգեշնչում և Անտանտի կողմում կռվելու պայմանով խոստումներ տալիս հայերին: Նման ոգևորիչ խոստումների մթնոլորտում ռուսական բանակ զորակոչված հայ զինվորականությունը և կամավորական խմբերը ներքաշվեցին պատերազմի մեջ:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ (1917-1918 ԹԹ.)

1917 թ. ռուսական երկու՝ Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունները մեծ փոփոխություններ ու տեղաշարժեր առաջացրին ռուսական հսկայածավալ կայսրությունում, այդ

---

[34] Տե՛ս նույն տեղում, էջ 365:

[35] **Աղայան Ծ.**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., 1976, էջ 383;

[36] Տե՛ս **Орлов А. С.** и др., Хрестоматия по истории России, М., 2009, с. 380-381.

թվում՝ Անդրկովկասում ու Արևելյան Հայաստանում:

Առաջին աշխարհամարտում ռուսական զորքերի կողմից Արևմտյան Հայաստանի գրավումը ստեղծեց մի իրավիճակ, երբ փաստորեն Հայաստանի երկու՝ արևելահայ և արևմտահայ հատվածները հայտնվեցին մեկ տերության՝ Ռուսաստանի հովանու ներքո: Ավելին՝ 1917 թ. ապրիլից պատերազմի իրավունքով արևմտահայ մի քանի՝ Էրզրումի, Վանի, Խնուսի, նաև Տրապիզոնի մարզերի միավորումով հայերի մասնակցությամբ երկրամասի ինքնավար կառավարման հատուկ կարգավիճակ մտցվեց (ընդհանուր կոմիսար՝ ռուս գեներալ Պ. Ավերյանով, նրա քաղաքացիական գծով տեղակալ, բժիշկ Հ. Զավրիյան): Վարչական այս միավորն անմիջական ենթարկվում էր Ժամանակավոր կառավարությանը[37]: Գրեթե ամբողջ Հայաստանի տարածքը հայտնվել էր Ռուսաստանի հսկողության տակ: Սա ինքնին ցույց է տալիս, որ մեկ տերության հսկողության դեպքում ավելի դյուրին կլիներ հասնել Միացյալ Հայաստանի գաղափարի իրագործմանը. երկու հատվածների միավորմամբ հայրենի հողերի վրա կկենտրոնանար հայության մի խոշոր զանգված և այլն: Փետրվարյան ժողովրդավարական հեղափոխությունը կարծես ստեղծել էր նման հնարավորություններ, մանավանդ որ Ռուսաստանը գտնվում էր քաղաքական հեղաբեկումների մեջ, իսկ հայությունը բավականին ինքնակազմակերպվել էր՝ իր ազգային խորհուրդներով, նորաստեղծ ազգային զինուժով (հետագայում՝ Հայկական բանակային կորպուսով):

Սակայն այս առնչությամբ հարկ ենք համարում ներկայաց-

---

[37] Տե՛ս **Հարությունյան Ա.**, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Եր., 1984, էջ 114:

նել Ս. Վրացյանի մի դիտարկումն այն մասին, որ պատերազմի ընթացքում արևմտահայ գրավյալ երեք նահանգներից 1917 թ. ապրիլին վարչական հատուկ միավորի ստեղծումը ոչ թե հայերին ինքնավարություն տալու համար էր արվում, այլ դա Անտանտի երեք դաշնակիցների՝ 1916 թ. կնքված Սայքս-Պիկո-Սազոնով գաղտնի համաձայնագրի նյութականացման ուղղությամբ մի քայլ էր, որով Ռուսաստանը իրեն հասանելիք Արևմտյան Հայաստանում ստեղծում էր կառավարությանն անմիջական ենթակա հատուկ կառավարման վարչություն[38]: Անշուշտ, դրա համար հիմքեր կան պնդելու, քանի որ, զորօրինակ, 1916 թ. կազմացրվեցին հայկական կամավորական խմբերը, որոնք պաշտպանում էին հայկական բնակավայրերը, երբ ռուսական զորքերի կասկածելի ու հաճախակի կրկնվող առաջ ու հետ շարժընթացների հետևանքով արևմտահայ գյուղերն ու քաղաքները ամայանում էին, հայ ազգաբնակչությունը քրդերի ու թուրքերի ձեռքով կոտորվում էր, իսկ կենդանի մնացած հարյուր հազարավորները հարկադրված էին գաղթել: Ռուսաստանի նման կասկածելի գործողություններին ականատես բժիշկ Հ. Վառվառյանը գրում է, որ պատերազմի ընթացքում ռուսական հրամանատարությունը «փաստորեն չորս անգամ արհեստական նահանջներ կազմակերպեց: Վերջին անգամ հայ կամավորական խմբերը մերժեցին նահանջել: Այս դեպքն էլ վերջ տվեց կամավորական խմբերի գոյությանը»[39]: Կամ, օրինակ, ցարական կառավարության՝ դեպի հայերը ցուցաբերած նենգ-մեծապետական քաղաքականության մասին է ակնարկում ՀՅԴ «Հորիզոն» պաշտոնաթեր-

---

[38] Տե՛ս **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրութ, 1958, էջ 14-15:

[39] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 1-ին, թ. 78:

թը: «Հին կառավարությունը, - կարդում ենք թերթում, - պատերազմի սկզբում խրախուսեց կամավորական շարժումը հայերի մեջ, հայերին հուսադրեց ու բարձրացրեց թուրքերի դեմ, թուրքերին այդ կերպ ավելի ևս գրգռեց հայերի դեմ, ժամանակին չուզեց հասնել օգնության ու պատճառ դարձավ հայերի կոտորածին՝ թուրքերի ձեռքով: Ապա հետագայում, իր զորքի անտեղի և դիտավորյալ նահանջներով (հատկապես դեկտեմբերին և հուլիսին) երկիրը քարուքանդ արեց»[40]: Այդ իմաստով, 1917 թ. ռուսական երկու հեղափոխությունների միջակայքում, հայ գործիչների համար արդեն շատ բան ակնառու էր ու հստակ:

Ինչևէ, արևելահայ հասարակական-քաղաքական կյանքի կենտրոն համարվող Թիֆլիսում 1917 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 13-ը բազմակուսակցական սկզբունքով գումարված Արևելահայոց համագումարում (համախորհրդակցություն) բազում հարցերի շարքում քննարկման նյութ դարձավ նաև ապագա Հայաստանի պետականության հարցը: Հոկտեմբերի 10-ի նիստում (նախագահող Ա. Ահարոնյան) խոսվել է ազգերի ինքնորոշման իրավունքի մասին և ընդունվել է հետևյալ բանաձևը. «Ընդունելով ազգերի ինքնորոշման իրավունքը, հայ ժողովուրդը պիտի ձգտի իրականացնել իր այդ իրավունքը **պետականության հիմունքներով և սկզբունքներով** (ընդգծումը՝ Ա. Հ.), անդրկովկասյան ժողովուրդների դեմոկրատիայի փոխադարձ համաձայնությամբ»[41]: Այսինքն՝ Արևելահայոց համագումարը գտնում էր, որ հայ ժողովուրդը պետք է պատրաստ

---

[40] «Հորիզոն», Թիֆլիս, 8 հուլիսի 1917 թ. (թիվ 142):

[41] Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, պատասխանատու խմբագիր՝ **Ա. Վիրաբյան**, (այսուհետ՝ Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), Եր., 2004, էջ 211:

լինի սեփական ազգային պետականության գաղափարի իրականացմանը:

Ռուսական երկու հեղափոխությունների միջակայքում (1917 թ. փետրվար-հոկտեմբեր) հայ քաղաքական շրջանակներում տեղի էր ունենում ազգային ինքնագիտակցության աճ և, ըստ իրադրության փոփոխության, նաև՝ քաղաքական պահանջների փոփոխություններ: Եթե մինչ այդ հայ ազգային կուսակցությունները իրենց ծրագրերով ու գործելակերպով արտահայտվում էին Անդրկովկասի ու Հայաստանի լայն ինքնավարության օգտին, ապա դեպքերի ու իրադարձությունների սրընթաց զարգացումները հրապարակ հանեցին քաղաքական նոր պահանջներ: Այսպես, օրինակ, 1917 թ. աշնանը Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի ընտրություններին մասնակցող ՀՅԴ-ն արտահայտվում է Ռուսաստանի դաշնային դեմոկրատական հանրապետության օգտին[42]: Բայց դրանից՝ մի երկու շաբաթ անց, հիմք ընդունելով Ռուսաստանի խորհրդային կառավարության 1917 թ. նոյեմբերի 2-ի՝ «Աշխատավոր և շահագործվող ժողովուրդների իրավունքների հռչակագիրը» (դեկլարացիան)՝ ճնշված ժողովուրդներին ազատ ինքնորոշման իրավունք տալու մասին, Սահմանադիր ժողովի ընտրություններից, Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (**ՕԶԱԿոմի**) լուծարումից և Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումից հետո ՀՅԴ Կովկասյան հատվածում կատարվում է քաղաքական պահանջների էվոլյուցիա՝ ազգային–մշակութային ինքնավարությունից անցում դեպի՝ «ազգերի ինքնորոշման» պահանջին[43]:

---

[42] Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 8 նոյեմբերի 1917 թ.:

[43] «Հորիզոն», 26 նոյեմբերի 1917 թ.:

1917 թ. ամառ-աշնանը Ստոկհոլմում կազմակերպված Սոցինտերնի խաղաղության կոնֆերանսում ՀՅԴ անունից հանդես եկած Ստ. Զորյանը (Ռուստոմ) արդեն ցեղասպանություն տեսած և իր հայրենիքից հիմնականում վտարված հայ ժողովրդի ու նրա քաղաքական դատի վերաբերյալ ներկայացրած պաշտոնական հուշագրում այն միտքն է հայտնում, որ «Մինչ կոտորածը մենք ցանկանում էինք միայն ինքնավարություն թուրքերի ենթակայության տակ, բայց կոտորածից հետո դա անհնարին է»: Ուստի Արևմտյան Հայաստանի կարգավիճակի հարցում նա առաջ էր քաշում **Ազատ Հայաստանի** գաղափարը, որը «պետք է ներառեր հայկական 6 նահանգները և Կիլիկիան»[44]: Այս փաստաթղթում մենք տեսնում ենք, որ առաջին անգամ խոսվում է ոչ թե ինքնավար, այլ Մեծ և Անկախ Հայաստանի մասին:

Հենց այդ քաղաքական մթնոլորտի ու մտայնությունների պայմաններում, իբրև դրանց տրամաբանական շարունակություն, դաշնակցական, բոլշևիկ և էսէռ քաղաքական գործիչներ Ռոստոմի (Ստ. Զորյան), Հ. Զավրիյանի, Ստ. Շահումյանի, Վ. Տերյանի, Պ. Պռոշյանի ջանքերով կազմվեց «**Թուրքահայաս-**

---

[44] **Հովհաննիսյան Մ.**, Հայոց անկախ պետականության վերականգնման խնդիրը 1917-1918 թթ. ՀՅԴ-ՌՍԴԲ(բ)Կ հարաբերությունների համատեքստում (տե՛ս «Հայագիտության հարցեր», ԵՊՀ, Եր., 2018, թիվ 2, էջ 5-6:

տանի ինքնորոշման մասին» հայտնի դեկրետի (հրովարտակի) նախագիծը, որը 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունվեց և դեկտեմբերի 31-ին հրապարակվեց Ռուսաստանի նորահռչակ խորհրդային կառավարության (ԺԿԽ) կողմից, իսկ 1918 թ. հունվարի 15-ին այն հաստատվեց Խորհուրդների Համառուսաստանյան 3-րդ համագումարում[45]:

Բայց ոչ միայն այդ հրովարտակի պահանջը կյանքի չկոչվեց, այլև շուտով՝ Կովկասյան ճակատում ռուսական զորքերի քայքայման ու դուրս բերման և թուրքական զորքերի հակահարձակման պայմաններում, իմաստազրկվեց դեկրետի կիրառումը: Ավելին՝ այդ դեկրետն ընդունող բոլշևիկները, դրանից մեկ-երկու ամիս անց, երկրում իրենց իշխանությունը պահպանելու համար 1918 թ. **մարտի 3-ին** Բրեստ-Լիտովսկում Գերմանիայի և նրա դաշնակիցների հետ ստորագրեցին Ռուսաստանի համար կողոպտիչ, նաև հայ ժողովրդի համար վնասակար մի պայմանագիր, որով թուրքերին էին հանձնվում անգամ Արևելյան Հայաստանի տարածքներ Կարսն ու Արդահանը: Բրեստ-Լիտովսկի հաշտության խայտառակ պայմանագրի կապակցությամբ Ս. Վրացյանը խոր հիասթափությամբ գրում է. «-Խորհրդային Ռուսաստանը մի կողմից Տաճկահայաստանի անկախութեան դէկրէտն էր հրատարակում, միւս կողմից՝ ստորագրում էր մի պայմանագիր, որով ոչ միայն ամբողջ Տաճկահայաստանը թողնվում էր տաճիկներին, այլ և զիջվում էր նրանց Ռուսահայաստանի մի կարևոր մասը»[46]:

---

[45] Декреты Советской власти, т. 1, М., 1957, с.298-299, Сьезды Советов в постановлениях и резолюциях (сборник документов), М., 1939, с. 45.

[46] **Վրացեան Ս.**, Անկախ եւ Միացեալ Հայաստան, Եր., 1920, էջ 5:

Հասկանալի է, որ 1918 թ. սկզբներից դեպի Անդրկովկաս ու Արևելահայաստան ներխուժող թուրքական զորքի հարձակման պայմաններում ոչ միայն խոսք չէր կարող լինել Թուրքահայաստանի դեկրետի գործադրման մասին, այլև անմիջական մահացու սպառնալիք էր ստեղծվում արևելահայության համար:

Հոկտեմբերյան հեղաշրջումը կազմալուծիչ ազդեցություն ունեցավ Արևմտյան Հայաստանը գրաված ռուսական կեսմիլիոնանոց բանակի վրա, որը տարերայնորեն, կամ էլ պատերազմին վերջ տալու և խաղաղություն կնքելու բոլշևիկյան իշխանությունների կարգախոսներով տարված, սկսեց լքել ճակատը և վերադառնալ հայրենիք՝ ստանալու համար բոլշևիկների խոստացած հողը, հացը, գործարանները, ազատությունը և այլն: Նման պայմաններում 1918 թ. հունվարի վերջին թուրքական զորքը, խախտելով 1917 թ. դեկտեմբերի 5-ին ստորագրված թուրք-անդրկովկասյան զինադադարը, ամբողջ ռազմաճակատով անցավ ընդհանուր հակահարձակման:

Ռազմաքաղաքական այս ճգնաժամային փուլում զորավար Անդրանիկի ու բժիշկ Հ. Զավրիյանի կողմից Էրզրումի կայազորի պարետ նշանակված գնդապետ Արսեն Թորգոմը (Արշակ Երվանդյանը) պատասխանատվություն է վերցնում իր վրա և մի խումբ զինվորական ու քաղաքացիական ներկայացուցիչների ստորագրությամբ 1918 թ. հունվարի 31-ին (ն. տ. փետրվարի 13-ին) հռչակագիր է հրապարակում Հայաստանի անկախության մասին՝ Կարինը հռչակելով հայոց մայրաքաղաք: Այդ փաստաթուղթը հայտնի է «Թորգոմյան անկախություն» անունով: Ուշագրավն այն է, որ այս հռչակագրի տեքստը, անգլերեն թարգմանությամբ, հասել է ԱՄՆ-ի սենատ՝ Հայաս-

տանին ռազմական օգնություն ցույց տալու ակնկալիքով:

Այդ նույն թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին լսումներ են կազմակերպվել Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում, իսկ լսումների նյութերը, այդ թվում՝ հռչակագիրը, լույս են տեսել առանձին գրքույկով[47]: «Թորգոմյան անկախության» փաստաթուղթը գնահատելի է երկու իմաստով. 1-ին, որ արդեն 1918 թ. սկզբներին, այսպես թե այնպես, շրջանառվում էր Հայաստանի անկախության հարցը, և 2-րդ, որ այդ փաստաթուղթը հասել է ԱՄՆ սենատ և արդեն քննարկման նյութ է դարձել Հայաստանի մանդատի (խնամակալության) հարցի կապակցությամբ:

Մինչդեռ իրականում Հայաստանի և Անդրկովկասյան տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակը միանգամայն այլ էր: Թուրքական բանակը, Մ. Վեհիբ փաշայի հրամանատարությամբ, լուրջ դիմադրության չհանդիպելով, մի քանի ամսում փաստորեն գրավեց ամբողջ Արևմտյան Հայաստանը, իսկ գարնանը (մարտի 26-ին) սկսեց բախել Անդրկովկասի ու Արևելյան Հայաստանի դռները: Սա նշանակում էր, որ մահացու վտանգ էր կախվում նաեւ արևելահայության գլխին:

Թուրքական զինուժի չընդհատվող հարձակումը որևէ կերպ կանգնեցնելու նպատակով Անդրկովկասյան կոմիսարիատին փոխարինած Սեյմի կառավարությունը բանակցություններ սկսեց թուրքերի հետ, որն ընթացավ 1918 թ. մարտին Տրապիզոնում: Սեյմի դաշնակցական ֆրակցիային հաջողվել էր բա-

---

[47] Թորգոմյան կոչված այդ հռչակագրի տեքստը գիտական շրջանառության մեջ է դրել պատմաբան Ա. Ղամբարյանը՝ «Հայաստանի անկախության Էրզրումի հռչակագիրը» հոդվածում («Պատմաբանասիրական Հանդես», Եր., 2018, թիվ 3, էջ 259-263):

նակցությունների համար պատրաստված պահանջների փաթեթում ներառել մի առանձին կետ՝ ճանաչել տալու համար Թուրքահայաստանի ինքնավարության պահանջը Օսմանյան պետականության շրջանակներում[48]: Սակայն Տրապիզոնում ընթացող բանակցությունների ժամանակ թուրքերն առարկեցին Թուրքահայաստանի ինքնավարության պահանջին՝ պատասխանելով, որ դա իրենց ներքին խնդիրն է: Դրանով էլ հարցը փակվեց:



Անպտուղ բանակցություններին զուգընթաց՝ գնալով ավելի սպառնալից էր դառնում թուրքական վտանգը, որն ի վերջո հնարավոր եղավ կասեցնել 1918 թ. **Մայիսյան հերոսամարտերով**, որոնք հնարավորություն ընձեռեցին լուծելու երկու խնդիր՝

ա. արևելահայությանը փրկել եղեռնից,

բ. հարկադրել թուրքերին՝ ճանաչելու Հայաստանի անկա-

---

[48] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 80 և 82, նաև՝ **Քաջազնունի Հ.**, Դաշնակցութիւնը անելիք չունի, Պուքրէշ, 1923, էջ 27, **Լեո**, Անցեալից, Թիֆլիս, 1925, էջ 373, **Ավետիսյան Հ.**, Հայկական հարցը 1918 թ., Եր., 1997, էջ 88-89:

խությունը Արևելահայաստանի մի փոքր հողակտորի վրա:

Այս խնդիրների լուծման գործում, իրավամբ, անուրանալի է Արամ Մանուկյանի խաղացած կազմակերպչական ու ոգևորիչ դերը:

Նորահոչակ Հայաստանի Հանրապետությունը դարձավ այն միջուկը, որի շուրջ հետագայում պետք է պտտվեր Միացյալ Հայաստանի գաղափարը: Դրա համար ավելի իրական պայմաններ ստեղծվեցին աշխարհամարտի ավարտով, Թուրքիայի պարտությամբ և Օսմանյան կայսրության փլուզմամբ:

Կրկին արձանագրելով **Հայոց նորագույն պատմության մեջ շրջադարձ համարվող Մայիսի 28-ի խորհուրդը**, ընդգծենք, որ այն **նշանավորեց դարերով պետականազուրկ Հայաստանի քաղաքական անկախության ծնունդը** սկզբնապես թեկուզ և մի փոքր հողակտորի վրա: Հունիսի 4-ին Բաթումում ստորագրված հայ-թուրքական հաշտության պայմանագրով օսմանյան Թուրքիան ճանաչում էր Հայաստանի անկախությունը, որը, ցավոք, երբեմն արևմտահայ քաղաքական շրջանակները կոչել են **Արարատյան** կամ **Երևանի Հանրապետություն**:

Այդ համատեքստում միանգամայն մերժելի են հայ քաղաքական շրջանակներից բոլշևիկների, հայ ռամկավարների, անգամ զորավար Անդրանիկի և մյուսների պնդումները, թե Հայաստանի անկախությունը Թուրքիայի ձեռքով է ստեղծվել, «թուրքից ստացած նվեր է»[49], դրա համար էլ իրենք չեն ճանա-

---

[49] **Սիմոնյան Հր.**, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Եր., 1996, էջ 162:

չում այդ հանրապետությունը: Մասնավորապես, ռամկավար գործիչ Ա. Դարբինյանն իր հուշերում քանիցս պնդում է, թե «Անկախ Հայաստանը թիւրքերն ստեղծեցին»[50]: Հայաստանի անկախության արժեքն ուրացող մեկ այլ հեղինակ պնդում է, թե «Հայաստանի անկախութեան հայտարարութիւնը տեղի ունեցավ թուրքերի սպառնալիքով»[51]: Ինչպես ասվեց, այդ նույն միտքը պնդել է Անդրանիկը[52] և շատ ուրիշներ: Բայց անհերքելի իրողությունն այն է, որ եթե գործը թողնվեր Թուրքիային, ապա նա ոչ միայն Հայաստանը չէր «անկախացնի», այլև պանթուրքական ծրագրերի համատեքստում արևելահայոց հարցը ևս «կլուծեր» արևմտահայոց հարցի նման: Նման պնդումները նսեմացնում են Մայիսյան հերոսամարտերի դերն ու նշանակությունը հայոց անկախ պետականության վերականգման գործում:

Հայաստանի անկախության հռչակումը, իբրև շրջադարձ Հայոց նորագույն պատմության մեջ, պետք է դառնար այն հիմքը, որտեղից քայլ առ քայլ պիտի իրականացվեր Միացյալ Հայաստանի նպատակի իրագործումը: **Հայաստանի Հանրապետություն** անվամբ իրավաքաղաքական սուբյեկտն իր գոյությունը պետք է իմաստավորվեր նրանով, որ կենաց-մահու կռիվ մղելով հանդերձ, քաղաքական նպաստավոր պայմաններ ստեղծվելուն պես պետք է հավակներ դարերով բաժանված ու բզկտված հայրենի տարածքների հավաքմանն ու ամբողջացմանը:

---

[50] **Դարբինեան Ա.**, նշվ. աշխ., էջ 256, 258 և այլն:

[51] **Սերոբեան Մ.**, Հայաստանի անկախութեան առթիւ, Գահիրե, 1950, էջ 9-10:

[52] Տե՛ս **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրութ, 1958, էջ 254:

5. ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՀԱՆՋԻ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Քանի որ արևելահայ քաղաքական կյանքը ղեկավարող Թիֆլիսի Հայոց (կենտրոնական) Ազգային խորհուրդը մայիսի 28-ին որոշում է անկախ Հայաստանի անունից պատվիրակություն ուղարկել Բաթում և թուրքերի հետ հաշտության պայմանագիր կնքել, ուստի այդ օրն էլ համարվում է անկախության սկիզբը: Այդ օրը Հայոց Ազգային խորհուրդը համարձակություն է վերցնում իր վրա և ձայների մեծամասնությամբ հանգում է անկախության վճռին և հանձնարարում է Բաթումի բանակցություններից նոր վերադարձած հայկական պատվիրակությանը նոր կազմով (Ալ. Խատիսյան, Հ. Քաջազնունի, Մ. Պապաջանյան) մեկնել Բաթում և **անկախ Հայաստանի անունից** բանակցել թուրքերի հետ և կնքել հաշտության պայմանագիր: Միաժամանակ հանձնարարվում է Ա. Ահարոնյանին, Ն. Աղբալյանին, Հ. Քաջազնունուն և Ալ. Խատիսյանին՝ մշակել Հայաստանի անկախության պաշտոնական հայտարարագիրը: Ս. Վրացյանի վկայությամբ՝ բանաձի հեղինակը Նիկոլ Աղբալյաննն է. այն մայիսի 30-ին ընդունվել է Հայոց Ազգային խորհրդում, իսկ մայիսի 31-ին՝ հրապարակվել մամուլում[53]: Նրանում ասվում էր. «**Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր կացության հանդեպ՝ Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխա-**

[53] Տե՛ս «Հորիզոն», 31 մայիսի 1918 թ., «Кавказское слово», 31 мая 1918 г. և այլն:

նություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմելու Հայոց Ազգային կառավարություն՝ Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարության բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»[54]:



Նկատի առնելով, որ մայիսի 30-ի հայտարարությունում բառացի որոշակի շեշտադրում չկար Հայաստանի անկախության մասին, Հայաստանի անկախությանը միջազգային իրավաքաղաքական հնչեղություն ու բնույթ տալու նպատակով Հայոց Ազգային խորհրդի կազմած առաջին կառավարությունը, **Հ. Քաջազնունու** նախագահությամբ, երկու շաբաթ անց՝ **հունիսի 13-ին**, Թիֆլիսում **պաշտոնապես հայտարարում է Հայաստանի անկախության մասին**[55]: Հայտարարությունը հատկապես ուղղված է եղել Թիֆլիսում և Կ. Պոլսում գտնվող օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցիչներին: Այդ նույն օրը Հայաստանի նորահռչակ պետության ղեկավարներ՝ Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանի, վարչապետ Հ. Քաջազնունու և արտաքին գործոց նախարար Ալ. Խատիսյանի՝ Պարսկական կայսերական կառավարությանն ուղղված կոլեկտիվ նամակում ասված է. «Անդրկովկասյան Հանրապետության լուծարումով՝

---

[54] **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 160:
[55] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 146:

Կովկասի Հայոց Ազգային խորհուրդը (1918 թ.) մայիսի 28-ի իր նիստում, հայ ժողովրդի կողմից իրեն տրված լիազորությունների հիման վրա, որոշեց հռչակել հայկական պետության անկախությունը և հիմնել Հայաստանի Դեմոկրատական Հանրապետություն»[56]:

Քիչ ավելի ուշ, երբ հունիս-հուլիս ամիսներին, ձևավորվեցին Հայաստանի լիակազմ կառավարությունը և անդրանիկ խորհրդարանը՝ **Հայաստանի խորհուրդը**, վերջինիս հանդիսավոր բացման ժամանակ՝ 1918 թ. օգոստոսի 1-ին, ոգևորիչ ճառով հանդես է գալիս խորհրդարանի ավագագույն պատգամավոր ու նաև նախագահ ընտրված **Ավետիք Սահակյանը**: Նա բազում այլ խնդիրների թվում խոսում է Հանրապետության փոքր ու նեղ սահմանների ընդարձակման կենսական անհրաժեշտության մասին և լավատեսորեն կարծիք է հայտնում, որ «երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ, ես հաւատում եմ, որ մեր սահմանները կ՛ընդարձակուին կեանքի երկաթէ օրէնքի ոյժով»[57]: Այդ լա-

---

[56] «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս)», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող՝ **Հ. Սուքիասյան**, Եր., 2009, էջ 66-67:

[57] **Վրացեան Ս.**, Անկախ եւ Միացեալ Հայաստան, Եր., 1920, էջ 19, նաև՝ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ **Վլ. Ղազախեսյան**, **Գ. Գալոյան** և ուրիշներ, Եր., 2000, էջ 55:

վատեսությունը հիմքեր ուներ, և ՀՀ տարածքը սկսեց աստիճանաբար ընդարձակվել[58]:

Խորհրդարանի նախագահի խոսքից կարելի էր հասկանալ, որ նոր ձևավորված Հայաստանի իշխանությունը, այլևայլ օրախնդիր հարցերի հետ մեկտեղ, պետք է հետամուտ լիներ նաև պետության սահմանների ընդարձակման ռազմավարական խնդրին: Սակայն առայժմ խոսք չկար Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի իրագործման մասին: Դրա համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Առաջին աշխարհամարտի ավարտից հետո: Չորս ու կես տարի տևած աշխարհամարտի ռազմաքաղաքական իրադարձությունները հանգեցրին նրան, որ պատերազմն ավարտվեց Հայաստանի ու հայ ժողովրդի դաշնակիցը համարվող Անտանտի (Entente) երկրների հաղթանակով: Թուրքիան պարտություն կրելով՝ 1918 թ. **հոկտեմբերի 30-ին, Մուդրոսի** (նավահանգիստ Էգեյան ծովում) զինադադարով անձնատուր եղավ (կապիտուլացվեց) և պարտավորվեց իր զորքերը դուրս բերել Անդրկովկասից՝ հասնելով մինչև 1914 թ. նախապատերազմյան սահմանը: Սփյուռքահայ պատմաբան Ա. Նասիբյանը գրում է. «Մուտրոսի Զինադադարը եղաւ հայկական ըղձանքներուն տրուած առաջին հարվածը:

---

[58] Հայոց խորհրդարանի բացման այդ նշանակալի օրը՝ կեսօրին, շենքի առջևի հրապարակում դարերով երազած Հայաստանի անկախության վերականգնման առիթով հոծ բազմության ներկայությամբ կատարվել է ՀՀ առաջին զորահանդեսը, խորհրդարանի շենքի վրա բարձրացվել է Եռագույնը: Ականատես բժիշկ Հովակիմ Մելիքյանն իր հուշերում գրում է. «Հայ ազգային զօրքը, շարէ ի շար, անցնում էր մեր առաջից: Ոչ միայն իմ, այլ եւ հազարաւորների աչքերից յուզման արցունքի կաթիլներ էին հոսում», **Մելիքեան Յով.**, Արեան ճանապարհով, (տե՛ս «Հայրենիք», 1925, հուլիս, թիվ 9, Գ տարի, էջ 101):

Թէ՛ հայերուն հայրենիքը ձգեց թրքական իշխանութեան տակ, եւ թէ՛ ձախողեցաւ Թուրքիոյ զինաթափումը ճշգրիտ ձեւով մը ապահովելու մէջ»[59]:

Արևմտյան Հայաստանը չառնվեց Անտանտի զորքերի հսկողության տակ, և դա այն դեպքում, երբ պատերազմի ավարտից հետո միայն Մեծ Բրիտանիան Օսմանյան Կայսրությունում պահում էր 300 հազար զորք, որը պետք է մնար այնքան ժամանակ, միչև որ կկնքվեր հաշտության պայմանագիր[60]:

Քանի որ հայ ժողովուրդը կրել էր մարդկային վիթխարի կորուստներ, հարյուր հազարավոր արևմտահայեր հայրենազրկվել, ունեզրկվել ու հայտնվել էին օտար ափերում, իսկ Հայաստանն ու հայ ժողովուրդը համարվում էին հաղթանակած Անտանտի «փոքր դաշնակիցը», հայ ժողովուրդն ուներ պատմական, իրավական, քաղաքական ու բարոյական իրավունք դրանց դիմաց դաշնակիցներից պահանջելու մեծ հատուցում. նախ՝ տեր դառնալ իր հայրենիքին՝ Արևմտյան Հայաստանին:

Նկատի առնելով, որ 1918 թ. հունիսի 13-ին վարչապետ Հ. Քաջազնունին պաշտոնապես հայտարարել էր Հայաստանի անկախությունը, իսկ մինչ այդ Բաթումի պայմանագրով Թուրքիան փաստորեն առաջինը ճանաչել էր Հայաստանի անկախությունը, և երկրում մեկնարկել էր պետականաշինության գործընթացը, բնականաբար հրամայական էր դառնում միջազգային ատյաններում հարց բարձրացնել՝ միավորելու օտար տերությունների միջև բաժանած Հայաստանները, տվյալ դեպ-

---

[59] **Նասիպեան Ա.**, Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915-1923, Պէյրութ, 1994, էջ 127:

[60] Տե՛ս Армения в документах государственного департамента США 1917-1920 гг. сост. **Махмурян Г.**, Ер., 2012, (այսուհետ՝ Армения в документах США), с. 56.

քում՝ ՀՀ-ն և Արևմտյան Հայաստանը՝ իրագործելով հայ ժողովրդի դարավոր երազանքը՝ **Միացյալ և Անկախ Հայաստանի կերտումը**, ինչն աշխարհամարտի հաղթական ավարտից հետո **միանգամայն իրատեսական էր**:

Աշխարհամարտի հաղթական ավարտից ու Թուրքիայի պարտությունից հետո Հայաստանի իշխանությունները պաշտպանեցին Միացյալ Հայաստանի գաղափարը և հնարավորության սահմաններում ձեռնամուխ եղան դրա իրագործմանը: Պետական մակարդակով Միացյալ Հայաստանի (Հայաստանի Արևելյան և Արևմտյան հատվածների միավորման) գաղափարին Հանրապետության պարբերական մամուլում առաջին անգամ անդրադառնում է 1918 թ. դեկտեմբերին: ՀՅԴ-ի հետ կոալիցիայի մեջ գտնվող ՀԺԿ Երևանի կոմիտեի պաշտոնաթերթ «Ժողովուրդ»-ի դեկտեմբերի 8-ի համարում՝ «Ազատ Հայաստան» խորագրով հրապարակման մեջ, որոշակիորեն արծարծվում էր Միացյալ և Ազատ Հայաստանի գաղափարը. «-Միացյալ և Ազատ Հայաստան՝ դա կլինի արմատական լուծումը Հայկական հարցի, դա կլինի ամենանպատակահարմարը թե՛ միջազգային խաղաղության և թե՛ հայ ժողովրդի շահերի տեսակետից»[61]:



Հայտնի է, որ համապարփակ հաշտություն կնքելու նպատակով **1919 թ. հունվարի 18-ին Փարիզում՝ Վերսալի պալատում**, բացվեց Խաղաղության կոն-

[61] «Ժողովուրդ», Եր., 8 դեկտեմբերի 1918 թ.:

ֆերանսը (վեհաժողովը), որին մասնակցում էին 27 երկրների մոտ 2000 պատվիրակներ[62]:

Հաղթանակած Անտանտի երկրները (Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Չինաստանը և այլն) այստեղ պետք է հաշտության պայմանագրեր կնքեին պարտված Քառյակ միության երկրների, այդ թվում՝ Թուրքիայի հետ: Վեհաժողովն ընդմիջումներով տևել է մինչև 1920 թ. հունվարի 21-ը:

Հայաստանի կառավարությունը դեկտեմբերի 5-ի նիստում որոշեց, որպես հաղթանակած Անտանտի «փոքր դաշնակից», պատվիրակություն ուղարկել Եվրոպա՝ ներկայացնելու համար հայկական պահանջները: Կազմվեց կառավարական պատվիրակություն հետևյալ կազմով՝ **Ավետիս Ահարոնյան** (նախագահ, ՀՅԴ), **Միքայել Պապաջանյան** (ՀԺԿ) և **Համո Օհանջանյան** (ՀՅԴ) (վերջինս գտնվում էր Բեռլինում և պատվիրակությանը պետք է միանար Փարիզում)[63]: Սահմանվեց պատվիրակության լիազորությունների շրջանակը: Պատվիրակության հետ Եվրոպա մեկնեցին նաև արևմտահայ ներկայացուցիչներ Վ. Փափազյանը և Տ. Թերզիբաշյանը: Պատվիրակության ընդհանուր թիվը խորհրդականների, քարտուղարների և այլ օժան-

---

[62] Փարիզի վեհաժողովի մասին հանգամանորեն տե՛ս **Махмурян Г.**, Армения и ее территориальный вопрос на Парижской мирной конференции (18 января-28 июня 1919 г. «Պատմաբանասիրական Հանդես», Եր., 2018, թիվ 3, էջ 109-110:

[63] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 105, թ. 80:

դակ աշխատակիցների հետ կազմել է 14 մարդ: Հաստատվեց պատվիրակության գործունեության հրահանգը[64]:

ՀՀ պատվիրակության խնդիրն էր՝ իր առաջարկություններով, խնդրանքներով, ծանոթություններով, հանրային նպաստավոր կարծիք ստեղծելու միջոցով հաղթած տերությունների ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա և ամեն

---

[64]Պետք է նշել, որ Փարիզ մեկնած ՀՀ պատվիրակությունը պաշտոնապես հրավիրված չէր, Անտանտի տերությունները Հայաստանը չէին ճանաչում որպես պատերազմող կողմ, և Խաղաղության կոնֆերանսում նրան չէր տրված պաշտոնական տեղ (տե՛ս **Ованнисян Р.**, Международные отношения Республики Армения 1918-1920 гг., Ер., 2007, с. 135): Սակայն 1918 թ. դեկտեմբերի 9-ին, հավանաբար Պ. Նուբարի հոկտեմբերի 29-ի դիմումի համաձայն՝ Անտանտը հայերին, բայց ոչ Հայաստանը, ճանաչել էր որպես պատերազմող կողմ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 2, նաև՝ **Պողոսեան Ս.**, Պողոս Նուբար Փաշա. ազգային գործիչը, Եր., 2004, էջ 134-135): Հայ ժողովրդին պատերազմող կողմ ճանաչելու համար կային բազում հիմնավորումներ: Հարկ է նշել, որ Աշխարհամարտի տարիներին բանակ զորակոչված ավելի քան 250 հազար հայեր, նաև՝ հայկական կամավորական ութ խմբեր, «Արևելյան լեգեոն»-ի հետ միասին, կռվել էին դաշնակիցների կողմում: 1915-1916 թթ. արևմտահայությունը զանգվածաբար տեղահանվել և կոտորվել էր, իսկ 1918 թ. Կովկաս ներխուժած թուրքական զորքին ավելի քան ութ ամիս Անդրկովկասի ազգերից փաստորեն միայն հայերն էին դիմակայել, տվել Մայիսյան հերոսամարտեր, կռիվներ մղել Բաքվում, Կովկասյան ճակատի ամբողջ երկարությամբ՝ դրանով իսկ թուլացնելով ռազմական լարվածությունը Դաշնակիցների հանդեպ Միջագետքում և Պաղեստինի ճակատներում: Սա էական ավանդ էր Անտանտի հաղթանակի գործում: Իսկ երբ 1920 թ. հունվարին Անտանտի տերությունները ճանաչեցին Հայաստանի կառավարությունը, կարելի է արձանագրել, որ Հայաստանն արդեն ներկայանում էր որպես Վեհաժողովին մասնակցող և բանակցող կողմ: Եվ այդ հիման վրա էր, որ նրա պատվիրակն ստորագրեց Սևրի պայմանագրի տակ:

կերպ նպաստել դրա արդարացի լուծմանը: Դեկտեմբերի 7-ին ՀՀ կառավարությունը պատվիրակությանը հրահանգել էր Փարիզի խաղաղության վեհաժողովում պաշտպանել **Միացյալ և Անկախ Հայաստանի** գաղափարը, այն է՝ Հայաստանի Հանրապետության և Արևմտյան Հայաստանի նահանգների միավորումով ստեղծել Միացյալ Հայաստան: Տաճկաստանից պահանջվելու էր հայկական 6 վիլայեթ՝ առանց ոչ հայաբնակ ծայրագավառների, սեփական ելքով դեպի ծով: Ընդ որում՝ առանձին ծանոթագրությամբ պատվիրակությանը լիազորում էին, որ տարածքային պահանջները, ըստ կարիքի, կարող են կրճատվել մինչեւ 3 վիլայեթ (Վանի, Բիթլիսի, Էրզրումի, մասամբ՝ Տրապիզոնի), առանց ոչ հայաբնակ ծայրագավառների՝ սեփական ելքով դեպի Սև ծով: Ի դեպ՝ դեպի ծով տանող ելքին տրվելու էր ավելի կարևորություն, քան տարածքային մեծությանը[65]: Բայց հանգամանքների բերումով այդ քաղաքականությունը չկենսագործվեց:

Միացյալ Հայաստանի հարցում ՀՅԴ որոշ գործիչներ՝ Ռ. Տեր-Մինասյանը, վարչապետ Հ. Քաջազնունին, Ալ. Խատիսյանը, Ս. Վրացյանը հանդես էին գալիս ավելի համեստ պահանջներով: Հ. Քաջազնունին նույնիսկ կարծում էր, որ պետք չէ դեպի ծով ելք պահանջել, իսկ Կիլիկիայի մասին առհասարակ խոսք չկար: ՀՅԴ Բյուրոյի անդամ Ռ. Տեր-Մինասյանն իր հուշերում գրում է, որ Բյուրոն մշակել էր մի ծրագիր Հայաստանի պահանջների մասին, ուր «կը հետապնդէր Միացեալ Հայաս-

---

[65] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 183, թ. 7, նաև՝ **Բաբալեան Ա.**, Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1959, էջ 34, **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 117:

տանի գաղափարը առանց Կիլիկիայի եւ առանց ելքի՝ դէպի Սեւ ծով: Այդ ուղղութեամբ հրահանգ էր տուած թէ՛ կառավարութեան եւ թէ՛ ՀՀ Պատվիրակութեան, որ մեկնեց արտասահման»[66]:

Համեմատության համար ասենք, որ եթե ՀՅԴ-ն հիմնականում գոհանում էր ավելի չափավոր սահմաններով, ապա Դաշնակցության հետ կոալիցիայի մեջ գտնվող՝ 1917 թ. ապրիլին Թիֆլիսում հիմնված Հայ Ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ), համերաշխվելով գաղթաշխարհի Հայ (սահմանադրական) Ռամկավար կուսակցության (ՀՍՌԿ) հետ, պնդում էր ծովից ծով Հայաստանի մասին՝ Կիլիկիայի հետ միասին: Հարկ է նշել, որ Միացյալ Հայաստանի տարածքային պահանջների հարցում Դաշնակցության շարքերում ևս կային գործիչներ, հատկապես գաղութահայ հատվածից, ովքեր նման պահանջներ էին դնում: Սակայն ՀՅԴ-ի և կառավարության քաղաքական ուղեգիծը որոշելիս նրանք որոշակի ազդեցություն չեն ունեցել:

Ինչ վերաբերում է Հայաստանի պառլամենտում գործող մյուս՝ Սոցիալ-դեմոկրատ մենշևիկ և բոլշևիկ, Սոցիալիստ-հեղափոխական (Էսէռ) կուսակցություններին, ապա դրանք ըստ էության դեմ էին Միացյալ Հայաստանի գաղափարին:

Կառավարության հրահանգից բացի՝ հայ ժողովրդի պահանջների ներկայացման իմաստով հիմնավոր փաստարկներից էր ՀՀ-ում բնակվող 223.630 արևմտահայ գաղթականների, բարեգործական զանազան կազմակերպությունների կողմից ընտրված 55 պատգամավորների մասնակցությամբ **1919 թ. փետր-**

---

[66] **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Է, Պէյրութ, 2004, էջ 169:

վարի 6-13-ը Երևանում գումարված Արևմտահայերի Բ համագումարը[67], որում ՀՅԴ-ից հետո երկրորդ դերակատարը Հայ Սահմանադիր Ռամկավար կուսակցությունն էր: Համագումարում զարգացվեց արևելահայ և արևմտահայ հատվածների միավորմամբ մեկ միասնական պետության ստեղծման գաղափարը: Նրանում ընդունված քաղաքական բանաձևը առաջին կետով հրապարակավ սրտագին ողջունում էր «**Ազատ և Միացյալ Հայաստանի անկախության**» քաղաքական պլատֆորմը[68], 2-րդ կետով լիակատար վստահություն էր հայտնում «Ազատ և Միացեալ Հայաստանի Պօղոս Նուպար փաշայի առաջին դահլիճին»[69]:

Բանաձի թիվ 5 կետով հանձնարարվում էր նորընտիր Գործադիր մարմնին՝ «գործնական քայլեր առնել Արարատեան Հանրապետութեան կառավարութեան եւ խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը հայտարարելու և մեկ համազգային միությունը իրականացնելու համար»[70]: Սակայն բանաձևի այդ կետին դեմ են արտահայտվում Ռամկավար կուսակցության հինգ պատգամավորները և հեռանում դահլիճից: Այս կապակցությամբ համագումարին մասնակից, ռամկավար գործիչ Արտակ Դարբինյանն իր հուշերում գրում է, որ նախ մեծամասնությամբ ընդունվեց (նկատի ունի քաղաքական բանաձևի 2-րդ կետը) այն ձևակերպումը, որ համագումարը «Լիակատար վստահութիւն կը յայտնէ Ազատ եւ Միացեալ

---

67 **Մելիքյան Վ.**, Արևմտահայերի համագումարները և Հայկական հարցի փուլերը 1917-1923 թթ., Եր., 2007, էջ 9:

68 Տե՛ս Համառոտ տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի, Եր., 1919, էջ 13:

69 Նույն տեղում:

70 Նույն տեղում, էջ 14:

Հայաստանի Պողոս Նուպար փաշայի անդրանիկ դահլիճին»[71]: Ըստ Ա. Դարբինյանի՝ ստացվում է, որ այդ բանաձևով փաստորեն ընդունվում էր Պողոս Նուբարի վարչապետ լինելու հանգամանքը: Սակայն, ի հակակշիռ այդ բանաձևին, համագումարում մեծամասնություն կազմող դաշնակցական պատգամավորների նախաձեռնությամբ նոր բանաձև է առաջադրվում և ընդունվում, ուր այլևս խոսք չկար Պողոս փաշայի վարչապետ առաջադրվելու մասին: Դրա հետևանքով էլ ռամկավար պատգամավորները, որպես բողոքի նշան, հայտարարություն են անում և հրաժարվում մասնակցել համագումարի հետագա աշխատանքներին[72]:

Այս կապակցությամբ նրանք հանդես եկան մի ընդարձակ հայտարարությամբ՝ «Ինչո՞ւ հեռացանք Արևմտահայ Բ համագումարից», որում փորձում էին պարզաբանել ու հիմնավորել համագումարից իրենց հեռանալու դրդապատճառները[73]: Սա նշանակում է, որ ՀՅԴ և Ռամկավար կուսակցությունների միջև վեճը Միացյալ Հայաստանի բովանդակության, ապագա բարձր պաշտոնների բաժանման և այլ հարցերի շուրջ արդեն կար 1919 թ. սկզբներից, նույնիսկ 1918 թ. նոյեմբերից: Բայց պետք է ասել, որ գաղթականության խնդրում ՀՅԴ և Ռամկավար կուսակցությունները հիմնականում համագործակցել են իրար հետ:

Ինչևէ, բանաձևն ընդունվեց. ինը հոգուց բաղկացած արևմտահայ հատվածի նորընտիր Գործադիր մարմինը պետք է բանակցեր Պողոս Նուբարի, ՀՀ կառավարության ու խորհր-

---

[71] **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, Եր., 2003, էջ 251:

[72] «Ժողովուրդ», Եր., 28 փետրվարի 1919 թ.:

[73] «Վան-Տոսպ», Եր., 31 մարտի 1919թ.:

դարանի հետ՝ Միացյալ, Ազատ Հայաստանի պետական-օրենսդրական հիմքերն ստեղծելու նպատակով:

Արևմտահայերի համագումարը փետրվարի 13-ի իր վերջին նիստում ողջույնի նամակով դիմում է հանրապետության վարչապետին, որում՝ մասնավորապես ասվում էր. «Համագումարը հաւատացած է, որ Արարատեան Հանրապետութեան կառավարութիւնը կը փութայ օր առաջ յայտարարել Միացեալ, Ազատ Հայաստանի անկախութիւնը և գործնական քայլեր առնել միացումը իրականացնելու համար կեանքի մէջ»[74]: Համագումարը նույնաբովանդակ դիմում է արել է նաև Հայաստանի խորհրդարանին՝ հավատացած լինելով, որ այն չի ուշացնի իր որոշումը[75]: Հայ քաղաքական շրջանակների նպատակն էր վերականգնել հայ ժողովրդի անկախությունն իր պատմական հայրենիքի սահմաններում: Ահա սրանք այն հիմնական կռվաններն ու շարժառիթներն էին, որոնք մղեցին կառավարությանը՝ Հայաստանի երկու մասերի միացման վերաբերյալ հայտարարություն անելու:

Այսպիսով՝ Միացյալ Հայաստանի պահանջի հետևողական պաշտպան էին ՀՅԴ, ՀԺԿ և ՀՍՌԿ: Վերջինս հիմնականում ներկայացնում էր Հայաստանի արևմտահայ գաղթականությունը և արտերկրի գաղութահայությունը: Ռամկավարների «Հայաստանի ձայն» օրաթերթի առաջնային սկզբունքներից էր «փարիլ ազատ եւ ամբողջ Հայաստան ստեղծելու գաղափա-

---

[74] «Համառոտ տեղեկագիր...», էջ 17, **Վրացեան Ս.**, Բանակցութիւններ ազգային պատվիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջև, Պոսթըն, 1920, էջ 4-5:

[75] «Համառոտ տեղեկագիր...», էջ 18:

ին»[76]: Ռամկավարների և ՀԺԿ-ի քաղաքական մտադրությունների մարմնավորողն էր եգիպտահայ մեծահարուստ, 1906 թ. Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հիմնադիր, ազգային, հասարակական-քաղաքական գործիչ **Պողոս Նուբար փաշան** (1851-1930 թթ.): Փարիզ մեկնող ՀՀ պատվիրակությանը հանձնարարվել էր առնվազն սերտորեն համագործակցել Պ. Նուբար փաշայի գլխավորած Ազգային պատվիրակության հետ և միասնաբար պաշտպանել Հայ Դատը: Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսը էջմիածնից 1918 թ. դեկտեմբերի 4-ին նամակով իրազեկում է Վսեմափառ փաշային, որ ՀՀ կառավարության կողմից մի պատվիրակություն է գործուղվում Եվրոպա՝ առաջիկա միջազգային կոնգրեսում Հայ Դատը ամբողջական ըմբռնումով պաշտպանելու և դրան արմատական լուծում տալու առաքելությամբ: Վեհափառը հորդորում էր Պ. Նուբարին փաշային երկու պատվիրակություններով «միախորհուրդ Հայ ժողովրդի դատն իր ամբողջական ըմբռնումով պաշտպանելու և նրա արմատական լուծումը վաստակելու»[77]:

Հայաստանի պատվիրակությունը Փարիզ հասավ ուշացումով՝ 1919 թ. փետրվարի 4-ին, իսկ խաղաղության վեհաժողովը բացվել էր հունվարի 18-ին: Պատվիրակության անդամ **Մ. Պապաջանյանը** Փարիզ հասավ ավելի ուշ՝ հունիսին: Փա-

---

[76] **Դարբինեան Ա.**, նշվ. աշխ., էջ 9:

[77] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 185, թ. 2, նաև՝ «Ժողովուրդ», Եր., 27 դեկտեմբերի 1918 թ.:

րիզում հենց սկզբից էլ սառնություն ու տարաձայնություն ծագեց ՀՀ և Պ. Նուբարի պատվիրակությունների միջև, որն էլ, անկասկած, իր բացասական ազդեցությունը պետք է թողներ Հայոց դատը դրականապես լուծելու ընթացքի վրա: Հայկական երկու պատվիրակությունների միջև առկա սառնությունը ուղղակի անդրադարձն էր այն հարաբերությունների, որ գոյություն ուներ արևելահայության՝ ի Հայաստանի Հանրապետության, Կովկասում ապաստան գտած արևմտահայ գաղթականության և արտերկրի հայության միջև: Պետք է նկատի ունենալ, որ այդ շրջանում մի տեսակ խորթություն ու խուլ դժգոհություն էր գոյացել արևելահայության և արևմտահայության միջև: Վերջիններս, ինչպես հարկն է, մասնակից չէին հանրապետության պետական ու հասարակական կյանքին:

Պողոս փաշան և նրա գլխավորած Ազգային պատվիրակությունը գործում էին ինքնուրույն և, գրեթե հաշվի չառնելով ՀՀ գործոնը, փորձում էին առաջ տանել Միացյալ Հայաստանի իրենց նախագծած (պատկերացրած) մոդելը: Հայաստանի պատվիրակության կազմում Եվրոպա մեկնած զորավար Գ. Ղորղանյանն իր հուշերում պատմում է, որ Փարիզում գտնվող Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան ավելի վաղ՝ 1918 թ. նոյեմբերի 30-ին, հայ ժողովրդի անունից «Դաշնակիցներին հաղորդել էր Միացյալ Հայաստանի անկախ պետության ստեղծման մասին»[78]: Մեկ այլ հաղորդագրությամբ իրազեկվում է, որ 1918 թ. դեկտեմբերի 17-ին Դաշնակից երկրների գիտությամբ Պողոս Նուբար փաշան արել է Արևմտյան Հայաստանի (վեց վիլայեթների) և Կիլիկիայի միաց-

---

[78] Հայաստանի Հանրապետութիւնը եւ պետութիւները, (տե՛ս «ՎԷՄ», Պարիզ, 1934, թիվ Ե, էջ 29-30:

յալ պետության անկախության մասին հայտարարություն և այդ հիման վրա նույնիսկ կազմվել է կառավարություն:

Հայկական երկու պատվիրակությունների միջև հիմնական տարաձայնությունը «Միացյալ Հայաստան» հասկացության բովանդակության մեջ էր, ինչպես նաև, թե որ քաղաքական ուժն էր լինելու ապագա Միացյալ Հայաստանի ղեկավարը: Բանն այն է, ՀՅԴ-ն և ՀՀ կառավարությունը Միացյալ Հայաստան ասելով հասկանում էին առավելագույնը արևմտահայկական 6 նահանգ, իսկ նվազագույնը՝ 3 նահանգ՝ ծովային ելքով՝ ներառյալ գոյություն ունեցող ՀՀ-ն, այնինչ Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս փաշան և նրա աջակից կուսակցությունները՝ Հայ Ս. ռամկավարները, նրանց գաղափարակից ու ձայնակից ՀԺԿ-ն, որը կոալիցիայի մեջ էր ՀՅԴ հետ, ինչպես նաև գաղութահայ Ս Դ Հնչակյանները պահանջում էին ծովից ծով Հայաստան՝ բաղկացած արևմտահայկական 7 նահանգներից և Կիլիկիայի չորս սանջակներից: Պողոս փաշան և նրա կողմնակիցները դեմ էին, որ ՀՀ-ն մտնի Միացյալ Հայաստանի կազմի մեջ՝ գտնելով, որ ՀՀ հարցը ռուսահայոց հարցն է, և այն չպետք է խառնել տաճկահայ հարցի հետ, որն, իրենց կարծիքով, կխանգարեր Հայկական հարցի հայանպաստ լուծմանը:

Այս կապակցությամբ ռամկավար գործիչ ու պատմաբան Ա. Դարբինյանը հետևյալ պարզաբանումն է անում. Ազգային պատվիրակության համոզմամբ Տաճկահայաստանի և Ռուսահայաստանի հարցերը չպետք է միացնել և ըստ այդմ հայտարարել միացյալ Հայաստանի մասին: Պ. Նուբարը պատճառաբանում էր, որ քանի դեռ Ռուսաստանը իր վերջնական խոսքը չի ասել Ռուսահայաստանի խնդրում, «Տաճկահայաստանի

հարցը պետք է անջատ պահել, որպեսզի դաշնակից պետությունները ռուսական հարցը պատճառ չդարձնեն տաճկահայ դատի լուծման ձգձգման համար»[79]: Նրանք կարծում էին, որ այդ երկու հարցերը պետք է տարանջատել իրարից և հասնել առաջին հերթին Տաճկահայաստանի (հնարավորության դեպքում՝ Կիլիկիայի հետ) անկախությանը: Պողոս փաշայի և արևմտահայ շատ գործիչների մտավախությունն այն էր, որ վաղ թե ուշ Ռուսաստանը պիտի գրավի Հայաստանը[80]: Փաշայի այս բացատրությունից կարելի է հասկանալ, որ նա ուզում էր հասնել Տաճկահայաստանի (հնարավորության դեպքում՝ Կիլիկիայի հետ) անկախության հռչակմանը, ինքն էլ պետք է դառնար նրա վարչապետը: Ի դեպ՝ այս ակնկալությամբ, ինչպես արդեն ասվեց, նույնիսկ ստվերային կառավարություն կազմվեց: Պողոս փաշայի գլխավորած կաբինետում ընդգրկվել էին Գաբրիել Նորատունկյանը (արտ. գործ. նախարար), Ոսկան Մարտիկյանը (ներք. գործ. նախ.), Արշակ Չոպանյանը (կրթության և արվեստի նախ.) և ուրիշներ[81]: Հասկանալի է, որ այս ամենը մնաց թղթի վրա: Այս առթիվ Ա. Ահարոնյանը Փարիզից ՀՀ արտ. գործ. նախարար Ս. Տիգրանյանին ուղղված 1919 թ. ապրիլի 24-ի թվակիր նամակում հայտնում էր. «Ձեզ հեռագրել եմ, որ այստեղ Պողոս փաշայի կառավարություն գոյություն չի ունեցել և չունի»[82]:

Պողոս փաշան ՀՀ գոյությունը անգամ վնասակար էր հա-

---

79 **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 419:

80 **Ճիզմեճեան Մ. Գ.**, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրեզնօ, 1930, էջ 397:

81 «Արձագանք», Եկատերինոդար, 10 հունվարի 1919 թ.:

82 Դաշնակցական կառավարութեան դոկումենտներից, Եր.,1922, էջ 10:

մարում Հայկական հարցի համար[83]: Այդ հիմնավորմամբ նա նույնիսկ դիմակայել է օտար պետությունների կողմից ՀՀ ճանաչմանը՝ կարծելով, որ «...դա իբր կարող է թուլացնել Տաճկահայաստանի դատը: Իսկ այդ գործում փաշային օգնել է նաև Անդրանիկը»[84]: Ինքնին հասկանալի է, որ նման դիրքորոշումը չէր կարող նպաստել Հայկական հարցի ամբողջական լուծմանը: Հայ ժողովրդի իրական կառավարությունն ու ուժը ոչ թե Փարիզում էր, այլ բուն Հայաստանում, ուր կար խորհրդարան, դատական համակարգ, բանակ, տեղական ինքնակառավարման մարմիններ, ընթանում էր երկրի վերաշինությունը և այլն:

Մեր կարծիքով՝ Պ. Նուբար փաշայի, Հայ ռամկավարների ու Հայ ժողովրդականների սխալն այն էր, որ կարևորություն չտալով իրական Հայաստանի Հանրապետության գործոնին, որի առանցքի շուրջ հենց պետք է միավորվեին հայկական մնացյալ հողերը, և ստեղծվեր Միացյալ և Անկախ Հայաստան, նրանք Արևմտյան Հայաստանի (Տաճկահայաստանի) հարցը կտրում էին իրատեսական հիմքից և Միացյալ, Անկախ Հայաստան ասելով հասկանում էին տաճկահայ նահանգները և Կիլիկիան միասին՝ կասկածի տակ առնելով ՀՀ գոյությունը:

Այդուհանդերձ, հայկական երկու պատվիրակությունների պահանջների ու մոտեցումների նման տարբերությամբ հանդերձ, Ա. Ահարոնյանի գլխավորած ՀՀ կառավարության պատվիրակությունը խոչընդոտներ չհարուցելու, համատեղ գործելու մտայնությամբ ընդառաջ գնաց Ազգային պատվիրակության

---

[83] **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրութ, 1958, էջ 274:

[84] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 62:

տեսակետին, և **1919 թ. փետրվարի 12-ին** Փարիզում երկու պատվիրակությունները (ղեկավարներ՝ Ա. Ահարոնյան և Պ. Նուբար փաշա) համատեղ ստորագրությամբ պաշտոնական ձևակերպում տվեցին հայ ժողովրդի բաղձանքներն արտահայտող մի Հուշագրի (**Memorandum**)՝ համապատասխան քարտեզով[85]: Հուշագրով դաշնակից տերություններից պահանջվում էր ստեղծել **Միացյալ և Անկախ Հայաստան** մեկ ամբողջական տարածքի վրա: Այն ներառում էր արևմտահայկական յոթ նահանգ՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի (Բաղեշի), Դիարբեքիրի, Խարբերդի, Սվազի (Սեբաստիայի)՝ առանց հայաբնակ ծայրագավառների, և Տրապիզոնի նահանգի մի մասը՝ դեպի ծով ելքի համար, նաև Հայաստանի Հանրապետությունը՝ ներառյալ Երևանի նահանգը, Լոռին ու Ախալքալաքը, Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Կարսի մարզը՝ բացի Արդահանից հյուսիս ընկած շրջանները, ինչպես նաև Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշը, Սիս-Կոզանը, Ջեբել-Բերեքեթը և Ադանան՝ Ալեքսանդրետի նավահանգստով: Մի խոսքով՝ լայնատարած մի պետութ-

---

[85] Հուշագրի ֆրանսերեն բնագրի հայերեն թարգմանությունը տե՛ս «Հայկական հարցը Հաշտութեան կոնֆերանսի առաջ», Թիֆլիս, 1919, «Աշխատավոր»: Հուշագրում տրված է պատմական ակնարկ, Հայկական պահանջատիրության շուրջ զանազան հիմնավորումներ, հայերի և հարևան ժողովուրդների վերաբերյալ վիճակագրական հարուստ տվյալներ, վերջում քարտեզ և այլն: Մասնավորապես, հենվելով ռուսական և այլ օտար տվյալների վրա, ցույց է տրված, որ Աշխարհամարտից առաջ հայերի ընդհանուր թիվը աշխարհում եղել է **4.470 հազար** մարդ; որից Տաճկահայաստանում և Կովկասյան Հայաստանում՝ 2.699 հազար, Հայաստանին սահմանակից շրջաններում՝ 1.088 հազար և աշխարհի մյուս երկրներում՝ 683 հազար: Հուշագրի ֆրանսերենով տարբերակը (38 թերթ) պահվում է ՀԱԱ Հայ Ազգային պատվիրակության՝ ֆ. 430, ց. 1, գ. 1323-ում:

յուն՝ Սև ծովից մինչև Միջերկրական, այսինքն՝ ծովից ծով Հայաստան[86]:



ՄԻՐՇԵՐԼ ՀԱՅԱՍՏԱՆ
(Ըստ հայկական պատմագրության յուրոցի)

Ա. Ահարոնյանի վարքագծի վրա, անշուշտ, ազդեցություն են ունեցել գաղութահայության ընդհանուր ոգևորությունը և հոգեբանական ճնշումները, որոնց պայմաններում նա, փաստորեն անտեսելով կառավարության անհամեմատ համեստ հրահանգները, ստորագրեց Փարիզի խաղաղության համաժողովին ներկայացվող՝ ծովից ծով Հայաստան ստեղծելու պահանջների հուշագրի տակ, որը, անշուշտ, լուրջ շեղում էր Հայաստանի կառավարության հրահանգից և իրատեսական չէր: Հետա-

[86] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291, թ. 28, Հայկական հարցը Հաշտութեան կոնֆերանսի առաջ, Թիֆլիս, 1919, էջ 7, նաև՝ **Ованнисян Р.**, Международные отношения Республики Армения 1918-1920 гг., Ер., 2007, с. 61.

գայում ճիշտ էր նկատում Վ. Նավասարդյանը՝ գայթակղության նման դրսևորումները գնահատելով որպես «Շեղում կուսակցության հիմնական քաղաքական գծից»[87]: Ավելացնենք, որ, գաղութահայ ռամկավարներից և կովկասահայ ժողովրդականներից բացի, Միացյալ Հայաստանի գաղափարը Կիլիկիայի հետ միասին պաշտպանում էին նաև գաղութահայ հնչակյանները[88]:

Հավելենք, որ նման մեծ պահանջներով փաստաթղթի ստեղծմանը հավանաբար նպաստում էին նաև մեծ տերությունների առանձին գործիչների նախնական գայթակղիչ խոստումները: Այսպես, օրինակ, 1918 թ. դեկտեմբերի 10-ին ԱՄՆ-ի կոնգրեսում սենատոր Հենրի Լոջը Սենատի քննարկմանն էր ներկայացրել մի բանաձև, համաձայն որի՝ «Սենատի կարծիքով, Հայաստանն իր մեջ ներառելով Թուրքահայաստանի 6 վիլայեթները և Կիլիկիան, Ռուսահայաստանը և Պարսկահայաստանը, պետք է լինի անկախ, իսկ Սենատը հույս ունի, որ խաղաղության կոնֆերանսը հոգ կտանի, որպեսզի օգնի Հայաստանին՝ հիմնելու անկախ հանրապետություն»[89]: Մի խոսքով՝ սենատոր Հ. Լոջը հայերի համար էյֆորիկ մի բանաձև էր մտցրել՝ հեռա-նկարում Ռուսահայաստանի, Թուրքահայաստանի, Պարսկահայատանի և Կիլիկիայի միավորումից ստեղծելու ծովից ծով Միացյալ և Անկախ Հայաստան: Բացի Հ. Լոջից՝ Աշխարհամարտի ավարտին՝ 1918 թ. դեկտեմբերին, Մեծ Բրիտանիայի արտաքին գործոց նախարարի տեղակալ լորդ Ռոբերտ

---

[87] **Նավասարդեան Վ.**, Դաշնակցութեան քաղաքական ուղին, Գահիրէ, 1925, էջ 29:

[88] «Երիտասարդ Հայաստան», Չիկագո, 28 օգոստոսի 1920 թ.:

[89] **Ованнисян Р.**, Международные отношения Республики Армения 1918-1920 гг., Ер., 2007, с. 14.

Սեսիլը ջատագովում էր, որ ընդարձակ Հայաստանի կազմի մեջ պետք է մտնեն վեց վիլայեթները և Կիլիկիան[90]:

1919 թ. փետրվարի 26-ին Ա. Ահարոնյանը և Պողոս փաշան մասնակցեցին Փարիզի խաղաղության վեհաժողովի՝ Տասի խորհրդի նիստին և համատեղ ստորագրությամբ ներկայացրին հայկական պահանջների հուշագիրը՝ Մեծ Հայաստանի համապատասխան քարտեզով: Փաստենք նաև, որ Փարիզի վեհաժողովին ներկայացվող «Հայկական պահանջների հուշագիրը» վավերացվել է 1919 թ. փետրվարի 24-ից մինչև ապրիլի 22-ը Փարիզում գումարված **Արևմտահայ ազգային** առաջին համագումարում (դրա մասին խոսք կլինի ստորև)[91]: Ծովից ծով Հայաստան ստեղծելու պահանջին կողմ էին նաև գրեթե բոլոր արևմտահայ դաշնակցականները[92]:

Հայկական երկու պատվիրակությունների՝ Փարիզի վեհաժողովին ներկայացրած ընդարձակ հուշագրում, բացի Մեծ Հայաստան ստեղծելու պահանջից, տարատեսակ՝ պատմական, աշխարհագրական, ժողովրդագրական, քաղաքական, տնտեսական և այլ հիմնավորումներով խոսվում էր **Հայաստանի մանդատի**, նրա՝ **Ազգերի լիգային** (ներկայիս ՄԱԿ-ի նախորդն ու նմանակը) անդամակցելու, ներգաղթի, հայկական զինված ուժերի, պատերազմից կրած վնասների դիմաց հատուցումներ ստանալու, ունեցվածքի ու ազգային արժեքների բռնագրավումների, ժողովրդի կրած զրկանքների, տեղահանությունների, զանգվածային կոտորածների և այլնի մասին[93]: Հայաստանի

---

[90] Տե՛ս **Նասիպեան Ա.**, նշվ. աշխ., էջ 153;
[91] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 149:
[92] Տե՛ս «Ասպարէզ», 28/29 մայիսի 1992 թ.:
[93] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1323, թ. 1-38:

Միացյալ պատվիրակությունը Փարիզի Խաղաղության վեհաժողովին էր ներկայացրել մասնավորապես աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի կրած նյութական վնասների չափը, որը 1919 թ. համարժեքով գնահատվել էր ավելի քան 19,1 մլրդ ֆրանկ, որից շուրջ 14,6-ը համարվում էր արևմտահայերի, իսկ ավելի քան 4,5-ը՝ արևելահայերի կրած վնասը [94]:

Այսպիսով՝ Հայկական հարցում ՀՀ պատվիրակությունը հիմնականում գործել է կառավարության տված հրահանգի շրջանակներում: Սակայն փորձելով համերաշխվել Ազգային պատվիրակության հետ և հանդես գալ միասնաբար, պաշտպանել է Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծման առավելագույն պահանջը:

6. ՓԱՐԻԶԻ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Հայ ազգի քաղաքական իղձերն ու ծրագրերը ի մի բերելու, միակամություն ձևավորելու և դրանց պաշտոնական տեսք տալու նպատակով **1919 թ. փետրվարի 24-ից ապրիլի 22-ը Փարիզում** գումարվեց **Արևմտահայ Ազգային Ա** համագումարը: Համագումարին մասնակցում էր գաղթաշխարհը ներկայացնող 36 պատգամավոր վճռական ձայնի իրավունքով, ինչ-

---

[94] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291, թ. 231, ֆ. 57, ց. 5, գ. 194, թ. 2բ, «ՎԷՄ»,. Պարիզ, 1934, թիվ Ե (5), էջ 30, **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 286, **Աստոյան Ա.**, Դարի կողոպուտը. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Եր., 2013, էջ 145, **Махмурян Г.**, Армянский вопрос на Парижской мирной конференции и британская политика (январь-март 1919г.), տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 2006, թիվ 2, էջ 133-135 և այլն:

պես նաև ՀՀ պատվիրակությունից Ա.Ահարոնյանը և Հ.Օհանջանյանը՝ խորհրդակցական ձայնով. ընդամենը 38 պատգամավոր[95]: Համագումարին իբրև պատգամավորներ մասնակցել են դաշնակցական գործիչներ Վ. Փափազյանը, Գ. Փաստրմաճյանը, Մ. Վարանդյանը, Լ. Շանթը և ուրիշներ:

Չնայած ներքին տարաձայնություններին՝ համագումարը պարտք համարեց «իր եղբայրական ջերմ ողջոյններն ուղղել Հայկական Հանրապետութեան, անոր մէջ տեսնելով վեց հարյուր տարիէ ի վեր առաջին անգամ վերազարթնող հայ ազատութեան հրճուառիթ պատկերը եւ յոտնկայս իր խորին յարգանքն ու պաշտամունքը յայտնեց մեր ցեղի բազմաչարչար նահատակներուն յիշատակին, որոնք իրենց հերոսական պայքարով պատրաստեցին Հայկական դատին յաղթանակը»[96]: Համագումարը ընդունեց նաև Դաշնակից երկրներին ուղղված կոչ:

Գ. Նորատունկյանի նախագահությամբ շուրջ երկու ամիս տևած համագումարն ունեցել է 43 նիստ, որից 5-ը նախապատրաստական[97]: Բազում հարցերի (Ազգային պատվիրակության հաշվետվություն, հայության կրած վնասների հատուցում, Հայկական լեգեոնի վիճակ և այլն) շարքում առաջնայիններից էր Միացյալ և Անկախ Հայաստանի հարցը, որի շուրջ, սակայն, եղան երկու հակադիր տեսակետներ: Համագումարը վավերացրել է Վեհաժողովին ներկայացված հայկական պահանջների Հուշագիրը[98]: Ամբողջական Հայաստանի և նրա ապագա կառավարության ձևավորման խնդրում տարակարծությունն այն

---

[95] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 149:

[96] **Մելիքյան Վ.**, Հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ արևմտահայերի 3-րդ համագումարի անհրաժեշտութիւնը, Եր., 2010, էջ 34:

[97] Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 499:

[98] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 194, թ. 2բ:

էր, թե՛ Արևմտյան Հայաստանի, թե՛ ՀՀ հիմքի վրա պետք է ձևավորվեր կառավարությունը և խորհրդարանը: Պողոս Նուբարը, ռամկավարները և նրանց համակիրները պաշպանում էին այն տեսակետը, որ ՀՀ պետք է միացվեր Արևմտյան Հայաստանին, վարչապետը, լիներ Պ. Նուբարը, ով, սակայն, որպես Միացյալ պատվիրակության ղեկավար պետք է մնար Փարիզում և հանրապետությունը կառավարվեր իր տեղակալի միջոցով և այլն:

Ազգային համագումարի աշխատանքների ողջ ընթացքում ակներև դրսևորվել է երկու հոսանք, որոնք պայմանականորեն կարելի է անվանել ռամկավարների և դաշնակցականների մոտեցումներ: Հատկապես սուր են եղել տարաձայնությունները Միացյալ Հայաստանի կառավարության ձևավորման սկզբունքների շուրջ: Ապրիլի 5-ի (թիվ 35-րդ) նիստում ելույթով հանդես է գալիս Հ. Օհանջանյանը՝ փորձելով հիմնավորել ՀՀ կառավարության այն մոտեցումը, որ Միացյալ Հայաստանի միացյալ կառավարության հիմք պետք է հանդիսանա ՀՀ կառավարությունը որպես փաստ, որը հնարավոր կլինի լրացնել ու ամբողջացնել արևմտահայ նախարարներով ու աշխատակիցներով: Դրան հակառակ, միացյալ կառավարության հարցի շուրջ ստեղծված հանձնաժողովի անդամ պրն. Աճեմոֆեն (Մովսես Աճեմյանը) առարկելով Օհանջանյանին՝ դարձյալ պնդում էր, արդեն քանիցս ասված այն տեսակետը, թե Թուրքահայ հարցը չի կարելի կապել Ռուսահայ հարցի հետ, քանզի այն «վտանգ կը ստեղծուի, որ երբ վաղը այդ հսկայ էմբերալիսթ Ռուսաստանը ինքզինքը վերագտնէ, պիտի ուզէ իր իրաւունքները վերահաստատել Կովկասի վրայ եւ եթէ թրքահայ դատը ռուսահայ դատին կցուած ըլ-

լայ կրնայ վտանգի ենթարկուիլ»[99]: Ի պատասխան այդ դիտարկմանը Փարիզի խաղաղության կոնֆերանսում ՀՀ կառավարության պատվիրակության անդամ Հ. Օհանջանյանը տալիս է հետևյալ պատասխանը, որ եթե «Ռուսաստանը սկսի գրաւել Կովկասը, այն ատեն ի՞նչ կարեւորութիւն ունի, թէ թրքահայ հարցը միացած է կամ ոչ Կովկասինին: Ռուսիա կրնայ երթալ եւ ամբողջ Թրքահայաստանն ալ գրաւել: Այնպէս որ միացումը իրաւաբանօրէն վտանգ չի ներկայացնէր»[100]:

Այս խնդիրը քննության է առնվել նաև ապրիլի 7-ի և 8-ի նիստերում: Հարցը խնդրահարույց էր այն իմաստով, որ միացյալ կառավարության ձևավորման սկզբունքը լուծում էր տալու այն հարցին, թե Միացյալ Հայաստանի ամբողջացման գործում որ՝ արևելահա՞յ, թե՞ արևմտահայ հատվածն էր գերակա լինելու, կառավարության ու իշխանության բարձրագույն օղակները մեծավ մասամբ ովքե՞ր պետք է տնօրինեին, մանավանդ որ որոշակի շերտանստվածք ու խորթություն կար հայության այդ երկու հատվածների, իսկ գաղափարական ու քաղաքական տարբեր հարցերում՝ ռամկավարների և դաշնակցականների միջև:

Վերոնշյալ նիստերում Հ. Օհանջանյանի արտահայտած տեսակետն են պաշտպանում պատգամավորներ Գ. Փաստրմաճյանը, Ա. Հանըմյանը, Լ. Շանթը, Վ. Փափազյանը, սակայն դրան հակադարձում են Ն. Տեր-Ստեփանյանը, Ա. Թերզիպաշյանը, Վ. Թեքեյանը, Ա. Չոպանյանը[101]:

Տեսնելով, որ խնդրի քննությունն անարդյունք երկարում է և

---

[99] Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 476:
[100] Նույն տեղում:
[101] Տե՛ս նույն տեղում, էջ 477-496:

միասնական կարծիք չի ձևավորվում՝ Արմեն Գարոն (Փաստրմաճյանը) առաջարկում է խնդրի շուրջ անվանական քվեարկություն անցկացնել: Կազմվում են երկու տեսակետերն արտահայտող երկու բանաձևեր՝ ա. Ա. Չոպանյանի և բ. պրոֆ. Խաչատրյանի կողմից ձևակերպված: Ապրիլի 8-ին ձայների մեծամասնությամբ՝ 13-ն ընդդեմ 10-ի, անցնում է «ա» նախագիծը[102], որով Միացյալ Հայաստանի կառավարության ձևավորման հարցը համարվում է բաց, և այդ խնդիրն ավարտին հասցնելու գործը հանձնարարվում է Ամբողջական Հայաստանի նորակազմ պատվիրակությանը: Մինչդեռ «բ» բանաձևն առաջարկում էր, որ «Համագումարն անմիջապէս յայտարարէ Հայաստանի Հանրապետութիւնը իբև կորիզ համազգային պետութեան եւ անմիջապէս ձեռնարկէ պատրաստել ընտրական հրահանգներ, որով ապահովուի Հայաստանի Հանրապետութեան մէջ դեռեւս բաժին չունեցող հայութեան մասնակցութիւնը»[103]:

Համագումարը վերջում ուղերձներ հղեց ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին, Դաշնակիցների ղեկավարներ Ժ. Կլեմանսոյին, Լլոյդ Ջորջին, Վ. Օռլանդոյին, կոչ՝ ուղղված Դաշնակից երկրների ազգերին, նաև՝ ողջույնի հեռագիր Երևան՝ «Հայ Հանրապետութեանը»՝ սրտագին մաղթելով, որ «իրականանայ Միացեալ Հայաստանի հանրապետութեան կազմակերպութիւնը»[104]:

Առաջ անցնելով նշենք, որ մեկ տարի անց՝ 1920 թ. մայիսի 5-ից մինչև հուլիսի 13-ը, դարձյալ Փարիզում ավելի համեստ կազմով (24 պատգամավոր) տեղի ունեցավ **Արևմտահայ Ազ-**

---

[102] Տե՛ս նույն տեղում, էջ 496-497 և 498: Ընդ որում, Ա. Ահարոնյանը և Հ. Օհանջանյանը հրավիրյալ լինելու պատճառով չեն մասնակցել քվեարկությանը:

[103] Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 497:

[104] Նույն տեղում, էջ 503:

գային Բ համագումարը, որը բացել է Գ. Նորատունկյանը: Քանի որ Բ համագումարում քննության առնված օրակարգային հարցերը գրեթե նույն բովանդակությամբ ու մոտեցումներով կրկնվել են, ուստի չկրկնվելու և շարադրանքը չծանրաբեռնելու նպատակով դրան չենք անդրադառնա: Այդ ամագումարի աշխատանքներին կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային արխիվի հրատարակած փաստաթղթերի և նյութերի ժողովածուի համապատասխան բաժնում[105]: Միայն հավելենք, որ 1920 թ. գարնանը Հայաստանում ծավալվող իրադարձությունների կապակցությամբ Ա. Ահարոնյանը իր քաղաքական օրագրում գրում է Պողոս փաշայի նոր հավակնության մասին: Բանն այն է, որ 1920թ. ՀՀ-ում բոլշևիկների կազմակերպած Մայիսյան ապստամբության տիրող ծանր ու անորոշ օրերին գումարված այս համագումարում Պողոս փաշան, չսպասելով հաշտության պայմանագրի ավարտին, պատրաստ էր Փարիզում հռչակել «-Թիւրքահայ կառավարութիւն»[106]: Սա մեկ անգամ ևս վկայում է հայկական պատվիրակությունների աններդաշնակ, անգամ հակամարտ գործողությունների մասին:

7. ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱԿՏԸ

Միացյալ Հայաստանի գաղափարի իրագործում նշանակում էր Հայկական հարցը լուծել Աշխարհամարտից հետո առաջացած նոր իրողությունների լույսի ներքո: Ուստի Եվրոպա կառավարության պատվիրակություն գործուղելուց հետո հաջորդ

---

[105] Տե՛ս նույն տեղում, էջ 505- 785:

[106] Տե՛ս **Ահարոնեան Ա.**, Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լօզան (քաղաքական օրագիր), Պոսթըն, 1943, էջ 77:

քայլը, չնայած երկրի ու ժողովրդի առջև ծառացած բազում խնդիրներին ու դժվարություններին, պետք է լիներ Միացյալ Հայաստանի վերաբերյալ պաշտոնական հայտարարություն անելը, համապատասխան պետական ակտ ընդունելը: Եվ այդ ակտով, բնականաբար, պաշտոնական ձևակերպմամբ պետք է արդեն մեկ տարի անկախ Հայաստանի Հանրապետությունը պետք է համապատասխան հռչակագրով իրեն միավորած համարեր պատմական հայրենիքի անկապտելի մասը կազմող ընդարձակ մեծ հատվածը՝ Արևմտյան Հայաստանը (արևմտահայ նահանգները): «Ճիշդ է,- գրում է Ալ. Խատիսյանը,- այդ վիլայէթները մեր ձեռքը չէին, բայց հայ ժողովուրդի գիտակցութեամբ անոնք չէին կրնար պատկանիլ ուրիշ ոեւէ մէկուն, բացի Հայաստանէն. հայութիւնը հասած էր ազգային այնպիսի գիտակցութեան մը, որ չէր կրնար ճանչնալ սահմաններու պատահական բաժանում եւ հատուածներու գոյութիւն. ան կը զգար ինքզինքը իբրեւ մեկ ամբողջութիւն եւ իր այդ միութեան գաղափարը կ՚ուզէր մարմնաւորել որեւէ մէկ աքտի մէջ»[107]:

Սակայն նման վճռի կայացման ճանապարհին պետական շրջանակներում, մասնավորապես Հայաստանի խորհրդում, կար ոչ միանշանակ ընկալում ու ըմբռնում: Այդ առումով կառավարությունը Հայաստանի խորհրդի (խորհրդարանի) հետ մեծ հույսեր չէր կապում, որովհետև ոչ ընտրովի այդ խորհրդարանի[108] պատգամավորների մի զգալի մասը ոչ միայն չէր ընդու-

---

[107] **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 150:

[108] Հայտնի է, որ այն ձևավորվել էր Հայոց (կենտրոնական) Ազգային խորհրդի անդամների (15) թվի, կուսակցական համամասնությամբ, եռապատկման միջոցով: Խորհրդարանի չորս խմբակցություններից երկուսը և ազգային փոխրամասնություններից թուրք և ռուս ներկայա-

նում Միացյալ Հայաստանի գաղափարը, այլև անգամ դեմ էր Հայաստանի անկախությանը: Բացի այդ՝ 1919 թ. փետրվարից հանրապետության ներքին ու արտաքին քաղաքականության տարբեր խնդիրների շուրջ սուր տարաձայնություններ էին առաջացել խորհրդարանական չորս խմբակցությունների միջև, նույնիսկ բանը հասել էր ծեծկռտուքի[109]:

Խորհրդարանում առաջացած սուր հակասությունները բացասաբար էին անդրադառնում աշխատանքների արդյունավետության վրա: Այդ պատճառով 1919 թ. ապրիլի 27-ին Հայաստանի խորհուրդն օրենք ընդունեց իր աշխատանքները մեկ ամսով դադարեցնելու և այդ ընթացքում խորհրդարանի իրավունքները կառավարությանը հանձնելու մասին[110]: ՀՅԴ և ՀԺԿ խմբակցությունների առաջարկած համատեղ օրինագծով խորհրդարանն ընդունեց երեք կետից բաղկացած օրենք.

1. խորհրդի աշխատանքները դադարեցնել մեկ ամսով:

2.դադարի միջոցին խորհրդի բոլոր իրավունքները հանձնել կառավարությանը:

3. հանձանարարել կառավարությանը խիստ կարևորության դեպքում հրավիրել խորհրդի արտակարգ նիստ[111]:

Եվ, ահա՛, 1919 թ. ապրիլի 27-ին՝ կառավարությանը տրված՝ խորհրդարանի օրենսդրական լիազորությունների մեկամսյա ժամկետի վերջին օրերին, ընդունվեցին երկու շատ պատասխանատու օրենքներ (ակտեր)՝ մայիսի 26-ին «**Միացյալ և**

ցուցիչները այլ տեսակետի էին:

[109] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 404, ց. 1, գ. 35, թ. 1, նաև՝ «Կայծ», Եր., 16 մարտի 1919 թ., «Աշխատավոր», Եր., 25 մարտի 1919 թ.:

[110] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 32:

[111] Տե՛ս «Հայաստանի խորհրդարանի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս 1, Եր., 1919, էջ 61:

Անկախ Հայաստանի անկախության մասին» (5 կողմ, 1 դեմ և 1 ձեռնպահ), իսկ հաջորդ օրը՝ մայիսի 27-ին, դրանից բխող՝ «-**Հայաստանի խորհրդի համալրման մասին»** (6 կողմ, 2 դեմ)[112]: Այս վերջին ակտը կազմում էր առաջինի տրամաբանական շարունակությունը: Կառավարությունը ելնում էր այն գաղափարից, որ Միացյալ Հայաստանը պիտի ունենար նաև միացյալ խորհրդարան: Այսինքն՝ ՀՀ խորհրդարանը պետք է համալրվեր արևմտահայ 12 ներկայացուցիչներով, որի մասին ընդունված օրենքում ասվում էր. «Հրավիրել Հայաստանի խորհրդի նիստերին մասնակցելու որպես խորհրդի լիիրավ անդամներ՝ Արևմտահայ Գործադիր մարմնի կողմից ընտրված 12 ներկայացուցիչներ»[113]: Նման քայլի համար կային որոշակի հիմքեր: Տաճկահայ գաղթականությունն իրեն խորթացած էր զգում «Արարատյան Հանրապետությունում» և, ինչպես հարկն է, չէր մասնակցում երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Նրանք կարծում էին, որ «Հայաստանի կառավարությունը հավասար աչքով չի նայում տաճկահայ գաղթականությանը»[114]: Արևմտահայ գործիչ Արսեն Կիտուրը, դեռ 1918 թ. վերջերին, դժգոհություն էր հայտնում այն բանից, որ տաճկահայը չունի իր ձայնը ՀՀ խորհրդարանում, որ «կարող լիներ խոսելու իր ցավերի մասին»[115]:

Եվ, ահա՛, 1919 թ. մայիսի 28-ին, Հայաստանի անկախության տարեդարձի օրը, դիտելով որպես պատմական հարմար պահ և հիմնվելով ապրիլի 27-ի օրենքի 3-րդ կետի վրա,

---

[112] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 282,, թ. 9-10, նաև՝ «Ժողովուրդ», Եր., 11 հունիսի 1919 թ.:

[113] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 114, գ. 27, թ. 213, նաև՝ ֆ. 200, ց. 1, գ. 282, թ. 9:

[114] ՀԱԱ, ֆ. 1457,, ց. 1, գ. 144, թ. 2:

[115] «Կայծ», Եր., 29 դեկտեմբերի 1918 թ.:

Հայաստանի խորհրդի դահլիճում հրավիրվեց խորհրդարանի ու կառավարության հանդիսավոր նիստ[116], որում նախագահում էր կառավարական հանձնաժողովի նախագահ, Կրթության և արվեստի նախարար, ՀԺԿ անդամ Գ. Մելիք-Ղարագյոզյանը: Վերջինս գրավոր ճառով հանդեսը հայտարարեց բացված: Նվագախումբը հնչեցրեց «Մեր Հայրենիքը»: Նիստում հանրապետության կառավարության նախագահի պաշտոնակատար **Ալ. Խատիսյանն** իր նախաճառից հետո կարդաց Հայաստանի միացման վերաբերյալ հետևյալ պաշտոնական հայտարարագիրը (հռչակագիրը):

«Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն:

Ուղիղ մեկ տարի առաջ ռուսահայերի համագումարից

---

[116] Հարկ է նշել, որ մինչ այդ նիստի հրավիրումը Երևանի քաղաքային տան լայն հրապարակում, անկախության տարեդարձի կապակցությամբ, բազմահազար ժողովրդի, կաթողիկոսի, հրավիրյալ հյուրերի և այլոց ներկայությամբ անցկացվել էր մեծ զորահանդես: Այդտեղ «Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան»-ի տարեդարձի առթիվ բազմահազար ժողովրդի ու զորքի առջև մեծ ոգևորության «Մեր Հայրենիք»-ի հնչյունների և «Կեցցե՛ Միացեալ և Անկախ Հայաստանը» բացականչությունների մթնոլորտում շնորհավորական սրտառուչ ճառով հանդես էր եկել վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանը, որին էլ հաջորդել էր խորհրդարանի պաշտոնական հանդիսությունը, (Տե՛ս «Միացեալ եւ Անկախ Հայաստան», Կ. Պոլիս, 1919, էջ 77-78, նաև՝ **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետու-թեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 152):

ընտրված Հայոց Ազգային խորհուրդը հայտարարեց իրեն Անդրկովկասյան հայկական գավառների բարձրագույն իշխանություն: Ազգային խորհրդի կազմած կառավարությունն այդ քաղաքական ակտի մասին պաշտոնապես պետությունների ներկայացուցիչներին հայտնելուց հետո՝ այս մի տարվա մեջ փաստորեն հաստատել է իր իշխանությունն Անդրկովկասի հայկական գավառներում:

1919 թ. փետրվար ամսին Երևան քաղաքում կայացած Արևմտահայ երկրորդ համագումարը հանդիսավոր կերպով հայտարարեց, որ նա Հայաստանը միացյալ և անկախ է ճանաչում:

Այժմ, Անդրկովկասում և Օսմանյան կայսրության սահմաններում գտնված պապենական հայկական երկրների միացման և անկախության այս ակտը կատարելով՝ Հայաստանի Կառավարությունը հայտարարում է, որ միացյալ Հայաստանի պետական ձևն է Ռամկավար Հանրապետություն և որ ինքը հանդիսանում է միացյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Այսպիսով՝ ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջացած հայրենիքի գերագույն տերն ու տնօրենը, և Հայաստանի Պարլամենտն ու Կառավարությունը հանդիսանում են միացյալ Հայաստանի ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանությունը:

Հայաստանի կառավարությունը սույն ակտը հրատարակում է 1919 թ. Ապրիլի 27-ի Պարլամենտի որոշմամբ Կառավարությանը տրված հատուկ լիազորությունների հիման վրա:



Մինիստրների Խորհրդի Նախագահի և Արտաքին Գործերի մինիստրի պաշտոնակատար՝ ***Ալ Խատիսյան***
Ներքին Գործերի մինիստի պաշտոնակատար՝ Ս. Մանասյան
Զինվորական մինիստր, գեներալ մայոր՝ Ք. Արարատյան
Արդարադատության մինիստրի պաշտոնակատար՝ Հ. Չմշկյան
Հանրային Կրթության մինիստր՝
Գ. Մելիք-Ղարագյոզյան
Խնամատարության մինիստր՝ Ս. Թորոսյան
Պարենավորման մինիստր՝ Ք. Վերմիշյան
Ֆինանսների մինիստրի պաշտոնակատար՝ Գ. Ջաղեթյան
Գործերի կառավարիչ՝ Գ. Խատիսյան
1919 թ. Մայիսի 28-ին, Երևան քաղաք»[117]*:*

Ալ. Խատիսյանի ընթերցած պատմական այս հայտարարագիրը ներկաների կողմից ընդունվեց որոտընդոստ կեցցեներով ու հոտնկայս ծափողջույներով: Այնուհետև, ֆրանսերեն լեզվով դիմելով

[117] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 56, թ. 15, ֆ. 200, ց. 1, գ. 35,, թ. 84, գ. 282, թ. 10, ֆ. 275, ց. 1, գ. 80, թ. 64, նաև՝ «Միացեալ եւ Անկախ Հայաստան», Կ. Պոլիս, 1919, էջ 86-87:

դահլիճում ներկա օտար պետությունների ներկայացուցիչներին, վարչապետի պաշտոնակատարը ողջունեց նրանց Միացյալ Հայաստանի կառավարության անունից և նույն հայտարարագիրը ֆրանսերենով կարդաց նրանց համար: Դրանից հետո, որպես միացման իրական վավերացում, համաձայն արևմտահայ համագումարի փետրվարի 6-ի որոշման, Ալ. Խատիսյանն ընթերցում է խորհրդարանի արևմտահայ 12 նոր անդամների անունները, որոնք ժողովրդի միջից դուրս գալով՝ բարձրանում են բեմ ու տեղ գրավում խորհրդարանի անդամների շարքում:

Խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանի, Վեհափառ կաթողիկոսի, ԱՄՆ-ի, Պարսկաստանի, Վրաստանի և այլ երկրների ներկայացուցիչների շնորհավորական ելույթներից հետո Ալ. Խատիսյանը պաշտոնական մի խումբ անձանց հետ դուրս է գալիս շենքի պատշգամբ և խորհրդարանի մուտքի փողոցը բռնած զորքի ու հոծ հասարակության առջև ընթերցում է Միացյալ Հայաստանի անկախության հայտարարագիրը, որից հետո հրանոթի 30 համազարկեր ազդարարում են այդ տոնի մասին[118]:

Հարկ է նաև արձանագրել, որ ՀՀ անկախության առաջին տարեդարձի և «Միացյալ Հաստանի անկախության հայտարարման ակտ»-ի կապակցությամբ Երևանում անցկացվեցին շքերթ, զորահանդես, հայտարարվեց համաներում, հուշարձանի կառուցման մրցանակաբաշխություն, հանգանակվեց 100 հազար ռուբլի «Ազատության զոհերին» հուշարձան կառուցելու համար և այլն[119]: Ս. Վրացյանը գրում է. «Այդ օրը Երևանը

---

[118] Տե՛ս «Միացեալ եւ Անկախ Հայաստան», Կ. Պոլիս, 1919, էջ 85:
[119] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291, թ. 404, նաև՝ ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 112:

ստացել էր շքեղ, տոնական կերպարանք: Ամբողջ քաղաքը զարդարված էր դրոշակներով, գորգերով, կանաչներով ու ծաղիկներով: Վաղ առավոտվանից փողոցները լիքն էին բազմություններով: Շրջակա գյուղերից քաղաք էին գալիս խումբ-խումբ գյուղացիներ, պատգամավորություններ դրոշակներով՝ հանդեսներին մասնակցելու համար»[120]: Մեկ այլ աշխատության մեջ Ս. Վրացյանը նշում է, որ Հայաստանի անկախության և երկու հատվածների միացման մասին պաշտոնական հայտարարությունը «աննկարագրելի խանդավառութիւն առաջ բերեց ի սփիւռս աշխարհի ցրուած հայ ժողովրդի մէջ»[121]: Այդ հրճվառիթ տոնը նշվեց ոչ միայն մայրաքաղաքում , այլև հանրապետության այլ վայրերում:

Մայիսի 28-ի ակտը առանձին շրջաբերականով ողջունեցին ՀՅԴ Բյուրոն, ՀՅԴ «Երկրի» Կենտրոնական կոմիտեն, կուսակցության այլ ղեկավար մարմիններ: ՀՅԴ Բյուրոյի հայտարարության մեջ ասված է. «Հ.Յ.Դ. Բյուրոն պատմական վարկյանի խոր գիտակցությամբ ջերմապես ողջունում է Հայաստանի միացման և անկախության ակտի պաշտոնական հայտարարությունը»[122]:

Միացյալ Հայաստանի մասին այս պատմական ակտը ջերմորեն ողջունեցին ՀՀ պետական և հասարակական շատ կազմակերպություններ. Երևանի քաղաքային ինքնավարության կողմից՝ Մ. Մուսինյանը, Հայաստանի կոոպերատիվների միությունը, արտասահմանյան մի շարք երկրների դիվանագիտական ներկայացուցիչներ և այլն: Ամենայն Հայոց Գևորգ Ե

---

[120] **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 277:
[121] **Վրացեան Ս.**, Անկախ եւ Միացեալ Հայաստան, Եր., 1920, էջ 21:
[122] «Միացեալ եւ Անկախ Հայաստան», Կ. Պոլիս, 1919, էջ 88:

կաթողիկոսը Վաղարշապատ գյուղի հրապարակում կատարեց հոգեհանգստի կարգ՝ Հայաստանի ազատության համար զոհված հերոսների հիշատակին: Հանդիսություններ ու ցույցեր են տեղի ունեցել հանրապետության գրեթե բոլոր քաղաքներում՝ Էջմիածնում, Աշտարակում, Նոր Բայազետում, Դիլիջանում, Ալեքսանդրապոլում, Ղարաքիլիսայում և այլուր: Հայաստանի անկախության տարեդարձը Ղարաբաղի Հայ Ազգային խորհրդի անունից շնորհավորել է Գերասիմ Բալայանը:

Անհետաքրքիր չէ նշել, որ Հայաստանի անկախության առաջին տարեդարձը (բայց ոչ Միացյալ Հայաստանի ակտը՝ Ա.Հ.) մի շարք հարևան երկրների թվում հեռագրով շնորհավորել են նաև Ադրբեջանի խորհրդարանը (նախագահ՝ Հ. Աղաև) և կառավարությունը (վարչապետ՝ Ն. Ուսուբբեկով)[123]: Հայաստանի երկու մասերի միացման մասին կառավարության հայտարարությունը սրտագին ողջունեց Արևմտահայ Գործադիր մարմնի ներկայացուցիչ Վ. Քրմոյանը[124]: Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքի հայերը և Հայկական լեգեոնի կամավորները, միտինգի հավաքվելով, շնորհավորանքներ են հղել Փարիզ՝ Ա. Ահարոնյանին՝ Մայիսի 28-ի պատմական և փառավոր ակտի առթիվ[125] :

Ավելի ուշ՝ օգոստոսի 29-ին, Աստվածածնի վերափոխման օրը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն, Սուրբ պատարագ մատուցելով, օրհնեց ու սրբագործեց Միացյալ և Անկախ հայաստանի տոնը: Միաժամանակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Հայաստանի անկախության փոխառութ-

---

123 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 119, թ. 5, ֆ. 201, ց. 1, գ. 43, թ. 25:

124 «Միացեալ եւ Անկախ Հայաստան», Կ. Պոլիս, 1919, էջ 92:

125 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 219 ա:.

յան ֆոնդին նվիրեց 1 մլն ռուբլի[126]:

Այս պատմական ակտի գերնպատակը **մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ կառավարություն** գաղափարի՝ որպես պետական քաղաքականության աստիճանական իրագործումն էր: Ըստ Ս. Վրացյանը՝ «Այդ ակտի նպատակն էր արագացնել հայ ժողովրդի երկու հատվածների միությունը և հայտարարել ի լուր աշխարհի հայ ժողովրդի անհողդողդ կամքը՝ անկախ պետական կյանքով ապրելու»[127]:

Միացյալ Հայաստանի մասին հայտարարությունը պետք է ամրապնդվեր գործնական քայլերով: Նախատեսվում էր, բանակցելով արևմտահայ քաղաքական շրջանակների հետ, կազմել Միացյալ Հայաստանի կառավարություն և խորհրդարան[128]: Պատմական նշանակություն ունեցող այս հայտարարությունը ՀՅԴ-ի և ՀՀ կառավարության հանպատրաստի ինքնագործունեության արդյունք չէր, այլ նախապատրաստվել էր քայլ առ քայլ, նախընթաց պատմաքաղաքական դեպքերի ու իրադարձությունների տրամաբանությամբ: Ի դեպ՝ ծրագրվում էր նաև Միացյալ և Անկախ Հայաստանի հռչակումից ու հայկական տարածքների ամբողջացումից հետո Սահմանադիր ժողովի կողմից ընդունել ՀՀ սահմանադրությունը:

Առաջ անցնելով նշենք, որ 1920 թ. հուլիսի 5-ին ՀՀ կառավարությունը հաստատել էր Հայաստանի քաղաքացիության մասին մի օրենք, որի առաջին կետով սահմանվում էր. «Հայաստանի Հանրապետության քաղաքացի է ճանաչվում ամեն

---

[126] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 176, թ. 22:

[127] **Վրացեան Ս.**, Բանակցութիւններ Ազգային պատուիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ, Պոսթը, 1920, էջ 6:

[128] **Վրացեան Ս.**, նույն տեղում:

մի նախկին ռուսա և տաճկահպատակ, որը սույն օրենքի հրատարակման ժամանակ ապրում է **Միացյալ Հայաստանի** սահմաններում»: Ավելին՝ նույն օրենքի 4-րդ կետով արձանագրվում էր, որ «ՀՀ հպատակ են ճանաչվում հայկական ծագում ունեցող այն անձինք, որոնք ծնված են **Միացյալ Հայաստանի** տերիտորիայում, բայց այժմ ապրում են Հայաստանի սահմաններից դուրս»[129]:

Միացյալ Հայաստանի հռչակագիրը խանդավառություն էր առաջացրել նաև դրսաշխարհի հայության մեջ, ովքեր ցանկություն էին հայտնում ներգաղթել հայրենիք: Այս կապակցությամբ Ս. Վրացյանը գրում է. «Կառավարությունը անհաշիվ համախոսականներ ու դիմումներ էր ստանում, պատգամավորություններ ընդունում Թուրքեստանից, Հյուսիսային Կովկասից, Դոնի շրջանից, Մոսկվայից, Սև ծովի եզերքներից, Բալկաններից, Միջագետքից, Պարսկաստանից, Հունգարիայից, անգամ Արժանթինից, որոնք խնդրում էին փութացնել ներգաղթը»[130]: Բայց նաև պետք է նշել, որ գաղափարական, քաղաքական, հատվածական և այլ նկատառումներով գաղութահայության մի մասը, մեղմ ասած, ոգևորությամբ չէր ընդունել Ակտը:

Տալով «Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտ»-ի գնահատականը՝ պետք է արձանագրել, որ այդ փաստաթղթի ընդունումը և հռչակումը պատմական կարևորագույն նշանակություն ունեցող իրադարձություն էր: Ընդունված փաստաթուղթը և նրա հիման վրա իրականացված՝ Հայաստանի Հանրապետության Խորհրդի (խորհրդարանի) ու Արևմտահայ Գործադիր մարմնի ընտրած 12 պատգամավորների միա-

---

[129] **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 465:
[130] **Վրացյան Ս.**, նշվ. աշխ., էջ 467:

վորումն ու համախմբումը մեկ տանիքի տակ նշանակում էր, որ հայ ժողովրդի երկու հատվածների օրինականորեն ընտրված ներկայացուցիչները, իրենց տրված հստակ լիազորությունների շրջանակներում, ձևավորում էին **Միացյալ Հայաստանի նախախորհրդարանը**:

Այսպիսով՝ Հայաստանի կառավարությունը կյանքի էր կոչում օտար նվաճողների կողմից բռնությամբ միմյանցից զատված հայ ժողովրդի երկու հատվածների՝ իրենց հնամենի հայրենիքում մեկ միասնական պետություն ունենալու պատգամը և այն մատուցում քաղաքակիրթ աշխարհին՝ որպես համայն հայության հստակորեն արտահայտված քաղաքական կամք: Սա միջազգային իրավունքի բոլոր նորմերով ընդունված իրավական ակտ էր, որը լիովին համապատասխանում էր Առաջին աշխարհամարտի ավարտից հետո տարածաշրջանի մյուս ժողովուրդների որդեգրած ինքնորոշման պրակտիկային և՛ իր ձևով, և՛ բովանդակությամբ:

«Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտը» իրավական առումով անթերի ու անխոցելի փաստաթուղթ է, որը չի կորցրել իր իրավաքաղաքական նշանակությունը նաև այսօր՝ Հայաստանի թվով երրորդ համարվող հանրապետության օրոք, որը, համաձայն 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունված անկախության Հռչակագրի, հանդիսանում է Հայաստանի առաջին Հանրապետության ժողովրդավարական ավանդույթների շարունակողը: Իսկ դրանց շարքում իր առանձնահատուկ տեղն ունի 1919 թ. մայիսի 28-ին հռչակված «Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտը»:

8. ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՈՒՄԸ

Այժմ փորձենք ներկայացնել, թե ինչպիսին էր Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման և խորհրդարանի համալրման մասին երկու ակտերի հանդեպ ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների վերաբերմունքն ու արձագանքը: Միացյալ և Անկախ Հայաստանի հայտարարությունը բուռն դժգոհություն առաջացրեց ոչ միայն կառավարությանն ընդդիմադիր մյուս կուսակցությունների, այլև ՀՅԴ-ի հետ կոալիցիայի մեջ գտնվող ՀԺԿ-ի ղեկավար շրջանակներում, և դա այն դեպքում, երբ այդ ակտերն ընդունվել էին համատեղ նիստերում եւ ձայների բացարձակ մեծամասնությամբ: Միացյալ Հայաստանի անկախության ակտի տակ նշված են նաև ՀԺԿ-ից նախարարներ Հ. Չմշկյանի, Գ. Մելիք-Ղարագյոզյանի, Ք. Վերմիշյանի, Գ. Ջաղեթյանի անունները: Մինչդեռ Գ. Մելիք-Ղարագյոզյանը, ով նախագահել էր խորհրդարանի ու կառավարության՝ Մայիսի 28-ի հանդիսավոր նիստում, իր հուշերում գրում է, որ ինքը Միացյալ Հայաստանի ակտի ընդունման օրը, այսինքն՝ մայիսի 26-ին, ներկա չի եղել կառավարության նիստին[131]:

Ինչպես արդեն նշվեց, մայիսի 28-ին Հայաստանի խորհրդի կազմը համալրել արևմտահայերի 12 ներկայացուցիչներով, ինչը նույնպես ոմանց մոտ դժգոհության առիթ էր դարձել, թեև նախատեսված էր, որ արևմտահայ պատգամավորների ներգրավումից հետո խորհրդարանը պիտի ունենար միայն մեկ նիստ՝ կառավարությանը նոր լիազորություններ տալու համար և պիտի ցրվեր նոր խորհրդարանի ընտրությունից հետո[132]: Դժ-

---

[131] Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 2002, թիվ 1, էջ 94:
[132] Տե՛ս «Միացեալ եւ Անկախ Հայաստան», Կ. Պոլիս, 1919, էջ 96:

գոհության պատճառն այն էր, որ արևմտահայ 12 ներկայացուցիչներն ըստ կուսակցական պատկանելության դաշնակցականներ էին կամ նրանց հարողներ: Մինչդեռ մենք գիտենք, որ Կովկասում ապաստանած արևմտահայ գաղթականության՝ հատկապես Վան-վասպուրականցիների մեջ զգալի կշիռ ու ազդեցություն ունեին Հայ ռամկավարները, և անաչառ մոտեցման դեպքում այդ 12 անդամների թվում պետք է նաև ռամկավարներ լինեին: Բայց քանի որ նրանք հեռացել էին համագումարից, և Արևմտահայ նորընտիր Գործադիր մարմինը բաղկացած էր միայն դաշնակցականներից, ուստիև նշյալ 12 անդամները դաշնակցականներ էին կամ ՀՅԴ-ի համակիրներ: Նրանք էին՝ Արմեն Սասունին, Վաղարշակ Հոխիկյանը, Արսեն Կիտուրը, Վահագն Քրմոյանը, Հմայակ Մանուկյանը, Արմենակ Մաքսապետյանը, Զավեն Կորկոտյանը, Վարդան Առաքելյանը, Հայկ Կոսոյանը, Վան-Փուշը, Հայրապետ Հայրապետյանը և Արտաշես Միրզոյանը[133]: Նշենք, որ 12-ից միայն չորսն են եղել Արևմտահայ Գործադիր մարմնի անդամ՝ Ա. Սասունին, Վ. Քրմոյանը, Վ. Հոխիկյանը և Ա. Կիտուրը:

Հայաստանի միացման և անկախության մասին հայտարարության հանդեպ Հայ ռամկավար ու Ժողովրդական կուսակցությունների բացասական վերաբերմունքից անկախ, ՀՀ սահմաններում ապրող արևմտահայ գաղթականների գործադիր մարմինը, որը, ինչպես նշվեց, գտնվում էր ՀՅԴ-ի ազդեցության տակ, իր սրտագին հավատարմությունն արտահայտեց այդ պատմական ակտին: Հավատարիմ Արևմտահայերի 2-րդ համագումարում առաջին անգամ բանաձևված Անկախ և Միացյալ

---

[133] «Աշխատանք», Եր., 7 հունիսի 1919 թ., «Միացեալ եւ Անկախ Հայաստան», Կ. Պոլիս, 1919, էջ 81:

Հայաստանի սկզբունքին՝ Արևմտահայ Գործադիր մարմնի նախագահ Վ. Քրմոյանի և քարտուղար Վ. Հոխիկյանի՝ ՀՀ վարչապետին ուղղված գրությունով նրանք լիակատար պատրաստակամություն էին հայտնում՝ «Հայաստանի խորհրդարանի և կառավարության մեջ գործուն մասնակցություն բերելու, Միացյալ Հայաստանի գաղափարն իրականացնելու և հայ ժողովրդի ազատությունն ու բարգավաճումը ապահովելու համար»[134]:

Միացյալ և Անկախ Հայաստանի հայտարարությունը և արևմտահայ 12 պատգամավորների ընդգրկումը Հայաստանի խորհրդում, ինչը ապահովում էր ՀՅԴ-ի կայուն մեծամասնությունը, մեծ աղմուկով դիմավորեցին «աջ» և «ձախ» կուսակցությունների ներկայացուցիչները: Մի քանի օր անց՝ 1919 թ. հունիսի 4-ին, խիստ լարված պայմաններում տեղի ունեցավ խորհրդարանի նիստը, որին մասնակցում էին նաև 12 արևմտահայ ներկայացուցիչները, որոնց խորհրդարան մտնելուն դեմ էին ՀՅԴ-ի կոալիցիոն գործընկեր ՀԺԿ-ն, ինչպես նաև սոցիալ-դեմոկրատական և էսէռական խմբակցությունները: Նախապես կազմած հայտարարություններով հերթով ամբիոն են բարձրանում սոցիալ-դեմոկրատական խմբակցությունից պատգամավոր Գ. Ղարաջյանը, ՀԺԿ-ից՝ Գ. Տեր-Խաչատրյանը, էսէռներից՝ Լ. Թումանյանը, ովքեր իրենց խմբակցությունների անունից հայտարարում են, որ կառավարությունը կատարել է ապօրինի քայլ, փաստորեն՝ պետական հեղաշրջում, ուստի որպես բողոքի նշան հեռանում են խորհրդարանից, իսկ ՀԺԿ-ն հետ է կանչում իր նախարարներին կառավարությունից[135]:

---

[134] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 119, թ. 52:

[135] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 404, ց. 1, գ. 8, թ. 1-3, նաև՝ ֆ. 1022, ց. 2, գ. 121, թ. 1, ֆ. 393, ց. 2, գ. 118, թ. 1, ֆ. 292, ց. 1, գ. 2, թ. 1, «Ժողովուրդ», 6

Ս. Վրացյանը մայիսի 28-ի ակտին նախապես կողմ արտահայտված և այն ստորագրած ՀԺԿ-ի այս քայլը բացատրում է կուսակցության մեջ առկա պառակտումներով[136]: Հարկ է նշել, որ Ժողովրդական կուսակցության երկու՝ թիֆլիսյան և երևանյան հատվածների միջև կար տեսակետների ու մոտեցումների որոշ տարբերություն: Ժողովրդականների հայաստանյան հատվածն ավելի չափավոր էր ու շրջահայաց, որովհետև ավելի մոտիկից էր ծանոթ Հայաստանի պայմաններին, քան թիֆլիսյան հատվածը[137]: Եվ, վերջապես, ՀԺԿ-ի դիրքորոշման փոփոխության վրա իր ազդեցությունն էր ունցել նաև Մ. Պապաջանյանից ստացված հրահանգն առ այն, որ կուսակցությունը պետք է շարժվի Պողոս Նուբարի ցուցումների համաձայն[138]:

Հայաստանի խորհրդի վերջին նիստում ելույթով հանդես եկած վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանը պարզաբանումներ է տալիս, թե ինչու կառավարությունը հանդես եկավ նման ակտերով: Միացյալ և Անկախ Հայաստանի մասին կառավարության հայտարարությունը Խատիսյանը բացատրեց այն հանգամանքով, որ Դաշնակից երկրների մոտ մի տեսակ կասկած կար, թե, իբր, Ռուսաստանից չկտրվելու մտավախությամբ՝ ՀՀ-ն չի ձգտում բացարձակ անկախության, այդ ակտը գալիս էր փարատելու Դաշնակիցների կասկածները[139]: Բացի

հունիսի 1919 թ., **Թութունճեան Լ.**, Հ.Յ.Դ. իբրեւ պետական գործոն, Կ. Պոլիս, 1921, էջ 41-42:

[136] Տե՛ս **Վրացեան Ս.**, Բանակցութիւններ Ազգային պատուիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ, Պոսթըն, 1920, էջ 13:

[137] Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Եր., 2005, էջ 63:

[138] Տե՛ս **Վրացեան Ս.**, նույն տեղում:

[139] Տե՛ս «Միացեալ եւ Անկախ Հայաստան», Կ. Պոլիս, 1919, էջ 94:

այդ՝ հայտարարության պատասխանատվությունը կառավարությունն իր վրա վերցրեց այն հիմնավորմամբ, որ մտավախություն կար, թե ըստ էության Հայաստանի անկախությունը չընդունող սոցիալ-դեմոկրատները, էսէռները, մուսուլման ու մյուս ազգային փոքրամասնությունները ներկայացնող 8 պատգամավորները հազիվ թե քվեարկեին Միացյալ և Անկախ Հայաստանի ակտի ընդունման օգտին: Վարչապետի պաշտոնակատարը երկու ակտերի ընդունումը պայմանավորում էր նաև այն հանգամանքով, որ արևմտահայ գաղթականությունը իրեն զգար իր միացյալ հայրենիքի լիարժեք քաղաքացին ու տերը: Ուստի դեռ 1919 թ. մարտ ամսին մշակած «ՀՀ խորհրդարանի ընտրությունների մասին» օրինագծով ընտրական իրավունք էր տրվում նաև հանրապետությունում գտնվող արևմտահայ գաղթականներին՝ առանց որևէ սահմանափակման[140]:

Այդուհանդերձ, կառավարության ընդունած և հրապարակած ակտերի շուրջ ծագած քաղաքական ճգնաժամն ավարտվեց նրանով, որ լուծարվեց Հայաստանի խորհուրդը և նախապատրաստվեց արդեն նոր խորհրդարանի ընտրությունը:

Մեր կարծիքով կառավարության ընդունած վերոհիշյալ ակտերը պետական հեղաշրջում չի կարելի դիտել այն իմաստով, որ ա) խորհրդարանն այդ ժամանակ իր օրենսդրական լիազորությունները հանձնել էր կառավարությանը, և բ) այդ ակտերը հրապարակվելուց հետո պետք է վավերացվեին խորհրդարանում: Սակայն հետագա դեպքերն այնպես զարգացան, որ հնարավոր չեղավ դա իրականացնել:

ՀԺԿ-ն, ձայնակցելով Հայ ռամկավարներին, արևմտահայության իրավունքների ու ջանքերի բռնաբարում համարեց

---

[140] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 43:

հատկապես հայտարարության այն հատվածը, որտեղ ՀՀ կառավարությունն իրեն հռչակում էր «Միացյալ և Անկախ Հայաստանի կառավարություն»՝ անտեսելով Ազգային պատվիրակության ու նրա ղեկավար Պողոս Նուբար փաշայի գործոնը: Այստեղ ժողովրդականներին մտահոգում էր ոչ այնքան խնդրի իրավաքաղաքական կողմը, որքան այն, որ Միացյալ Հայաստանի կառավարության ղեկին, ինչպես արդեն ասվել է, հավակնում էր իրենց պաշտելի Պողոս Նուբարը: Ուստի նրանք ցանկանում էին այդ բաղձալի պաշտոնին տեսնել ոչ թե դաշնակցականի, այլ ռամկավար Պողոս փաշային: Մեզ թվում է, թե այդ տարաձայնությունների հիմքում ընկած էին ավելի շատ հատվածական, կուսակցական ու անձնիշխանական հաշիվներ, քան թե համապետական ու համազգային շահերը: Նկատենք, որ ի սկզբանե առավելաբար ռուսահայ և կովկասահայ հիմնախնդիրներով հետաքրքրված ՀԺԿ-ն, ի հեճուկս Հայ ռամկավարների, սկսեց ավելի ու ավելի կարևորել արևմտահայերի դատը և նրանց հետ հանդես գալ միասնաբար՝ որպես Դաշնակցության հակակշիռ:

Իբրև ստեղծված վիճակից դուրս գալու ելք՝ ժողովրդականները առաջարկում էին, որ Հայաստանի կառավարությունը խորհրդարանի միջոցով պաշտոնապես դիմի Փարիզի Արևմտահայ Ազգային գործադիր մարմնին և պատվիրակությանը՝ առաջարկելով հայության երկու հատվածների ներկայացուցիչներից կազմել ժամանակավոր կառավարություն և հրավիրել Միացյալ Հայաստանի հիմնադիր (Սահմանադիր) ժողով[141]: Հայ ժողովրդականները կարծում էին, որ խորհրդարան հրավիրված

---

[141] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 116, նաև՝ «Ժողովրդի ձայն», 3 հունիսի 1919 թ., «Ժողովուրդ», 4 հունիսի 1919 թ.:

արևմտահայ 12 ներկայացուցիչներն ընտրված են միայն Հայաստանի սահմաններում ապաստանած մոտ 200 հազ. արևմտահայերի կողմից, որոնք ներկայացնում են նրանց ընդամենը մի հատվածը և հեռու են ամբողջ արևմտահայության կամքի արտահայտիչը լինելուց: Ըստ ժողովրդականների՝ գաղութահայության շահերի գլխավոր արտահայտիչը Փարիզի Արևմտահայ գործադիր մարմինն է, առանց որի հետ համաձայնության գալու՝ անընդունելի ու անօրինական են ՀՀ կառավարությանը Միացյալ Հայաստանի կառավարություն համարելը և Երևանի արևմտահայ գործադիր մարմնի կողմից 12 արևմտահայերին Միացյալ Հայաստանի խորհրդարան ուղարկելը[142]:

Ի պատասխան ՀԺԿ առարկությանը՝ հարկ է փաստել, որ հանրապետության տարածքում առկա (հավանաբար նաև՝ արևելահայ) գաղթականության թվաքանակը 1918 թ. դեկտեմբերի սկզբի տվյալներով կազմել է 350 հազար[143]: Արդեն 1919 թ. փետրվարի դրությամբ (ձմեռային ցրտի, սովի ու համաճարակի պատճառած տասնյակ հազարավոր զոհերի հետեւանքով) ՀՀ սահմաններում տեղակայված գաղթականների ընդհանուր թվաքանակը պակասել է՝ կազմելով 263 393 մարդ[144]: Այդ նույն ժամանակաշրջանում ամբողջ Կովկասում ապաստանած արևմտահայության թիվը նշված է 400 000 մարդ, որոնց անունից էլ հրավիրվել է արևմտահայության 2-րդ համագումարը Երևանում և ողջույնի նամակ է հղվել Փարիզի Միջազգային խաղարարար

---

[142] Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կունակցությունները (1918-1920 թթ.), Եր., 2005, էջ 169:

[143] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 22, թ. 4, նաև՝ «Լրաբեր» հաս. գիտությունների, Եր., 2008, թիվ 1, էջ 99, «Հայոց պատմության հարցեր», գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2017, էջ 57:

[144] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 9, թ. 23 և 33:

կոնֆերանսի նախագահությանը՝ լիահույս լինելով, որ դաշնակիցները արդարությամբ կլուծեն Հայկական հարցը՝ «...հնարավորություն տալով արհեստականորեն անջատված հայ հատվածներին միանալ մեկ պետական կազմավորման մեջ»[145]:

Արտախորհրդարանական կուսակցություններից կառավարության մայիսի 28-ի հայտարարությանը դեմ էր Ժողովրդականների գաղափարակից Հայ Ռամկավար կուսակցության Հայաստանի կազմակերպությունը, որի կենտրոնական խորհուրդը 1919 թ. հունիսի 4-ին բողոք ներկայացրեց խորհրդարանին՝ պահանջելով կասեցնել կառավարության ընդունած երկու ակտերը, հարաբերությունների մեջ մտնել Պ. Նուբարի գլխավորած Փարիզի Արևմտահայ գործադիր մարմնի հետ և փոխադարձ համաձայնությամբ կազմել Միացյալ Հայաստանի կառավարություն[146]:

Ռամկավարների հայաստանյան օրգան «Վան-Տոսպ»-ը հունիսի 2-ի համարում խոշոր տառերով հայտարարություն էր տպել. «Կորչի՛ն պառլամենտ մտած թուրքահայ 12 հացկատակները»[147]: Դժվար չէ նկատել, որ, ժողովրդականների նման, ռամկավարները ևս դեմ էին 12 արևմտահայերի պառլամենտ մտնելուն այն բանի համար, որ կուսակցական պատկանելությամբ նրանք դաշնակցականներ էին կամ նրանց համակիրներ:

Մայիսի 28-ի ակտին դեմ բողոքեցին նաև ՍԴ Հնչակյանները: Թավրիզում լույս տեսնող «Պայքար» թերթում նրանք դատապարտում էին ՀՅԴ-ի և Հայաստանի կառավարության

---

[145] Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ)., Եր., 2004, էջ 305:

[146] Տե՛ս «Ժողովուրդ», 8 հունիսի 1919 թ., «Վան-Տոսպ», 9 հունիսի 1919թ.:

[147] «Վան-Տոսպ», 2 հունիսի 1919 թ.:

այդ քայլը՝ հայտարարելով, որ Դաշնակցությունը բռնագրավել է հայ դեմոկրատիայի սրբազան իրավունքը՝ արհամարելով դրսաշխարհի 2 մլն հայության քվեն[148]:

Վերն ասվածներից կարելի է եզրակացնել, որ Ժողովրդական և Ռամկավար կուսակցությունները դեմ արտահայտվեցին Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու մասին ՀՀ պաշտոնական հայտարարությանը ոչ թե այն պատճառով, որ դեմ էին այդ գաղափարին, այլ նրա համար, որ, մրցակցելով ՀՅԴ-ի հետ, իրենք էին ձգտում ստանձնել Միացյալ Հայաստանի իշխանությունը: Իսկ ինչ վերաբերում է սոցիալ-դեմոկրատներին և էսէռներին, ապա սրանք, ինչպես արդեն ասվել է, ոչ միայն չէին ընդունում Միացյալ Հայաստանի գաղափարը, այլև ընդհանրապես դեմ էին Հայաստանի անկախությանը:

Այն բանից հետո, երբ հունիսի 4-ին ժողովրդականները, սոցիալ-դեմոկրատները և էսէռները ցուցադրաբար հեռացան խորհրդարանից, հաջորդ օրը՝ հունիսի 5-ին, կայացավ Հայաստանի խորհրդի վերջին նիստը: Այն նախագահում էր Ավ. Սահակյանը, նախագահական օթյակներում էին կառավարության անդամները: Վերջին նիստին մասնակցում էին արևմտահայ 12 պատգամավորները, 2 թուրք և 1 եզդի պատգամավորներ և, ինչպես միշտ, հասարակայնության ներկայացուցիչներ:

Օրակարգային մի քանի հարցերի քննարկումից հետո խորհրդարանը 22 ձայնով որոշում ընդունեց առհասարակ դադարեցնել իր աշխատանքները, քանի որ երկու-երեք շաբաթ հետո պետք է կայանային նոր խորհրդարանի ընտրությունները:

---

[148] «Պայքար», Թավրիզ, 1 հուլիսի 1919 թ.:

9. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ կառավարության ակտերը մեծ անբավականությամբ ընդունեցին Փարիզի Ազգային համագումարը, գաղութահայ ռամկավարները և անձամբ Պողոս Նուբարն ու նրա գլխավորած Ազգային պատվիրակությունը: Պողոս փաշան իրեն վիրավորված զգաց և նույնիսկ պատրաստվել էր բողոքի հրապարակային հայտարարությամբ հանդես գալ դրա դեմ: Ս. Վրացյանը գրում է, որ մայիսի 28-ի ակտերը ահագին աղմուկ էին հանել արտասահմանում եւ հայ հասարակութանը բաժանել էին իրար դեմ պայքարող երկու բանակների[149]:

Քանի որ Ազգային պատվիրակությունը և նրա ղեկավար Պողոս Նուբար փաշան կտրականապես դեմ էին առանց իրենց գիտության ՀՀ նախաձեռնած Մայիսի 28-ի հայտարարության ակտին, ուստի Միացյալ և Անկախ Հայաստանի խնդրի շուրջ ծագած միջկուսակցական հակասությունները հարթելու նպատակով ՀՅԴ-ն և ռամկավարները որոշեցին մի առաքելություն գործուղել Հայաստան՝ այդ խնդրի շուրջ բանակցելու և համաձայնության հասնելու համար:

Հիշեցնենք, որ Փարիզի Ազգային 1-ին համագումարում ևս Միացյալ կառավարության, Միացյալ խորհրդարանի, Միացյալ պատվիրակության կազմության հարցերի շուրջ երկու հատվածները վերջնական որոշման չէին հանգել: Կարելի է ասել, որ կողմերի միջև, թերևս, միակամություն է եղել միայն Միացյալ պատ-

---

[149] Տե՛ս **Վրացեան Ս.**, Բանակցութիւններ Ազգային պատուիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ, Պոսթըն, 1920, էջ 3:

վիրակության կազմության հարցում, որը արևմտահայերի մեծամասնությամբ պետք է գլխավորեր Պ. Նուբար փաշան:

Մայիսի 28-ի ակտի վերաբերյալ 1919 թ. օգոստոսի 4-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ին ուղղված նամակ-հեռագրով Պողոս Նուբարը հայտնել է իր դժգոհություն: Նա կաթողիկոսին տեղեկացնում է, որ թե՛ Ազգային պատվիրակությունը, թե՛ Հայ ազգային համագումարի մեծամասնությունը անընդունելի են համարել, որ Երևանի կառավարությունը ճանաչվի որպես Միացյալ Հայաստանի կառավարություն: Դրա համար էլ համագումարը ձայների մեծամասնությամբ մերժել է Կովկասյան Հայաստանի կառավարությունն ընդունել իբրև Միացյալ Հայաստանի կառավարություն: Պողոս փաշան հայտնում էր, որ համագումարը նպատակահարմար է գտել «ջանալ կազմելու միացեալ կառավարութիւն ՀՀ կառավարութեան եւ Ազգային պատվիրակութեան հետ համատեղ քննարկումների արդիւնքով»[150]: Խնդիրը հարթելու համար երկու պատվիրակությունների համաձայնությամբ որոշվում է պատվիրակություն գործուղել Երևան:

Մինչ Ազգային պատվիրակության ներկայացուցիչների Երևան ժամանելը Փարիզում Ա. Ահարոնյանը բավականին երկար բանակցություններ էր վարել Ազգային պատվիրակության, անձամբ Պողոս փաշայի հետ՝ Միացյալ Հայաստանի կառավարության, խորհրդարանի, միացյալ պատվիրակության կազմության և այլ հարցերի շուրջ հասնելով որոշ արդյունքի: Ս. Վրացյանը նշում է, որ այդ ընթացքում Պողոս Նուբարը ներկայացրել էր հետևյալ պահանջները.

---

[150] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 194, թ. 11:

1. Միացյալ պառլամենտ. կեսը՝ ռուսահայ, կեսը՝ տաճկահայ:

2. Միացյալ ժամանակավոր կառավարություն. դարձյալ կեսը՝ տաճկահայ, կեսը՝ ռուսահայ:

3. Կառավարության կազմի տաճկահայ անդամները նշանակվում են Պողոս Նուբարի պատվիրակության կողմից, իսկ ռուսահայը՝ Հայաստանի ներկա կառավարության կողմից:

4. Կառավարության պորտֆելների բաժանումը կատարել փոխադարձ համաձայնությամբ, բայց **նախարարապետը պետք է լինի Պողոս Նուբարը** (ընդգծումը մերն է՝ Ա. Հ.)՝ մնալով նաև Միացյալ պատվիրակության նախագահ:

5. Արտաքին գործոց նախարարը պետք է լինի ոչ դաշնակցական և նշանակվի երկու կողմերի ընդհանուր համաձայնությամբ:

6. Քանի որ **նախարարապետը պետք է ապրի Փարիզում, նրան Երևանում պետք է նշանակել փոխանորդ** (ընդգծումը մերն է՝ Ա. Հ.):

7. Ժամանակավոր կառավարությունը կազմելուց հետո ներկա պառլամենտին պետք է տրվի անորոշ ժամանակով դադար, մինչև որ գումարվի միացյալ պառլամենտ: Եվ այսպես՝ 12 կետ-պահանջ[151]:

Բերված կետերից առանձնապես աչք է ծակում է այն իմպերատիվ պահանջը, ըստ որի վարչապետը պետք է լինի ինքը՝ Պ. Նուբարը: Նա պետք է ապրի Փարիզում՝ Երևանում նշանակելով իրեն տեղակալ:

Իր հերթին, ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոն-

---

[151] Տե՛ս **Վրացեան Ա.**, նշվ. աշխ., էջ 8-9:

յանը ներկայացրել է հետևյալ առաջարկները.

1. Կառավարությունը և պառլամենտը պետք է կազմվեն կես առ կես՝ տաճկահայերից և ռուսահայերից (այսինքն՝ երկու դեպքում էլ առաջարկները նույն են):

2. Նախարարապետը պետք է ապրի Հայաստանում և ոչ Փարիզում, հետևաբար Պողոս Նուպարը չի կարող այդ պաշտոնն ստանձնել:

3. Զինվորական նախարարը պետք է լինի չեզոք (անկուսակցական) անձնավորություն, ինչպես որ եղել է մինչ այդ, իսկ արտաքին գործոց նախարար կնշանակի ներկա կառավարությունը:

4. Երկու պատվիրակությունները կձուլվեն մեկ պատվիրակության մեջ՝ Պողոս Նուբարի գլխավորությամբ, սակայն Միացյալ պատվիրակությունը պետք է գործի կառավարության հրահանգներով և պատասխանատու լինի նրա առջև:

5. Նոր պատվիրակության տաճկահայ անդամները կարող են նշանակվել Պողոս Նուբպարի կողմից:

6. Ցանկալի է, որ նոր պատվիրակությունը կազմված լինի երեք հոգուց. նախագահ՝ Պ. Նուբար, անդամներ՝ մեկ դաշնակցական և մեկ ոչ դաշնակցականն (ընդամենը վեց կետ)[152]:

---

[152] Տե՛ս **Վրացեան Ս.**, նշվ. աշխ., էջ 10:

Դժվար չէ տեսնել երկու մոտեցումների և տեսակետների էական տարբերությունը. մի դեպքում Հայաստանը կառավարել և հայրենիքի ճակատագրով զբաղվել՝ կտրված լինելով մայր հայրենիքից, իսկ մյուս դեպքում՝ ապրելով ու կապված մնալով հայրենիքի հետ:

Միացյալ Հայաստանի կառավարության, խորհրդարանի, Միացյալ պատվիրակության և համանման այլ հարցերի շուրջ ՀՀ կառավարության և Ազգային պատվիրակության միջև առարկայական ու սկզբունքային համաձայնություն կայացնելու նպատակով 1919 թ. հոկտեմբերի կեսերին Փարիզից Երևան ժամանեցին Ազգային պատվիրակության ներկայացուցիչներ **Վահան Թեքեյանը** (նախագահ[153], ռամկավար գործիչ, Փարիզի համագումարի պատվիրակ եգիպտահայ գաղութից) և **Նշան Տեր-Ստեփանյանը** (անդամ, անկուսակցական, իտալահայ գաղութի պատվիրակ, նույն համագումարի պատգամավոր): Ազգային պատվիրակության և անձամբ Պ. Նուբարի հանձնարարությամբ ճանապարհին՝ Թիֆլիսում, պատվիրակության կազմի մեջ է ընդգրկվում ՀԺԿ-ի հիմնադիր և ղեկավար գործիչ, ՀՀ արդարադատության նախկին նախարար Սամսոն Հարությունյանը:

---

[153] Առավել մեծ քաղաքական և դիվանագիտական հեղինակություն վայելող գործիչ Գաբրիել Նորատունկյանը մերժել էր Ազգային պատվիրակության առաջարկը՝ գլխավորելու Երևան մեկնող առաքելությունը:

ՀՀ կառավարության կողմից բանակցությունների համար պատվիրակներ նշանակվեցին այդ օրերին զուգահեռաբար ընթացող ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի մասնակից հետևյալ երեք պատվիրակները՝ **Ս. Վրացյանը** (նախագահ), Շավարշ Միսաքյանը (Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթի խմբագիր) և Մարտիրոս Հարությունյանը: Փաստորեն բանակցություններն ստացան ՀՅԴ և Ռամկավար-Ժողովրդական ձևաչափ: Այստեղ զարմանալին այն էր, որ Ազգային պատվիրակությունը, հավակնելով ներկայացնել ամբողջ արևմտահայությանը՝ միաժամանակ իր կազմում ընդգրկել էր արևելահայ ներկայացուցիչ Ս. Հարությունյանին, այն դեպքում, երբ արևմտահայության զգալի հատվածները ներկայացնող Հնչակյան երկու թևի՝ ՍԴ Հնչակյան և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչները բացակայում էին: Այս կապակցությամբ, ի դեպ, արդարացիորեն բողոքներ եղան հնչակյան մամուլում[154]:

Ինչևէ, բանակցություններն ընթացան հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 16-ը. գումարվեց 9 նիստ, եղան նաև ոչ պաշտոնական հանդիպումներ: Հոկտեմբերի 24-ին Հայաստանի կառավարությունը իր պատվիրակներին տվել է երեք կետից բղկացած հետևյալ հրահանգը, որի մասին վկայում է բանակցություններին մասնակից Ս. Վրացյանը.

---

[154] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 2, Եր., 2014, էջ 331:

1.Անցկացնել լրացուցիչ խորհրդարանական ընտրություններ թե՛ Հայաստանում, թե՛ գաղթաշխարհում՝ այն հաշվով, որ պատգամավորների առնվազն կեսը լինի տաճկահայ:

2.Կառավարության անդամների կեսից ոչ պակասը պետք է նշանակվեն արևմտահայեր:

3.Փարիզի երկու պատվիրակությունները ձուլել մեկ Պատվիրակության մեջ, նախագահ կարող է լինել Պողոս Նուպարը, որը գործելու է կառավարության հրահանգներով[155]:

Ինչպես նկատում ենք, կառավարության հրանգում խոսք չկա Միացյալ կառավարության վարչապետի, առանցքային նախարարների կուսակցական պատկանելության, գործող խորհրդարանի լուծարման և համանման հարցերի մասին: Հավանաբար դա թողնվել է անորոշ՝ որպես բանակցությունների նյութ:

Փարիզի արևմտահայ բանագնացները ժամանելուն պես ներկայանում են վարչապետ Ալ. Խատիսյանին: Վերջինիս ցանկությամբ բանակցություններն ընթացել են իր կաբինետում և հոկտեմբերի 29-ի առաջին՝ բացման նիստը նախագահել է վարչապետը[156]: Նույն նիստում ճառերով հանդես են գալիս Վ. Թեքեյանը և Ս. Վրացյանը: Այնուհետև, Վ. Թեքեյանը ներկայացնում է գործնականում Պ. Նուբարի ուղարկած **ծրագիր-համաձայնագիրը**, որն ավելի ընդարձակ շարադրանքով ու մեկնաբանություններով, ըստ էության, բովանդակում է Փարիզում Ա. Ահարոնյանին ներկայացրած պահանջների վերը նշված 12 կետերը, այն է՝ Միացյալ Հայաստանի կառավարության, պառլամենտի, Միացյալ պատվիրակության, պետական ու քաղաքական այլ մարմինների

---

[155] Տե՛ս **Վրացեան Ս.**, նշվ. աշխ., էջ 16-17:

[156] Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), Եր., 2004, էջ 712:

ձևավորման, դրանց կառուցվածքի, կազմի, իրավասությունների, դրանցում արևելահայերի և արևմտահայերի մասնակցության չափաբաժինների, կուսակցությունների ներգրավվածության համամասնության և այլ հարցեր[157]: Հետաքրքիր է, որ Ազգային պատվիրակության այդ ծրագիր-համաձայնագրի նախագծում չի խոսվում Միացյալ Հայաստանին միացվելիք տարածքների մասին: Կարելի է ենթադրել, որ **Փետրվարի 12-ի հայտնի ակտով** այն արդեն ստորագրվել և համաձայնեցվել էր: Ուշագրավ է, որ Թեքեյանի ներկայացրած համաձայնագրի վերջում նշված է, որ «Հայաստանի վերջնական մայրաքաղաքը պիտի ըլլայ նախապէս Թուրքիոյ մաս կազմող քաղաքներէն մին (հավանաբար՝ Էրզրումը կամ Վանը՝ Ա. Հ.)»[158]:

Իր հերթին ՀՀ-ի կողմը առաջարկել է բանակցությունների համար ելակետ ընդունել Մայիսի 28-ի ակտն այն մասին, որ ՀՀ-ն անկախ հանրապետություն է, ունի կառավարություն և խորհրդարան, որը չի կարելի անտեսել: Այնուհետև անցնելով կոնկրետ խնդիրների՝ ՀՀ-ի ներկայացուցիչները Միացյալ պառլամենտ ձևավորելու համար առաջարկել են անցկացնել լրացուցիչ ընտրություններ Հայաստանի ընտրական օրենքներով գաղթաշխարհում՝ Կիլիկիայում, Կ. Պոլսում, Բալկաններում, Եգիպտոսում, Ամերիկայում և այլուր, եթե հնարավոր լինի՝ նաև Թուրքահայաստանում, այն հաշվով, որ պառլամենտի պատգամավորների թիվը համալրվի **51**-ով. այդպիսով ընդհանուր թիվը

---

[157] **Վրացեան Ս.**, նշվ. աշխ., էջ 18-25, նաև՝ **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 299-302:

[158] **Վրացեան Ս.**, Բանակցութիւններ Ազգային պատուիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ, Պոսթըն, 1920, էջ 25:

կկազմեր **131** պատգամավոր[159]: Հիշեցնենք, որ ՀՀ-ի ընտրովի խորհրդարանն արդեն ուներ 80 պատգամավոր և գաղթաշխարհից ընտրվելիք 51-ի հետ միասին պետք է ունենար 131 պատգամավոր: Այստեղ արևելահայ և արևմտահայ պատգամավորների թվաքանակի համամասնության խախտման մասին խոսք չէր կարող լինել, քանզի պետք է նկատի առնել, որ գործող խորհրդարանի դաշնակցական խմբակցության 72 պատգամավորներից 13-ը ծնունդով արևմտահայեր էին:

Միացյալ կառավարության հարցում հանրապետության պատվիրակությունն առաջարկում է, որպեսզի նոր կառավարությունում ընդգրկվեն արևմտահայ հատվածի ներկայացուցիչներ նույնիսկ ավելի մեծ թվով, քան արևելահայ, իսկ Ամբողջական Հայաստանի անունից Փարիզում գործող Միացյալ պատվիրակությունը գլխավորի Պողոս Նուբար փաշան: Սակայն արևմտահայ պատվիրակները առարկում են՝ գտնելով, որ Փարիզում գործող պատվիրակության ղեկավարը միաժամանակ լինի վարչապետ՝ փաստորեն կտրվելով երկրից[160]:

Պատասխան ելույթով հանդես է գալիս Վ. Թեքեյանը: Նա հայտնում է, որ իրենք ընդունում են Մայիսի 28-ի ակտի առաջին մասը միայն, իսկ երկրորդը մերժում են: Այսպես՝ նոյեմբերի 6-ին Փարիզի պատվիրակությունն իր ներկայացրած եզրակացության մեջ տվել է հետևյալ պատասխանը, որ իրենք ապօրինի են համարում Մայիսի 28-ի ակտը այն մասով, որ ներկա կառավարությունը և խորհրդարանը իրենց հայտարարել են Միացյալ Հայաստանի կառավարություն և այլն[161]: Բացի այդ՝

---

[159] Տե՛ս **Վրացեան Ս.**, նշվ. աշխ., էջ 31-32 և 43:
[160] Տե՛ս նույն տեղում, էջ 32:
[161] Տե՛ս **Վրացեան Ս.**, նշվ. աշխ., էջ 48:

նրանք կարծում էին, որ խառը կառավարություն կազմելուց հետո գործող խորհրդարանը պետք է արձակվի և այլն:

Հաջորդ նիստում խոսվել է ապագա կառավարության կազմի և գործող խորհրդարանի լուծարման մասին: Թեքեյանն ու Տեր-Ստեփանյանը պնդել են, որ Դաշնակցությունը կառավարությունում չունենա մեծամասնություն քանզի, ըստ նրանց, «Դաշնակցութիւնը յեղափոխական եւ սօցիալիստական կուսակցութիւն է, եւ մենք պէտք է գործ ունենանք այնպիսի կառավարութիւնների հետ, որոնք սօցիալիստական չեն», և որ «-Մանդատէր պետութիւնը առանձին դժգոհութեամբ պիտի վերաբերուի, եթէ տեսնի մեր մէջ դաշնակցական մեծամասնութեամբ կազմուած կառավարութիւն, այդ դէպքում թերեւս նա աշխատի ճնշել մեր ներքին ինքնավարութիւնը: Բացի այդ՝ դաշնակցական մեծամասնութիւն ունեցող կառավարութիւնը արգելք կը հանդիսանայ կապիտալի մուտքին ու զարգացման»[162]:

Հաջորդ նիստում հանդես է գալիս Մ. Հարությունյանը և առարկում է խորհրդարանի լուծարման առաջարկին՝ պատճառաբանելով, որ առաջիկայում պետք է քննարկվի գալիք տարվա պետբյուջի հարցը, և անկարելի է խորհրդարանի լուծումը: Իսկ ապագա կառավարության կազմի հարցում առաջարկում է, որ Միացյալ կառավարության մեջ ՀՅԴ-ն ունենա միայն մեկ ձայնի առավելություն, այն է. 9 հոգու դեպքում՝ 5, 13-ի դեպքում՝ 7[163]:

Նոյեմբերի 4-ին կառավարության պատվիրակությունը ձևակերպում է իր վերջնական առաջարկները, առարկություններն ու պարզաբանումները և հանձնում Վ. Թեքեյանին: Վեր-

---

[162] Նույն տեղում, էջ 35:

[163] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 2, Եր., 2014, էջ 326:

ջինս չի ընդունում արված առաջարկները: Այս կապակցությամբ Վրացյանը նշում է, որ իրենք ամեն կերպ ջանացել են հաղթահարել առկա խոչընդոտները և ընդհանուր լեզու գտնել, սակայն՝ ապարդյուն: Արդյունքում՝ նոյեմբերի 16-ին՝ պաշտոնական բանակցությունների վերջին նիստում, գրավոր կերպով արձանագրվել է փաստը, որ համաձայնություն չկայացավ:

Բանակցությունների ձախողման առնչությամբ վարչապետ Ա. Խատիսյանը դեկտեմբերի 9-ին Պ. Նուբարին ուղղված գրությունում պարզաբանում էր, որ բանակցությունների արձանագրությունները ցույց են տալիս, որ Ազգային պատվիրակությանը առաջարկվել էին բավականին ընդունելի հետևյալ փոփոխությունները. «Խորհրդարանի ժամանակավոր դադար, 51 հավելյալ արևմտահայ պատգամավորների ընտրություն, Պողոս Նուբարի նշանակումը որպես թե՛ պատվիրակության նախագահ և թե՛ արտաքին գործերի նախարար, դաշնակցական պարզ մեծամասնությամբ կոալիցիոն կառավարության կազմավորում ու բոլոր նախարարների ընտրում փոխադարձ համաձայնությամբ, ինչպես նաև Արևելյան Հայաստանի ու Արևմտյան Հայաստանի կամավոր միավորում»[164]: Սակայն Ազգային պատվիրակությունը մերժել էր նման առաջարկները: Վարչապետը հորդորում էր Պ. Նուբարին, որպեսզի նա իր ազդեցությունը գործադրի՝ կանխելու համար հայկական համայնքներում դրա շուրջ ծագող ավելորդ ու անցանկալի շահարկումները և, ի վերջո, գալ համաձայնության: Բայց Ալ. Խատիսյանի այս դիմումը մնաց անհետևանք, և այդպես էլ համաձայնությունը չկայացավ:

Ս. Վրացյանն իր հուշերում կողմերի համաձայնության չգալու պատճառը բացատրում է մի կողմից՝ արևելահայերի և

---

[164] **Հովհաննիսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 330:

արևմտահայերի միջև առկա երկվությամբ, հատվածական շերտանստվածքով, նաև նեղ կուսակցական շահերով ու ամբիցիաներով, մյուս կողմից՝ մոտ 20 օր տևած բանակցությունների ձախողման պատճառը բացատրում է նաև **հոգեբանական գործոններով**. «Ի՞նչ էինք մենք նուպարեանների համար,- գրում էր նա»: «Նուպարեանների համար մենք նախ եւ առաջ սոցիալիստներ էինք ու յեղափոխականներ, որոնք մեծ պետութիւնների աչքին վստահութիւն չունին: Եւ որովհետեւ նրանց համոզումով Հայաստանի փրկութիւնը միայն մեծ պետութիւններից է կախված, ապա, ուրեմն սոցիալիստների մնալը պետութեան գլխին երբէք թոյլատրելի չէր»[165]: Բացի այդ, ռամկավարների համար աննդունելի էր, որ պետության ղեկին հայտնված սոցիալիստ դաշնակցականները պետք է ձգտեին որոշ ընկերային բարենորոգումներ անցկացնել և այլն:

Ընդհանուր առմամբ Ս. Վրացյանի խոսքերով՝ «Հայ-Հայկական» բանակցությունների արդյունքները տխուր պատկեր են ներկայացնում: Բանն այն է, որ հայկական տարածքների ամբողջացման շուրջ դեռևս միջազգային մակարդակով գործնական որևէ արդյունք չարձանագրած՝ ոչ թե համազգային, այլ կուսակցական-հատվածական շահերով տարված բուռն վեճեր էին ընթանում հայ հասարակական-քաղաքական շրջանակներում պաշտոնների բաժանման շուրջ՝ թե ով պետք է ղեկավարի ապագա Միացյալ Հայաստանը, ինչպիսի կազմ, կուսակցական պատկանելություն պետք է ունենա նրա կառավարությունը, խորհրդարանը և այլն:

Այդուհանդերձ, թեև համաձայնությունը չկայացավ, սակայն Հայաստանի և գաղթաշխարհի համայն հայությունը, մի կողմ

---

[165] **Վրացեան Ս.**, նշվ. աշխ., էջ 63-64:

թողնելով ներքին անհամաձայնությունները, ջանում էր միջազգային ատյաններում առաջ տանել Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը՝ դրա իրագործմանը հասնելու համար:

10. ՄԻԱՑՅԱԼ ԵՎ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ ՀԱՆԴԵՊ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1919 թ. օգոստոսի 15-ին Հայաստանի նորընտիր խորհրդարանի նիստում լսվեց վարչապետ Ալ. Խատիսյանի կաբինետի հայտարարագիրը: Նրանում մասնավորապես ընդգծվում էր. «Նոր կառավարությունը՝ հենուած բովանդակ հայ ժողովրդի դարաւոր իրաւունքի և իղձերի վրայ, իր ամբողջ կարողութեամբ պիտի պաշտպանի և ձգտի իրականացնել Միացեալ և ամբողջացած Հայաստանի անկախութեան գաղափարը»[166]:

Եվրոպա և ԱՄՆ գործուղված ՀՀ առաջին վարչապետ Հ. Քաջազնունին 1919 թ. հոկտեմբերին ԱՄՆ-ի Սենատին ուղղված «Հայաստանի Հանրապետության կառավարության ճանաչման մասին» հուշագրում, ներկայացնելով նորահռչակ ՀՀ ընդհանուր պատկերը, հիմնավորումներ էր կատարում ապագա Միացյալ Հայաստանի վերաբերյալ: Քաջազնունու հայտնած տվյալներով՝ տարածքային առումով ՀՀ կազմում է 67,5 հազ. քառ. կմ, իսկ այդ տարածքի վրա, ռուսական պաշտոնական վիճակագրությամբ, մինչև 1917 թ. նախահեղափոխական ժամանակաշրջանը բանակվել է 2.159.600 մարդ, որի կեսից ավելին՝ 1.293 հազարը կամ մոտ 60 տոկոսը կազմել են հայերը[167]: Սակայն նրա ուղեր-

---

[166] «Հայաստանի աշխատավոր», Եր., 16 օգոստոսի 1919 թ.:

[167] Տե՛ս **Քաջազնունի Յ.**, Հայաստանի Հանրապետութիւն, Եր., 1993,

ծի գլխավոր նպատակը Հայաստանի ամբողջացման հարցն էր, որը դրված էր Փարիզի խաղաղության կոնգրեսի առաջ, և որին սրտատրոփ սպասում էր ամբողջ հայ ազգը:

Միջազգային փոփոխված պայմաններում Հայկական հարցը ստացել էր նոր բովանդակություն, որի հիմքում ընկած էր Միացյալ և Անկախ Հայաստանի պահանջը: Հաշվի առնելով Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Հայկական հարցի համապարփակ լուծման համար ստեղծված նպաստավոր ռազմաքաղաքական և դիվանագիտական պայմանները՝ ՀՅԴ-ն, իբրև ՀՀ հիմնական կառավարող կուսակցություն, Հայաստանի ամբողջականությունը վերականգնելու նպատակով առաջ քաշեց և պաշտպանեց նրա երկու գլխավոր հատվածների (արևելահայկական և արևմտահայկական) միավորումից Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը:

Այդ պահանջի ծրագրային ամրակայման տեսանկյունից և առհասարակ ՀՀ հասարակական-քաղաքական կյանքում նշանակալի իրադարձություն եղավ առաջին անգամ անկախ Հայաստանում հրավիրված ՀՅԴ-ի հերթական համաժողովը: Միացյալ և Անկախ Հայաստանի տեսլականը կուսակցության գործնական քաղաքականության հիմնաքար դառնալու համար պետք է վավերացվեր կուսակցության համաժողովում: Եվ 1919 թ. աշնանը (**սեպտեմբերի 27 - նոյեմբերի 2**) մայրաքաղաք Երևանում գումարվեց **ՀՅԴ 9-րդ Ընդհ. ժողովը**, որում կատարվեց կուսակցության նվազագույն ծրագրի մասնակի փոփոխություն: Դա կատարվեց այն բանից հետո, երբ Հայաստանի անկախությունն արդեն մեկ տարուց ավելի կատարված փաստ էր: Նոր ծրագրային փոփոխությամբ Միացյալ Հայաստան

էջ 10-11:

ստեղծելու պահանջը պետք է դառնար շրջադարձային Դաշնակցության քաղաքական ծրագրերում:

Մինչ համագումարի հրավիրումը՝ ՀՅԴ Բյուրոն մշակել էր Հայաստանի պահանջները, որոնցում պաշտպանվում էր Միացյալ Հայաստանի գաղափարը, Բյուրոյի անդամ Ս. Վրացյանի վկայությամբ՝ առանց Կիլիկիայի և, նույնիսկ, առանց դեպի ծով ելքի: Այդ ուղղությամբ հրահանգ էր տրված թե՛ կառավարությանը և թե՛ Փարիզ մեկնած Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը[168]: Ընդհանուր ժողովում տարածքային պահանջների շուրջ ծավալված քննարկումների մասին է վկայում Բյուրոյի անդամ Ռ. Տեր-Մինասյանը: Նա իր հուշերում գրում է, որ շատ պատգամավորներ, այդ թվում՝ նաև ինքը, Հայաստանի սահմանների հարցում պնդել են «չափավոր քաղաքականութեան անհրաժեշտութեան մասին՝ մատնանշելով Կիլիկիան եւ ուրիշ հատուածներ Միացեալ Հայաստանի սահմաններից դուրս

[168]Տե՛ս **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրութ, 1958, էջ 200, **Ռուէեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Է, Լոս Անջելես, 1952, էջ 170, «Ազդակ շաբաթօրեակ», 1973, թիվ 38, էջ 607:

ձգելու մասին»[169]: Սակայն Ընդհանուր ժողովը, հանուն հայկական երկու պատվիրակությունների համերաշխության, ձայների մեծամասնությամբ բանաձև ընդունեց՝ Հայաստանի սահմանները որոշելու խնդրում ղեկավարվել այն ծրագրով, որը 1919 թ. փետրվարի 12-ին համատեղ ստորագրությամբ ներկայացվել է Փարիզի հաշտության համաժողովին[170]:

Դա նշանակում է, որ 9-րդ Ընդհ. ժողովը հավանություն է տվել փետրվարի 12-ին Փարիզի հաշտության համաժողովին Միացյալ պատվիրակության ներկայացրած Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու ծրագրին, որով նախատեսվում էր Ռուսահայաստանից, Տաճկահայաստանի վեց նահանգներից և Կիլիկիայից ձևավորել հայկական ծավալուն պետություն: Սակայն պատմաքաղաքական հետագա անցքերը ցույց տվեցին, որ չափավոր պահանջներ ներկայացնող պատգամավորները՝ Ռ. Տեր-Մինասյանը, Ս. Վրացյանը, Ա. Բաբայանը և ուրիշներ ավելի իրատես էին, քան մեծամասնություն կազմող արմատականները: Բայց եթե ապագա Մեծ Հայաստանի սահմանների, այդ թվում՝ Կիլիկիայի խնդրում ժողովականների կարծիքները բաժանվեցին, ապա Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստան ունենալու հարցում նրանք մնացին անսասան[171]:

Հաշվի առնելով ռուսական և օսմանյան կայսրությունների փլուզումը, Հայաստանի Հանրապետության գոյության փաստը, ստեղծված միջազգային նպաստավոր պայմանները, Փարիզում ընթացող խաղաղության վեհաժողովում Հայկական

---

[169] **Ռուբէն**, նշվ. աշխ., էջ 170:

[170] Տե՛ս «Քաղվածներ Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից», Եր., 1920, էջ 5:

[171] Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովը, Եր.,1994, էջ 26:

հարցի կարծես բարեհաջող ընթացքը և այլն, Ընդհ. Ժողովի առջև ծառացավ կուսակցության ծրագրի հատկապես քաղաքական մասի վերաքննության հարցը: Անհրաժեշտություն էր առաջացել համապատասխան փոփոխություն կատարել 1907 թ. Վիեննայի 4-րդ Ընդհանուր ժողովում հաստատված գործող ծրագրում: Այս կապակցությամբ կուսակցության ճանաչված գործիչ Արշակ Ջամալյանը գրում է. «Ստեղծուած նոր կացութիւնը անհրաժեշտ էր դարձնում Դաշնակցութեան ծրագրի վերաքննութիւնը, ոչ միայն այն պատճառով, որ նրա ազգային-քաղաքական պահանջը պէտք է նոր ձեւակերպութիւն ստանար, այլեւ այն պատճառով, որ անկախ պետականութեան սահմաններում գործելու կոչուած կուսակցութիւնը պիտի դժուարանար տեւականապէս գործել մի ծրագրով, որ բոլորովին այլ քաղաքական պայմանների հաշուառմամբ էր կազմուած»[172]:

Ակնհայտ էր դարձել, որ հնացել էր ծրագրի «նվազագույն պահանջներ»-ի բաժինը: Այս բաժնում, ինչպես հայտնի է, նախատեսված էին երկու իրարից անջատ Հայաստաններ՝ Արևմտյան և Արևելյան, որոնցից մեկը տեղական լայն ինքնավարությամբ և դաշնակցային կապերով միացած պիտի մնար Թուրքիային, իսկ մյուսը՝ Ռուսաստանին[173]: Ծրագրային այս պահանջը տվյալ ժամանակաշրջանի ու պայմանների համար միակ տրամաբանական ու հնարավոր միջոցն էր: Սակայն 1915 թ. Հայոց Մեծ եղեռնը, 1917 թ. ռուսական երկու աշխարհացունց հեղափոխությունները, դրանց հետևանքով ռուսական զորքերի հեռանալը Կովկասյան ճակատից ու Անդրկովկասից, 1918 թ. Բրեստի կողոպտիչ հաշտության պայմանագիրը և այլ հանգամանքներ այլևս ավե-

---

[172] «Հայրենիք», 1931, թիվ 8, էջ 17-18:

[173] Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիր, Կ. Պոլիս, 1908, էջ 17-18:

լորդ էին դարձնում երկու Հայաստանների ինքնավարության մասին խոսելը: Ստեղծված պայմաններում ՀՅԴ Բյուրոն, դուրս գալով կուսակցության ծրագրի շրջանակներից, նախ՝ հավանություն տվեց Արևելյան Հայաստանի **անկախության** իրողությանը, ապա՝ աշխարհամարտի ավարտից հետո, իրադարձությունների նպաստավոր ընթացքի տրամաբանությամբ, առաջադրեց Հայաստանի երկու՝ Արևելյան և Արևմտյան հատվածների միավորումով **Միացյալ Հայաստանի անկախության** պահանջը, ինչը, որպես արդեն հասունացած, պետք է ձևակերպում ստանար կուսակցության նոր ծրագրի մեջ: Հենց այդ ձևակերպումը տրվեց Ընդհանուր ժողովում, որում ասվում էր. «Հ. Յ. Դաշնակցութեան 9-րդ Ընդհ. ժողովը հանդիսաւորապէս նուիրագործելով **Անկախ** և **Միացեալ** Հայաստանի հայտարարութիւնը և անոր ամբողջացման ու զարգացման ձգտելով բոլոր զորութեամբ, ժողովրդավար (դեմոկրատիկ) հանրապետութեան հիման վրայ, որոշեց.

Ա. Չեղեալ համարել կուսակցութեան նվազագոյն ծրագրի Ռուսահայաստանի և Տաճկահայաստանի վերաբերեալ քաղաքական պահանջները:

Բ. Ամբողջական ծրագրի վերաքննութիւնը յետաձգել յաջորդ Ընդհ. ժողովին»[174]:

Համաժողովը նաև արձանագրում էր, որ «Հայաստանի արտաքին քաղաքականութեան առանցքը պիտի կազմէ Միացեալ Հայաստանի անկախութիւնը օտար պետութիւններին ճանաչել տալու եւ ապահովելու մտահոգութիւնը»[175]: Կուսակցության համաժողովը, բանաձևելով անկախ և միացյալ Հայաստա-

---

[174] «Քաղվածներ Հ. Յ. Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից», Եր., 1920, էջ 4-5:

[175] Նույն տեղում, էջ 5:

նի ստեղծման մասին պահանջը, ելնում էր այն հաստատ համոզումից, որ «ստեղծուած պայմաններում Հայաստանի անկախութիւնը հայ աշխատավորութեան ֆիզիկական ապահովութեան եւ քաղաքական ազատագրութեան միակ գրաւականն է»[176]: Ի դեպ՝ բնորոշ է, որ նույն Ընդհանուր ժողովի՝ Ղարաբաղի և Զանգեզուրի վերաբերյալ ընդունած բանաձևում հայկական այս բնիկ տարածքները համարվում էին «անբաժանելի մասը Անկախ և Միացեալ Հայաստանի Հանրապետութեան»[177]: Նորընտիր Բյուրոյին հանձնարարվեց՝ «բոլոր քայլերը առնել Զանգեզուրն ու Ղարաբաղը միացնելու հանրապետութեանը»[178]:

Կուսակցության 9-րդ Ընդհ. ժողովը շրջադարձային, պատմական եղավ այն իմաստով, որ փաստորեն առանց կենսագործման չեղյալ համարվեց 1907 թ. Վիեննայի 4-րդ Ընդհ. ժողովում ընդունված նվազագույն ծրագրի քաղաքական պահանջների բաժինը՝ Հայաստանի երկու հատվածների ինքնավարության մասին, և դրա փոխարեն որդեգրվեց Միացյալ և Անկախ Հայաստանի հիմնանպատակը: Միացյալ Հայաստանի գաղափարի ՀՅԴ-ի ծրագրային նոր ձևակերպումը Նիկոլ Աղբալյանը, իբրև նոր կարգախոս, բնորոշեց այսպես. «բարեկեցիկ հայն իր ազատ եւ միացեալ հայրենիքում»[179]:

Այսպիսով՝ ՀՅԴ-ի 9-րդ Ընդհանուր ժողովը հանգեց իր ծրագրային գերագույն նպատակին՝ Միացյալ և Անկախ Հա-

---

[176] **Ռուբէն**, Հայ յեղափախականի մը յիշատակները, հ. Է (7), Լոս-Անճելըս, 1952, էջ 205:

[177] **Ռուբէն**, նույն տեղում:

[178] «Ասպարեզ», 28/29. V, 1992 թ.:

[179] **Հանգոյց Ն.**, Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին, Փարիզ, 1930, էջ 86:

յաստան կերտելու գաղափարին, ինչն այն ժամանակ ոչ թե քաղաքական ռոմանտիզմ էր, այլ միանգամայն իրատեսական ու իրականանալի գործընթաց:

* * *

Հարկ է նշել, որ Միացյալ Հայաստանի գաղափարին ծրագրային ձևակերպում տվեց նաեւ քաղաքական ազդեցությամբ ու կշռով հանրապետությունում երկրորդը համարվող Հայ ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ). «Հայ քաղաքական կուսակցութիւններից, - նշում է ռամկավար գործիչ Ա. Դարբինյանը, - եկրորդը (ՀՅԴ-ից հետո՝ Ա. Հ.) Հայ ժողովրդական կուսակցութիւնն էր, որ կողմնակից դարձաւ ոչ միայն ազգային անկախ, այլ յետոյ նաեւ միացեալ Հայաստանի ստեղծման գաղափարին»[180]: 1919 թ. սեպտեմբերին Երևանում գումարված ՀԺԿ-ի 2-րդ համագումարում ընդունված ծրագրում որդեգրվում է Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը և քաղաքականությունը. «Հայ ժողովրդական կուսակցութեան նպատակն է, - նշված է ծրագրում, - Հայաստանի անջատուած մասերից ստեղծել Միացեալ և Անկախ Հայաստան իր սեփական ծովային ելքով»[181]:

1919 թ. դեկտեմբերի երկրորդ կեսին Երևանում կայացավ Հայ Ս. Ռամկավար կուսակցության Հայաստանի շրջանի 2-րդ համագումարը, որի օրակարգային հարցերից էր Միացյալ Հայաստանի և միացյալ կառավարության հարցը: Համագումարն իր ընդունած բանաձևում հավանություն է տալիս Միացյալ և անկախ Հայաստանի գաղափարին: Այնուհետև համաժողովի

---

[180] **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, Պարիզ, 1947, էջ 436:

[181] Տե՛ս «Ծրագիր Հայ ժողովրդական կուսակցության» (ընդունված Բ համագումարում, 1919 թ. 7-15 սեպտեմբերի), Եր., 1919, էջ 3:

անունից շնորհավորանք է ուղարկվում Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Հայ Դատի հաջող ընթացքի առիթով[182]:

Սակայն դրա հետ մեկտեղ՝ նրանք, քաղաքական առումով համախորհուրդ ՀԺԿ-ի և Պողոս փաշայի դիրքորոշմանը, շարունակում էին չճանաչել ՀՀ-ի կառավարությաունը որպես Միացյալ Հայաստանի կառավարություն: Ա. Դարբինյանի խոսքերով՝ «Ան կը մերժէ ճանչնալ այս կառավարութիւնը որպէս Միացեալ Հայաստանի կառավարութիւն»[183]: Այլ խոսքով՝ համագումարը պաշտպանում էր Վ. Թեքեյանի և Ազգային պատվիրակության տեսակետներն այդ հարցի վերաբերյալ:

Անդրադառնալով ՍԴ Հնչակյան կուսակցությանը՝ պետք է ասել, որ նա չի դրսևորել միակամ դիրքորոշում Միացյալ Հայաստանի գաղափարի և դրա նյութականացման հարցում: 1890-ական թվականներից ի վեր պարբերաբար պառակտվող այս կուսակցության ռուսահայ և արտասահմանյան կառույցները տարբեր մոտեցումներ են ունեցել: Այսպես՝ ի տարբերություն անդրկովկասյան կամ ռուսահայ հնչակյանների, որոնք հիմնականում համերաշխ էին Ռուսաստանում իշխանության ղեկին գտնվող բոլշևիկների հետ, արտասահմանյանը՝ հատկապես Ստ. Սապահ-Գյուլյանի գլխավորած Ամերիկայի հնչակյանները, ՍԴ Հնչակի Կ. Պոլսի ու շրջանի գործադիր մարմինը, Վերակազմյալ հնչակյանները և այլն, հանդես էին գալիս Միացյալ Հայաստանի գաղափարի պաշտպանությամբ[184]: Այսպես՝ Վե-

---

[182] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 208, թ. 1-2:

[183] **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, Երեւան, 2003, էջ 234:

[184] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 51, թ. 1, **Хуршудян Р.**, Политика Гнчакистов в 1917-1920 гг. (տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1978, թիվ 1, էջ 189):

ռակազմյալ հնչակյան (ազգային-ազատական) կուսակցության՝ Կ. Պոլսում 1920 թ. դեկտեմբերին կայացած ընդհանուր պատգամավորական ժողովում (համագումարում) ատենապետ Հրաչ Երվանդի ստորագրությամբ համագումարի անունից դեկտեմբերի 9-ին ուղերձ-գրություն է ուղղվել Հայ ազգային պատվիրակությանը, որով «Պատգամաւորական ժողովն իր անվերապահ նուիրումն ու աջակցութիւնը կը յայտնէ **ամբողջական Հայաստանի ազատութեան գաղափարին**»: Համագումարը հավանություն էր տալիս «Հայաստանը մէկ անբաժան եւ ամբողջական դարձնող Ծրագրին», միաժամանակ շեշտվում էր Կիլիկիայի նկատմամբ հատուկ ուշադրություն դարձնելու վրա, որի հանդեպ հայ ժողովուրդն ունի «անհերքելի պատմական և իրաւական պահանջատիրութիւն»[185]:

Ինչ վերաբերում է ՀՀ-ում գործող «ձախակողմյան» (բոլշևիկ, էսէռ, մենշևիկ) կուսակցություններին, ինչպես արդեն ասվել է, դրանք ոչ միայն չէին ընդունում Միացյալ Հայաստանի գաղափարը, այլև, ընդհանրապես, դեմ էին Հայաստանի անկախությանն ու պետականությանը և ամեն գնով ջանում էին Հայաստանը «կրկին իր իսկական տիրոջը՝ Ռուսաստանին վերադարձնել»[186]: Բուն ՀՀ-ում միանգամայն կրավորական ու համակերպվող վարքագիծ է հանդես բերել Ս.Դ. Հնչակը, որ հանրապետության տարածքում առհասարակ էական քաղաքական կշիռ ու դերակատարություն չի ունեցել:

Իբրև իրողություն փաստենք, որ հայ սոցիալ-դեմոկրատական ու էսէռական տիպի կուսակցություններից Միացյալ և Անկախ Հայաստանի պետականության գաղափարը պաշտպանել

---

[185] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 720, թ. 2:

[186] «Աշխատանք», Եր., 17 մարտի 1919 թ.:

է 1920 թվականի հունվարին հիմնդրված՝ Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը (ՀՍԴԲԿ՝ նախկին սպեցիֆիկները), այլ խոսքով՝ ազգային նկարագիր ունեցող Դավիթ Անանունի և Բախշի Իշխանյանի գլխավորած կուսակցությունը[187]:

Ընդհանուր առմամբ, այսպիսին են եղել հայ քաղաքական կուսակցությունների ծրագրային դիրքորոշումները Հայկական հարցի նկատմամբ այդ շրջափուլում: Հարկ է ընդգծել, որ ազգային նկարագիր ունեցող հայկական կուսակցությունները, երբեմն իրենց մարտավարական տարբեր մոտեցումներով հանդերձ, հաստատակամորեն պաշտպանել են Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը, մի բան, որ չի կարելի ասել այլ գաղափարական արժեհամակարգերում գործող մյուս կուսակցությունների մասին:

11. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԴԱՏԻ ԽՆԴԻՐԸ

1920 թ. **հունվարի 19-ին** Փարիզի վեհաժողովի Գերագույն խորհուրդը **դե ֆակտո** (de facto-փաստացի) ճանաչեց Հայաստանի կառավարությանը, ինչն էապես բարձրացնում է ՀՀ-ի միջազգային քաղաքական կշիռը: Ժողովուրդը մեծ ցնծությամբ ընդունեց այս փաստը. ոչ ոք չէր կասկածում Հայաստանի ապագային: 1920 թ. **ապրիլի 23-ին** ԱՄՆ-ի նոր պետքարտուղար Բ. Կոլբին Ամերիկայում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Փաստրմաճյանին հայտնում է, որ նախագահ Վ. Վիլ-

---

[187] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 68, թ. 1, գ. 72, թ. 5:

սոնի հանձնարարությամբ ԱՄՆ-ի կառավարությունը «այսօրուանից դէ ֆակտո ճանաչում է Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը»[188]: Հայաստանի ճանաչումից հետո ԱՄՆ-ի Սենատը մայիսի 13-ին պաշտոնապես շնորհավորում է Հայաստանի Հանրապետությանը՝ ցանկանալով ամենայն բարիք: Ի դեպ փաստենք, որ դեռ 1919 թ. սեպտեմբերին Հայաստանի անկախությունը փաստացի ճանաչել էր Անտոն Դենիկինի գլխավորած Հարավային Ռուսաստանի կառավարությունը, որի դիվանագիտական ներկայացուցիչ գնդապետ Մ. Զինկևիչը ժամանել էր Հայաստան[189]: Արձանագրենք նաև այն իրողությունը, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հրաժարվել է միանալ Դենիկինի Կամավորական բանակի դեմ Ադրբեջանի և Վրաստանի ծրագրած պայքարին:

Ինչպես արդեն ասվեց, Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացված հայկական պահանջների հուշագրով ու համապատասխան քարտեզով Միացյալ Հայաստանն իր մեջ ներառում էր Կիլիկիան, Արևմտահայաստանի նահանգները և ՀՀ-ի տարածքը: Ընդսմին՝ Կիլիկիան կարող էր միացվել մեծ Հայաստանին կամ լինել ինքնավար:

Հարկ է նշել, որ Կիլիկիայի միացման հարցում մտահոգություն է հայտնել Մեծ Բրիտանիայի արտաքին գործոց նախարար լորդ Ջորջ Քերզոնը՝ գտնելով, որ Հայաստանի և Կիլիկիայի միջակայքում ընկած են հողամասեր, որոնք մեծավ մասամբ բնակեցված են մուսուլմաններով, ինչի պատճառով դժ-

---

188 Տե՛ս «Геноцид армян»: ответственность Турции и обязательства мирового сообщества (документы и комментарий), сост. проф. Ю. **Барсегов**, (այսուհետ՝ «Геноцид армян», документы и комментарий), т. I, М., 2002, с. 499.

189 Տե՛ս **Խատիսեան** Ալ., նշվ. աշխ., էջ 189:

վար կլինի դրանք անջատել թուրքական պետությունից: Հայ Ազգային Բ համագումարի 4-րդ նիստում (1920 թ. մայիս) զեկուցող Ա. Չոպանյանը, պատասխանելով լորդ Քերզոնի այդ առարկությանը, պարզաբանում է տվել, որ պատերազմից առաջ հայերն այդ տարածքներում մեծամասնություն են ունեցել, բացի այդ՝ դաշնակիցները խոստացել են հայկական բոլոր շրջաններն ազատագրել թուրքական տիրապետությունից[190]:

Միացյալ հայկական պետության կայացման համար շատ կարևոր էր ունենալ որևէ հովանավոր կամ խնամակալ (մանդատատեր) երկրի աջակցությունը: Հասկանալի է, որ դարեր շարունակ թուրք իշխանությունների կողմից ճնշված ու հարստահարված, սովի ու համաճարակի մատնված, ավերված ու գաղթական դարձած, իսկ վերջին տասնամյակներում կոտորածներ ու Մեծ Եղեռն տեսած Հայաստանն ու հայ ժողովուրդը առանց հովանավոր պետության չէին կարող ոտքի կանգնել, պաշտպանվել և առաջընթաց ապահովել: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ էր գտնել մանդատատեր մի տերություն, որը որոշ ժամկետով իր վրա կվերցներ Հայաստանի անվտանգության և ընթացիկ այլ գործերի ապահովման պարտականությունը:

Հայաստանի մանդատի հարցում Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջի կարծիքով ամենահարմար թեկնածուն կարող էր լինել Ռուսաստանը[191]: Բայց, ինչպես հայտնի է, 1917 թ. բոլշևիկյան աշխարհացունց հոկտեմբերյան հեղաշրջումը տակնուվրա արեց ամեն ինչ: Փաստենք, որ արտասահմանում հայտնված Ռուսաստանի (վտարանդի) ժամանակավոր կառավարությունը իշխան Գ. Լվովի, Ս. Սազոնովի, Ն. Չայկովսկու և

---

[190] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 54, թ. 16:

[191] **Джордж Л.**, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 390.

Բ. Մակլակովի կողմից 1919 թ. հուլիսի 5-ին Փարիզի Հաշտության կոնֆերանսին էր ներկայացրել մի հուշագիր այն բովանդակությամբ, որ իրենք, որպես Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության ներկայացուցիչներ, պահանջում էին, որ Թուրքիայի հետ հաշտության կնքմանը Դաշնակիցների հետ հավասար իրավունք ունենա նաև Ռուսաստանը, հանձին՝ Ժամանակավոր կառավարության: Այնուհետև, հարց էր դրվում, որ Թուրքիան հրաժարվի Բրեստ-Լիտովսկի պայմանագրից, և այն չեղյալ հայտարարվի: Հուշագրում արձանագրված է, որ «Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությունը ողջունում է Հայաստանի անկախությունը», հիշեցվում էր Բեռլինի պայմանագրի 61-րդ և Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածները, որոնք կայացվել էին Ռուսաստանի նախաձեռնությամբ: Հայաստանի ապագայի հարցում հուշագրի հեղինակները վստահեցնում էին, որ «Ռուսաստանը հաճույքով կընդունի նրա մանդատը», իսկ եթե դա հնարավոր չլինի, ապա մանդատն ստանձնող որևէ պետություն «պետք է լինի բոլորովին անշահախնդիր»[192]:

Ցավոք, Ռուսաստանը փաստորեն դուրս էր մնացել միջազգային քաղաքական գործընթացներից ու խրվել էր քաղաքացիական պատերազմների ճահիճը: Ուստի շատ դժվար էր հուսալ նրա օգնությունը: Բացի այդ՝ հաղթական Անտանտի տերությունները հազիվ թե թույլ տային Գերմանիայի ու նրա դաշնակիցների հետ Բրեստ-Լիտովսկում անջատ հաշտություն կնքած և իրենց համար բոլորովին անընդունելի ընկերային-քաղաքական վարչաձև որդեգրած Խորհրդային Ռուսաստանին տեր դառնալ Սայքս-Փիկո-Սազոնով գաղտնի համաձայնագրով իրեն «հասանելիք» Արևմտյան Հայաստանին:

---

[192] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 173 ա:

Մնում էր հույսը կապել մի այնպիսի զորեղ տերության հետ, որը տարածաշրջանում չուներ զավթողական նկրտումներ՝ զերծ եվրոպական պետությունների մրցակցությունից և շահադիտական խարդավանքներից: Այս տեսակետից գրեթե բոլոր առումներով ամենահարմար և ցանկալի թեկնածուն համարվում էր հզոր ու հարուստ ԱՄՆ-ը: Մեծ Բրիտանիայի վարչապետ Լ. Ջորջի համոզմամբ «ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ստանձնումը չէր կարող առարկություն գտնել մյուս տերությունների ու երկրների կողմից այն իմաստով, որ ԱՄՆ-ը առանձնապես զավթողական նպատակներ չէր հետապնդում»[193]:

Նկատի ունենալով, որ Փարիզի խորհրդաժողովում մեծ տերություններից Հայաստանի նկատմամբ առավել բարյացակամ և մեծ հետաքրքրություն հանդես բերողը ԱՄՆ-ն էր, հայկական պատվիրակությունները ցանկություն հայտնեցին Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանի խնամակալությունը՝ մանդատը, հանձնել ԱՄՆ-ին կամ էլ նոր կազմվելիք **Ազգերի լիգային**:

Վերջինս հիմնվել է **1919 թ. ապրիլի 28-ին** Փարիզի Խաղաղության վեհաժողովում, երբ մասնակից 27 պետությունների պատվիրակները միաձայնությամբ հավանություն տվեցին Լիգայի Կանոնադրությանը: Ազգերի Լիգայի ստեղծման գործում մեծ է ԱՄՆ-ի նախագահ **Վուդրո Վիլսոնի** (1856-1924) դերը: Հայտնի է, որ դեռ 1918 թ. հունվարի 8-ի նրա հռչակած հետպատերազմյան կարգավորման հայտնի «14 կետերից» վեր-

---

[193] **Джордж Л.**, նշվ. աշխ., էջ 393:

ջինով առաջ էր քաշվում Ազգերի լիգա ստեղծելու գաղափարը՝ աշխարհում հետպատերազմյան կայուն խաղաղության, անվտանգության, զինաթափման ապահովման, ազգերի ու պետությունների միջև համագործակցության հաստատման նպատակով՝[194]:

Մեծ հույս կար, որ Միացյալ Հայաստանի խնամակալությունը կստանձներ ԱՄՆ-ը, մանավանդ որ նախագահ Վ. Վիլսոնը շատ էր հետաքրքրվում Հայաստանով և բարյացակամ էր տրամադրված հայ ժողովրդի հանդեպ: Այսպես՝ նախագահ Վ. Վիլսոնը 1918 թ. նոյեմբերի 18-ին պետքարտուղար Ռ. Լանսինգին գրում է. «Իմ հետաքրքրությունը հայերի հանդեպ խորն է, և իմ համակրանքը նրանց նկատմամբ իրոք մեծ է»[195]: 1919 թ. մարտի 28-ին Ա. Ահարոնյանն իր քաղաքական օրագրում նշում է. «ամբողջ Հայաստանը՝ Կիլիկիայից մինչեւ Կովկաս, դրուելու էր Ամերիկայի մանդատի տակ»[196]:

ԱՄՆ-ի նախագահը, հաղթահարելով 1823 թ. Մոնրոյի հայտնի դոկտրինայի արգելքը՝ 1919 թ. ապրիլի 17-ին Ա. Ահարոնյանի և Պողոս Նուբարի հետ հանդիպման ժամանակ հավաստիացրել էր, որ «եթէ երբեւէ Ամերիկան որևէ երկրի մանդատ հանձն առնի, այդ կլինի Հայաստանինը»[197]: Ապրիլի 24-ի թվակիր մի զեկուցագրի մեջ նույն Ահարոնյանը հայտնում էր, որ «Ամերիկայի թէ՛ հասարակական կարծիքը եւ թէ՛ նախագահ Վ. Վիլսոնը մեր մանդայի ջերմ պաշտպաններից են: Արգելքը

---

[194] **Հակոբյան Ա.**, Հայկական հարցը Ազգերի լիգայում 1920 թ., (տե՛ս «Դրօշակ», Եր., 2001 (սեպտեմբեր), թիվ 4, էջ 78:

[195] **Մելիքեան Վ.**, Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917-1923 թթ., Եր., 2007, էջ 23:

[196] **Ահարոնեան Ա.**, նշվ. աշխ., էջ 19:

[197] ՀԱԱ, ֆ.200, g.1, գ.35, թ.118, նաև՝ **Ահարոնեան Ա.**, նշվ. աշխ., էջ 18:

շարունակում էր մնալ Մոնրոյի սկզբունքը»[198]:

Ինչ վերաբերում է հասարակական կարծիքին, ապա պետք է ասել, որ, իրոք, Հայաստանի մանդատն ընդունելու հարցում իր նպաստն էր բերում Ամերիկայի հասարակությունը, մեծ էր նաև տեղի հայ համայնքի ու անհատ գործիչների դերը: ԱՄՆ-ում ստեղծվեց «**Հայաստանի Անկախության Ամերիկյան Կոմիտե**» (ՀԱԱԿ)՝ **Ջեյմս Ջերարդի** նախագահությամբ, որը հայանպաստ լայն աշխատանք ծավալեց: Տակավին Փարիզի խաղաղության վեհաժողովի առաջին փուլում (1919 թ.) Նյու Յորքում լույս տեսավ «Ամերիկան Հայաստանի մանդատատիրոջ դերում» ժողովածուն, որում հիմնավորվում էր Հայաստանի մանդատը վերցնելու անհրաժեշտությունը[199]: Ժողովածուի հեղինակներն ընդգծում էին այն օգուտները, որ կարող է ստանալ ԱՄՆ-ը Հայաստանի մանդատը ստանձնելու պարագայում. նշվում էր Հայաստանի հարստության, բարենպաստ կլիմայական պայմանների մասին, կազմակերպվում էին հանգանակություններ և այլն:

Տերությունների նախնական համաձայնությամբ Թուրքիան պետք է մասնատվեր՝ բաժանվելով երեք հատվածի՝ Հայաստանի, Թուրքիայի (Անատոլիա) և Կ. Պոլսի՝ որևէ մեծ տերության խնամակալության ներքո: Խաղաղության կոնֆերանսում նույնիսկ հարց է բարձրացվել Կ. Պոլիսը, որպես ոչ թուրքական քաղաք, թուրքերից վերցնելու և առհասարակ նրանց Եվրոպայից դուրս քշելու վերաբերյալ[200]:

Հարկ է նշել, որ Թուրքիայում ԱՄՆ-ի նախկին (1913-1916 թթ.) դեսպան **Հենրի Մորգենթաուն** առաջարկել էր Թուրքիայի

---

198 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 118:

199 Տե՛ս America as Mandatory for Armenia, N-1, 1919.

200 Տե՛ս «Армения в документах США», с. 132.

համար ստեղծել մեկ միասնական (ամբողջական) մանդատ՝ Կ. Պոլսի, Անատոլիական Թուրքիայի և Հայաստան պետական կազմավորումների համար[201]: Անտանտի տերությունների Հորսի խորհրդի (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա և Ճապոնիա) 1919 թ. մայիսի 13-ի քննարկումների ժամանակ այն միտքն է արտահայտվել, որ Թուրքիայի քաղաքական վերնախավը, այդ թվում՝ քեմալականները, ցանկություն էին հայտնել, որպեսզի Թուքիան ունենա մեկ միասնական մանդատ այն ակնկալիքով, որպեսզի երկիրը (Օսմանյան կայսրությունը) չմասնատվի[202]:

Միասնական մանդատի կողմնակից պետություններն այն տեսակետին էին, որ Հայաստանի համար առանձին մանդատի գաղափարը, ռազմաքաղաքական նկատառումներից ելնելով, դժվար կլինի իրագործել: Սակայն մյուս կողմից պետք է նկատել, որ միասնական մանդատի տարբերակը բավարար երաշխիք չէր տալիս Միացյալ Հայաստանի անկախության համար: Միասնական մանդատի հակառակորդների կարծիքով՝ Մորգենթաուի տարբերակի պարագայում Հայաստանն ու հայ ժողովուրդը կրկին կախման մեջ կընկնեին Թուրքիայից: Անցյալում դարավոր թուրքական բարբարոսությունների և գազանությունների բովով անցած և Մեծ եղեռնի սարսափներն ու ողբերգությունն ապրած հայությունը դեմ էր Թուրքիայի հետ որևէ համատեղ մանդատի պայմանին: Այս կապակցությամբ դիպուկ են երկար տարիներ Օսմանյան կայսրությունում աշխատած ամերիկացի մանկավարժ Ու. Բիլսսի խոսքերը, թե անկարելի է

---

201 Տե՛ս **Ованнисян Р.**, Международные отношения Республики Армения 1918-1920 гг., Ер., 2007, с. 205 и 675.

202 Տե՛ս «Армения в документах США», с. 99, նաև՝ **Махмурян Г.**, Армения в полотике США 1917-1923 гг., Ер., 2018, с. 153.

«...լկողին ու լկվածին, սպանողին ու սպանվածին, կողոպտողին ու կողոպտվածին՝ բոլորին մեկ տան մեջ իբրև եղբայրներ բարեկամաբար ապրեցնելը»[203]:

Հայ պետական-քաղաքական շրջանները ցանկանում էին ունենալ առանձին մանդատ՝ ԱՄՆ-ի, Ազգերի լիգայի կամ որևէ այլ պետության հովանու ներքո, որը երաշխիք կլիներ Անկախ Հայաստանի անվտանգ գոյության և զարգացման համար: Հայերը միակամ էին Հայաստանի մանդատը ԱՄՆ-ին հանձնելու հարցում:

Այնուամենայնիվ, ինչպես տեսնում ենք, բանակցությունների սկիզբը կարծես խոստումնալից էր, և Հայկական հարցի լուծումը վեհաժողովում կարծես որևէ կասկած չէր հարուցում: Միայն հարցն այն էր, թե քանի նահանգ, որքան տարածք պետք է միացվեր Հայաստանին:

12. ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ

Հայոց Մեծ եղեռնի շրջանում քրդական շատ ցեղեր (աշիրեթներ) ու ավազակախմբեր, թուրքական իշխանությունների ձեռքին գործիք դառնալով, նաև՝ հայերին թալանելու և նրանց ունեցվածքին տիրանալու ակնկալիքով, մեծ մասնակցություն ունեցան հայերի տեղահանության և կոտորածների գործում: Այս հանգամանքը կարծես տեղ չէր թողնում հայերի ու քրդերի հետագա համագործակցության համար:

Պատմական իրողություն է նաև այն, որ հայերի կոտորածների ու բռնագաղթի հետևանքով Արևմտյան Հայաստանը գործնականում գրեթե ամբողջությամբ հայաթափ էր եղել:

---

[203] **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 2, Եր., 2014, էջ 384:

Այս ամենի հետևանքով Աշխարհամարտից հետո քրդերն արդեն բացարձակ մեծամասնություն էին կազմում Դիարբեքիրի (Տիգրանակերտի), Վանի, Բիթլիսի և Խարբերդի նահանգներում: Եվ բնական էր, որ ստեղծված նոր իրադրության մեջ, քաղաքական և ժողովրդագրական նոր պայմաններում, թուրքական մեծապետականությանը ծառայող քուրդ վերնախավի համար ամենևին ցանկալի չէին հայկական պահանջները Արևմտյան Հայաստանի վերաբերյալ: Թուրքիայի շահերին ծառայող քուրդ վերնախավի այդպիսի մի ներկայացուցիչ էր Եվրոպայում հայտնված թուրքական բանակի քուրդ գեներալ **Շերիֆ փաշան**, որն իրեն ներկայացնում էր իբրև Դաշնակիցների կողմնակից քրդերի ներկայացուցիչ և ինքնավար կամ անկախ Քրդստանի հավակնություն ուներ:

Եվ ահա թուրքական գերիշխանության հավակնություններին հակազդելու նպատակով Փարիզում անգլիական պատվիրակությունը Պողոս Նուբար փաշային ներշնչեց հայ-քրդական համերաշխության գաղափարը, այն է՝ Արևելյան Անատոլիան բաժանել հայկական և քրդական հատվածների: Քանի որ հայերի և քրդերի պահանջները արևմտահայկական մի քանի նահանգների հարցում համընկնում էին, ուստի կողմերը համաձայնվում են, որպեսզի «արդարության և իրավունքի» հիման վրա Դաշնակից տերությունները գծեն հայ-քրդական վիճելի տարածքների սահմանները:

Այդ նպատակով 1919 թ. **նոյեմբերի 20-ին** Փարիզում Պողոս և Շերիֆ փաշաներն ստորագրեցին Հաշտության խորհրդաժողովի նախագահ Ժ. Կլեմանսոյին ուղղված՝ սահմանների վերաբերյալ անորոշ ձևակերպումներով, մի հայտարարություն-համաձայնագիր, որը Հայաստանի պատվիրակության անունից համաձայ-

նություն է տվել փոխնախագահ Հ. Օհանջանյանը, որովհետև այդ ժամանակ Ա. Ահարոնյանը Փարիզում չէր[204]:

Փաստաթղթում մասնավորապես նշվում է. «Մենք բոլորովին համաձայն ենք միասին խնդրելու հաշտարար խորհրդաժողովից, որ կազմուի, համաձայն ազգութեան սկզբունքների, Միացեալ եւ Անկախ Հայաստան եւ Անկախ Քրդստան մեծ պետութեանց աջակցութամբ, որ նշանակելու է երկու ազգերի իղձերը լսելուց յետոյ, որպէսզի նա կարողանայ տալ մեր երկրներին նրանց վերաշինութիւնների շրջանում իր տեխնիկական եւ տնտեսական օժանդակութիւնը: Ինչ վերաբերում է վիճելի հողամասերի բաժանմանը, որոնք մատնանշուած են մեր երկուսի կողմից հաշտութեան խորհրդաժողովին ներկայացրած յուշագրերի մէջ, եւ երկու ապագայ պետութիւնների սահմանների վերջնական գծմանը, մենք յայտարարում ենք, որ մենք կ՚ենթարկուենք հաշտարար խորհրդաժողովի վճիռներին՝ համոզուած լինելով, որ նրա վճիռը հիմնուած է արդարութեան եւ իրաւունքի վրայ»[205]: Համաձայնագրի իմաստն այն էր, որ երկու արիական ազգերը համատեղ դիմում են Խաղաղության կոնֆերանսին՝ ստեղծելու **Միացյալ և Անկախ Հայաստան** և **Անկախ Քրդաստան**:

Սակայն անգլիացիների խրախուսմամբ ստորագրված այդ փաստաթուղթը ոչ միանշանակ ընդունվեց հայ քաղաքական շրջանակներում: Այն բուռն քննադատեց Պ. Նուբար փաշան: Իրականում կարելի է ասել, որ այդ համաձայնագիրը եղել է ընդամենը մարտավարական քայլ, որը գործնա-

---

[204] Տե՛ս **Ованнисян Р.**, նշվ. աշխ., էջ 352, նաև՝ **Պողոսեան Ս.**, Պողոս Նուբար Փաշա. Ազգային գործիչ, Եր., 2004, էջ 148:

[205] **Յակոբեան Ա.**, Հայ-քրդական յարաբերութիւնների պատմութիւնից, (տե՛ս «Ազատամարտ», Եր., 6-12 օգոստոսի 1993 թ., թիվ 30, էջ 12):

կան որևէ ազդեցություն չի ունեցել Խաղաղության խորհրդաժողովում՝ տարածաշրջանային խնդիրների վերջնական կարգավորման գործում:

Մեր կարծիքով այդ համաձայնագրի հայավնաս կողմն այն էր, որ դրանով փաստորեն ճանաչվում էին Քրդական հարցը և քրդերի հավակնությունները արևմտահայկական մի քանի նահանգների վերաբերյալ, թեև փաստաթղթում ոչինչ չէր ասվում կոնկրետ նահանգների ու սահմանների մասին: Ըստ էության սա անկատար պատմական մի վավերագիր է, որը հայ-քրդական համերաշխության և համագործակցության եզակի դրվագ է:

13. ՄԻԱՑՅԱԼ ԵՎ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

Կրկին անդրադառնալով Փարիզի Խաղաղության խորհրդաժողովին՝ արձանագրենք, որ դեռևս շարունակվող կոնֆերանը և նորաստեղծ Ազգերի լիգան որոշում են Հայաստանի մանդատը հանձնել ԱՄՆ-ին: Ծրագրվում էր, որ մանդատի տևողությունը պետք է լիներ 10 տարի, որը երկկողմ համաձայնությամբ կարող էր երկարաձգվել: 1919 թ. հուլիսի կեսերին Դաշնակիցների Գերագույն խորհրդի (հինգի) որոշմամբ Հայաստանի, նաև՝ Կովկասի Գերագույն կոմիսար (հանձնակատար) է նշանակվում ամերիկացի գնդապետ **Ուիլյամ Հասկելը**[206]: Նրան հանձնարարված էր ապահովել

[206] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 246, թ. 31, g. 2, գ. 37, թ. 1:

հայ ժողովրդի ներքին ու արտաքին անվտանգությունը, պարենավորումը և ներգաղթը մինչև Հայաստանի մանդատի խնդրի վերջնական լուծումը[207]:

Այնուհետև՝ մեկ ամիս անց, ԱՄՆ-ի նախագահի համաձայնությամբ տարածաշրջան ու Հայաստան է գործուղվում ամերիկյան շուրջ 60 հոգուց բաղկացած զինվորական մի առաքելություն՝ Ֆրանսիայում գործող ամերիկյան էքսպեդիցիոն զորքերի շտաբի պետ զորավար **Ջեյմս Հարբորդի** գլխավորությամբ՝ մանդատը ստանձնելուց առաջ ուսումնասիրելու համար Հայաստանի տնտեսական ու քաղաքական պայմաններն ու հնարավորությունները: Ջ. Հարբորդի առաքելությունը պետք է որոշեր, թե որքան զորք և ֆինանսական միջոցներ կպահանջվեն Հայաստանի անվտանգության և խնամատարության համար: Մեկ ամիս տևած հետազոտության նախնական հաշվարկները ցույց էին տվել, որ մանդատը ստանձնելու դեպքում ԱՄՆ-ը տարածաշրջան պետք է ուղարկեր 50 հազար ամերիկյան զինվոր՝ երկիրը պաշտպանելու համար: Ընդ որում՝ Ջ. Հարբորդը, ինչպես և Մորգենթաուն, առաջարկում էին ամբողջ Թուրքիայի համար՝ Ռումելիայից մինչև Կովկաս, ստեղծել մեկ միասնական մանդատային համակարգ, որի համար առաջին 5 տարում կպահանջվի 750 մլն դոլար, իսկ անվտանգություն ու կարգուկանոն հաստատելու համար՝ 59 հազար զորք, որը հետագայում կարող է կրճատվել կիսով չափ[208]: Մեկ այլ տվյալով Ջ. Հարբորդի՝ ամերիկյան Սենատին ներկայացրած զեկուցագրով միասնական հոգատարությունն (մանդատը) ընդունելու

---

[207] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 37, թ. 1:

[208] Տե՛ս **Ованнисян Р.**, նշվ. աշխ., էջ 247-248, նաև՝ «Армения в документах США», с. 403.

դեպքում ԱՄՆ-ը 5 տարում պիտի ծախսեր 757 մլն դոլար և այլն[209]: Հարկ է նշել, որ Ջ. Հարբորդի՝ հատկացվելիք զորքի ու գումարի վերաբերյալ ներկայացրած հաշվարկը նախատեսվում էր ոչ թե միայն Հայաստանի, այլ ամբողջական մանդատի, այսինքն՝ նաև Անատոլիայի և Կ. Պոլսի համար: Հարբորդի առաքելության զեկուցագրի գնահատականից ու եզրակացությունից շատ բան էր կախված: Մինչև 1919 թ. ամռան ավարտը բավականաչափ վստահություն կար, որ ԱՄՆ-ը, վատագույն դեպքում՝ մեկ այլ երկիր կամ Ազգերի լիգան, կստանձնի Միացյալ Հայաստանի հովանավորությունը:

Փարիզի կոնֆերանսի ավարտական փուլում՝ 1920 թ. հունվարի վերջին, Անգլիայի պատվիրակությունը նախագիծ էր ներկայացրել, ըստ որի՝ Հայաստանը պետք է լիովին անջատվի Օսմանյան կայսրությունից: Եվ այդ առաջարկությունն ընդունվել էր Դաշնակից տերությունների կողմից[210]:

Փարիզի վեհաժողովի ավարտից հետո Հայկական հարցի առարկայական արծարծման հերթական քայլը եղավ **1920 թ. փետրվարի 12-ից – ապրիլի 10-ը Լոնդոնում** գումարված կոնֆերանսը, որին Հայաստանի խնդրին վերաբերող հարցերի քննարկմանը մասնակցել են հայ պատվիրակներ Ա. Ահարոնյանը և Պողոս Նուբարը: Այնտեղ Թուրքիայի հետ հաշտության

---

[209] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, թ. 119, «Հայաստանի միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1928-1923 թթ.)», խմբագիր՝ **Ջ. Կիրակոսյան**, Եր., 1972, (այսուհետև՝ «Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում»), էջ 611, նաև՝ **Հակոբյան Ա.**, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., Եր., 2018, էջ 122:

[210] Տե՛ս **Махмурян Г.**, Лига Нации, Армянский вопрос и Республика Армения, Ер., 1999, с. 54 и 56.

պայմանագրի նախագծի առնչությամբ քննարկվել են Միացյալ Հայաստանի սահմանների, Հայաստանի մանդատի, բանակի և այլ հարցեր: Լոնդոնի խորհրդաժողովում Անտանտի Գերագույն խորհուրդն առաջարկել էր Հայաստանի խնամակալությունը (մանդատը) հանձնել Ազգերի լիգային[211]: Սակայն վերջինս մերժում է ընդունել այն՝ պատճառաբանելով, որ, համաձայն իր կազմակերպական Կանոնադրության, հնարավոր չէ ստանձնել Հայաստանի խնամակալությունը, քանի որ ինքը պետություն չէ, չունի սեփական բանակ և անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ նման պարտավորություններ իրականացնելու համար[212]: Ազգերի լիգայի Խորհրդի փաստարկներից մեկն էլ այն էր, որ Հայաստանի սահմանները տակավին հստակեցված (ճշտված) չեն, հավանաբար հաշվի էր առնվում նաև երկրի աշխարհագրական բարդ դիրքը, նրա հարևանները և այլն:

Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի հաջորդ քայլը եղավ 1920 թ. **ապրիլի 18-26-ը** Իտալիայի **Սան Ռեմո** քաղաքում Դաշնակից տերությունների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա) ղեկավարների և ԱՄՆ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ խորհրդաժողովը, ուր վերջնականորեն մշակվեց ապագա հաշտության պայմանագրի նախագիծը և ներկայացվեց սուլթանական կառավարությանը[213]: Խորհրդաժողովում պաշտպանվում է Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը:

Դաշնակիցները, ցուցաբերելով իրատեսություն, բավարար

---

[211] Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), Եր., 2004, էջ 508:

[212] Տե՛ս **Գալոյան Գ.**, Հայաստանը և Մեծ տերությունները (1917-1923 թթ.), Եր., 1999, էջ 41:

[213] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 87, թ. 1:

համարեցին ՀՀ-ին միացնել Արևմտյան Հայաստանի 3 վիլայեթ (նահանգ)՝ Վանի, Բիթլիսի, Կարինի, ինչպես նաև Տրապիզոնի նահանգի մի նեղ շերտով՝ ապահովել ելք դեպի Սև ծով: Կարելի է ասել, որ ապագա Սևրի պայմանագրի նախագծում փաստորեն ներառված է եղել ՀՀ կառավարության տարածքային պահանջների նվազագույն մասը՝ իհարկե ծովային ելքով: Դա նշանակում է, որ հիմնովին շրջանցվել է Ազգային պատվիրակության պաշտպանած՝ Կիլիկիայի ընդգրկմամբ Միացյալ Հայաստանի տարբերակը և հիմք է ընդունվել ՀՀ կառավարության ներկայացրած հրահանգի՝ նվազագույն պահանջներով տարբերակը: Տերությունները Միացյալ Հայաստանի համար ավելի ընդարձակ սահմաններ չէին նախատեսում, որպեսզի նա կարողանա պաշտպանվել ու կենսունակ լինել: Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրի նախագիծը հավանության արժանանացավ Դաշնակիցների կողմից և ավելի ուշ՝ մայիսի 11-ին, պաշտոնապես հանձնվեց Թուրքիայի պատվիրակությանը՝ ծանոթանալու և ստորագրելու համար: Գերագույն խորհուրդը նաև որոշեց, որ Հայաստանը պետք է լինի Թուրքիայի հետ հաշտության պայմանագիրն ստորագրող կողմ[214]:

Հարկ է նշել, որ պայմանագրի նախագծի վերաբերյալ հունիսի վերջին Մեծ վեզիր, արքայազն, նախկին սուլթաններից Աբդուլ Մեջիդի փեսա Դամադ Ֆերիդ փաշայի կառավարությունը Դաշնակիցներին լուրջ դիտողություններ ու առարկություններ ներկայացրեց: Պարզվում է, որ **թուրքական կառավարությունը համաձայն էր միայն 1914 թ. ռուս-թուրքական սահմանին,** իսկ Հայաստանի ծովային ելքի վերաբերյալ նրանց տեսակետն

---

[214] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 3, Եր., 2015, էջ 41:

այն էր, որ հայերի հետ հնարավոր կլինի կնքել առանձին կոնվենցիա՝ թուրքական նավահանգիստներ դուրս գալու համար: Սակայն Դաշնակիցները (բացի Իտալիայից, ում ներկայացնում էր կոմս Սֆորցան) առարկությունները մերժեցին[215]:

Խորհրդաժողովի հարցերից մեկն էլ Հայաստանի մանդատի հարցն էր: Դրանում հավանական թեկնածուներ համարվեցին ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Նորվեգիան: Արդյունքում՝ Գերագույն խորհուրդը **ապրիլի 25-ին** որոշում է՝ դիմում հղել նախագահ Վ. Վիլսոնին, որպեսզի ԱՄՆ-ը ստանձնի Միացյալ Հայաստանի մանդատը, ինչպես նաև դառնա իրավարար (արբիտր) Օսմանյան կայսության արևելյան չորս նահանգների շրջանակներում Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանների գծման հարցում[216]: Մայիսի 17-ին նախագահ Վ. Վիլսոնը տալիս է իր համաձայնությունը՝ կատարելու իրավարարի պարտականությունները: Նա հայտնում է, որ սահմանագծման աշխատանքներին կանցնի Թուրքիայի կողմից պայմանագիրը ստորագրելուց անմիջապես հետո[217]: Անտանտի Գերագույն խորհուրդը նախագահ Վիլսոնի պատասխանի մասին իրազեկում է Ազգերի լիգային: Ինչ վերաբերում էր Հայաստանի ու Ադրբեջանի և Հայաստանի ու Վրաստանի սահմանների ճշգրտմանը, ապա դրանք պետք է որոշվեին այս երեք պետությունների փոխադարձ համաձայնությամբ, իսկ համաձայնության չհանգելու դեպքում այն պետք է որոշեին մեծ տերությունները:

---

[215] Տե՛ս **Ованнисян Р.**, նշվ. աշխ., էջ 531-532:

[216] Տե՛ս «Геноцид армян», документы и комментарий, т. 1, М., 2002, с. 501, նաև՝ **Шпилькова В.**, Империалистическая политика США в отношении Турции (1914-1920 гг.), М., 1960, с. 123, **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Եր., 2016, էջ 367:

[217] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 231:

Նշենք նաև, որ դեռ 1919 թ. մայիսին Հայաստանի մանդատը ԱՄՆ-ի կողմից ստանձնելու կապակցությամբ Արևմտահայ Ազգային Ա համագումարը կյանքի էր կոչել մի հանձնախումբ՝ Ա. Մանդելշտամ, Մ. Աճեմյան և Հ. Օհանջանյան կազմով, որը Հայաստանի ապագա մանդատի վերաբերյալ կազմել էր 8 հոդվածներից բաղկացած նախագիծ՝ համապատասխան իրավարարություններով ու պարտավորություններով[218]:

Ինչպես Լոնդոնի, այնպես էլ Սան Ռեմոյի խորհրդաժողովներում քննարկվել էին նաև Հայաստանի զինված ուժերի, զենք և հանդերձանք հատկացնելու, սեփական ուժերով իրեն պաշտպանելու հնարավորության հարցերը և այլն: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջը կարծում էր, որ Հայաստանի պաշտպանության համար կպահանջվի 4 դիվիզիա[219]: Հայկական պատվիրակներ Ա. Ահարոնյանը և Պողոս Նուբարը դաշնակիցներին հավաստիացրին, որ Հայաստանի բանակը անհրաժեշտ չափով զինվելու և հանդերձավորվելու դեպքում կկարողա պաշտպանել իր պետությունը: ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանը հույս հայտնեց, որ հայկական բանակի թիվը կհասնի 40 հազարի[220]: Ռազմատեխնիկական առումով Հայաստանի պաշտպանության համար Անգլիայի կառավարությունը ապրիլի կեսերին տրամադրեց ավելի քան 1 մլն ֆունտ ստերլինգ վարկ՝ զենք, զինամթերք և հանդերձանք գնելու համար: Այդ վարկով գնվեց 25 հազար հրացան, 50 մլն փամփուշտ, 400 գնդացիր, 12 դաշտային հրանոթ, 32

---

[218] Տե՛ս **Փափազեան Վ.**, Իմ յուշերը, հ. 3, Գահիրէ, 1957, էջ 311-315:
[219] Տե՛ս «Геноцид армян», с. 469.
[220] Տե՛ս **Ահարոնեան Ա.**, Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լօզան (քաղաքական օրագիր), Պոսթըն, 1943, էջ 38, նաև 73-74:

լեռնային հրանոթ, 40 հազար զինվորական համազգեստ և այլ օժանդակ պարագաներ[221]:

1920 թ. ամռանը Վրաստանով Հայաստան փոխադրված այդ օգնության մեկ քառորդից ավելին (25–27 %) մաքսատուրքի անվան տակ, կարելի է ասել, բռնագրավում է Վրաստանը: Նույն կերպ, վրաց կառավարությունը խոչընդոտներ էր հարուցում իր տարածքով որպես օգնություն Հայաստան փոխադրվող մյուս բեռների՝ պարենի, նավթի և այլնի նկատմամբ՝ պահանջելով դրանց մի զգալի մասը: Մերձավոր Արևելքում Օգնության ամերիկյան կոմիտեի (Ամերկոմի) նպաստամատույցի հարցերով վարչության գլխավոր տնօրեն **Հերբերտ Հուվերի** տեղեկացմամբ՝ վրացական իշխանությունները պահանջում էին Բաթումից գնացքով Հայաստան փոխադրվող պարենի մինչև կեսը, այն դեպքում, երբ 1919 թ. գարնան-ամռանը Վրաստանում սովի խնդիր չի եղել, իսկ Հայաստանում վիճակը սոսկալի է եղել. մարդիկ անգամ դիակներ են կերել[222]:

Այդուհանդերձ, թեև Դաշնակիցները Հայաստանի պաշտպանության համար զորք չուղարկեցին, սակայն հատկացրեցին բավարար քանակությամբ զենք և զինամթերք, որով պետք է լուծվեին երկրի առաջ ծառացած ռազմաքաղաքական խնդիրները: Հավելենք նաև, որ Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջի վկայությամբ՝ Հայաստանին օժանդակելու և Մեծ Հայաստան ստեղծելու առանձնապես մեծ ջատագովներից է եղել իր կառավարության արտաքին գործոց նախարար լորդ Ջ. Քերզոնը[223]:

---

221 Տե՛ս **Գալոյան Գ.**, Հայաստանը և Մեծ տերությունները (1917-1923), Եր., 1999, էջ 187-188, նաև՝ **Ованнисян Р.**, նշվ. աշխ., էջ 542:

222 Տե՛ս «Армения в документах США», с. 159 и 164:

223 Տե՛ս **Джордж Л.**, նշվ. աշխ., էջ 461:

Այս ամենով հանդերձ, բաց էր մնում գլխավոր հարցերից մեկը՝ Հայաստանի մանդատի հարցը: Պետք է ասել, որ դեռ 1919 թ. սեպտեմբերից տեղեկություններ կային, որ Ամերիկան Հայաստանի մանդատը չի ընդունելու: Այդ մասին իր քաղաքական օրագրում ակնարկում է Ա. Ահարոնյանը[224]: Նա նույն միտքն է հայտնում կաթողիկոսին ուղղված 1920 թ. փետրվարի 13-ի թվակիր նամակում՝ հրաժարման պատճառներ համարելով տերությունների միջև առկա մրցակցությունը և ԱՄՆ-ի ներքաղաքական հանգամանքները[225]: Հարկ է նշել, որ տակավին 1919 թ. նոյեմբերին ԱՄՆ Սենատի հանրապետական մեծամասնությունը, դեմոկրատ նախագահ Վ. Վիլսոնի կամքին հակառակ, չվավերացրեց ո՛չ Գերմանիայի հետ Վերսալի պայմանագիրը, ո՛չ Ազգերի լիգայի Կանոնադրությունը, ո՛չ էլ թույլատրեց ԱՄՆ-ին՝ անդամակցելու Ազգերի լիգային, իսկ ԱՄՆ-ի պատվիրակությանը ետ կանչվեց Փարիզից[226]: Այդ նույն ուղղությամբ նախագահի 1920 թ. մարտի 19-ին ձեռնարկած երկրորդ փորձը, 2/3 ձայներով անցկացնելու իր առաջարկը, կրկին ձախողվեց, ինչը ծանր հարված հասցրեց առանց այն էլ հիվանդ նախագահին[227]:

Այնուամենայնիվ, ի պատասխան Սան Ռեմոյի խորհրդաժողովից ապրիլի 25-ին իրեն հղված դիմումի, նախագահ Վ. Վիլսոնը մայիսի 24-ին ուղերձով դիմեց Կոնգրեսին՝ լիազորելու իրեն, որպեսզի ընդունի Հայաստանի մանդատը[228]:

---

[224] Տե՛ս **Ահարոնեան Ա.**, նշվ. աշխ., էջ 29 և 31:

[225] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 215, թ. 1:

[226] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 3, Եր., 2015, էջ 88:

[227] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, նշվ. աշխ., հ. 4, Եր., 2016, էջ 12:

[228] Տե՛ս **Ованнисян Р.**, նշվ. աշխ., էջ 686, նաև՝ **Գալոյան Գ.**, նշվ.

1920 թ. մայիսի 27-ին ԱՄՆ-ի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը (նախագահ՝ ընդդիմության ղեկավար հանրապետական **Հենրի Լոջ**) 11 դեմ, 4 կողմ ձայներով մերժում է Հայաստանի մանդատը ընդունելու Վ. Վիլսոնի առաջարկը[229]: Նկատենք նաև, որ Կոնգրեսի քննարկումների ժամանակ նախագահ Վիլսոնը հարցում է արել ռազմական դեպարտամենտին, թե Հայաստանի մանդատի իրականացման համար որքա՞ն զորք կպահանջվի, վերջինս (ի տարբերություն Ջ. Հարբորդի զեկուցմամբ ներկայացված 59 հազարի) պատասխանել է՝ 27 հազար: Սակայն մեղմացուցիչ այս փաստարկը չի օգնել համոզելու Սենատի հանձնաժողովին՝ ընդունելու Վ. Վիլսոնի առաջարկը: Դրանից հետո նախագահի առաջարկը, հանձնաժողովի բացասական կարծիքով, արագացված կերպով՝ առանց նախնական լսումների և ուսումնասիրությունների, ներկայացվեց Կոնգրեսի նիստին: Այն սկսվել է մայիսի 29-ին և ավարտվել հունիսի 1-ի՝ վերջնական քվեարկությամբ[230]:

Նշենք, որ Սենատի հանրապետական մեծամասնության առաջնորդ Հ. Լոջը ավելի վաղ՝ 1919 թ. գարնանը, շատ բարյացակամ էր տրամադրված միացյալ հայկական պետության գաղափարի նկատմամբ և վստահություն էր հայտնել, որ, ամերիկյան հայանպաստ հասարակական կարծիքի պայմաններում, հնարավոր կլինի ընդունել Հայաստանի մանդատը: Սակայն պատմաբան Ռ. Հովհաննիսյանի պարզաբանմամբ՝ Վերսալի պայմանագրի ստորագրումից հետո Հ. Լոջը, տեսնելով Մեծ Բրիտա-

---

աշխ., էջ 224:

[229] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 176, նաև՝ **Шпилькова В.**, նշվ. աշխ., էջ 127:

[230] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Եր., 2016, էջ 18-19:

նիայի ու Ֆրանսիայի քաղաքական ընչաքաղց վարքագիծը, կտրուկ փոխել է իր դիրքորոշումը Հայաստանի մանդատը ստանձնելու հարցում[231]: Փաստենք նաև, որ սենատորների մի մասը հակված է եղել պաշտպանելու ոչ թե առանձին անկախ Հայաստանի, այլ Մորգենթաուի առաջարկած միասնական՝ Կ. Պոլսի, Անատոլիայի և Հայաստանի մանդատի առաջարկը[232]:

Վ. Վիլսոնի արտաքին քաղաքական գծին դեմ էր արտահայտվել անգամ պետքարտուղար **Ռոբերտ Լանսինգը**, որին 1920 թ. փետրվարից փոխարինել էր **Բեյնբրիջ Քոլբին**[233]: Պատճառաբանությունները հետևյալներն էին. ա. Հայաստանը Ազգերի լիգայի անդամ չէ և նրա սահմանները դեռևս հստակ չեն, բ. մանդատը չընդունելու հիմքերից է եղել գեներալ Ջ. Հարբորդի ներկայացրած 13 հատորանոց, հիմնականում ոչ հայա-նպաստ, զեկուցագիրը՝ համապատասխան տեղեկագրերով, գ. ԱՄՆ-ը չի ստորագրել Վերսալի պայմանագիրը և Ազգերի լիգայի անդամ չէ[234], ուստի նա հանձնառու չէ ստանձնելու որևէ նորակազմ պետության հոգատարությունը, դ. ընդունել Հայաստանի մանդատը՝ կնշանակեր ոտք դնել Հին մայրցամաք, ինչը հակասում էր ԱՄՆ-ի երբեմնի նախագահ **Ջեյմս Մոնրոյի** հայտնի դոկտրինի (1823 թ. դեկտեմբերի 2-ի)

---

[231] Տե՛ս **Ованнисян Р.**, նշվ. աշխ., էջ 260-264:

[232] Տե՛ս նույն տեղում, էջ 290:

[233] **Յակոբեան Ա.**, Հայաստանի մանդատի խնդիրը եւ ԱՄՆ-ը 1918-1920 թթ., (տե՛ս «Դրօշակ», Եր., 2002 (հունվար), թիվ 1, էջ 59):

[234] Ինչպես արդեն նշվել է, ԱՄՆ-ի Սենատը 1919 թ. նոյեմբերի 19-ին, Վ. Վիլսոնի ցանկությանը հակառակ, 51 դեմ և 41 կողմ ձայնով չվավերացրեց Վերսալի հաշտության պայմանագիրը, մերժեց երկրի մասնակցությունը Ազգերի լիգային, որին ԱՄՆ-ը այդպես էլ չանդամակցեց (տե՛ս История дипломатии, т. 3, М., 1965., с. 155):

սկզբունքներին[235], ե. Հայաստանի մանդատը ստանձնելու դեպքում ԱՄՆ-ը պարտավոր պիտի լիներ այնտեղ պահել մոտ 60 հազարանոց բանակ՝ 275 մլն դոլար տարեկան ծախսով և, վերջապես, զ. Կարմիր բանակի զորամասերի հայտնվելը Հայաստանի սահմաններին մանդատը ստանձնած ԱՄՆ-ի համար նշանակում էր, ըստ էության, պատերազմի մարտահրավեր Խորհրդային Ռուսաստանին և այլն: Արդյունքում, նախագահ Վ. Վիլսոնի կամքին հակառակ, ով 1919 թ. հոկտեմբերի 2-ից ստացել էր գլխուղեղի կաթված և ամիսներ շարունակ գտնվում էր կիսաանկողնային վիճակում, ԱՄՆ-ի Սենատը ձայների մեծամասնությամբ մերժում է ընդունել Միացյալ Հայաստանի մանդատը: Լլոյդ Ջորջն իր հուշերում պնդում է, որ, այնուամենայնիվ, մեծ ցանկության դեպքում նախագահ Վ. Վիլսոնը կարող էր ներգործել Հանրապետական կուսակցության առաջնորդների վրա՝ պաշտպանելու համար Հայաստանի մանդատը[236]: Կարելի է ասել՝ ամեն առումով գերիզոր ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատից հրաժարումն արդեն կանխորոշում էր Միացյալ Հայաստանի ճակատագրի ոչ հայանպաստ հանգուցալուծումը:

---

[235] Ջ. Մոնրոյի դոկտրինայի իմաստն այն էր, որ Ամերիկան չպետք է խառնվի Հին մայրցամաքի, այսինքն՝ Եվրոպայի հիմնախնդիրներին, և դրա փոխարեն զարգացվում էր ամերիկանիզմի, այն է՝ «Ամերիկան՝ ամերիկացիների համար» կարգախոսը: Հենց այդ նկատառումով ԱՄՆ-ը չմտավ Ազգերի լիգա, քանզի նրա կանոնադրության 10-րդ հոդվածը նախատեսում էր, որ Լիգայի անդամ երկիրը, անկախ իր կամքից, պարտավոր է պաշտպանել անդամ երկրի անկախությունը արտաքին ներխուժումից (ագրեսիայից): Ամերիկացիները կարծում էին, որ դա անհամատեղելի է իրենց շահերի հետ, (տե՛ս Бюллетень НКИД, Москва, 7 декабря 1920 г., N 48, с. 26-27):

[236] Տե՛ս **Джордж Л.**, նշվ. աշխ., էջ 395:

Վավերագիր աղբյուրներում և պատմագիտական գրականության մեջ չկան հստակ տվյալներ Սենատի քվեարկության արդյունքների վերաբերյալ: Ջորավար Գ. Ղորղանյանի հաղորդած տվյալներով՝ «մայիսի 31-ին ծերակույտը 52 քվեով ընդդեմ 23-ի (21-ը՝ քվեարկության չի մասնակցել) մերժեց ընդունել Հայաստանի հոգատարությունը»[237]: Մեկ այլ տվյալով՝ «հունիսի 5-ին Սենատի 52 ձայնից՝ 33-ը դեմ քվեարկելով՝ մերժում է ընդունել Հայաստանի մանդատը»[238]: Պատմաբան Գ. Գալոյանի ներկայացրած տվյալներով՝ Հայաստանի մանդատը ստանձնելուն կողմ են քվեարկել 34 սենատորներ, դեմ՝ 43, քվեարկությանը չեն մասնակցել 19-ը[239]: Պատմաբան Գ. Մախմուրյանի հայտնած տվյալներով՝ ԱՄՆ-ի Սենատը՝ դեմ՝ 53, կողմ՝ 23, ձեռնպահ՝ 21 ձայներով մերժել է Հայաստանի մանդատը[240]: Ինչպես տեսնում ենք, Սենատի քվեարկության ստույգ օրվա և արդյունքների վերաբերյալ չկա միասնական տեսակետ:

Հարկ է նշել, որ պատմագիտական գրականության մեջ ամերիկյան Սենատում Հայաստանի մանդատի շուրջ քվեարկության հարցում առկա շփոթի պատճառն այն է, որ որոշ հեղինակներ Սենատի քննարկումների ժամանակ առանձին սենատորների (Հ. Հիչքոք[241], Ջ. Ռոբինսոն, Վ. Քինգ և այլք)

---

[237]**Ղորղանեան Գ.**, Հայաստանի Հանրապետութիւնը և պետութիւնները, (տե՛ս «ՎԷՄ», Պարիզ, 1934, թիվ Ե, էջ 40):

[238] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 133:

[239] Տե՛ս **Գալոյան Գ.**, Հայաստանը և Մեծ տերությունները (1917-1923 թթ.), Եր., 1999, էջ 229:

[240] Տե՛ս **Махмурян Г.**, Лига Нации, Армянский вопрос и Республика Армения, Ер., 1999, с. 121.

[241] Օրինակ՝ միջանկյալ քվեարկության ժամանակ Հիլբերտ Հիչքոքի առաջարկած հայանպաստ առաջարկը տապալվել է՝ 34 կողմ, 43 դեմ

ներկայացրած խմբագրական բնույթի ուղղումների, հարցը հետաձգելու կամ կոմիտե վերադարձնելու ու համանման առաջարկներին առնչվող քվեարկությունները ներկայացրել են՝ իբրև Հայաստանի մանդատը մերժելու վերաբերյալ վերջնական քվեարկություն: Ճշմարտությունն այն է, որ չորս օր տևած քննարկումներից հետո՝ **հունիսի 1-ին,** ի վերջո քվեարկության է դրվել հանրապետական սենատոր, ընդդիմության ղեկավար Հ. Լոջի ներկայացրած սկզբնական բանաձևը հետևյալ ձևակերպմամբ՝ «**Հայաստանի մանդատն ընդունելու վերաբերյալ նախագահի հարցումը հարգանքով մերժել**»[242]: Վերջնական քվեարկության արդյունքն է՝ **կողմ՝ 52, դեմ՝ 23, ձեռնպահ՝ 21**:

Այսպիսով՝ իրականությունն այն է, որ, ձայների որոշ տարբերություններով հանդերձ, Սենատը ձայների մեծամասնությամբ միանշանակ մերժել է ընդունել Հայաստանի մանդատը, իսկ մերժման ստույգ ամսաթիվը համարվում է **հունիսի 1-ը**: Արձանագրենք նաև, որ Հայաստանի մանդատն ընդունելուց հրաժարվում են նաև Ազգերի լիգան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան և այլ երկրներ: Նշենք նաև, որ, թեև ամերիկյան Կոնգրեսը քվեարկությամբ չընդունեց Հայաստանի մանդատը, սակայն չի արգելել, որ նախագահ Վ. Վիլսոնն անցկացնի հայ-թուրքական բաժանարար սահմանագիծը: Բացի այդ՝ ԱՄՆ-ի Կոնգրեսի երկու՝ Հանրապետական և Դեմոկրատական կուսակցությունները պատրաստակամություն են հայտնել օգնել Հայաստանին ֆինանսատնտեսական առումով:

և 19 ձեռնպահ կամ՝ չքվեարկած ձայներով, (տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Եր., 2016, էջ 26):

[242] **Ованнисян Р.**, նշվ. աշխ., էջ 699:

* * *





Ի վերջո՝ **1920 թ. օգոստոսի 10-ին** Փարիզի արվարձան **Սևրում՝** հախճապակու թանգարանի դահլիճում, Խաղաղության վեհաժողովի նախագահ, Ֆրանսիայի վարչապետ Ալ. Միլերանի նախագահությամբ հանդիսավոր պայմաններում կնքվեց երկար սպասված հաշտության պայմանագիրը: Դաշնակից 12 երկրների ու Թուրքիայի պատվիրակության ստորագրությունների կողքին ոսկյա գրիչով իր ստորագրությունը դրեց նաև ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանը[243]:

---

[243] Տեղեկացնենք, որ սեպտեմբերի 3-ին Փարիզից Էջմիածին՝ Կաթողիկոսին ուղղված նամակում Պողոս Նուբար փաշան նշում է, որ Խաղաղության վեհաժողովը սկզբում որոշել էր, որ թուրքահայոց անունից ինքը ևս պետք է ստորագրեր դաշնագիրը և ստորագրության հանդեսին հրավիրված էր: Սակայն վերջին պահին օսմանյան պատվիրակությունը բողոքեց՝ առարկելով, թե նա կազմակերպված պետություն չի ներկայացնում, այլ սոսկ թրքահայությանը: Այդ պատճառով Գերագույն խորհուրդը հարմար գտավ, որ ինքը չստորագրի, (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 224, թ. 2ա):

Ամենից առաջ սա նշանակում էր, որ պայմանագիրը ստորագրած բոլոր երկրները՝ Բրիտանիայի կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Բելգիան, Չեխոսլովակիան, Հունաստանը, Հեջազը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբո-Խորվաթա-Սլովենական թագավորությունը (Հարավսլավիան), ինչպես նաև Թուրքիան իրավաբանորեն ճանաչում են Միացյալ և Անկախ Հայաստանը: Արձանագրենք, որ Սևրի պայմանագիրը համարվում էր Փարիզի խաղաղության վեհաժողովի՝ կնքված վերջին պայմանագիրը, որին նախորդել էին ևս չորսը՝ Գերմանիայի հետ՝ Վերսալի, Ավստրիայի հետ՝ Սեն-Ժերմենի, Հունգարիայի հետ՝ Թրիանոնի և Բուլղարիայի հետ՝ Նեյիի պայմանագրերը:

Օգոստոսի 10-ին Ա. Ահարոնյանը ուղիղ գծով հեռագրում է. «Միացյալ Հայաստանի անկախությունը նվիրագործող դաշնագիրը այսօր, օգոստոսի 10-ին ստորագրեցի ես, դաշնակիցների հետ միասին, Սևրում: Այս փառավոր ակտը, որ ճանաչում է հայ ժողովրդի ազատությունը, մեր սրտերը կլցնի հրճվանքով և կաթոգին երախտագիտությամբ հանդեպ բոլորի, որոնք պարտքով ընկան հայրենիքի համար»[244]: Ա. Ահարոնյանը օգոստոսի 10-ին գրառում է կատարել նաև իր քաղաքական օրագրում. «Կեանքիս ամենաերջանիկ օրն է այս,- Երեսուն տարուայ պայքարս, բողոքս, տառապանքս ու յոյսերս պսակվեցան փառավոր հաջողութեամբ: Թյուրքական դաշնագիրն ստորագրուեց և բոլոր Դաշնակից պետութիւնների Համաժողովն այսպիսով հռչակեց Միացեալ, Անկախ, Ազատ Հայաստանը Սեւրի սրահում»[245]:

Պայմանագրի ստորագրումից մի քանի օր անց՝ օգոստոսի

---

[244] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 158, թ. 3:

[245] **Ահարոնեան Ա.**, նշվ. աշխ., էջ 88:

15-ին, ի նշանավորումն այդ մեծ տոնի, Փարիզի հայկական եկեղեցում անցկացվել է տոնախմբություն, փառաբանության նիստ և տրվել գոհաբանական աղոթք[246]: Պատմական այդ նշանակալի իրադարձության առթիվ Հայաստանի տարբեր շրջաններից և քաղաքներից բազմաթիվ շնորհավորական հեռագրեր են հասցեագրվել կառավարությանը՝ Սարիղամիշից, Կարսից, Ալեքսանդրապոլից, Իգդիրից, Էջմիածնից, Բասարգեչարից, Դիլիջանից, Ղամարլուից: Դրանց հեղինակներն էին հասարակական կազմակերպություններ, զինվորականներ, անհատ մարդիկ, աշակերտներ: Հեռագիր է ստացվել բարեկամ եզդի ժողովրդի անունից՝ պատգամավոր Յուսուֆ Թեմուրյանի ստորագրությամբ: Այդ նվիրական օրվա կապակցությամբ նախարարապետ Հ. Օհանջանյանին շնորհավորել է Ա. Չոպանյանը, ազգային շահերով ապրող շատ գործիչներ ու մտավորականներ[247]:

* * *

Արդ, ըստ էության, խոսելով Սևրի պայմանագրի մասին, հարկ է արձանագրել, որ նրա 3-րդ մասի, 6-րդ՝ «**Հայաստան**» բաժինը 88-93 հոդվածներով ամբողջությամբ վերաբերում էր Միացյալ Հայաստանին: Պայմանագրի այդ վեց հոդվածները հիմնականում բովանդակում էին հետևյալ պայմանները.

88-րդ հոդվածով՝ «Թուրքիան հայտարարում է, որ ինքը ճանաչում է Հայաստանը իբրև **ազատ** և **անկախ** պետություն, ինչպես արդեն արել են Դաշնակից տերությունները»:

---

[246] Տե՛ս **Նասիպեան Ա.**, նշվ. աշխ., էջ 192:

[247] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 557, թ. 23-59, նաև՝ ֆ. 282, ց. 1, գ. 14, թ.1:



Հաջորդ՝ 89-րդ հոդվածում, խոսվում էր Միացյալ Հայաստանի տարածքային-սահմանային հարցերի մասին: Համաձայն դրա՝ Հայաստանին էին կցվում Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Տրապիզոնի նահանգները՝ առանց ոչ հայաբնակ ծայրագավառների, ելքով դեպի ծով: Ընդ որում՝ ինչպես արդեն որոշվել էր Սան Ռեմոյի խորհրդաժողովում, հայ-թուրքական պետական սահմանի գծման (սահմանագծման) աշխատանքներն իրականացնելու էր ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը, որի համար նա տվել էր իր համաձայնությունը: Հայ-թուրքական սահմանները Վիլսոնը պետք է գծեր այն հաշվով, որպեսզի բավարարվեին հայերի օրինական պահանջները, և ապահովվեր Միացյալ Հայաստանի ազատ և հարմար ելքը դեպի ծով:

Այդ գործառույթը նախագահն իրականցրեց 1920 թ. **նոյեմբերի 22-ին** ստորագրած **Իրավարար** (**Arbitrage**) վճռով, որով քարեզի վրա գծվեց Հայաստանը և Թուրքիան իրարից տարանջատող պետական սահմանը՝ համապատասխան մեկնաբանությամբ: Այդ նշանակում էր 70 հազար քառ. կմ կազմող

Հայաստանի Հանրապետությանը միացվելու էին վերոնշյալ արևմտահայ 4 նահանգները ոչ ամբողջությամբ, առանց ծայրագավառների՝ ընդամենը 90 հազար քառ. կմ՝ ելքով դեպի Սև ծով[248]: Արդյունքում՝ պայմանագրով արևելահայ և արևմտահայ երկու հատվածներից կազմված Միացյալ Հայաստանի ընդհանուր տարածքը կազմելու էր ավելի քան 160 հազար քառ. կմ[249]:

Ավելորդ չէ նշելը, որ Հայաստանի՝ Ազգերի լիգային անդամակցության ենթահանձնաժողովներում 1920 թ. նոյեմբերի վերջերին տեղի ունեցած քննարկումների ընթացքում ամրագրվել է, որ Վիլսոնի վճռով Հայաստանի տարածքը կարող է 70.551 քառ. կմ-ից ընդարձակվել ու դառնալ ընդհուպ մինչև 214.000 քառ. կմ[250]:

Արձանագրենք ևս մեկ փաստ. Ազգային պատվիրակության՝ 1922 թ. սեպտեմբերին կազմած մի տեղեկանքում, Սևրի պայմանագրով ու Վ. Վիլսոնի գծած հայ-թուրքական սահմանով, Թուրքահայաստանի տարածքը նշված է մոտավորապես 140 հազար քառ. կմ, որը Կովկասահայաստանի համար պահանջված 60 հազար քառ. կմ տարածքի հետ միասին **Միացյալ Հայաստանի ամբողջական տարածքը** վիլսոնյան սահմաններով կազմում էր 200 հազար քառ. կմ[251]:

Այնուհետև, պայմանագրի հոդված 90-ով՝ սահմանվում էր, որ հայ-թուրքական սահմանագիծը որոշելուց հետո Թուրքիան հրաժարվում է Հայաստանի սուվենությանը հանձնվող տարածքների նկատմամբ բոլոր տեսակի իրավունքներից և իրա-

---

248 Տե՛ս **Ադոնց Ն.**, Հայկական հարց, հ. Ա, Եր., 1996, էջ 171:

249 Տե՛ս **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ Դատը, Եր., 1991, էջ 214:

250 Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Եր., 2016, էջ 386:

251 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1422, թ. 11:

վահիմունքներից: Բացի այդ՝ սահմանվում էր, որ իրավապայմանագրային մյուս հարցերը՝ սահմանագծին հարող թուրքական տարածքների ապառազմականացման, ֆինանսական պարտավորությունների, հիշյալ տարածքների փոխանցման կապակցությամբ ծագող նոր խնդիրները, որ ներկա պայմանագրով չեն հարթված, կկարգավորվեն հետագա կոնվենցիաներով:

Հոդված 91-ով՝ նախատեսվում էր, որ 89-րդ հոդվածով Հայաստանին հանձնվող տարածքները Սահմանագծող հանձնաժողովը կստեղծվի 3 ամսվա ընթացքում, որն էլ տեղում կիրականացնի հիշյալ (89-րդ) հոդվածով նախատեսված որոշումը:

Քանի որ վերոնշյալ հոդվածներում խոսվում էր միայն հայ-թուրքական սահմանային ու տարածքային խնդիրների կարգավորման մասին, և խոսք չկար Հայաստանի մյուս երկու հարևանների՝ Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմանների մասին, ուստի հոդված 92-ը ամբողջությամբ վերաբերում էր այդ հարցին: Նրանում ասվում էր, որ երեք շահագրգռված պետությունները կարող են (իրավասու են) իրենց պետությունների սահմանները որոշել փոխադարձ համաձայնությամբ: Իսկ եթե նրանց չհաջողվի համաձայնության գալ, ապա դաշնակից Գլխավոր տերություններն իրավասու են տեղում իրականացնելու սահմանազատման աշխատանքները:

Եվ վերջին՝ հոդված 93-ում խոսվում էր Հայաստանում քաղաքացիության, ազգային փոքրամասնությունների (ցեղային, լեզվական, կրոնական) շահերի պաշտպանության, տրանզիտի, առևտրի ազատության և այլնի վերաբերյալ Հայաստանի միջազգային պայմանագրային պարտավորությունների կատարման հանձառնության մասին[252]:

---

[252] Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստա-

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է արձանագրել, որ միանգամայն ընդունելի էր Սևրի պայմանագրով ուրվագծվելիք Միացյալ Հայաստանի նույնիսկ ցանկացած տարբերակ: Այդ նպատակի իրագործման ճանապարհին, անշուշտ, շատ ցանկալի կլիներ հատկապես հզոր ու հարուստ ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ստանձնումը: Դժվար չէ նկատել, որ նման պարագայում շատ հիմնավոր ու առարկայական կլիներ Հայաստանի մասով Սևրի պայմանագրի գործադրումը, մանավանդ, որ հենց նրա նախագահ Վ. Վիլսոնն էլ գծեց Միացյալ Հայաստանի հայ-թուրքական սահմանը:

* * *

ՀՀ-ն ավելի վաղ էր պատրաստվում էր անդամագրվել Ազգերի լիգային: Այդ նպատակով՝ 1920 թ. մայիսի 13-ին Ա. Ահարոնյանը դիմել էր Ազգերի լիգայի Խորհրդին՝ Հայաստանի անդամակցության խնդրանքով: Լիգայի գլխավոր քարտուղար, անգլիացի դիվանագետ Ջեյմս Էրիկ Դրամմոնդը նույն օրն իսկ հայտնում է Ահարոնյանին, որ նոր անդամի ընդունումը կախված է ոչ թե Խորհրդի, այլ Լիգայի բոլոր անդամ երկրների Համաժողովի (Ասամբլեայի) վճռից: Ուստի դրա համար Ահարոնյանն իր կառավարության անունից պետք է պաշտոնական դիմում ներկայացներ Համաժողովին[253]: Հունիսի 21-ին նախարարապետ Հ. Օհանջանյանը պաշտոնապես դիմում է Ազգերի լիգայի նախագահին՝ Հայաստանի անդամակցության հարցով[254]:

թղթերում», էջ 676-677, նաև՝ **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ Դատը, Եր., 1991, էջ 211-212:

[253] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2c, գ. 37, թ. 10:

[254] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 557, թ. 78:

Քանի որ Սևրի հաշտության պայմանագրով, ըստ էության, ճանաչվել էր Հայաստանի անկախությունը, ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանը սեպտեմբերի 25-ին նամակով կրկին դիմում է Ազգերի լիգայի նախագահին՝ խնդրելով Հայաստանն ընդունել նրա շարքերը՝ որպես իրավահավասար անդամ: Այդ կապակցությամբ հոկտեմբերի 14-ին Ահարոնյանը Հայաստանի կառավարությանը տեղեկացնում է, որ առաջիկա նոյեմբերի 15-ին Ժնևում գումարվելիք Ազգերի լիգայի համաժողովում պիտի լսվի Հայաստանի անդամակցության հարցը: Դրա համար նա կառավարությունից պահանջում էր ներկայացնել Հայաստանի անկախության հռչակման և ճանաչման վերաբերող փաստաթղթեր: Ա. Ահարոնյանը նույնիսկ Ազգերի լիգայում իբրև Հայաստանի ներկայացուցիչ առաջարկել է Գ. Նորատունկյանի թեկնածությունը, ով, ըստ Ահարոնյանի, հմուտ էր փորձառու միջազգային իրավունքի և դիվանագիտության մեջ[255]: Այդ օրերին (նոյեմբերի 29-ին) Վահան Փափազյանը, հավանաբար Հայաստանում ընթացող իրադարձություններին անտեղյակ, Փարիզից հայտնում էր վարչապետ Ս. Վրացյանին, որ «Հայաստանի Ազգերի լիգա ընդունվելու հարցը լուծվելու վրա է»[256]: Նախատեսվում էր 10 կամ 20 տարի տևողությամբ խնամատարություն: Սակայն մինչ կարվեին նախապատրաստական աշխատանքները՝ Լիգայի Համաժողովը գումարելու և Հայաստանի անդամակցության ու նյութական օգնության հարցերը քննելու, լուր ստացվեց, որ քեմալական Թուրքիան հարձակվել է Հայաստանի վրա:

Ինչ վերաբերում է հայ-թուրքական **սահմանագծման**

---

[255] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 93, թ. 3-4:
[256] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 557, թ. 181:

հարցին, ապա, ինչպես արդեն ասվել է, նախագահ Վ. Վիլսոնը, մայիսի 17-ին ընդունելով Գերագույն խորհրդի դիմումը, համապատասխան մասնագետներից հիմնում է սահմանագծման փորձագիտական հանձնախումբ, որն էլ ձեռնամուխ է լինում հայ-թուրքական սահմանագծման աշխատանքներին: Հանձնախումբը ղեկավարում էր պրոֆեսոր **Վիլյամ Վեսթերմանը**, ով եղել էր Փարիզում խաղաղության բանակցությունների ամերիկյան հանձնախմբի Արևմտյան Ասիայի բաժանմունքի պետը[257]: Սահմանները գծող հանձնախումբը, հաշվի առնելով ժողովրդագրական, բնակլիմայական, տնտեսական և ռազմագիտական գործոնները, ինչպես նաև Աշխարհամարտի տարիներին հայերի տեղահանությունների ու կոտորածների հանգամանքները, Միացյալ Հայաստանի սահմանի մեջ է ներառում Վանի և Բիթլիսի նահանգների երկու երրորդը, իսկ Էրզրումի և Տրապիզոնի նահանգների ավելի քան կեսը:

Թեև սահմանագծման աշխատանքներն ամբողջական զեկույցով, հավելվածներով ու քարտեզով արդեն **սեպտեմբերի 28-ին** ավարտվել և ներկայացվել էին Պետդեպարտամենտ, սակայն ինչ-ինչ նկատառումներով փաստաթուղթը նախագահին ներկայացվեց բավականին ուշացումով, որն էլ՝ ստորագրվեց **նոյեմբերի 22-ին**: Այդ օրը նախագահ Վ. Վիլսոնը ուղերձ է հղում Դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի նախագահին, որ ինքն անցկացրել է իրեն հանձնարարված հայ-թուրքական սահմանի արբիտրաժային (**Arbitral**) սահմանագիծը՝ համապատասխան քարտեզով, 2 օրինակից[258]: Նոյեմբերի 30-

---

[257] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստնի Հանրապետություն, հ. 4, Եր., 2016, էջ 35:

[258] Տե՛ս «Геноцид армян», документы и комментарий, т. 1, М., 2002,

ին այդ մասին իրազեկվում է նաև Ազգերի լիգային:

Փաստաթղթի հրապարակումը հետաձգվեց, որովհետև մտածեցին, որ Թուրքիայում և Հայաստանում ծավալվող ռազմաքաղաքական իրադարձությունների զարգացումը բնավ նպաստավոր չէ նախագահի կազմած քարտեզի և կից զեկույցի հրապարակման համար: Հայտնի է, որ ստեղծվել էր մի վիճակ, երբ թուրք ազգայնականները հաղթանակներ էին արձանագրում Հայաստանի, Փոքր Ասիայի (Անատոլիայի) և Թրակիայի ճակատներում, իսկ Հայաստանի Հանրապետությունը, պարտվելով թուրքերից, տարածքներ կորցնելով ու խորհրդայնանալով, հայտնվել էր անորոշության մեջ:

1920 թ. դեկտեմբերի 17-ին Մեծ Բրիտանիայի Ֆորին օֆիսի խնդրանքով իրավավար վճռի հրապարակումը որոշ ժամանակով հետաձգելուց հետո, այդուհանդերձ, այն հրատարակվում է 1921 թ. **հունվարի 2-ին**[259]: Ըստ այդ վճռի՝ Միացյալ Հայաստանի սահմանը սկսվում էր Սև ծովի ափից, Տրապիզոնից 50 մղոն (1 մղոնը՝ 1,6 կմ) արևմուտք՝ Տիրեբոլիի կետից փոքրինչ արևմուտք: Այդտեղից սահմանն իջնում էր հարավ այնպես, որ Երզնկան, որը գտնվում է Էրզրումից 100 մղոն հարավ-արևմուտք, մտնի Հայաստանի կազմի մեջ: Հայաստանի սահմանների մեջ էին ներառվում նաև Մուշը, Բիթլիսը և Վանը՝ ընդհուպ մինչև Իրանի և Ադրբեջանի սահմանները[260]:

---

c. 555-559. ԱՄՆ-ի նախագահի ստորագրությունը և ԱՄՆ-ի արծվակիր մեծ դրոշմակնիքը կրող քարտեզի հակառակ երեսին տրված է նախագահի հակիրճ զեկուցումը՝ համապատասխան քաղաքական մեկնաբանություններով ու գնահատականներով: Ամբողջ Իրավարար վճիռը համապատաս-խան քարտեզներով՝ կազմել է շուրջ 300 էջ:

[259] Տե՛ս նույն տեղում, էջ 229 և 618:

[260] Տե՛ս նույն տեղում, էջ 628: Ավելի հանգամանորեն՝ տե՛ս **Սահակյան**

Վիլսոնյան իրավարար վճռի կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ միջազգայնագետ, ՀՀ նախկին դեսպան Ա. Պապյանը, հենվելով միջազգային իրավունքի և մասնավորապես Հաագայի կոնվենցիայի (1907 թ.) 81-րդ հոդվածի վրա, կարծում է, որ վիլսոնյան իրավարար վճիռը վերջնական է և պարտադիր է կատարման համար. այն չունի ժամկետային սահմանափակում (անժամանցելի է), և նրա կագավիճակը կախում չունի վճռի հետագա ճակատագրից: Ավելին՝ նա նույնիսկ հարց է բարձրացնում, որ Հայաստանը, որպես ՄԱԿ-ի անդամ երկիր, կարող է ՄԱԿ-ի միջազգային դատարանի միջոցով հավաստել Վիլսոնի իրավարար վճռի վավերականությունը և դրանով իսկ վերահաստատել իր տիտղոսը իրավարար վճռով Հայաստանին հատկացված տարածքի վրա[261]: Իսկ ցեղասպանագետ և միջազգայնագետ Ա. Մարուքյանի դիտարկմամբ՝ Վ. Վիլսոնի Իրավարար վճիռը, որպես միջազգային իրավական փաստաթուղթ, անկախ Սևրի պայմանագրի վավերացված լինելուց լինելու հանգամանքից, կողմերի համար պարտադիր է և վերջնական: Բացի այդ՝ այն հիմնավոր փաստարկ ու կռվան է ցեղասպանություն իրականացրած օսմանյան Թուրքիայի իրավահաջորդ հանդիսացող ներկայիս Թուրքիայի Հանրապետության նկատմամբ հայց ներկայացնելու, քաղաքական պատասխանատվության ենթարկելու և համարժեք փոխհատուցում պահանջելու համար[262]:

Տ., ԱՄՆ նախագահ Վիլսոնի «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանատման որոշումը» որպես գործող միջազգային վավերագիր, Եր., 2012, էջ 27-34:

[261] Տե՛ս **Պապյան Ա.**, Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները, Եր., 2007, էջ 6-7:

[262] Տե՛ս **Մարուքյան Ա.**, Հայոց ցեղասպանության հետևանքների

Այսպիսով՝ Սևրի պայմանագիրը և նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի միջազգային պայմանագրային ու արբիտրաժային ձևակերպումներն էին, որոնք կոչված էին միջազգային ամենաբարձր մակարդակով լուծում տալու Հայկական հարցին կամ Հայ Դատին: Սևրի դաշնագիրը և Վ. Վիլսոնի անբեկանելի Իրավարար վճիռը հայ ժողովրդի դարավոր պայքարի, օրինական պահանջների միջազգային ճանաչման աներկբա իրողություններ են, որոնք չունեն վաղեմության ժամկետ և կշարունակեն մնալ ուժի մեջ՝ որպես հայրենատիրության իրավական փաստեր ու վավերագրեր, որպես հայ ժողովրդի պայքարի ու հաղթանակի խորհրդանշաններ:

14. ՀԱՅԱՍՏԱՆԸ «ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՄՈՒՐՃԻ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱԼԻ» ՄԻՋԵՎ

Ցավոք, տարածաշրջանում ծավալվող հետագա պատմաքաղաքական դեպքերն ու իրադարձությունները Հայաստանի և հայ ժողովրդի համար այնպիսի աննպաստ ընթացք ունեցան, որ Սևրի պայմանագրով և Վ. Վիլսոնի իրավարար վճռով պաշտոնապես ճանաչված հայ ժողովրդի պատմական իրավունքն իր պատմական Հայրենիքի մի զգալի հատված վրա Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան ստեղծելու վերաբերյալ մնաց թղթի վրա և չկենսագործվեց: Հայաստանին վերադարձվող այդ նահանգները գտնվում էին քեմալական Թուրքիայի իշխանության տակ, և այդպես էլ չգտնվեց այն պետությունը, որը

հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., 2014, էջ 119-120:

պետք է ազատեր այդ հողերը և հանձներ հայերին, իսկ վերջիններս էլ անզոր էին սեփական ուժերով լուծել այդ խնդիրը: Սևրի պայմանագիրը ստորագրած, Հայաստանի դաշնակից համարվող պետությունները՝ Ֆրանսիան, Իտալիան, Անգլիան, հանձնառու չեղան կենսագործելու իրենց իսկ ստորագրած պայմանագիրը:

Արդեն 1920 թ. ապրիլ-մայիսից միջազգային ու տարածաշրջանային իրադրությունը կտրուկ փոխվել էր՝ ի վնաս հայության ու Հակական հարցի: ՀՀ զորական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի 1920 թ. փետրվարի 7-ի ամսաթվով ամփոփագրում կարդում ենք. «Ստացուած լուրերի համաձայն՝ թուրքերի և բոլշևիկների միջև կայացել է նոր համաձայնութիւն (դաշինք), որի համաձայն, ի հավատարմութիւն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի, մինչև Արփաչայը տրւում է Թուրքիային: Դրա դիմաց վերջիններս պարտաւորւում են ադրբեջանցիների հետ համատեղ զինուած ուժեր հատկացնել՝ կամաւորների (գեն. Ա. Դենիկինի՝ Ա. Հ.) դէմ կուելու համար: Բոլշևիկները զէնք են մատակարարում (մեր ժամանակներում ևս արդիական է՝ Ա. Հ.) ինչպէս Թուրքիային, այնպէս էլ՝ Ադրբեջանին»[263]:

Փաստենք, որ 1920 թ. ապրիլի վերջին Մոսկվա գործուղված՝ **Լ. Շանթի** գլխավորած ՀՀ կառավարական պատվիրակության խնդիրներից էր Խորհրդային Ռուսաստա-

[263] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 18:

նին ընդունել տալ Միացյալ Հայաստանի գաղափարը: Սակայն Գ. Չիչերինի և Լ. Կարախանի հետ սկսված բանակցությունները ձգձգվեցին և դրական արդյունք չտվեցին, թեև սկզբնական փուլում Չիչերինը կարծես կողմ էր Վանն ու Բիթլիսը Հայաստանի կազմի մեջ մտցնելուն՝ բացառելով Էրզրումը[264]: Սակայն դրությունը կտրուկ փոխվում է, երբ հուլիսին Մոսկվայում սկսվում են բանակցությունները Թուրքիայի արտաքին գործերի ժողկոմ Բեքիր Սամի բեյի գլխավորած պատվիրակության հետ: Հարկ է արձանագրել, որ հայ-ռուսական բանակցությունները փակուղի են մտնում ոչ միայն արևմտահայ նահանգների, այլև արևելահայ Արցախի, Սյունիքի ու Նախիջևանի պատկանելիության հարցերում ևս: Այս և այլ պատճառաբանություններով հուլիսի սկզբին հայ-ռուսական բանակցություններն ընդհատվում են՝ Երևանում վերսկսելու պայմանով:

Սկսած 1919 թ. կեսերից՝ Թուրքիայում դրության տերը երկրի խորքերում սկիզբ առած ազգայնական (milli-միլլի) զինված շարժումն էր՝ թուրք գեներալ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ: 1920 թ. ապրիլի վերջերից սկսված նամակագրությունից հետո Խորհրդային Ռուսաստանը, Վ. Լենինի գլխավորությամբ, առաջինը ճանաչեց Մ. Քեմալի գլխավորած Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) կառավարությունը[265]: Բոլշևիկ առաջնորդները կեղծ կարգախոսներով իրենց հեղափոխական հայտարարած քեմալականներին համարում էին մուսուլմանական Արևելքում «համաշխարհային սոցիալիստական հեղափոխութ-

---

[264] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Եր., 2016, էջ 62-63:

[265] Տե՛ս «Документы внешней политики СССР», М., 1958, т. 2, с. 554-555, 725-726.

յան» տարածող, նաև «Արևմուտքի իմպերիալիզմի դեմ պայքարող» ուժ: Ուստի նրանց բնավ չէր հետաքրքրում Հայկական հարցի քիչ թե շատ հայանպաստ լուծումը: Ավելին՝ հանուն իրենց սին գաղափարների իրականացման պատրաստ էին Հայաստանն ու հայ ժողովրդի շահերը զոհաբերել Թուրքիային:

1920 թ. **օգոստոսի 24-ին**, այսինքն՝ Սևրի պայմանագրի ստորագրումից ուղիղ երկու շաբաթ անց, Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի արտաքին գործերի կոմիսարներ Գ. Չիչերինի և Բեքիր Սամի բեյի միջև նախաստորագրվեց խորհրդա-թուրքական մերձեցման գաղտնի պայմանագիր, որն իր սուր ծայրով ուղղված էր Սևրի պայմանագրի դեմ: Պայմանագրի նախագծի հենց առաջին հոդվածով կողմերը սկզբունքորեն չէին ճանաչելու Սևրի պայմանագիրը, որն իբր ուժով էր պարտադրվել Թուրքիային: Բացի այդ՝ պայմանագրի նախագծով Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր թուրքական, այսպես կոչված, «Ազգային ուխտ»-ով (Misak-i Milli) գծված սահմանները, այսինքն՝ Ռուսաստանը ճանաչում էր ոչ միայն Առաջին աշխարհամարտում ռուսական զորքերի կողմից գրավյալ արևմտահայ նահանգների, այլև Հայաստանի Հանրապետության մաս կազմող արևելահայ Կարսի մարզի ու Արդահանի վերադարձը Թուրքիային[266]:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ, միգուցե քաղաքական-դիվանագիտական սակարկությունների նպատակով, խորհրդային-բոլշևիկյան բարձրագույն ղեկավարներից համեմատաբար տարբեր տեսակետ է արտահայտել ասարտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը: Խորհրդա-թուրքական մոսկովյան բանակցություն-

---

[266] Տե՛ս **Գալոյան Գ.**, Հայաստանը և Մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 265-268:

ների ժամանակ նա առաջ էր քաշել Վանի և Բիթլիսի նահանգնե-
րի մի մասը Հայաստանին զիջելու հարցը՝ նույնիսկ Թուքիային
տրվող օգնությունը պայմանավորելով այդ հարցի լուծումից[267]:
Բայց Բեքիր Սամին դիվանագիտորեն խուսանավել է Չիչերինի
առաջարկից՝ հայտարարելով, որ ինքը լիազորված չէ քննարկելու
և ընդունելու թուրքական «Ազգային ուխտ»-ով ամրագրված որևէ
տարածքային փոփոխություն: Այս կապակցությամբ կարելի է հա-
մաձայնել պրոֆ. Ռ. Հովհաննիսյանի այն դիտարկմանը, որ Չիչե-
րինն այդ կերպ փորձում էր ինչ-որ մասնակի լուծում տալ Հայկա-
կան հարցին, որպեսզի Մեծ Բրիտանիային հեռու պահի Հայաս-
տանի գործերին միջամտելուց[268]: Սակայն, ինչպես պարզվում է,
Չիչերինի այդ վարկածը հավանաբար աջակցություն չի ստացել
կուսակցական-պետական բարձրագույն ղեկավարների՝ Լենինի,
Տրոցկու, Ստալինի կողմից:

Անկարայի պատվիրակները եկել էին այն համոզման, որ
գործնականում ազգայնական թուրքերը (միլլիները) ոչ միայն
կշարունակեն զենք և ֆինանսներ ստանալ բոլշևիկներից, որ
արդեն ամառվա կեսերից ստանում էին ծովով ու ցամաքով,
այլև Հայաստանի վրա հարձակվելիս՝ Ռուսաստանը չի միջամ-
տի: Իրականում այդպես էլ եղավ:

Արդյունքում՝ Գ. Չիչերինի առաջարկը Վան-Բիթլիսի վե-
րաբերյալ անտեսվեց, որովհետև Խորհրդային Ռուսաստանը,
թուրքերին զիջումներ անելով, նպատակ ուներ Հայաստանի
վրա թուրքական հարձակման սպառնալիքով Կարմիր բանակի

---

[267] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Եր., 2016, էջ 187, նաև՝ **Զոհրաբյան Է. Ա**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997, էջ 144:

[268] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Եր., 2016, էջ 190-191:

օգնությամբ մուտք գործել Հայաստան և իբրև «ազատարար», հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից «փրկելու» պատրվակով, նվաճել ու խորհրդայնացնել Հայաստանի իրեն հասանելիք հատվածը, իսկ հեռանկարում իրենց պատկերացրած, այսպես կոչված, համաշխարհային հեղափոխության արտահանման միջոցով՝ թափանցել Արևելք:

Փաստորեն միջազգայնորոն (պաշտոնապես) չճանաչված և անգամ սուլթանի կողմից խռովարար ու հանցագործ համարվող քեմալականները ոչ միայն չճանաչեցին Կ. Պոլսի սուլթանական կառավարության կողմից կնքված Սևրի պայմանագիրը և չդատարկեցին հայկական վիլայեթները, այլև կեղծ հեղափոխական կարգախոսներով, գործակցելով բոլշևիկյան Ռուսաստանի հետ, ստանալով նրանից զենք ու զինամթերք, մեծաքանակ դրամ (ոսկով), դիվանագիտական աջակցություն և այլն, 1920 թ. սեպտեմբերի վերջին պատերազմ սկսեցին Հայաստանի Հանրապետության դեմ: Ընդ որում՝ խորհրդային կողմը արտոնել էր քեմալականներին գրավել **Սարիղամիշ-Շահթախթի** ռազմավարական գիծը, նպատակ ունենալով՝ Նախիջևանի վրայով կապվել Ադրբեջանի հետ[269]:

Թուրքիայի՝ Հայաստանի վրա հարձակման գլխավոր նպատակն էր ստիպել նրան հրաժարվելու Սևրի պայմանագից, հնարավորության դեպքում՝ բռնազավթել հայկական նոր տարածքներ: Հայաստանի վրա հարձակման հրամանը տրվել է կառավարության նախագահ Մ. Քեմալի կողմից **սեպտեմբե-**

---

[269] Տե՛ս Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսակցական արխիվ (նախկին ՄԼԻ ԿԿԱ), ֆ. 64, ց. 2, գ. 11, թ. 68, 75, 86, նաև՝ **Զոհրաբյան Է. Ա.**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997, էջ 138-140, 145, **Խաչատրյան Կ.**, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Եր., 2007, էջ 27:

րի 20-ին: Ըստ Քեմալի և արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ահմեդ Մուխթար բեյի՝ այդ պատերազմի նպատակը լինելու էր Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և, ըստ էության, հայ ժողովրդի ոչնչացումը, այլ խոսքով՝ Հայաստանի՝ որպես ազգային-պետական միավորի վերացումը[270]: Այս մտադրության իրագործման պայմաններում, բնականաբար, այլևս ավելորդ կլիներ խոսել Սևրի պայմանագրի կենսագործման մասին:

Մյուս կողմից՝ սխալվում են բոլոր նրանք, ովքեր կարծում են, թե հայերն են սկսել պատերազմը: Մ. Քեմալի՝ սեպտեմբերի 20-ին Արևելյան ճակատի հրամանատար Ք. Կարաբեքիր փաշային ուղղված հարձակման հրամանի կատարումը, ըստ էության, հետաձգվեց մեկ շաբաթով՝ պայմանավորված 50 հազարանոց բանակի տեխնիկական ու նախապատրաստական բոլոր աշխատանքները վերջնական ավարտին հասցնելու հանգամանքով:

Այդպիսով՝ թուրք ազգայնամոլ ծավալապաշտները (Մ. Քեմալ, Ք. Կարաբեքիր, Ա. Մուխթար և ուրիշներ) խնդիր էին դրել օր առաջ սկսել պատերազմը, գրավել «Ազգային ուխտ»-ով նախատեսված նաև արևելահայ տարածքները, քանի դեռ Կարմիր բանակը զբաղված էր Լեհական ճակատում ու Ղրիմում (գեն. Պ. Վրանգելի դեմ) ռազմական գործողություններով և չէր մտել Հայաստան ու այն չէր խորհրդայնացրել, հակառակ դեպքում իրենք ստիպված կլինեին սահմանափակվել 1914 թ. ռուս-թուրքական նախապատերազմյան սահմանով: Մինչ լայնածավալ ռազմական գործողություններն սկսելը՝ սեպտեմբերի 13-ին, Արևելյան

---

[270] Տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, Մուստաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921թթ.), Եր.,2019, էջ 50, 55, 75, 77, 88:

ճակատի հրամանատար Ք. Կարաբեքիրը հարձակվել և հայերից խլել էր հունիս ամսին ազատագրված Օլթի-Փենյակի ածխահանքերը:

Այսպիսով՝ 1920 թ. աշնանը Հայաստանը կանգնեց թուրքական ներխուժման սպառնալիքի առաջ: Նա փաստորեն հայտնվեց տարածաշրջանում երկու զորեղ ուժերի՝ բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի՝ Ս. Վրացյանի պատկերավոր խոսքերով՝ **«բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի»** միջև: Զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի տվյալներով, որի մասին ակնարկում է Ալ. Խատիսյանը, թուրք-հայկական երկամսյա պատերազմի ընթացքում Հայաստանը գործնականում ունեցել է չորս ճակատ՝ Կարս-Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Նախիջևանի և Դիլիջան-Ղազախի[271]:

Կարս-Ալեքսանդրապոլ ճակատում հայկական զորամասերը դիմադրություն ցույց տվեցին, սակայն թշնամու ուժեղ ճնշման տակ հետագա շրջափակման մեջ չընկնելու և ավելի համար դիրքեր գրավելու համար սեպտեմբերի 29-ին թողեցին Սարիղամիշն ու Կաղզվանը: Հաջորդ օրը՝ 30-ին, թուրքերը գրավեցին Մերդենեկը և Արդահանը: Ռազմական գործողություններ ծավալվեցին նաև մյուս ճակատներում:

Դիվանագիտական ճակատում, Սևրի պայմանագրի չեղարկմամբ թուրքերից հետո շահագրգռված էր նաև Խորհրդային Ռուսաստանը: Դա երևում է նրանից, որ 1920 թ. ամռանը Մոսկվայում ընդհատված հայ-ռուսական երկամսյա բանակցությունները խորհրդային կառավարության ցանկությամբ Հայաստան տեղափոխելու նպատակով հոկտեմբերի 11-ին մեծ

---

[271] Տե՛ս **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 289:

շքախմբով (54 մարդ[272]) Երևան ժամանած ռուսական բազմանդամ պատվիրակության ղեկավար Բ. Լեգրանը, ՀՀ պատվիրակության ղեկավար Լ. Շանթի հետ բանակցելու առաջին իսկ նախապայմանը համարեց՝ **Հայաստանի հրաժարումը Սևրի պայմանագրից**, նաև՝ իրենց զորքի ու ռազմամթերքի տրանզիտի իրավունք Հայաստանի վրայով Թուրքիա և բարեկամական կապերի հաստատումը ԹԱՄԺ-ի կառավարության հետ[273]:

Բ. Լեգրանին հրահանգ էր տրված՝ Երևանի բանակցություններում հայ-թուրքական հակամարտության մեջ հանդես գալ **միջնորդի** դերով, որի **գինը լինելու էր Հայաստանի խորհրդայնացումը**: Պատվիրակության ժամանումը ձգձգվեց հիմնականում վրաց իշխանությունների՝ Թիֆլիսից հարմար գնացք չտրամադրելու և Երևանում կացարանային ոչ բարվոք պայմանների պատճառաբանություններով[274]: Ստացվում է, որ փաստորեն ոչ թե հայկական կողմն է ձգձգել ռուսական պատվիրակության ժամանումը Երևան, այլ, ըստ էության, ռուսական կողմն էլ է դիտավորյալ ձգձգել՝ հավանաբար այն մտադրությամբ, որ թուրքերը հայերի հետ հասցնեն «լուծել» հարցերը, ապա իրենք հայտնվեն և թելադրեն իրենց պայմանները:

---

[272] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 347:

[273] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, պատ. խմբագիրներ՝ **Գ. Գալոյան, Վլ. Ղազախեցյան**, Եր., 2000, էջ 303, նաև՝ Հայ բոլշևիկների հակապետական գործունեությունը 1919-1920 թթ., փաստաթղթերի ժողովածու, կազմող՝ **Վլ. Հարությունյան**, Եր., 2014, էջ 330-331, **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ Դատը, Եր., 1991, էջ 240, **Բարսեղեան Ս.**, Ի՞նչպես կը գրեն մեր նորագոյն պատմութիւնը, Պ. Այրես, 1948, էջ 58:

[274] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Եր., 2016, էջ 251:

Հոկտեմբերի 28-ին ստորագրվեց երկու փաստաթուղթ՝ նախ կողմերի միջև եզրափակիչ որոշման **Արձանագրություն**, իսկ այնուհետև ավելի հանգամանալից բովանդակությամբ ներածականից (պրեամբուլա) և 17 հոդվածներից բաղկացած բուն **Հաշտության պայմանագրի** նախագիծը: Պայմանագրի նախագծով ՌՍԴԽՀ-ն անվերապահորեն ճանաչում էր ինքնիշխան և անկախ Հայաստան պետությունը 1914 թ. ռուս-թուրքական նախապատերազմյան սահմանով[275]: Ավելին՝ մեզ հետաքրքրող մասով նախագծի 1-ին հոդվածի ծանոթագրության մեջ նշվում էր, որ «ՌՍԴԽՀ արդարացի է համարում Թուքահայաստանի մարզերի միացումը Հայաստանին և պատրաստ է ազդել իր բարեկամ դաշնակից պետության (նկատի ունի Թուրքիային՝ Ա. Հ.) վրա՝ նշված առանձին մարզերն ու շրջանները փաստորեն Հայաստանին միացնելու համար»[276]: Բացի այդ՝ փաստաթղթում որևէ տեղ նշում չկա, թե ՀՀ-ն պաշտոնապես պետք է հրաժարվի Սևրի պայմանագրից, բայց և չկա Գ. Չիչերինի՝ 1920 թ. ամռանը (հուլիս-օգոստոսին) Բեքիր Սամի բեյին ներկայացրած կոնկրետ առարկայական պահանջը՝ Վանը, Մուշը և Բիթլիսը Հայաստանին հանձնելու մասին, ինչն ավելի ուշ Վ. Լենինին ուղղված ձեռագիր նամակում Ի. Ստալինը որակել է «հիմար և սադրիչ»[277]: Ի. Ստալինի այդ կո-

---

[275] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 12, թ. 29, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 316-317, **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Եր., 2016, էջ 270:

[276] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 316:

[277] «Геноцид армян», документы и комментарий, т. 2, ч. 1, с. 374, отд. крс. 52, N 14, թ. 2, **Խաչատրյան Կ.**, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Եր., 2007, էջ 122:

պիտ դիտողությունը, ըստ ամենայնի, արժանացել էր Վ. Լենինի, նաև՝ Ս. Օրջոնիկիձեի, Բ. Մդիվանու և մյուսների հավանությանը:

Այնուամենայնիվ, Հայաստանի համար բավականաչափ հաջող ստորագված համաձայնագրի այդ նախագիծը և եզրափակիչ արձանագրությունը ձեռքին Բ. Լեգրանը Թիֆլիսով մեկնեց Բաքու և չվերադրձավ շուրջ մեկ ամիս: Նա վերադարձավ միայն այն ժամանակ, երբ Հայաստանն արդեն վերջնականորեն պարտվել էր և, ինչպես ասում են, բանը բանից անցել էր: Մինչ այդ՝ նոյեմբերի 4-ին (Կարսն արդեն ընկել էր), Բաքվում հրավիրված ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովբյուրոյի (ղեկ. Ս. Օրջոնիկիձե) և Ադրբեջանի Կոմկուսի ԿԿ-ի քաղբյուրոյի համատեղ նիստում, Ի. Ստալինի մասնակցությամբ, արձանագրվեց, որ Լեգրանը դաշնակցականներին շատ խոստումներ է տվել, որ «նախագիծը ետ է մնացել իրադարձություններից», որից հետո նախագիծը մերժվեց, և օրակարգ բերվեց Հայաստանի վերջնական խորհրդայանցման հարցը[278]:

Խորհրդային կառավարության երկդիմությունը Հայաստանի խնդրում երևում է նրանում, որ մի կողմից՝ իր ներկայացուցիչը բանակցում էր Հայաստանի հետ «բարեկամական» դաշնագիր կնքելու համար, իսկ մյուս կողմից՝ նա համակողմանի ռազմական ու ֆինանսական օգնություն էր ցույց տալիս Հայաստանի դեմ պատերազմող Թուրքիային: Նշված քաղաքականությունը շատ կողմերով արդիական է հնչում նաև մեր ժամանակներում:

---

[278] Տե՛ս **Խաչատրյան Կ.**, նշվ. աշխ., էջ 33:

15. ԹՇՆԱՄՈՒՆ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԸ

Թուրքական ներխուժմանը դիմակայելու և հայրենիքը պաշտպանելու նպատակով Հայաստանի կառավարությանը համախորհուրդ միակամ հանդես եկան հանրապետության բոլոր քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպություններն ու միությունները, բացառությամբ բոլշևիկների: Ստեղծվեց Միջկուսակցական խորհուրդ խորհրդարանի պատգամավոր Ա. Սաֆրաստյանի նախագահությամբ: Բնութագրական է ՀԺԿ-ի Հայաստանի ԿԿ-ի հոկտեմբերի 2-ի կոչը: Նրանում կարդում ենք. «Թուրքական կանոնավոր զորամասերը և հրոսակախմբերը ներս են խուժել մեր պետության խորքերը և սպառնում են Արևելյան Հայաստանի բանալի Կարսին: Այս հարձակումով Թուրքիան մի կողմից՝ ցանկանում է վարկաբեկել աշխարհի առաջ Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը, իսկ մյուս կողմից՝ եթե հանգամանքները թույլ տան, իսպառ բնաջինջ անել հայ ժողովուրդը՝ հանուն իր փայփայած համաթուրքական գաղափարի»[279]: Կոչ էր արվում «Ամեն ինչ զոհաբերել հանուն մեր ժողովրդի փրկութեան և Միացեալ ու Անկախ Հայաստանի»[280]: Հոկտեմբերի 12-ին թշնամու դեմ հայ ժողովրդի պայքարի քաջալերանքի կոնդակով հանդես եկավ Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսը:

Ինչ վերաբերում է հայ բոլշևիկներին, ապա նրանք անում էին ամեն ինչ, որ թուրք բարեկամ հեղափոխական ասկյարները հաղթեն, Հայաստանը պարտվի պատերազմում, դաշնակ-

---

[279] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 7, գ. 20, թ. 1:

[280] **Հակոբեան Տէր-Հակոբ**, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջ 55:

ցականների իշխանությունը տապալվի, և օտար սվինների օգնությամբ իրենք անցնեն իշխանության գլուխ:

Թուրքիան կամենում էր զենքի ուժով պատռել Սևրի դաշնագիրը: Պատերազմ սկսելով՝ քեմալականները պահանջում էին հրաժարվել Սևրի դաշնագրից և ընդունել Բաթումի դաշնագիրը, այսինքն՝ 160 հազար քառ. կմ դիմաց ստանալ ընդամենը 10-12 000 քառ. կմ: Թուրքական հարձակման հետևանքով բռնազավթեցին արևելահայ տարածքներ՝ Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Նախիջևանը: Դրա հետևանքով ոչ միայն չիրագործվեց հայ ժողովրդի դարավոր երազանքը, այլև արդեն միջազգայնորեն ճանաչված բուն Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց քեմալական Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի քաղաքական շահերի կիզակետում:

Այդ ռազմական դիմակայությունում Հայաստանի բանակը, դրսևորած անկազմակերպվածության, մարտական ցածր ոգու, Կարսի ճակատում բարձր հրամկազմի (զորավարներ Ա. Հովսեփյան, Դանիել Բեկ-Փիրումյան և այլք), կարելի է ասել, հանցավոր անգործության, զինվորների ու ժողովրդի մեջ «հինգերորդ շարասյան» դեր կատարող բոլշևիկների վարած քայքայիչ գործունեության և այլնի հետևանքով չկարողացավ պատշաճ դիմադրություն ցույց տալ[281]: Վերջիններս, օրինակ, բանակում տարածում էին հետևյալ բովանդակությաբ դավաճանական թռուցիկներ. «Չկրակե՛ս, հայ աշխատավոր զինվոր, եղբայրական թուրք բանակի վրա, նա քեզ բերում է ոչ թե ստրկություն,

---

[281] Բոլշևիկները սեփական երկրի բանակը քայքայելու հիանալի փորձ էին կուտակել դեռ Առաջին աշխարհամարտի տարիներին, նույնիսկ ավելի վաղ՝ ռուս-ճապոնական 1904-1905 թթ. պատերազմի ընթացքում: Այդ նույն բանը կատարվում էր նաև Հայաստանի բանակում թուրք-հայկական պատերազմի ժամանակ:

այլ ազատություն, նա գալիս է օգնելու քեզ քո սրբազան պայքարի մեջ»: Մեկ այլ թռուցիկում կարդում ենք. «Երբ տեսնես կարմիր դրոշ, ա՛ռ զենքդ և միացի՛ր եղբայրական թուրք բանակին ընդդեմ քո ոխերիմ թշնամիների, ընդդեմ անարգ դաշնակների»[282]:

1920 թ. հոկտեմբերի 30-ին (շաբաթ օր) գրեթե առանց դիմադրության Կարսի անկման դեպքերի մասին ականատես, մարզի նախկին դատական քննիչ Ա. Եսայանը գրում է. «Մինչև թուրքերի ներխուժումը՝ հայկական զորամասերի շրջանում խորապես արմատավորված էր այն համոզմունքը, որ քաղաք են մտնում բոլշևիկ-թուրքական զորամասեր, որի հետևանքով զինվորները դիմադրություն ցույց չտվեցին»[283]: Ավանդաբար ռուսասեր հայ ժողովրդի ու զինվորականության լայն հատվածներում ձևավորվել էր այն տարօրինակ մոլորությունը, որ եթե թուրք-քեմալականները ռուսների դաշնակիցներն են, ուրեմն

---

[282] **Նավասարդեան Վ.**, Բոլշեւիզմը եւ Դաշնակցութիւնը, Գահիրե, 1949, էջ 71:

[283] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2 c, գ. 33, թ. 67, նաև՝ «Կոմունիստ», 4 փետրվարի 1921 թ.:

նրանցից որևէ վտանգ չկա: Այստեղից էլ, թե՛ հայ զինվորականության և թե՛ հանրության մի զգալի մասի մեջ ակամա ձևավորվել էր մի տեսակ դրական վերաբերմունք կարմիր դրոշներով ու աստղավոր փափախներով Հայաստան ներխուժած թուրք ասկյարների հանդեպ, մի հոգեբանական պատրանք, որ «թուրքերի դեմ կռվելը հավասարազոր է ռուսների դեմ կռվելուն»[284]: Բացի այդ՝ հայ բոլշևիկները քարոզչություն էին տանում, որ ռուս-թուրք-բոլշևիկյան ազատարար ուժը գալիս է հայ ժողովրդին ազատելու դաշնակների լծից: Այսպես՝ արդեն Կարսի աղետից հետո Հայկոմկուսի Ալեքպոլի մարզային կոմիտեն 1920 թ. նոյեմբերի 13-ին կազմակերպած միտինգում կոչ էր անում զինվորներին, գյուղացիներին և գաղթականներին, որ չհավատալ դաշնակների այն ստին, թե թուրքերը գալիս են թալանելու և մորթելու ձեզ, այլ նրանք գալիս են ազատելու ձեզ «դաշնակ-թալանչիների ձեռքից»[285]:

Ինքնին հասկանալի է, թե նման պարտվողական քարոզչության պայմաններում, ժողովրդի ու բանակի նման բարոյալքման մթնոլորտում որքան ցածր պետք է լիներ նրա դիմա-դրողական, ինքնապաշտպանական ոգին: Ինչպես արդեն ասվեց, իր բարձրության վրա չգտնվեց նաև բանակի բարձր հրամանատարությունը՝ զորավարներ Թ. Նազարբեկյանը, Մ. Սիլիկյանը, Դ. Բեկ-Փիրումյանը, Հ. Հովսեփյանը, գնդապետներ Ալ. Վեքիլյանը, Ալ. Միրիմանյանը և ուրիշներ:

Այդ ձախողումների գործում, անշուշտ, մեղքի իր բաժինն ուներ նաև Հայաստանի կառավարությունը և, հատկապես, Ռ.

---

[284] **Հարությունյան Վլ.**, Հայաստանի Հանրապետություն. Կարսի վերջնախաղը, Եր., 2018, էջ 107

[285] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 136, թ. 2:

Տեր-Մինասյանի գլխավորած ռազմական նախարարությունը: Դրա փոխարեն իրենց մարտական տեղամասերում աչքի են ընկել Դրոն, Սեպուհը, Սմբատը, Կուռոն (Ս. Թարխանյանը), Հ. Մազմանյանը, Մուշեղը (Ավետիսյան) և ուրիշներ:

Այսպիսով, ստեղծված ռազմաքաղաքական և բարոյահոգեբանական ծանր պայմաններում Հայաստանի Հանրապետությունը չկարողացավ պատշաճ դիմադրություն ցույց թուրքական զավթիչներին: Թշնամին բռնազավթեց նրա տարածքների զգալի մասը: Երկամսյա պատերազմի արդյունքում ՀՀ ծանր պարտություն կրեց: Հանրապետության կառավարությունը չունենալով այլընտրանք հրաժարվեց իշխանությունից և, իբրև չարյաց փոքրագույն, Հայաստանի ազատ մնացած մասը խորհրդայնացվեց՝ կորցնելով իր անկախությունը: Այդ նշանակում էր, որ գործնականում ավելի քան մշուշապատ էր դառնում Սևրի պայմանագրի և Վ. Վիլսոնի Իրավարար վճռի կենսագործելու հարցը:

16. ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Հայաստանի ռազմական պարտությունը համընկավ **Ազգերի լիգայի** առաջին **Համաժողովի** (**Ասամբլեայի**) նստաշրջանի հետ: 1920 թ. **նոյեմբերի 15-ին**, Լիգայի 42 անդամ երկրների մասնակցությամբ, նստավայր Ժնևում բացվեց առաջին Համաժողովը, թեև տարեսկզբից ի վեր գործում էր Լիգայի 9 անդամից բաղկացած Գերագույն խորհուրդը: Հայաստանի համար այդ ճգնաժամային օրերին գործնական որևէ արդյունք չտվեցին ՀՀ-ի պաշտոնական դիմումները Մեծ տերություններին և Ազգերի լիգային: Քեմալականների ներխուժման, ջարդերի և ավերածությունների կապակցությամբ մինչ այդ Ա. Ահարոնյանը դիմել

էր Լիգայի Գլխավոր քարտուղար Էրիկ Դրամմոնդին, Լիգայի Գերագույն խորհրդի անդամ Արթուր Բալֆուրին, սակայն նրան պատասխանել էին, որ «Լիգան իրավասու չէ այդ հարցով զբաղվելու: Ազգերի լիգան աշխատում է կազմակերպված պետությունների հետ ու դրանց միջոցով, մինչդեռ Հայաստանի վրա հարձակումը անկանոն բանակի և ապօրինի վարչակազմի արարք է»[286]: Բացի այդ՝ նրանք ակնարկել են, որ Լիգան չունի զորք կամ ոստիկանական ուժեր[287]: Իհարկե, նման պատասխան-հիմնավորումը կարելի է դիտարկել որպես բուն խնդրից խուսանավելու մի ձև:

Ինչևէ, Հայկական հարցի քննարկումն սկսվեց նոյեմբերի 17-ից և տևեց ավելի քան մեկ ամիս: Քննարկումն ունեցել է երկու ասպեկտ՝ **ռազմական միջամտության** և Լիգային Հայաստանի **անդամակցության** խնդիրները: Հայաստանի՝ Ազգերի լիգային Հայաստանի անդամակցության առաջարկի հեղինակներից էր Լիգայում Հարավային Աֆրիկայի ներկայացուցիչ, Անգլիայի Համայնքների պալատի ազդեցիկ պատգամավոր լորդ Ռոբերտ Սեսիլը: Իր ելույթով Ռ. Սեսիլի առաջարկը պաշտպանել է բելգիացի սենատոր Անրի Լաֆոնտեն, Հարասլավիայի ներկայացուցիչ՝ Միրոսլավ Սպալայկովիչը, Նորվեգիայի պատվիրակ՝ Ֆրիտյոֆ Նանսենը և ուրիշներ: Սակայն պետք է արձանագրել, որ Ազգերի լիգան, չունենալով բավարար ինքնուրույնություն, Հայաստանի անդամակցության, նրան ցուցաբերվելիք ռազմական օգնության և այլ խնդիրներում ենթարկվեց **նոյեմբերի 26-ից-դեկտեմբերի 4-ը** Լոնդոնում ընթացող Դաշնակից

---

[286] **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Եր., 2016, էջ 368:

[287] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, նույն տեղում, էջ 369:

տերությունների ղեկավարների երկրորդ խորհրդաժողովից Ժնև ուղարկված հրահանգին՝ ձեռնպահ մնալ Հայաստանը Ազգերի լիգայի մեջ ընդունելուն կամ, լավագույն դեպքում, հետաձգել ընդունելության հարցը[288]: Բանն այն էր, որ, եթե Հայաստանը դառնար Լիգայի անդամ, ապա ըստ նրա Կանոնադրության 10-րդ հոդվածի, անդամ պետությունները պետք է զինական օգնություն ցույց տային Հայաստանին[289]: Հայաստանի անդամակցության հարցն արգելափակվեց նաև այն հիմնավորմամբ, որ նա չունի մանդատակիր տերություն: Բացի այդ՝ Լիգայի անդամ դառնալու համար Հայաստանից պահանջվում էր, որ նա ունենար ճշգրտված սահմաններ, կայուն կառավարություն և այլն:

Իբրև փաստ՝ միջանկյալ արձանագրենք, որ Բրիտանիայի (Լ. Ջորջի) կառավարությունը թուրք-հայկական պատերազմի շրջանում փորձել էր համոզել Սուլթանի կառավարությանը՝ վավերացնելու Սևրի դաշնագիրը[290]: Սակայն Հայաստանի ծանր պարտությունը թև տվեց նաև սուլթանական կառավարությանը, և այդ առաջարկն ընթացք չստացավ[291]: Սևրի պայմանագիրը կարող էր պարտադրվել ուժով, իսկ Անգլիան մտադիր չէր դիմել նման քայլի, մանավանդ երբ նկատի ենք առնում Դաշնակից տերությունների միջև առկա հակասությունները:

Որոշ ձգձգումներից հետո, երբ Հայաստանի խորհրդայնացմամբ նրա քաղաքական ճակատագրի հարցը կարծես արդեն լուծվել էր, այնուամենայնիվ, դեկտեմբերի 15-ին Ազգերի

---

288 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2c, գ. 37, թ. 11, նաև՝ «Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում», էջ 688-690:

289 Տե՛ս **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 291:

290 Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Եր., 2016, էջ 358 և 361:

291 Տե՛ս նույն տեղում:

լիգայի Համաժողովում քննության դրվեց Հայաստանի անդամակցության հարցը, որը քվեարկվեց դեկտեմբերի 16-ին: Համաժողովին մասնակից 42 անդամ-պետությունների ներկայացուցիչներից 21-ը դեմ քվեարկեց, 8-ը՝ կողմ (Կանադան, Պերուն, Ռումինիան,Պորտուգալիան, Շվեյցարիան, Սալվադորը, Ուրուգվայը և Վենեսուելան), 13-ը ձեռնպահ[292]: Մերժման հիմնական պատճառաբանությունը Հայաստանի դեռևս չկազմակերպված լինելն էր: Ասամբլեան գտավ, որ Հայաստանը բռնազավթվել է քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի կողմից ու կորցրել է իր անկախությունը: Սակայն, ինչպես արդեն ասվեց, Հայաստանի վերահաս խորհրդայնացումը գործնականում փակեց հարցը:

Հայաստանի անդամակցության, մանդատի և ցուցաբերվելիք օգնության խնդրում ստեղծվել էր հակասական վիճակ: Ակներև է, որ երկրի ռազմաքաղաքական դրության օրավուր բարդացումը և ընդհանուր վիճակի վատթարացումը վանում էր տերություններին թե՛ Հայաստանի մանդատի և թե՛ Լիգային անդամակցության հեռանկարից: Խորհրդայնացումից հետո, բնականաբար, չէր կարող խոսք լինել Հայաստանի՝ Ազգերի լիգայի անդամակցելու մասին, քանզի ընդունելու դեպքում, ինչպես արդեն ասվեց, Կանոնադրության 10-րդ հոդվածի համաձայն, Լիգան պարտավոր էր զենքի ուժով պաշտպանել Միացյալ և Անկախ Հայաստանի անվտանգությունը և անձեռնմխելիությունը[293]: Իսկ դա գործնականում կնշանակեր պատերազմ

---

[292] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2 c, գ. 37, թ. 12, **Ղորղանեան Գ.**, Հայաստանի Հանրապետութիւնը եւ պետութիւնները, (տե՛ս «ՎԷՄ», Պարիզ, 1934, թիվ Զ, էջ 60):

[293] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2c, գ. 37, թ. 11:

միաժամանակ Ռուսաստանի և Թուրքիայի դեմ:

Տագնապալի օրերին քեմալականների արշավանքի վերաբերյալ Ա. Ահարոնյանը երեք հուշագիր էր ներկայացրել Ազգերի լիգային, որն էլ իր հերթին դիմել էր Անտանտի չորս գլխավոր տերություններին՝ Հայաստանին շտապ օգնություն հասցնելու համար: Ակներև է, որ տերությունների շահերից չէր բխում ռազմական օգնություն ցույց տալ Հայաստանին և կանխել թուրքերի ագրեսիան: Զուտ բարոյական առումով, թերևս, կարելի է առանձնացնել Ռումինիային, որի ներկայացուցիչ, արտաքին գործերի նախարար **Թովմաս Իոանեսկուն** Հայաստանը թուրքական հարձակումից փրկելու նպատակով իր կառավարության անունից առաջարկեց անհապաղ ստեղծել 40 հազարանոց միջազգային զորարշավային (էքսպեդիցիոն) կորպուս և դաշնակիցների Գլխավոր շտաբի հրամանատարությամբ ուղարկել Հայաստան՝ խաղաղությունը և կարգը վերականգնելու համար: Ռումինիայի անակնկալ հայտարարությունը ծապահարություններով դիմավորեց Ասամբլեան: Սակայն առաջարկը, ինչպես նախկինում, այնպես էլ այս անգամ, գործնական ընթացք չստացավ[294]: Նշենք նաև, որ Հայաստանին կործանումից փրկելու համար անհապաղ օգնություն ցույց տալու առաջարկով դարձյալ հանդես է եկել լորդ Ռ. Սեսիլը[295]: Խնդրի քննությունը հանձնվեց մի հանձնախմբի ուսումնասիրության, և Համաժողովը փակվեց:

---

[294] **Ղորղանեան Գ.**, Հայաստանի Հանրապետութիւնը եւ տերութիւնները, (տե՛ս «ՎԷՄ», Պարիզ, 1934, թիվ Զ, էջ 57), նաև՝ **Махмурян Г.**, Лига Наций, Армянский вопрос и Республика Армения, Ер., 1999, с. 129, «Геноцид армян», документы и комментарий, т. 1, М., 2002, с. 622.

[295] Տե՛ս «Бюллетень НКИД», 19 декабря 1920 г., N 51, с. 5-6 и 31 декабря 1920 г., N 54, с. 9.

1920 թ. աշնանը Հայաստանին չկարողացավ օգնել նաև Հունաստանը, որը, ռազմական գործողություններ վարելով Փոքր Ասիայում, պետք է թուլացներ ռազմական լարվածությունը Հայկական ճակատում: Բանն այն էր, որ 1920 թ. աշնանը Հունաստանի ներքաղաքական իրավիճակը սրվում է, հույն-թուրքական պատերազմում հաջողություններ արձանագրած հույների առաջնորդ, վարչապետ Է. Վենիզելոսի դիրքերը թուլանում են երիտասարդ Ալեքսանդր թագավորի մահից հետո, և թուրքերի հետ, այսպես կոչված, «խաղաղության» կողմնակից ուժերը, ստանձնելով երկրի ղեկը, ի վերջո պարտություն են կրում պատերազմում: Ռազմաքաղաքական առումով հայանպաստ չէր նաև 1920 թ. աշնանը զորավար Պ. Վրանգելի գլխավորած հակախորհրդային Սպիտակ բանակի պարտությունը և էվակուացիան Ղրիմից:

Այսպիսով՝ արտաքին ու ներքին աննպաստ գործոնները հանգեցրին նրան, որ Հայաստանին չհաջողվեց անդամակցել Ազգերի լիգային:

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՂԵՏԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ինչպես արդեն ասվեց, թուրք-հայկական պատերազմում Հայաստանը կրեց ռազմական ծանր պարտություն և կանգնեց քաղաքական խոր ճգնաժամի առաջ: Ալեքսանդրապոլ մեկնած ՀՀ պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանը կարծում էր, որ «Թուրքերը կը ցանկան կենսունակ Հայաստանի մը ստեղծումը», որպես պատնեշ իրենց և Ռուսաստանի միջև[296]: **Նոյեմ-**

---

[296] **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 303:

բերի 25-ին սկսված հայ-թուրքական հաշտության բանակցությունների առաջին իսկ օրը թուրքական զորքերի հրամանատար ու բանակցությունները նախագահող Քյազիմ Կարաբեքիր փաշան, որպես նիստը սկսելու նախապայման, Հայաստանի կառավարությունից պահանջեց, որպեսզի գրավոր հայտարարություն անի Սևրի դաշնագրից հրաժարվելու մասին, առանց որի «Թուրքիան ոչ մի բանակցություն սկսել չի կարող»[297]:

Հայկական պատվիրակությունը (ղեկավար՝ Ալ. Խատիսյան, անդամներ՝ Ա. Գյուլխանդանյան և Ստ. Ղորղանյան) փորձեց խուսափել այս թեմայի քննարկումից, մինչև որ կորոշվեն տարածքային խնդիրները: Սակայն թուրքերը ռազմական գործողությունները վերսկսելու սպառնալիքով պնդեցին իրենց պայմանը: Նոյեմբերի 26-ին ուժի և սպառնալիքի գործադրմամբ Հայաստանի կառավարությունը հարկադրված գրավոր հայտարարություն ընդունեց Սևրի պայմանագրից հրաժարվելու վերաբերյալ[298]: Այս առիթով պատվիրակության անդամ, Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանն իր հուշերում գրում է. «Հայոց պատուիրակները ամբողջ օրը քննում են իրանց տալիք պատասխանը, և վերջը խմբագրում են մի թուղթ, որի մերձաւոր բովանդակութիւնն այն էր, թէ նկատի առնելով, որ երկու ազգերը - հայ և թիւրք - վճռել են անմիջական բանակցութիւններով վճռել իրանց մեջ եղած վիճելի հարցերը, և թէ կայ դէպի ծովը ելք ունենալու հարցը, Հայաստանը հրաժարվում է Սեւրի դաշնագրից»[299]:

---

[297] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 636, մաս 1-ին, թ. 47-48:

[298] **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 305, նաև՝ ДВП СССР, т. 3, М., 1959, с 674:

[299] Տե՛ս Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը,

Հարկ է նաև արձանագրել, որ թուրք-հայկական պատերազմի ընթացքում Անտանտի տերությունները որևէ կերպ չմիջամտեցին, ճնշում չգործադրեցին Մ. Քեմալի վրա, թեև վերջինիս իշխանությունը համարում էին անօրինական: Մինչ այդ՝ նոյեմբերի 19-ին, Ալ. Խատիսյանը Թիֆլիսում բանակցել էր Բրիտանիայի բարձր հանձնակատար գնդապետ Սթոքսի հետ, Ֆրանսիայի և Իտալիայի դիվանագիտական ներկայացուցիչների հետ, սակայն՝ անարդյունք: Նույն տերությունները Քեմալի կառավարության հետ կնքում էին իրենց համար ձեռնատու և շահավետ համաձայնագրեր: Քեմալականների հանդեպ քիչ թե շատ կոշտ դիրք գրաված Անգլիան ցանկանում էր, որ պատերազմում պարտություն կրած Հայաստանը ուղղակի բանակցեր ու համաձայնության գար քեմալական Թուրքիայի և ոչ թե բոլշևիկյան Ռուսաստանի հետ: Այսպես՝ Հայաստանի առնչությամբ գնդապետ Սթոքսի՝ Բրիտանիայի կառավարությանը ուղարկված շտապ հեռագրին Ֆորին օֆիսը, Լորդ Քերզոնի անունից, պատասխանել է, թե «աւելի լաւ է հաշտուել Թուրքերու հետ, քան թէ Սովետներու»[300]: Խաղարկելով Հայկական հարցը՝ Անգլիան փորձում էր **ճեղքվածք առաջացնել քեմալականների և բոլշևիկների միջև**:

Մեծ Բրիտանիայի կողմից Թուրքիայի հանդեպ մեղմացումների քաղաքականության վրա իր որոշ ներգործությունն էր թողնում նաև Հնդկաստանից մինչև Միջին ու Մերձավոր արևելք մահմեդական աշխարհի հակազդեցությունը, իսկ Լ. Ջորջի կաբինետում այդ քաղաքականության ջերմ պաշտպաններից էր Ռազմական նախարար Ու. Չերչիլը: Դրա համար էլ

կազմող՝ **Վլ. Հարութիւնեան**, Եր., 2018, էջ 619:

[300] **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 291:

գնդապետ Ստոքսն առաջարկում էր, որ հայերը բանակցեն ու համաձայնության գան թուրքերի հետ: Պատմաբան Ռ. Հովհաննիսյանի կարծիքով՝ անգլիացիներն ակնկալում էին, որ, եթե թուրքերը Հայաստանին բավարար տարածք հատկացնեն, ապա իրենք կկարողանան վերանայել նախագահ Վիլսոնի գծած ընդարձակ սահմանը և հաստատել ավելի չափավոր սահման[301]: Այս ակնկալիքներով հանդերձ, սակայն, իրողությունն այն է, որ անարդյունք եղան ՀՀ-ի պատվիրակության ջանքերը Թիֆլիսում և Արևմուտքում:

Այնուամենայնիվ, հայ-թուրքական բանակցություններում նոյեմբերի 28-ին ՀՀ-ի պատվիրակությունը կառավարության անունից ներկայացրեց հաշտության պայմանագրի հավակնոտ մի նախագիծ, համաձայն որի, արևելահայկական տարածքներից բացի, Հայաստանի սահմանների մեջ են մտնում Բայազետի, Վանի, Մուշի սանջակները, Խնուսի կազան (գավառակը) և այդ գծով ծովափնյա Ռիզե նավահանգստի նեղ միջանցքը՝ դեպի Սև ծով ելքի համար: Նախագծից դուրս էին թողնված Դիարբեքիրի, Բիթլիսի, Էրզրումի, Տրապիզոնի՝ դեպի արևմուտք ընկած տարածքները: Այս նախագծով հանրապետության ընդհանուր տարածքը կազմում էր 100 հազար քառ. կմ: Կից ներկայացվել էր համապատասխան քարտեզ և հավելված՝ պարզաբանող գրությամբ, որում ասվում էր, որ Հայաստանը պիտի ընդունի մոտ 800 հազար տեղահանվածների[302]:

Ծանոթանալով նախագծին՝ Ք. Կարաբեքիրը Ալ. Խատիս-

---

[301] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Եր., 2016, էջ 348:

[302] Տե՛ս «Геноцид армян», документы и комментарий, т. 2, ч. 2, М., 2005, с. 385, նաև՝ **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 303, **Հովհաննիսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Եր., 2016, էջ 425 և 431:

յանին իր զարմանքն է հայտնում Մուշի և Վանի վերաբերյալ Հայաստանի պահանջների առիթով: Հասկանալի է, որ պատերազմում հեշտությամբ հաղթանակ տարած թուրքերը կտրուկ մերժեցին այդ նախագիծը և նոյեմբերի 30-ին վերջնագրի ձևով հայկական պատվիրակությանը ներկայացրին դաշնագրի իրենց պահանջների նախագիծը, որով մերժվում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանի որևէ հատվածի հանձնումը Հայաստանին, այլև պահանջվում էր Թուրքիային հանձնել հանրապետության բաղկացուցիչ մասը կազմող Կարսի, Արդահանի, Օլթիի ու Կաղզվանի շրջանները, Երևանի նահանգի Սուրմալուի գավառը՝ Արարատ լեռան հետ միասին, որը երբեք չէր գտնվել Օսմանյան կայսրության կազմում: Մի խոսքով, ներկայացվեց մի պահանջ, որով հայ–թուրքական սահմանագիծն անցնելու էր **Ախուրյան-Արաքս** գետերով: Ինչ վերաբերում էր թուրքական զորքի կողմից գրավված՝ Արաքս գետի ձախ ափին գտնվող Շարուր-Նախիջևանին, ապա այն առժամանակ մնաց թուրքական զորքի հսկողության տակ, իսկ մի երեք ամիս անց՝ 1921 թ. մարտի 16-ի (իրականում՝ մարտի 18-ի՝ Ա. Հ.)[303] Մոսկվայի խորհրդա-թուրքական «բարեկամության և եղբայրության» պայմանագրով հանձնվեց Արդբեջանին:

Այսպիսի կողոպտիչ ու նվաստացուցիչ պայմաններով՝ դեկտեմբերի 2-3-ի գիշերը, ժամը 2-ին ստորագրվեց Ալեքսանդրապոլի 18 հոդվածանոց պայմանագրը, որի սկզբունքային համարվող 10-րդ հոդվածը վերաբերում էր Սևրի պայմանագիրը չեղյալ համարելուն: Ավելին՝ պայմանագրի այդ նույն հոդվածով Թուրքիան պարտավորեցնում էր ՀՀ-ի կառավարությանը Եվրոպայից և Ամերիկայից հետ կանչել իր պատվի-

[303] Այդ մասին կլինի պարզաբանում:

րակություններին: Հասկանալի է, որ պայմանագրի ստորագրումից առաջ արդեն իսկ իշխանությունից հեռացած ՀՀ-ի կառավարությունը այլևս իրավական ուժ չուներ նման հրահանգ տալու[304]: Դա բավարար չհամարելով՝ պայմանագրի 14-րդ հոդվածը ամրագրում էր, որ Հայաստանը պետք է չեղյալ համարի Թուրքիային առնչվող և նրա շահերի դեմ կնքված բոլոր պայմանագրերը[305]:

Ցավոք հայկական կողմը չկարողացավ հայ-թուրքական բանակցություններում անհրաժեշտ դիվանագիտական կարողականություն ցուցաբերել, որպեսզի Սևրի պայմանագրից հրաժարման դիմաց գոնե պահպաներ փաստացի Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, չկորցներ նրա մասը կազմող Կարսը, Արդահանը, Սուրմալուն և այլն:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, գործնական քաղաքականության մեջ Սևրի պայմանագիրն անտեսվեց: Հայաստանը ներպարփակվեց ընդամենը պատմական Հայաստանի (Մեծ Հայքի) 1/10-րդ մասը կազմող հողաշերտում: Դրանով հանդերձ՝ Սևրի դաշնագիրը, իբրև ազգային գաղափար (տեսլական) ու նպատակ, եղել և մնում է համայն հայության ամենանվիրական իղձերից, **հայ ժողովրդի պատմական մեծագույն հիշողություններից մեկը**, որով միջազգայնորեն հայ ժողովրդին տրվել է իրավունք՝ իր պատմական հայրենիքում կերտելու **Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան**: Հարկ է նաև փաստել, որ թեև միջազգային իրավունքի գործառույթի տեսակետից Սևրի պայմանագիրը հետագայում չվավերացվեց և օրինական ուժ չստա-

---

304 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 72:

305 Տե՛ս **Հակոբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 76:

ցավ, սակայն, մյուս կողմից, այն անօրինական կամ անվավեր (դենոնսացիա) չի ճանաչել պայմանագիրն ստորագրած դաշնակից և ոչ մի երկիր:

Հարց է ծագում՝ Մեծ տերություններից ո՞րը հանդիսացավ Սևրի պայմանագրի իրագործման ամենամեծ խոչընդոտը: Կարելի է վստահ արձանագրել՝ Խորհրդային Ռուսաստանը, եթե, իհարկե, կարելի լինի այդ շրջանում նրան դասել Մեծ տերությունների շարքը: Կարելի է նաև պնդել, որ եթե չլիներ բոլշևիկյան Ռուսաստանի համակողմանի՝ ռազմաֆինանսական, դիվանագիտական, բարոյական օգնությունը, թուրքերը չէին կարողանա հեշտությամբ հաղթել թուրք-հայկական պատերազմում և ուժով ու բռնությամբ Հայաստանին չէին պարտադրի Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագիրը և առաջին հերթին որպես նախապայման՝ պարտադրելով Հայաստանի կառավարությանը հրաժարվել Սևրի պայմանագրից: Այլ խոսքով՝ Սևրի պայմանագրին վճռականորեն դեմ է եղել ոչ միայն Թուրքիան, այլև նրա դաշնակից Խորհրդային Ռուսաստանը:

Սևրի պայմանագրի և առհասարակ Հայկական հարցում, բնականաբար, կարելի է նաև հասկանալ ու միգուցե ըմբռնումով մոտենալ գաղափարական հավատարմությամբ և կուսակցական պատասխանատվությամբ ու կարգապահությամբ պարտադրված Հայաստանի կոմունիստ ղեկավարների դիրքորոշմանը: Այսպես՝ ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ **Ալ. Մյասնիկյանը** Սևրի դաշնագիրը բնորոշում էր որպես Թուրքիային պարտադրված երկրորդ՝ ասիական Վերսալ[306]:

---

306 **Մյասնիկյան Ալ.**, Հայաստանի միջազգային քաղաքականությունը, (տե՛ս «Նորք», Եր., 1922, թիվ 1, էջ 212):

ժամանակաշրջանի քաղաքական կոնյունկտուրայի թելադրանքով կոմունիստ Ալ. Մյասնիկյանը, Հայաստանի խորհրդայնացման 3-րդ տարեդարձի առթիվ, հայտարարում էր, որ Հայաստանի խորհրդայնացումը վճռել է «այսպես կոչված Հայկական հարցը: Եվ նա մի բան էլ ավելի է արել: Տաճկահայաստանի խնդի՞ր: Այդ էլ է լուծված»[307]: Այդ նույն միտքն է հայտնում մեկ այլ կոմունիստ ղեկավար՝ Պողոս Մակինցյանը. «Հայկական հարցը լուծուած է միանգամ ընդմիշտ Խորհրդային Հայաստանի գոյութեամբ»[308]և ուրիշներ: Ահա՛, այսպիսին էր ժամանակի հայ կոմունիստ ղեկավարների տված գնահատականը հայ ժողովրդի համար նվիրական համարվող Սևրի պայմանագիրն:

1920 թ. աշնանը, ռուս-թուրքական հարաբերությունների հարցում, հայ մեծանուն պատմաբան Ն. Ադոնցի դիտարկմամբ՝ «Երևում է, որ գաղտնի համաձայնութիւն կար երկու հարձակուող (Թուրքիայի և Ռուսաստանի՝ Ա. Հ.) պետութեանց մէջ: Այդ համաձայնութեան հետեւանքն այն եղաւ, որ հայկական հողերը նորէն բաժանուեցան Ռուսիայի եւ Թուրքիայի միջեւ»[309]:

Այսպիսով՝ թուրք-բոլշևիկյան քաղաքական գործարքի և Մեծ տերությունների անհետևողականության հետևանքով շատ պետությունների կողմից արդեն պաշտոնապես ճանաչված Հայաստանի Հանրապետությունը կորցրեց իր անկախությունը, խորհրդայնացվեց, բռնազավթվեց նրա տարածքների զգալի մասը, անկատար մնաց հայ ժողովրդի փայփայած Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանի գաղափարի ի-

---

307 «Մարտակոչ», Թիֆլիս, 1923, թիվ 29:

308 «Նորք», Եր., 1925, թիվ 5-6, էջ 418:

309 **Ադոնց Ն.**, Հայկական հարց, հ. Ա, Եր., 1996, էջ 172:

րագործումը:

Բոլշևիկ-քեմալական գործարքի հետևանքով փաստորեն տեղի ունեցավ Հայաստանի հերթական բաժանումը, որը իրավաբանական ձևակերպում ստացավ Հայաստանի խորհրդայնացումից մի քանի ամիս անց՝ 1921 թ. մարտին Մոսկվայում կնքված ռուս-թուրքական «բարեկամության և եղբայրության մասին» պայմանագրով: Դրա 1-ին իսկ հոդվածում արձանագրված է, որ պայմանավորվող կողմերը համաձայնվում են «**չճանաչել ոչ մի հաշտության պայմանագիր կամ միջազգային ակտ, որն ուղղված է կողմերից մեկի դեմ և չի ճանաչվել վերջինիս կողմից**»[310]:

Այդ պայմանը գրեթե բառացիորեն կրկնվեց արդեն ամիսներ անց՝ 1921 թ. հոկտեմբերի 13-ին, Կարսում կնքված թուրք-անդրկովկասյան պայմանագրում: Մասնավորապես, պայմանագրի 2-րդ հոդվածով ասվում էր, որ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի Սոցիալիստական Հանրապետությունների կառավարությունները «**համաձայն չեն ճանաչել որևէ միաջազգային ակտ, որը վերաբերում է Թուրքիային և ճանաչված չէ այսօր Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի (ԹԱՄԺ) կառավարության կողմիից**»[311]:

Հասկանալի է, որ Մոսկվայի պայմանագրի այս հոդվածն առաջին հերթին ուղղված էր, Միացյալ Հայաստանի մասով, Սևրի պայմանագրի դեմ: Ընդ որում՝ ինչպես Մոսկվայի, այնպես էլ Կարսի պայմանագրերով թուրք-անդրկովկասյան սահմանը գծելիս հիմք էին ընդունվում 1920 թ. (1336) հունվարի 28-ի թուր-

---

[310] **Հակոբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 180:

[311] Պայմանագիր 1921 թ. մարտի 16-ի Ռուսաստանի և Թուրքիայի միջև, Կարսի պայմանագիր 1921 թ. հոկտեմբերի 13-ի, Եր., 1991, էջ 12:

քական «Ազգային ուխտ»-ում նշված տարածքներն ու սահմանները[312]: Միակողմանի չլինելու համար փաստենք, որ Սևրի պայմանագիրն անընդունելի է եղել Ռուսաստանի համար նաև նեղուցների և Սև ծովի կարգավիճակի ու ռեժիմի տեսակետից:

Իր հերթին՝ 1920 թ. աշնանը, երբ Հայաստանը խորհրդայնացվեց, Արևմուտքի «դաշնակից» տերությունները կորցրեցին հետաքրքրությունը Հայաստանի ու Հայկական հարցի նկատմամբ և իրենց շահերի թելադրանքով սկսեցին «սիրային խաղերը» թուրք ազգայնականների՝ քեմալականների հետ: Առաջինը հայ ժողովրդի շահերը ոտնահարեց և Թուրքիայի հետ հաշտվեց ու գործակցեց Ֆրանսիան, որը մինչ այդ ստանձնել էր Կիլիկիայի հովանավորությունը:

18. ՄԻԱՑՅԱԼ ԵՎ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Ինչպես Հայաստանի խորհրդայնացումից առաջ, այնպես էլ դրանից հետո Հայաստանի քաղաքական ղեկին հայտնված հայ բոլշևիկների համար հիմքից մերժելի էր Միացյալ Հայաստանի գաղափարը, հենց թեկուզ այն բացատրությամբ, որ նրանց պատկերացմամբ՝ իրենց գաղափարական ու քաղաքական գլխավոր հակառակորդ ու նույնիսկ թշնամի համարվող ՀՅԴ կուսակցության անունը նույնացվում էր «Միացյալ և Անկախ Հայաստան» հասկացության հետ:

Իր հերթին, Անտանտի տերությունները, կարելի է ասել, կորցրին հետաքրքրությունը Սևրի պայմանագրի նկատմամբ, քանզի Միացյալ Հայաստանի կերտումն այժմ արդեն կնշանա-

---

[312] Տե՛ս **Հակոբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 181 և 285:

կեր էլ ավելի ընդարձակել ու հզորացնել իրենց հակառակորդ ու թշնամի բոլշևիկյան Ռուսաստանին: Ուստի նոր ստեղծված պայմաններում մնում էր առանձին քննության նյութ դարձնել Խորհրդային Հայաստանից մեկուսի՝ Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և, նույնիսկ, Հյուսիսային Սիրիայում, հայ գաղթականության հավաքմամբ միգուցե «**Ազգային տուն**» (օջախ-Home) ստեղծելու գաղափարը:

Այլ խոսքով՝ միջազգային ատյաններում առաջ քաշվեց Սևրի պայմանագրի վերանայման հարցը: Միացյալ Հայաստանի վերաբերյալ Սևրի պայմանագրը վերանայելու, ավելի ստույգ՝ ձախողելու առաջին քայլը եղավ Դաշնակից երկրների 1921 թ. **Լոնդոնում** գումարված խորհրդաժողովը (**փետրվարի 21 - մարտի 14**), որին հրավիրված էին Ա. Ահարոնյանը և Պողոս Նուբարը: Հավելենք, որ խորհրդաժողովին մասնակցում էր նաև Թուրքիայի զույգ՝ Կ. Պոլսի և Անգորայի կառավարությունների միացյալ պատվիրակությունը:

Իր ելույթում Ա. Ահարոնյանը նշում է, որ քեմալականների 1920 թ. աշնանային ներխուժումը Հայաստան նպատակ է ունեցել՝ ստիպել Հայաստանի կառավարությանը հրաժարվելու Սևրի պայմանագրից: Այնուհետև, նա պարզաբանում է տվել, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքումից շաբաթներ առաջ՝ դեռ նոյեմբերի 2-ին, Կարսի անկումից անմիջապես հետո, ինքը նամակ է ստացել Հայաստանի կառավարությունից հետևյալ բովանդակությամբ. «Քանի որ մեր աշխարհը չորս կողմից պաշարուած է թիւրք եւ բոլշևիկ թշնամիներով, կառավարութիւնը կարող է ստիպուած լինել ծանր յանձնառումներ ստորագրելու: Արդ՝ Պատուիրակութեան եւ մեր Դաշնակիցներին է մնում, ասում էր պաշտօնական թուղթը, չընդունել մեր ստորագրելիք այդ ծանր

պայմանները և վերահաստատել նախկին դրութիւնը»[313]: Ա. Ահարոնյանը վկայաբերում է Հայաստանի կառավարության այդ նամակ-հրահանգը, որն ստացել էր Կարսի անկումից հետո: Հայաստանի կառավարությունը հրահանգում էր Եվրոպայում իր ներկայացուցչին՝ տեղեկացնել Դաշնակիցներին, որ չճանաչեն բռնությամբ պարտադրվելիք մոտալուտ այդ պայմանագիրը և մերժեն դրա բոլոր պարտավորությունների օրինականությունը:

Կնշանակի՝ Ալեքսանդրապոլի պայմանագիրը պարտադրվել է արտաքին բիրտ ուժով կամ սպառնալիքի ճնշման տակ և կտրականապես մերժվել է հայերի կողմից[314]: Իսկ միջազգային պայմանագրային իրավունքի տեսակետից բռնի ուժի գործադրմամբ պարտադրված պայմանագիրն անընդունելի է ու անվավեր[315]: Արդյունքում՝ Լոնդոնի խորհրդաժողովը չեղյալ համարեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը[316]: Մեծ տերությունները չեն ճանաչել նաև Կարսի պայմանագիրը: Ի դեպ՝ Ալեքսանդրապոլի պայմանագիրը չի ճանաչել նաև Խորհրդային Ռուսաստանը: Սակայն ամիսներ անց կնքվեցին հայ ժողովրդի համար Ալեքսանդրապոլի պայմանագրին էապես չզիջող՝ Մոսկվայի և դրա նմանակ Կարսի խայտառակ պայմանագրերը:

Իր հերթին, խորհրդաժողովում Հայկական հարցի վերաբերյալ փետրվարի 26-ի ելույթում Պողոս Նուբարը շեշտում է այն գաղափարը, որ «Ռուսիոյ վերատիրացումը կովկասեան

---

313 **Ահարոնեան Ա.**, նշվ. աշխ., էջ 111-112:

314 Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում», էջ 701-703:

315 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 99-101:

316 Տե՛ս **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 390, նաև՝ **Լազեան Գ.**, Հայաստան և Հայ Դատը, Եր., 1991, էջ 301:

Հայաստանին չի կրնար արգելք դառանալ թրքական Հայաստանի մասին՝ Սէվրի մէջ ընդունուած որոշումին գործադրութեան»[317]: Ի լրումն ասվածի՝ նա առաջարկում է, որ Կովկասահայաստանի փոխարեն գոնե Կիլիկիային, ուր Մուդրոսի զինադադարից հետո կուտակվել էին 150 հազար հայեր, տրվի վարչական ինքնավարություն Ֆրանսիայի գերիշխանության տակ[318]: Սակայն առաջարկը մերժվում է այն պատճառաբանությամբ, որ Սևրի դաշնագում որևէ խոսք չկա Կիլիկիայի վերաբերյալ: Մինչդեռ հարյուր հազարավոր արևմտահայեր, զրկվելով հայրենիքից, շարունակում էին աստանդական կյանք վարել օտար երկրներում: Դրա հետ միաժամանակ խորհրդաժողովում խոսք է բացվում արևմտահայկական նահանգներում «Ազգային օջախ» ունենալու հեռանկարի մասին, որը պետք է միանգամայն անկախ լիներ Թուրքիայից[319]:

Սևրի հաշտության պայմանագրի, ինչպես ասում են, թանաքը դեռ չչորացած, կոնֆերանսում դրա վերանայման հարց բարձրացրին Ֆրանսիան և Իտալիան: Իրենց շահերը սպասարկելու թելադրանքով նրանք զիջումների գնացին քեմալականներին: Մեծ Բրիտանիայի վարչապետ Լ. Ջորջն իր հուշերում գրում է, որ ֆրանսիական կառավարությունը անգլիականի հետևում բանակցություններ էր վարում՝ Քեմալի հետ գաղտնի պայմանագիր կնքելու համար[320]:

Արձանագրենք նաև, որ Լոնդոնի խորհրդաժողովին զուգընթաց, ինչպես արդեն նշվեց, Թուրքիան Մոսկվայում բա-

---

317 **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, Եր., 2003, էջ 281:

318 Տե՛ս **Դարբինեան Ա.**, նշվ. աշխ., էջ 282:

319 Տե՛ս **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 341:

320 **Джордж Л.**, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 495.

նակցում էր Ռուսաստանի հետ, որի արդյունքում էլ **միջազգայնորեն չճանաչված Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի (ԹԱՄԺ) և ՌՍԴԽՀ կառավարությունները** կնքեցին իրենց համար շատ նպաստավոր մարտի 16-ի (իրականում՝ 18-ի) ռուս-թուրքական պայմանագիրը: Այդ պայմանագրի կարևորագույն խնդիրներից մեկն էր բարեկամական Ռուսաստանի օգնությամբ «պատռել» Սևրի պայամանագիրը, ինչին և հասան:

Ի դեպ, անդրադառնալով 1921 թ. ռուս-թուրքական պայմանագրի ստորագրման սույգ օրվա հարցին, հարկ է նշել, որ քաղաքական որոշ նկատառումներով, հետամուտ իրենց մեծապետական շահերի, այդ պայմանագիրը ստորագրվել է ոչ թե մարտի 16-ին, ինչպես, որ ֆիքսված է պայմանագրի բնագրում, այլ իրականում երկու օր ուշ՝ մարտի 18-ին[321]: Այդ մասին իմանում ենք ՌՍԴԽՀ արտ. գործ. ժողկոմ Գ. Չիչերինի՝ մարտի 17-ին Ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինին հասցեագրված նամակից, որից տեղեկանում ենք, որ պայմանագիրը նախատեսվում է ստորագրել մարտի 18-ի երեկոյան[322]: Իսկ ի՞նչն էր կեղծիքի պատճառը:

Բանն այն է, որ մարտի 16-ին Լոնդոնում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեոնիդ Կրասինի և Մեծ Բրիտանիայի առևտրի նախարար Ռոբերտ Հոռնի միջև ստորագրվել է ռուս-անգլիական առևտրական համաձայնագիր, որն ունեցել է նաև

---

[321] Տե՛ս **Казанджян Р.**, К вопросу о датировке Моссковского советско–турецкого договора 1921 г. (տե՛ս «Լրաբեր» հաս. գիտ. ՀՀ ԳԱԱ, Եր., 1999, թիվ 1, էջ 175-179), նաև՝ «Геноцид армян»,документы и комментарий, т. 2, часть 1, М., 2003, с. 465-466, 471, т. 2, часть 2, М., 2005, с. 427, ДВП СССР, т. 4, М., 1960, с. 11 и др.

[322] Տե՛ս «Геноцид армян», документы и комментарий, т. 2, ч. 1, М., 2003, с. 467.

քաղաքական ենթատեքստ: Փաստենք, որ համաձայնագրով կողմերը պայմանավորվում էին ձեռնպահ մնալ միմյանց հանդեպ թշնամական գործողություններից: Ռուսաստանը պարտավորվում էր հրաժարվել Մեծ Բրիտանիայի գաղութներում (Հնդկաստանում, Աֆղանստանում, Իրանում և Մերձավոր Արևելքում) վարել հակաբրիտանական քարոզչություն և չկատարել Բրիտանիայի շահերին հակասող թշնամական գործողություններ: Նույն կերպ, Մեծ Բրատանիայի կառավարությունն էր պարտավորվում հակառուսական քարոզչություն չվարել ու չպաշտպանել այն նորակազմ պետությունները, որոնք ձևավորվել են նախկին Ռուսական կայսրության տարածքի վրա և դարձել անկախ[323]: Ի դեպ, այդպիսի մի կառավարություն էր համարվում նաև 1921 թ. հուլիսից Իրանում հայտնված Ս. Վրացյանի գլխավորած Հայաստանի վտարանդի կառավարությունը, որը վերջնականորեն լուծարվեց 1923 թ. սեպտեմբերին[324]: Ալ. Խատիսյանի բնորոշմամբ՝ «Սա նշանակում էր, որ Անգլիան արդեն պատրաստվում էր չմիջամտել ու չօգնել հայերին իրենց անկախությունը վերականգնելու պայքարի մեջ»[325]:

Արձանագրենք նաև՝ որ, թեև 1921 թ. ամռանը Փարիզում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի վտարանդի կառավարությունների ներկայացուցիչները (Ա. Ահարոնյան, Ա. Չխենկելի, Ա. Թոփչիբաշև, Ա. Չերմոև) Արևմուտքի տերությունների հովանավորությամբ հակաբոլշևիկյան դաշինք ստեղծելու նպատակով՝ **հունիսի 10-ին,** ստորագրում

---

[323] Տե՛ս Документы внешней политики СССР, М., 1959, т. 3, с. 393-394, «Известия», Москва, 22 марта 1921 г.

[324] Տե՛ս **Իրազեկ Հ. (Յ.),** Մոտիկ անցեալից (պատմական դեպքեր և ապրումներ 1917-1922 թթ.), Պէյրութ, 1956, էջ 151:

[325] Տե՛ս **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 343:

են հռչակագիր (դեկլարացիա), սակայն ակներև է դառնում, որ մինչ այդ՝ մարտի 16-ի անգլո-ռուսական առևտրական համաձայնագրի կնքումից հետո Մեծ Բրիտանիան այլևս չէր կարող որևէ ձևով քաղաքական օգնություն ցույց տալ նրանց:

Հարկ է նշել, որ հայկական կողմի մասնակցությունն այս հռչակագրի ստորագրմանը ազգամիջյան հակասություններ և հաճախ քաղաքական իրարամերժ կողմնորոշումներ ունեցող կովկասյան այդ հարևանների հետ բացատրվում էր այն հանգամանքով, որ Ա. Ահարոնյանն ու Ալ. Խատիսյանը փորձում էին կովկասյան համատեղ ուժերով իբր ազդել Թուրքիայի վրա՝ ճանաչել տալու 1914 թ. սահմանը, ինչպես նաև ջանքեր թափել արևմտահայկական որոշ տարածքներ Հայաստանին վերադարձնելու համար: Բայց այս հռչակագիրն այդպես էլ չունեցավ ոչ մի իրավական, առավել ևս՝ գործնական նշանակություն[326]: Կարելի է արձանագրել, որ հայ հասարակական-քաղաքական շրջանակներում այս փաստաթուղթը հիմնականում բացասաբար է ընդունվել: Մասնավորապես Պ. Նուբարը բողոքեց այդ համաձայնագրի կապակցությամբ՝ նշելով, որ թուրք-ադրբեջանական համագործակցությունը երբեք չի կարող որևէ օգուտ բերել հայությանը[327]:

Ինչ վերաբերում է ռուս-անգլիական առևտրատնտեսական համաձայնագրի կնքման գործընթացին, ապա այդ հարցում լիբերալ վարչապետ Դ. Լլոյդ Ջորջի դեմ հանդես եկան պահպանողական նախարարներ Ու. Չերչիլը և Ջ. Քերզոնը:

---

[326]Այդ մասին մանրամասն տե՛ս **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 231-234:

[327] Տե՛ս **Պողոսեան Ս.**, Պողոս Նուբար Փաշա. ազգային գործիչ, Եր., 2004, էջ 205:

Վերջիններս Ռուսաստանի հետ համաձայնագիր կնքելու համար դնում էին մի քանի նախապայման: Դրանցից մեկն էլ համարում էին այն, որ Ռուսաստանը վերանայի իր վերաբերմունքը Հայաստանի հանդեպ և վերջինիս օգտին Թուրքիայից տարածքային որոշ (առնվազը Կարսը և Արդահանը) զիջումներ պահանջի: Գ. Չիչեչինը մարտի 20-ին Մոսկվայից Լոնդոն Լ. Կրասինին հասցեագրած գաղտնի հեռագրում հրահանգում էր, որ, եթե անգլիացիները դժգոհություն հայտնեն ռուս-թուրքական մոսկովյան պայմանագրի վերաբերյալ, ապա թող ինքը պատասխանի, որ «Անգլիան չի կարող մեզանից պահանջել, որպեսզի մենք հետ վերցնենք Կարսը և Արդահանը Թուրքիային զիջելու պայմանը, հակառակ դեպքում՝ պատերազմ կսկսվի մեր և Թուրքիայի միջև»[328]:

Եվ ահա՛, անգլիացիներին մոլորության մեջ գցելու նպատակով՝ Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը թվագրվում է մարտի 16-ով: Տակտիկական այդ հնարքի նպատակն այն էր, որ անգլիական կառավարությանը ցույց տան, թե հայերի համար ոչ նպաստավոր ռուս-թուրքական պայմանագիրը ստորագրվել է անգլո-ռուսական առևտրական համաձայնագրից առաջ, կամ առնվազը համաձայնագրի ստորագրման օրը, **և, իբրև թե, ռուսները տեղյակ չեն եղել հայերին տարածքային որոշ զիջումներ անելու վերաբերյալ Մեծ Բրիտանիայի պահանջին:** Պայմանագրի ստորագրման հետաձգման պատճառներից մեկն էլ եղել է այն, որ թուրքերը գրավոր համաձայնություն են պա-

---

328 Տե՛ս «Геноцид армян», документы и комментарий, т. 2, ч. 1, М., 2003, с. 428, նույն տեղում, հ. 2, մաս 2, Մոսկվա, 2005, էջ 427, նաև՝ ДВП СССР, т. 4, М., 1960, вс. 11.

հանջել ռուսներից՝ որպես օգնություն, մի քանի տարի շարունակ, տարեկան 10 մլն ռուբլի ոսկով ստանալու վերաբերյալ: Ահա՛, հակիրճ այն ամենը, որ վերաբերում է Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի ստորագրման օրվա կեղծման հարցին, ինչը, թերևս, կարելի է համարել բացառիկ երևույթ միջազգային պայմանագրային իրավունքի պատմության մեջ:

Մյուս կողմից, անդրադառնալով այդ նույն օրերին ընթացող Դաշնակից երկրների Լոնդոնի խորհրդաժողովին, պետք է ասել, որ Հայկական հարցից խուսանավում կատարելով, Ֆրանսիայի և Իտալիայի պատվիրակությունների առաջարկով, Միացյալ և Անկախ Հայաստանի պայմանագրային պահանջը նենգափոխվեց «**Հայկական օջախ**»-ի (**Armenian Home**) գաղափարով, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի կամ նույնիսկ Հյուսիսային Սիրիայի որևէ հողակտորի վրա տարագիր հայության համար ստեղծել ինքնավար մի տուն, օջախ, երկրամաս: Կոնֆերանսում ընդունված որոշման 9-րդ կետով սահմանվում էր, որ «Թուրքիա ճանչնայ թուրքահայերու իրաւունքները Ազգային օջախ մը ունենալու Ասիական Թուրքիոյ արեւելեան սահմաններուն մէջ»[329]: Ազգերի Լիգան ևս հավանություն տվեց թուրքահայերի համար Ազգային օջախի գաղափարին: Բայց այդ որոշումներին ևս հետագա ընթացք չտրվեց:

Փաստենք, որ տակավին Լոնդոնի խորհրդաժողովի ընթացքում՝ 1921 թ. մարտի 11-ին, Ֆրանսիայի նոր վարչապետ և արտաքին գործերի նախարար **Արիստիդ Բրիանի** և Թուրքիայի արտգործկոմիսար **Բեքիր Սամի բեյի** միջև ստորագրվեց գաղտնի համաձայնագիր, որով Թուրքիային էր հանձն-

---

329 **Վրացեան Ս.**, Միացեալ Հայաստան (Դաշնակցութիւնը երէկ եւ այսօր), Հալէպ, 1945, էջ 23:

վում ամբողջ Կիլիկիան: Այդ գործարքի շարունակությունը եղավ Կարսի պայմանագրից ուղիղ մեկ շաբաթ հետո Անգորայի 1921 թ. **հոկտեմբերի 20-ի** թուրք-ֆրանսիական (Յու. Քեմալ - Ֆր. Բոյոն) նոր դաշնագիրը, որով Ֆրանսիան Կիլիկիայի և այլ հարցերում Թուրքիային նոր զիջումներ արեց՝ փաստորեն ի վնաս հայ ժողովրդի շահերի[330]: Կիլիկիայի հայության և մյուս քիրստոնյաների հովանավորությունն ստանձնած Ֆրանսիան լքեց նրանց, իր զորքերը դուրս բերեց Կիլիկիայից, ինքնապաշտպանության դիմած տասնյակ հազարավոր հայեր զինաթափվեցին, բնաջինջ եղան, իսկ կենդանի մնացածները խուճապահար ու տարերայնորեն արտագաղթեցին հարևան արաբական երկրներ, Կիպրոս և Հունաստան:

Այստեղ տեղին է հիշեցնել Հայկական հարցին առնչվող ևս մի դրվագի մասին, երբ ՀՅԴ Պատասխանատու մարմնի (ՊՄ) ներկայացուցիչներ Վ. Փափազյանը, Ա. Ջամալյանը և Վ. Նավասարդյանը 1921 թ. հուլիսին Լատվիայի մայրաքաղաք Ռիգայում բանակցություններ վարցին ՌԿ(բ)Կ ԿԿ-ի պատվիրակներ Ա. Իոֆեի, Ս. Տեր-Գաբրիելյանի և Վ. Տեր-Վահանյանի հետ: ՀՅԴ-ն առաջարկում էր Ռուսաստանին, որ նա ներազդի իր դաշնակից քեմալական Թուրքիայի վրա՝ Արևմտյան Հայաստանի որոշ տարածքներ ինքնիշխան Հայաստանին միացնելու, ինչպես նաև մինչև Սև ծով Հայաստանի համար երկաթուղային կապ հաստատելու համար: Բանակցությունների սկիզբը կարծես հուսադրող էր: Հուլիսի 14-ին կողմերի միջև նախաստորագրվեց նման բովանդակությամբ մի համաձայնագիր:

---

330 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1388, թ. 39-42, նաև՝ **Ղորղանեան Գ.**, Հայաստանի Հանրապետութիւնը եւ պետութիւնները, (տե՛ս «ՎԷՄ», Պարիզ, 1934, թիվ Զ, էջ 63 և 65:

Սակայն շուտով պարզվեց, որ խորհրդային կողմը նման փաստաթուղթ էր նախաստորագրել զուտ տակտիկական նկատառումով. մի կողմից՝ առանց կռվի Զանգեզուրը խորհրդայնացնելու համար, իսկ մյուս կողմից՝ հակազդելու համար իր թիկունքում Արևմուտքի տերությունների հետ քեմալականների երկակի քաղաքական խաղերին: Սակայն այն բանից հետո, երբ հուլիսի կեսերին Զանգեզուրը խորհրդայնացվում է, հուլիսի 26-ին ՌԿ(բ)Կ ԿԿ-ի քաղբյուրոն որոշում է կայացնում վճռականորեն մերժել Ռիգայում ստորագրված համաձայնագրի նախագիծը և դադարեցնել բանակցությունները Դաշնակցության հետ: Դրանով էլ հարցը փակվում է[331]:

Այդուհանդերձ, ՀՅԴ - ՌԿ(բ)Կ Ռիգայի կոչված բանակցություններն անպտուղ մի ճիգ ու ջանք էին՝ այս անգամ Խորհրդային Ռուսաստանի քաղաքական ազդեցությամբ Միացյալ Հայաստանի գաղափարին ինչ-որ մասնակի լուծում տալու:

Այդ նույն ժամանակաշրջանում Արևմուտքում շարունակվում էին գործընթացները Խորհրդային Հայաստանից մեկուսի՝ «Ազգային օջախ»-ի գաղափարի շուրջ: Հայկական «Ազգային օջախ»-ի հարցը քննության առարկա դարձավ 1921 թ. սեպտեմբերին Ազգերի լիգայի 2-րդ համաժողովում (համագումարում): Հաշվի առնելով փոփոխված իրավիճակը՝ քեմալականների հաղթանակները հույների հանդեպ, Հայաստանի մի հատվածի խորհրդայնացումը և այլն, Ազգերի լիգայի Խորհրդին հանձնարարվում է «դաշնակից» Անտանտի Գերագույն խորհրդի առաջ հարց բարձրացնել, որպեսզի նա անհրաժեշտ միջոցներ ձեռք

---

[331] Այդ մասին հանգամանորեն տե՛ս **Հակոբյան Ա.**, ՀՅԴ-ՌԿ(բ)Կ Ռիգայի 1921 թ. բանակցությունների հարցի շուրջ, («Դրօշակ», Եր., 2010, թիվ 3 (մարտ), էջ 31-37):

առնի՝ Թուրքիայի հետ առաջիկայում կնքվելիք պայմանագրում ապահովելու հայերի «Ազգային օջախ»-ի ստեղծման պահանջը՝ միանգամայն անկախ օսմանյան տիրապետությունից[332]: Լիգայի գլխավոր քարտուղարը 1921 թ. նոյեմբերի 19-ի խորհրդի նիստում մասնակիցների ուշադրությունը հրավիրել է Հայկական միացյալ պատվիրակության մի նամակի վրա, որում վերջինս ջերմ շնորհակալություն էր հայտնում համագումարի որոշման համար և թախանձագին խնդրում խորհրդին՝ «գործ դնելու իր բոլոր միջոցները, որպէսզի դաշնակից կառավարութիւնները որքան հնարաւոր է շուտ ձեռնարկեն անհրաժեշտ քայլեր իրականացնելու համար այդ որոշումը»[333]: Ցավոք, այդ որոշումը ևս հետագա դրական ընթացք չստացավ:

1922 թ. մարտին, այս անգամ արդեն Փարիզում, հրավիրված դաշնակից երկրների խորհրդաժողովում կրկին շոշափվեց հայկական «Օջախ» ստեղծելու հարցը, սակայն, Ալ. Խատիսյանի վկայությամբ, լոնդոնյանի համեմատ՝ ավելի անորոշ ձևակերպմամբ: Անորոշ էր նաև, թե որտեղ պետք է ստեղծվեր այդ օջախը՝ արևմտահայ նահանգներու՞մ, թե՞ Կիլիկիայում[334]:

Եվ, վերջապես, «Դաշնակիցների» հաջորդ՝ ավելի վատթար, քայլը եղավ Մերձավոր Արևելքի հարցերով գումարված **Լոզանի** միջազգային կոնֆերանսը (**1922 թ. նոյեմբերի 20 – 1923 թ. հուլիսի 24**), որում արդեն լիովին մոռացության մատնվեց ոչ միայն Միացյալ և Անկախ Հայաստանի, այլև՝ Լոնդոնի խորհրդաժողովում իրենց իսկ առաջադրած հայկական «Ազգային տան» պահանջը:

---

332 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4010, ց. 1, գ. 42, թ. 1:

333 Նույն տեղում:

334 Տե՛ս **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 350-351:



Լոզանի խորհրդաժողովի առնչությամբ պետք է նկատել, որ, Ֆրանսիայից և Իտալիայից զատ, 1922 թ. աշնանը (հոկտեմբերին), ի վնաս Հայկական հարցի, փոփոխություններ տեղի ունեցան անգլո-թուրքական հարաբերություններում:

Քայքայվեց լիբերալ Լ. Ջորջի՝ պահպանողականներ Ու. Չերչիլի, Ջ. Քերզոնի հետ ունեցած կոալիցիոն կառավարությունը: Անգլիական գեն. Հարինգտոնը հոկտեմբեր ամսին զինադադար կնքեց Թուրքիայի հետ: Դրան գումարվեց նաև հակապատերազմական ու սոցիալական պահանջներով բանվորական շարժումները Անգլիայում[335]: Այս հանգամանքները հավանաբար բացասաբար են ազդել Լոզանի խորհրդաժողովում Մեծ Բրիտանիայի դիրքորոշման՝ Հայկական հարցի քիչ թե շատ նպաստավոր լուծման ընթացքի վրա:

---

335 Այդ մասին տե՛ս **Трухановский В. Г.**, Уинстон Черчилль, М., 1968, с. 214-215.

Իր հերթին, Արևմուտք-Ռուսաստան-Թուրքիա հարաբերությունների համատեքստում հարկ է նկատել, որ Ռուսաստանի հետ քեմալականների վարած կեղծ բարեկամության քաղաքականությունը Արևմուտքի տերություններին բերեց այն համոզման, որ պետք է ճանաչել «Նոր Թուրքիան» և կարգավորել հարաբերությունները նրա հետ, որն էլ տեղի ունեցավ Լոզանի խորհրդաժողովում: Կոնֆերանսում անպաշտոն (խորհրդի կարգով) կերպով ելույթներ ունեցան Ա. Ահարոնյանը, Գ. Նորատունկյանը, Ալ. Խատիսյանը[336]: ՀՅԴ-ն, որը Միացյալ և Անկախ Հայաստանի պահանջի ջատագովն էր, կրկին հարկադրված էր բավարարվել «Ազգային օջախ»-ով: Այդ կապակցությամբ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Լորդ Քերզոնի դիմումը Թուրքիայի պատվիրակության ղեկավար Իսմեթ փաշային, ի կատարումն Լոնդոնի կոնֆերանսի, հայերին ապրելու օջախ տալու վերաբերյալ, մերժվեց վերջինիս կողմից: Լոզանի թուրքանպաստ պայմանագրով (կազմված 5 մասից, 123 հոդվածներից) գործնականում մերժվեց հայկական «Ազգային օջաիխ»-ի գաղափարը, արգելվեց հայ գաղթականության վերադարձը Արևմտյան Հայաստան:

Ի դեպ, Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությունը (արտ. գործ. ժողկոմ Գ. Չիչերին) աջակցեց թուրքերին՝ «Ազգային օջախ»-ի գաղափարը մերժելու հարցում: Դրա փոխարեն, իբրև մարդասիրական քայլ, նա առաջարկեց որպեսզի տարագիր հայերին թույլատրվի բնակություն հաստատել Ռուսատանի երկրամասերում: Այդ կապակցությամբ Գ. Չիչերինը հայտարարում է, որ Մոսկվան արտոնում է 250 հազար հայ գաղթա-

---

[336]**Գանգրունի Հ.**, Հայաստան 1920-1921 և միջազգային դիվանագիտությունը, Պէյրութ, 1986, էջ 107:

կաններ փոխադրել Ռուսաստան և բնակեցնել Կուբանի ու Դոնի երկրամասերում[337]:

Այդ և նման այլ ոչ հայանպաստ առաջարկների ու դիրքորոշումների հետևանքով՝ Լոզանի պայմանագրում անգամ «Հայաստան» անվան հիշատակություն չկա: Արգելվեց հայ գաղթականության վերադարձը Արևմտյան Հայաստան, և այդպես անփառունակ «լուծվեց» Հայկական հարցը: Ի դեպ, Լոզանի պայմանագրի կնքման կապակցությամբ ԽՍՀՄ արտ. գործ. ժողկոմ Գ. Չիչերինը շնորհավորում է խորհրդային երկրում դեսպան նշանակված Թուրքիայի նախկին արտ. գործ. կոմիսար Ահմեդ Մուխթարին՝ «Անարդարացի Սևրի պայմանագրի» չեղարկումը համարելով «խորհրդային դաշնության ժողովուրդների հաղթանակը»[338]: Ստացվում էր, որ ԽՍՀՄ արտ. գործ. ժողկոմը շնորհավորում էր թուրքերին նաև՝ հայ ժողովրդի անունից: Արձանագրենք, որ հակահայ Լոզանի պայմանագիրը չի ճանաչել ԱՄՆ-ը:

Զուտ պատմագրության տեսակետից՝ տեղին է հիշեցնել հայ կոմունիստ ղեկավարների արձագանքը Լոզանի պայմանագրին ու «Ազգային օջախ»-ի գաղափարին: Քաղաքական, գաղափարական, դասակարգային համերաշխության ու նպատակահարմարության (կոնյունկտուրայի) թելադրանքով՝ ՀՍԽՀ քաղաքական ղեկավարությունը արտաքուստ կարծես ուրախ էր, որ կնքվեց Լոզանի, մեղմ ասած, ոչ հայանպաստ պայմանագիրը: Օրինակ, այդ կապակցությամբ Հանրապետության ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինը հեգնում էր. «Լոզանը հանդիսա-

---

[337] Տե՛ս **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ Դատը, Եր., 1991, էջ 297:
[338] ДВП СССР, т. 4, М., 1960, с. 405.

ցավ դաշնակցական մեծ ծրագրերի գերեզմանը»[339]: Իսկ Հայ-կոմկուսի ԿԿ-ի պաշտոնաթերթ «Խորհրդային Հայաստան»-ը հայկական «Ազգային օջախ»-ի հարցի բարձրացումը որակում էր իբրև «Հայկական սիոնիզմ»[340]: Հասկանալի է, որ ՀՍԽՀ քաղաքական ղեկավարությունը հարկադրված է եղել Կենտրոնի ուղղորդմամբ ցուցաբերել թուրքամետ դիրքորոշում, որպեսզի հանկարծ չխաթարվի խորհրդա-թուրքական բարեկամությունը:

Բայց և այնպես խոսելով Լոզանի պայմանագրի մասին՝ հարկ է նշել, որ դրանում չկա որևէ արձանագրում Թուրքիայի արևելյան սահմանների մասին, չի նշվում, թե Թուրքիան ինչ սահմանագծով է բաժանվում ՀՍԽՀ-ից, ավելի ստույգ՝ ԽՍՀՄ-ից: Այդ նշանակում է, որ պայմանագիրը ստորագրած Անտանտի մեծ ու փոքր երկրները չեն ճանաչել Թուրքիայի արևելյան սահմանագծի վերաբերյալ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրի դրույթները, և իրականում դա այդպես էլ կա: Լոզանի պայմանագրում ոչ մի խոսք չի ասված նաև 1920 թ. նոյեմբերի 22-ին Վ. Վիլսոնի անցկացրած հայ-թուրքական սահմանագծի մասին: Բերված փաստարկներից կարելի է հետևեցնել, որ Լոզանի պայմանագիրը կարող է Թուրքիայի և նրա արևելյան հարևանների միջև սահմանների հետագա կարգավորման իրավական ու քաղաքական խնդիր առաջացնել:

Ինչ վերաբերում է հայկական «Ազգային օջախ»-ի հետագա ճակատագրին, ապա հարցը քննեցնելու և մեռցնելու նպատակով Լոզանի կոնֆերանսն այն հանձնեց Ազգերի լիգայի Խորհրդին: Սակայն դրանից հետո էլ՝ նախկին Անտանտի տերություններից և ոչ մեկը Թուրքիային չհիշեցրեց հայկական

---

339 **Լուկաշին Ս.**, Հոդվածներ, զեկուցումներ, ճառեր, Եր., 1986, էջ 191:
340 «Խորհրդային Հայաստան», 2 փետրվարի 1923 թ.:

«Ազգային օջախ»-ի ստեղծման հարցի մասին:

Թեև մեզանում խորհրդային ու նաև հետխորհրդային պատմադիվանագիտական գրականության մեջ միակողմանիորեն տարածում ունի այն տեսակետը, որ 1921 թ. փետրվար-մարտ ամիսների՝ Լոնդոնի և ապա 1922-1923 թթ.՝ Լոզանի կոնֆերանսներում Անտանտի տերությունները «թաղեցին Հայ Դատը», սակայն դրա հետ մեկտեղ ճշմարտությունը պահանջում է ասել, որ, արևմտահայության հայրենազրկման ու պահանջատիրության հետ ուղղակիորեն կապված, Հայ Դատին, ասել է թե՝ Միացյալ ու Անկախ Հայաստանի գաղափարին ավելի ծանր հարվածներ հասցրին խորհրդա-թուրքական 1921 թ. Մոսկվայի և դրա նմանակ Կարսի պայմանագրերը: Բոլշևիկյան Ռուսաստանը և քեմալական Թուրքիան, համատեղ գործակցությամբ հակազդելով Սևրի դաշնագրին, գործնականում Հայաստանը բաժանեցին իրար միջև[341]: Այդ մասին տակավին 1920 թ. գարնանը Մ. Քեմալի պատվիրակ Խալիլ փաշան էր առաջարկել Վրաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Կիրովին՝ համատեղ ռազմական գործողություններով գրավել ամբողջ Հայաստանը և բաժանել Ռուսաստանի և Թուրքիայի միջև[342]: Ինչ վերաբերում է հայ-թուրքական Ալեքսանդրապոլի պայմանագրին, ապա **այն եղել է բիրտ ուժով Հայաստանին պարտադրված մի պայմանագիր, որը չի ճանաչվել ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Թուրքիայի կողմից, չի վավերացվել, ուստիև՝ չի ունեցել իրավական որևէ ուժ:**

---

[341] Տե՛ս **Խուրշուդյան Լ.**, Հայաստանի բաժանումը, Եր., 2002, էջ 230-313:

[342] Տե՛ս **Арутюнов А.**, Досье Ленина без ретуши, (документы, факты, свидетельства), М., 1999, с. 226.

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է ասել, որ Լոնդոնում, Լոզանում և մյուս խորհրդաժողովներում Հայկական հարցում նախկին Անտանտի տերությունների ցուցաբերած նահանջը պետք է բացատրել նրանց մեծապետական շահերով, նաև՝ Հայաստանի խորհրդայնացման հանգամանքով, քանզի փոփոխված նոր պայմաններում Միացյալ Հայաստանի գաղափարի ինչ-որ չափով նյութականացումը, նրանց ընկալմամբ, նշանակում էր գործնականում Խորհրդային Հայաստանի, ավելի ստույգ՝ **Խորհրդային Ռուսաստանի տարածքների էլ ավելի ընդարձակում**, որը նրանց ռազմավարական շահերի տեսակետից բնավ ընդունելի չէր:

Մյուս կողմից՝ Անտանտի տերությունները և, առաջին հերթին Անգլիան, եթե Թուրքիայի վրա ճնշում էին գործադրում, ապա դրա նպատակը վերջինիս Ռուսաստանի դեմ ուղղելն էր: Բայց քանի դեռ Թուրքիան չէր լուծել իր ազգային-տարածքային հիմնախնդիրները և այդ դժվարին ճանապարհին զգում էր բոլշևիկների համակողմանի օգնության կարիքը, այդ ընթացքում նախապատվությունը տալիս էր Ռուսաստանին: Բայց հենց որ ռուսական զենքով ու ոսկով նա լուծեց իր ռազմավարական խնդիրները, դեն նետեց բոլշևիկների հետ հաստատած կեղծ բարեկամության քողը, թուլացրեց հետաքրքրությունը խորհրդային երկրի նկատմամբ և անթաքույց կերպով թեքվեց դեպի Արևմուտք:

Իր հերթին, Հայաստանի խորհրդայնացումից հետո, Անտանտի երկրների ղեկավար շրջանում ևս մարեց հետաքրքրությունը Սևրի պայմանագրի և, առհասարակ, Միացյալ Հայաստանի խնդրի հանդեպ: Այս կապակցությամբ Ալ. Խատիսյանն իր հուշերում գրում է. «...երբ մենք՝ պաշտպանելով Միա-

ցեալ Հայաստանի սկզբունքը բուռն կերպով կը պնդէինք մեր պահանջքին վրայ՝ մեզ հարց կու տային. «**Ուրեմն, դուք կ՚ուզէք, որ Խորհրդային Հայաստանը ընդարձակուի, այսինքն՝ որ նոր հողամասեր անցնին բոլշեւիկներու իշխանութեան տակ** (ընդգծումը՝ Ա. Հ.)»[343]: Արևմուտքի տերությունների ղեկավարների նման հարցադրմանը Խատիսյանը տալիս է հետևյալ բացատրությունը, որ չնայած մենք դեմ էինք բոլշևիկյան իշխանությանը, բայց «կը պաշտպանէինք Խորհրդային Հայաստանի սահմաններուն ընդարձակումը»[344]: Եվ այս իմաստով հարկ է ընդգծել, որ ՀՅԴ և, որպես կանոն, գաղթաշխարհի քաղաքական մյուս շրջանակները պաշտպանել են այդ պահանջը խորհրդային վարչակարգի հետագա ամբողջ 70 տարիների ընթացքում:

Ինչ վերաբերում է Արևմուտքի տերությունների ցուցաբերած վարքագծի գնահատականին, ապա հարկ է նշել, որ նրանք Հայաստանի ու հայ ժողովրդի համար ծանր պահին իրենց շահերի թելադրանքով, **քողարկված կերպով**, հայությանը թողեցին բախտի քմահաճույքին և աստիճանաբար, իբրև հակակշիռ Խորհրդային Ռուսաստանի, հաշտվեցին ու բարեկամացան Թուրքիայի հետ: Այդ իմաստով տեղին է հիշել Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջի կարճ խոստովանությունը. «Հայաստանը մեր զոհն է»[345]:

Մյուս կողմից՝ Խորհրդային Ռուսաստանը նույնպես զուտ իր քաղաքական շահերի թելադրանքով և հանուն համաշխարհային հեղափոխության և այլ սին գաղափարների իրականաց-

---

[343] **Խատիսեան Ալ.**, նշվ. աշխ., էջ 347-348:

[344] Նույն տեղում, էջ 348:

[345] **Джордж Л.**, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 390:

ման, **բացահայտ կերպով**, ռազմաֆինանսական ու քաղաքական օգնություն ցույց տվեց Թուրքիային, որպեսզի համատեղ պատռեն Սևրի պայմանագիրը, այսինքն՝ **Միացյալ Հայաստանի նպատակը**, ծնկի բերեն իմպերիալիզմի «գործիք» հան դիսացող Հայաստանը և, բզկտելով նրա տարածքները, բաժանեն իրար միջև: Երկու դեպքում էլ՝ արդյունքը եղավ նույնը, որով ոտնահարվեցին հայ ժողովրդի պատմական, իրավական ու քաղաքական շահերը:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

100-ամյա հեռավորությունից քննելով և գնահատելով «-Միացյալ և Անկախ Հայաստանի» ակտը և դրա իրագործման համար թափված ջանքերը՝ իբրև վերջաբան կարելի է արձանագրել հետևյալը.

- Վաղնջական ժամանակներից իր պատմական հայրենիքում՝ Մեծ Հայքում, պետականությունների հարուստ ընտրանի կերտած, դարավոր նյութական ու հոգևոր արժեքներ ստեղծած հայ ժողովուրդը հետագա դարերում, արտաքին ու ներքին աննպաստ պատմաքաղաքական դեպքերի և իրադարձությունների բերումով նվաճվեց օտարների կողմից, կորցրեց իր անկախ պետականությունը և քանիցս ենթարկվեց բաժանման: Սակայն ամբողջ միջնադարում և նոր ժամանակներում հայ հանրույթի ներսում երբեք չմարեց պետականության ու քաղաքական անկախության գաղափարը:

- Արդեն 19-րդ դարի 2-րդ կեսին հայ հասարակական – քաղաքական միտքը որակական նոր փուլ թևակոխեց: Դարավերջին ասպարեզ իջան հայ ազգային քաղաքական երեք՝ Արմենական, Հնչակյան և ՀՅԴ կուսակցությունները, որոնք իրենց որդեգրած մարտավարությամբ ու ռազմավարությամբ ձեռնամուխ եղան հայրենի երկրի ազատագրման ծրագրային պահանջի իրագործմանը՝ ինքնապաշտպանությունից ու ինքնավարությունից դեպի քաղաքական անկախություն վերընթացով, որը, ի վերջո, Ռուսական հեղափոխությունների և Առաջին աշխարհամարտի բարդ ռազմաքաղաքական իրադարձությունների տրամաբանությամբ, Մայիսյան հաղթական հերոսամարտերի գնով հանգեցրեց Հայաստանի անկախության փաստին, իսկ ապա

նաև՝ Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի իրացման քայլին: Այդպիսով, դարավոր ընդմիջումից հետո վերականգնվեց Հայոց անկախ պետականությունը՝ նոր բովանդակությամբ ու նոր արժեհամակարգով: Դրանով իսկ՝ հնարավորություն ստեղծվեց վերականգնելու օտար ուժերի կողմից դարերով արհեստականորեն բաժանված Հայաստանների միասնությունը, հայ մեծանուն գրողներից Պ. Սևակի բնորոշմամբ՝ «Հայաստան» մաքրանունից պոկելու և դեն նետելու «Ռուսա»-ն և «Տաճկա»-ն:

- Հարկ է արձանագրել, որ 20-րդ դարասկզբի հայ քաղաքական կուսակցություններից Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի կրող և դրա իրականացմանը ի սկզբանե հետամուտ ամենահետևողական քաղաքական ուժը եղավ ՀՅԴ կուսակցությունը, որը հետագայում էլ շարունակեց այն համարել իր գործունեության ռազմավարական առանցքը՝ որպես անբաժանելի խորհրդանիշ, ինչպիսիք են՝ «Դեպի երկիր» կարգախոսը, «Եռագույն-»ի խորհուրդը, «Մեր Հայրենիք»-ի ոգին և այլն:

- Եթե 19-րդ դարավերջին հասարակական-քաղաքական ասպարեզ իջած ՀՅԴ կուսակցությունը հանդես էր գալիս օտարների կողմից բաժանված Արևմտյան և Արևելյան Հայաստանների ինքնավարության չափավոր պահանջով, ապա 20-րդ դարասկզբների աշխարհացունց դեպքերի և իրադարձությունների տրամաբանությամբ, արտահայտելով հայ ժողովրդի հավաքական կամքը, հայ ազգային մյուս քաղաքական շրջանակների հետ միասին նպատակամղելով նրա ջանքերը՝ Մայիսյան հերոսամարտերի արդյունում հայրենիքի մի փոքր հողակտորի վրա պաշտոնապես հռչակվեց Հայաստանի անկախությունը:

- Առաջին հանրապետությունը դարձավ այն հիմնասյունը, որը հնարավորություն ընձեռեց պետական-ինստիտուցիոնալ

մակարդակով օրակարգ բերել երկու Հայաստանների միավորման՝ **Միացյալ և Անկախ Հայաստանի** հիմնանպատակը: Եվ այդ գաղափարի նյութականացման նպատակով մեկ դար առաջ՝ **1919 թ. Մայիսի 28-ին** Հայաստանի կառավարությունը պաշտոնապես, համապատասխան ակտով հռչակեց Միացյալ Հայաստանի անկախությունը և պետական ու հանրային մակարդակով ջանքեր գործադրեց այն նյութականացնելու ուղղությամբ: Եվ պետք է արձանագրել, որ Միացյալ Հայաստանի հիմնանպատակի իրագործումն այն ժամանակվա պայմաններում **միանգամայն իրատեսական** էր:

- Հայ ժողովրդի դարերով երազած պատմական Հայրենիքի վերատիրման գաղափարի իրավապայմանագրային մարմնավորումները եղան **1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը և ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի նոյեմբերի 22-ի Իրավարար վճիռը** հայ-թուրքական սահմանի վերաբերյալ: Սրանք անհերքելի ու անժամանցելի պատմական, իրավական ու քաղաքական փաստաթղթեր են հայ ժողովրդի՝ Արևմտյան Հայաստանի իրավատերը լինելու մասին: Հասնել այդ խնդրի վերջնական ու արդարցի լուծմանը՝ կնշանակի ամբողջապես լուծել Հայկական հարցը: 1920 թ. Սևրի պայմանագրով պաշտոնական Օսմանյան Կայսրությունը և Արևմուտքը ճանաչել են հայ ժողովրդի իրավունքն իր ամբողջական հայրենիքի նկատմամբ: Այդպիսով, Սևրի պայմանագիրը և ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի Իրավարար վճիռը Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի անվիճելի իրավունքների վերջնական ճանաչումն են՝ անկախ այն հանգամանքից, որ այն ժամանակին կյանքի չկոչվեց:

- Անուրանալի է ՀՅԴ-ի դերը անկախության նյութականացման և դրա տրամաբանական շարունակությունը կազմող Միացյալ Հայաստանի նպատակն առաջ տանելու գործում: Այս

կապակցությամբ Դաշնակցություն կուսակցության ճանաչված տեսաբան ու գաղափարախոս Գ. Գյոզալյանը գրում է, որ «Մայիսի 28-ը Հ. Յ. Դաշնակցութեան ստեղծագործութիւնն է», իսկ «Միացեալ ու Անկախ Հայաստանի գաղափարի մշակումը նրա մեծագույն գործն է: Դրանով հայ քաղաքական միտքը ամբողջանում է ՀՅԴ մէջ, ուր ներդաշնակորեն լուծուած է ե՛ւ հողի, եւ՛ մշակոյթի, ե՛ւ պետականութեան հարցը»[346]: Բայց միաժամանակ պետք է նշել, որ հայ քաղաքական մտքի ստեղծագործ այդ կառույցի առաջին աղյուսները դրեցին 19-րդ դարի հայ մեծերը՝ Խ. Աբովյանը, Ստ. Նազարյանցը, Մ. Նալբանդյանը, Ռաֆֆին, Գր. Արծրունին և մյուսները: ՀՅԴ-ն եղավ նրանց գաղափարների ու մտքերի մարմնավորողն արդեն **գործնական հողի** վրա:

- Հարկ է արձանագրել, որ ՀՅԴ 1919 թ. Ընդհանուր ժողովից ի վեր նրա բոլոր համաժողովներում, ծրագրային փաստաթղթերում, իբրև վերջնանպատակ, հետևողականորեն առաջ է մղվել Միացյալ, Ազատ և Անկախ Հայաստանի քաղաքական հիմնապահանջը: Հայտնի է, որ սկսած 1920-ական թվականներից Հայկոմկուսը և խորհրդային իշխանությունը Հայաստանում և գաղթաշխարհում ՀՅԴ-ի վերացման կամ, նվազագույնը, չեզոքացման ուղղությամբ տարվող անհաշտ պայքարում ոչ պակաս ծավալի քարոզչական աշխատանք էին տանում նաև «Միացյալ և Անկախ Հայաստանի» գաղափարի դեմ, քանզի «Միացյալ և Անկախ Հայաստան» ասելով՝ հասկանում էին Դաշնակցություն կուսակցություն: Խորհրդային Հայաստանի կուսակցական ու պետական գրեթե բոլոր գործիչների և պատմաբանների տեսակետը Հայկական հարցում, ըստ էության, եղել է այն, որ Հայաստա-

---

[346] **Գիւզալեան Գ.**, Հայ քաղաքական մտքի զարգացումը եւ Դաշնակցութիւնը, Պարիզ, 1927, էջ 137:

նի խորհրդայնացմամբ, իբր, լուծվել է Հայկական հարցը, էլ չենք խոսում՝ Միացյալ և Անկախ Հայաստանի մասին:

- Հայ բոլշևիկների և նրանց համախոհ հայ քաղաքական որոշ ուժերի ակնկալիքն այն էր, որ Հայկական հարցի ու Միացյալ և Անկախ Հայաստանի նպատակի՝ ասպարեզից վերացումով պիտի անհետանար նաև այդ գաղափարի հիմնական կրող ՀՅԴ կուսակցությունը: Բայց այդպես չեղավ: ՀՅԴ-ն կարողացավ դիմակայել Հայկոմկուսի և խորհրդային իշխանության ոտնձգություններին: Եթե 1920-ական թվականներին ծավալված հետապնդումների, հրապարակային դատերի, լուծարման համագումարների, բանտի ու աքսորների միջոցով բոլշևիկյան կուսակցությանը հաջողվեց ՀՅԴ-ի կառույցները քայքայել ու վերացնել խորհրդային տարածքից, ապա գաղթաշխարհում նա, կապված լինելով հայ ժողովրդի քաղաքական ձգտումների, առօրեական հոգսերի, հայապահպան բազում խնդիրների հետ, պահպանեց իր կենսունակությունը: Անկախ միջազգային ատյաններում առկա տեղատվություններից՝ նա ոչ միայն մոռացության չմատնեց, այլև այս կամ այն կերպ կուսակցական ու հանրային մակարդակներով ջանքեր թափեց առաջ տանելու իր գաղափարական կարևորագույն հիմնադրույթը համարվող Միացյալ և Անկախ Հայաստանի տեսլականը:

- Առաջին անգամ անկախ Հայաստանի մայրաքաղաք Երևանում գումարված ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովը պաշտոնապես ամրագրեց Միացյալ և Անկախ Հայաստանի ծրագրային պահանջը: Արդեն հետանկախության շրջանում, ՀՅԴ-ի Բուխարեստի (Պուքրեշի) 1921 թ. ապրիլի խորհրդաժողովը, քննության առնելով օրախնդիր ու հեռանկարային բազում հարցեր և ընդունելով համապատասխան որոշումներ, չշրջան-

ցեց այս խնդիրը. որոշում կայացրեց՝ կանգնած մնալ «Միացյալ Հայաստանի անկախության տեսակետի վրա»[347]: Այդ գաղափարի նյութականացմանն ուղղված արտահայտություն կարելի է համարել 1921 թ. Ռիգայի բանակցությունները ՀՅԴ և ՌԿ(բ)Կ ներկայացուցիչների միջև: Հուլիսի 14-ին կողմերի միջև կայացված համաձայնագրով խորհրդային կողմը պարտավորվում էր ճանաչել Ազատ և Անկախ Հայաստանի գոյությունը և նպաստել Հայկական հարցի լուծմանը: Սակայն Զանգեզուրի դյուրին խորհրդայնացմանը միտված բոլշևիկների տակտիկական այդ քայլը գործնականում որևէ դրական արդյունքի չհանգեցրեց[348]:

Բուխարեստի կոնֆերանսից երկու տարի անց՝ 1923 թ. ապրիլ-մայիսին գումարված ՀՅԴ Վիեննայի արտակարգ խորհրդաժողովը դարձյալ ընդգծեց, որ կուսակցության ազգային-քաղաքական ուղղության ղեկավար սկզբունքը շարունակում է մնալ «**Միացեալ եւ Անկախ Հայաստանի** պահանջը»[349]:

- Թեև ՀՀ-ն կորցրեց իր անկախությունը և խորհրդայնացվեց, բայց այդ բռնի գործողությունը բնավ չսասանեց ՀՅԴ-ի հավատը Հայաստանի հետագա անկախության՝ Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան կերտելու նկատմամբ. վկա՝ 1921 թ. Փետրվարյան ժողովրդական ապստամբությունը և դրա շնորհիվ մեկ և կես ամսով Հայաստանի ազատության և անկախության վերականգնումը:

- «**Միացեալ եւ Անկախ Հայաստան**»-ի քաղաքական ա-

---

347 **Տասնապետեան Հր.**, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութիւնեն մինչեւ Ժ Ընդհ. ժողով (1890-1924), Աթէնք, 1988, էջ 159, նաև՝ «Ազդակ-Շաբաթօրեակ», Պէյրութ, 30 սեպտեմբերի 1973 թ. (թիվ 42), էջ 665:

348 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 234-242:

349 **Տասնապետեան Հր.**, նշվ. աշխ., էջ 165:

ռաջադրանքը վերահաստատվեց ՀՅԴ-ի 10-րդ Ընդհանուր ժողովում (1924/1925 թթ., Փարիզ)՝ իբրև ծրագրային նպատակ՝ մնալով անփոփոխ [350]: Այս համաժողովում հաստատված կուսակցության ծրագրի քաղաքական պահանջների առաջին իսկ կետում ամրագրվեց, որ Հայաստանը պիտի լինի ժողովրդավար անկախ հանրապետություն, որի սահմանների մեջ պիտի միանան նախկին ռուսահայկական և թուրքահայկական հողերը[351]: Ծրագրային քաղաքական հիմնական այդ պահանջը, «իբրև ազգային-քաղաքական առաջնորդող ուղեցոյց, մինչեւ այսօր ալ կը մնայ ի զօրու»[352]: Այդպիսով, ՀՅԴ-ի 9-րդ Ընդհանուր ժողովից ի վեր, կուսակցության գրեթե բոլոր համաժողովներում «Միացյալ, Ազատ և Անկախ Հայաստանի» ծրագրային վերջնանպատակը մնացել է անփոփոխ: Հետագա գրեթե բոլոր խորհրդաժողովներում ու համաժողովներում կարմիր թելի պես անցնում է ռազմավարական այդ տեսլականը՝ ընդհուպ մինչև մեր օրերը:

- 1920 թ. Հայոց անկախ պետականության կորստից հետո էլ, մինչև օրս, ՀՅԴ-ն հայ քաղաքական, թերևս, եզակի կուսակցությունն է, որ իր ծրագրային պահանջին հավատարիմ է եղել ու շարունակում է մնալ ամենահետևողական պահանջատերը՝ «**անքթիթ պահակը Հայ Դատի**»՝[353] նպատակ դնելով «Կերտել Միացեալ եւ Անկախ Հայաստան»[354]: Այդ նպատակն է ամրագրված ՀՅԴ 1982 թ. 22-րդ Ընդհանուր ժողովում հաստատված ծրագրում, որի «Քաղաքական պահանջներ» բաժնում, որպես

---

[350] Նույն տեղում, էջ 167:

[351] Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութիւն, Ծրագիր, ժնեւ, 1925, էջ 25:

[352] **Տասնապետեան Հր.**, Ո՞վ է դաշնակցականը, Եր., 1991, էջ 36:

[353] **Նավասարդեան Վ.**, Դաշնակցութեան քաղաքական ուղին, Գահիրե, 1925, էջ 3:

[354] Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութիւն, Ծրագիր, ժնեւ, 1925, էջ 20:

առաջնային նպատակ, դարձյալ ամրագրված է՝ «Ամբողջական Հայաստանի ստեղծում՝ Արեւմտեան եւ Արեւելեան (այսինքն՝ խորհրդային՝ Ա. Հ.) Հայաստանի հողամասերի վրայ»[355]:

- Հայաստանի խորհրդայնացումից հետո էլ՝ ՀՅԴ-ն շարունակել է հետամուտ լինել Միացյալ Հայաստանի նպատակին: Նա, չընդունելով հանդերձ խորհրդային վարչակարգը, շարունակեց միջազգային ատյաններում պաշտպանել Հայաստանի սահմանների ընդարձակման հարցը խորհրդային իշխանության ներքո: Ուշագրավ է, որ Երկրորդ աշխարհամարտի ավարտին, երբ խորհրդային ղեկավարությունը միջազգային ատյաններում բարձրացրեց 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական հողերի (Կարս, Արդահան, Սուրմալու և այլն) վերադարձի հարցը, Ս. Վրացյանը 1945 թ. աշնանը ՀՅԴ-ի Ամերիկայի շրջանային պատգամավորական ժողովում կարդացած զեկուցման մեջ հայտնում էր, որ ՀՅԴ-ն, երբեք չդավաճանելով հայրենիքի ազատության և անկախության գաղափարներին, շարունակում է պաշտպանել «ամբողջացած հայութիւն՝ ամբողջական եւ Խորհրդային Հայաստանի մէջ»[356]: Սա ցույց է տալիս, որ Հայաստանի տնտեսական և քաղաքական համակարգը ՀՅԴ-ի համար բնավ խոչընդոտ չի եղել Միացյալ Հայաստանի գաղափարի իրագործման ճանապարհին: Սակայն, ինչպես հայտնի է, խնդրի լուծման ուղղությամբ հետպատերազմյան կարգավորման միջազգային խորհրդաժողովներում Արևմուտքի տերությունները «Կոմունիզմի տարածման սպառնալիքի զսպման» կարգախոսով իրենց պաշտպանության տակ առնելով Թուրքիային՝ խոչընդոտներ հարուցեցին, և խնդիրը մնաց

---

[355] Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, Ծրագիր, ա. տ., 1982, էջ 26:
[356] **Վրացեան Ս.**, Միացեալ Հայաստան, Հալէպ, 1945, էջ 26:

առկախ: Իսկ ավելի ուշ՝ 1953 թ. մայիսի 30-ին, ԽՍՀՄ-ի կառավարությունը, հանձին արտաքին գործերի մինիստր Վ. Մոլոտովի, Հայաստանի և Վրաստանի անունից պաշտոնապես հայտարարվեց, որ «ՍՍՌՄ-ը ոչ մի տերիտորիալ պահանջ չունի Թուրքիայի նկատմամբ»[357]: Նույն միտքը վերահաստատվեց 1978 թ. օգոստոսի 22-ին երկու երկրների միջև Մոսկվայում ստորագրված միջպետական պայմանագրում[358]:

- Պանդխտության մեջ հայտնված ՀՅԴ-ն շարունակեց պահանջատիրության համար գաղափարական-քաղաքական պայքարը: Ի վերջո, 70-ամյա տարագրությունից հետո 1990 թ. **օգոստոսի 8-ին** ՀՅԴ-ն կրկին բացահայտեց իր գործունեությունը մայր հայրենիքում: Դարձյալ արձանագրվեց հայապատկան բոլոր հողերի վրա Միացյալ, Ազատ և Անկախ Հայաստան կերտելու քաղաքական հիմնանպատակը[359]: Արցախյան ազատագրական պայքարին, Հայաստանի անկախացման ու պետականաշինության գործընթացներին զորավիգ լինելուց զատ՝ Հայ Դատը շարունակում է մնալ կուսակցության դավանած անժամանցելի ազգային Մեծ երազանքը: ՀՅԴ Բյուրոյի օգոստոսի 8-ի հայտարարության մեջ մասնավորապես նշված է. «...ինքնիշխանության հաստատելու պահից մինչև Միացեալ, Ազատ եւ Անկախ Հայաստանի ստեղծումը մեզ (կուսակցությանը՝ Ա.Հ.) սպասում է երկար եւ դժվարին պայքար: Անհրաժեշտ է դիմանալ, պայքարել եւ փուլ առ փուլ իրագործել մեր ազգային երազանքը»[360]:

---

[357] «Սովետական Հայաստան», Եր., 19 հուլիսի 1953 թ.:

[358] Տե՛ս **Захаров В. А.**, Карс и Карсский договор 1921 года в истории Армении, М., 2010, с. 81.

[359] Տե՛ս Պլատֆորմ Հայ Հեղափոխական Դաշնակցության, Եր., 1990, էջ 7:

[360] **Оганесян Эд.**, Век борьбы, Ер., 2010, с. 7.

- Մեր ժամանակներում այդ գաղափարի նյութականացման վառ վկայություններ են հայկական երկու ազատ և անկախ հանրապետությունները՝ **Հայաստանի Հանրապետությունը** և **Արցախի Հանրապետությունը**, հետագայում՝ **Միացյալ Հայաստանի** հեռանկարով:

- Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը կենսունակ է արդի ժամանակաշրջանում ևս, քանզի գոյություն ունի շուրջ 10 միլիոնանոց Սփյուռք, որն իր հիմնական մասով երազում է վերադառնալ իր պատմական հայրենիքը: Դժվար չէ կռահել, որ եթե մոռացության մատնվի այդ գաղափարը, ապա աշխարհացրիվ սփյուռքահայությունը, Հայրենիք վերադառնալու հեռանկարը չտեսնելով, կարող է արդի գլոբալացվող աշխարհի պայմաններում անխուսափելիորեն ձուլվել ու փոշիանալ:

- Պայքարը Միացյալ, Անկախ Հայաստանի համար շարունակական է, այն մղվելու է այնքան ժամանակ, քանի դեռ լուծում չի ստացել Հայկական հարցը: Միացյալ Հայաստանի գաղափարը հոգևոր սնունդ է առաջին հերթին Սփյուռքի ինքնապահպանության, ապագայի հանդեպ լավատեսությամբ լցվելու, զարգանալու և հարատևելու համար: Միացյալ և Անկախ Հայաստանի կարգախոսով պայքարը շարունակվում է՝ աշխարհասփյուռ հայությունը ամբողջացած հայրենիքում տեսնելու հրամայականով: Մի խոսքով՝ Միացյալ Հայաստանի գաղափարը կենսարթուն պահելը և դրան հետամուտ լինելը նաև **ազգային անվտանգության** խնդիր է:

-Միացյալ Հայաստանի գաղափարի կրողը հայ ժողովուրդն է, Հայաստանի ու Արցախի անկախ հանրապետությունները: Հարյուրամյա հեռվորությունից դիտարկելով Միացյալ և Անկախ Հայաստանի վերաբերյալ Առաջին Հանրապետութ-

յան կառավարության ընդունած ակտը՝ կարելի է արձանագրել, որ այն չի կորցրել իր արդիականությունը նաև մեր ժամանակներում: Ինչպես հարյուր տարի առաջ, այնպես էլ ներկայում այդ գաղափարի առաջամարտիկը, իր 130-ամյա կուտակած հարուստ փորձով, եղել ու մնում է ՀՅԴ կուսակցությունը:

- Միացյալ Հայաստանի գաղափարը (պահանջը) միջազգային իրավունքի տեսակետից պետք է կենսարթուն պահել միջազգային ատյաններում: Հայաստանն ու հայ ժողովուրդը, նրա պետական, քաղաքական և հասարակական կառույցները պետք է շարունակաբար, առանց վաղեմության ժամկետի, հետամուտ լինեն և իրազեկ պահեն միջազգային հանրությանը և նրա ամենաբարձր ատյաններին, որ 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունը հայերի հանդեպ իրականացրել է անանախընթաց ցեղասպանություն իր սեփական հայրենիքում, որի հետևանքով հայ ժողովուրդը զանգվածաբար կոտորվել է կամ էլ բռնագաղթեցվելով զրկվել է իր հայրենիքի մեծագույն մասից՝ Արևմտյան Հայաստանից: Ուստի հայ ժողովուրդն ունի պատմաիրավական, քաղաքական ու բարոյական բոլոր հիմքերը՝ իր կորսված հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի պահանջատեր լինելու: Այդ իմաստով ակներև է դառնում, որ **Միացյալ Հայաստանի պահանջը ուղղակի կապի մեջ է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և փոխհատուցման (հայրենատիրման) հիմնահարցի հետ:**

- Յուրաքանչյուր կենսունակ ազգ-ժողովուրդ ունի պատմականորեն ձևավորված որոշակի ազգային քաղաքական իդեալ: Ազգային-հավաքական իդեալ չունեցող և դրան չձգտող ժողովուրդը ապագա չի ունենա: Նա, ի վերջո, կձուլվի ու կվերանա: Այդ տեսլականը համայն հայության համար, կարծում ենք, եղել է ու կմնա **Միացյալ և Անկախ Հայաստանի հայրենատիրման**

գաղափարը, ինչպես որ հրեաների համար՝ Սիոնիզմը կամ Մեծ Իսրայելի ստեղծումը, ռուսների համար՝ Երրորդ Հռոմի, հույների համար՝ Մեծ Հունաստանի ստեղծման, լեհերի համար՝ Ռեչ Պոսպոլիտայի վերածնման գաղափարները և այլն: Հայ ժողովուրդն իր այդ գերնպատակը ազգային արժեք պետք է վառ պահի, նաև գործնական քայլերով հետամուտ լինի՝ միշտ մտածելով ու գործելով, որ կգա մի գեղեցիկ օր, երբ այն, ի վերջո, կյանքի կկոչվի ու կիրագործվի «Վիլսոնյան Հայաստան»-ի ազգային-քաղաքական նպատակը: Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը նաև աշխարհասփյուռ հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման, կենսունակության ու հարատևության միջոց է ու կռվան, իր ամբողջացած հայրենի հողում հավաքվելու, ապրելու, ստեղծագործելու և բարգավաճելու նպատակ: Հենց սրանում է «**Միացյալ և Անկախ Հայաստանի**» պատմական ակտի 100-ամյակի խորհուրդը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3
Մուտք 8
1. Միացյալ Հայաստանի գաղափարի պատմական ակունքները 10
2. Հայ ազգային կուսակցությունների դիրքորոշումները 19
3. Անկախության և Միացյալ Հայաստանի տեսլականը՝ Առաջին աշխարհամարտի շրջանում (1914-1917 թթ.) 26
4. Հայաստանի անկախացման գործընթացը և Միացյալ Հայաստանի գաղափարը (1917-1918 թթ.) 31
5. Միացյալ Հայաստանի պահանջի հիմքերը և հայ քաղաքական շրջանակների դիրքորոշումը 43
6. Փարիզի Արևմտահայ Ազգային համագումարի դիրքորոշումը65
7. Միացյալ Հայաստանի անկախության ակտը 70
8. Ներքաղաքական պայքարի սրումը 83
9. ՀՀ կառավարության և Ազգային պատվիրակության ներկայացուցիչների բանակցությունները 92
10. Միացյալ և Անկախ Հայաստանի տեսլականի հանդեպ կուսակցությունների ծրագրային դիրքորոշումները 104
11. Միջազգային դիվանագիտական գործընթացները և Հայաստանի մանդատի խնդիրը 114
12. Քրդական գործոնը 122
13. Միացյալ և Անկախ Հայաստանի ամրագրումը Սևրի պայմանագրում 125
14. Հայաստանը «բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի» միջև150
15. Թշնամուն դիմակայելու փորձերը 161
16. Ազգերի լիգային անդամակցության հարցը 165
17. Հայաստանի պարտության աղետալի հետևանքները 170
18. Միացյալ և Անկախ Հայաստանի տեսլականը Հայաստանի խորհրդայնացումից հետո 179
Վերջաբանի փոխարեն 199

ԱՐԱՐԱՏ ՄԽԻԹԱՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԻԱՑՅԱԼ ԵՎ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Հայոց պատմության հոլովույթում

АРАРАТ МХИТАРОВИЧ АКОПЯН

ИДЕЯ ЕДИННОЙ И НЕЗАВИСИМОЙ АРМЕНИИ

в процессе развитии истории Армении

ARARAT MKHITAR HAKOBYAN

THE IDEA OF THE UNITED AND INDIPENDENT ARMENIA

in the evolution of the Armenian history

Ստորագրված է տպագրության 25.06.2020:
Չափսը 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպագրությունը օֆսեթ:13,25 տպ. մամուլ:
Տպաքանակը 500:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ

ԼՈՒՍԱԿՆ

Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52-79-74
Էլ. փոստ lusakn@rambler.ru

2000 թ.

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ
FL0643372

II
A106848

ISBN 978-9939-882-76-5
9 789939 882765